

Ա.Ա. ԵԶԵԿՅԱՆ, Պ.Ս.ԷՖԵՆԴՅԱՆ

ՀՈՂԱՅԻՆ ԿԱՂԱՍՏՐ

ԵՐԵՎԱՆ
ՀՊԱՀ
2008

ՀՏ 336.211.1 (07)

ԳՄԴ 65.9 (2) 32-5 ց73

Ե 193

Հաստատված է Հայաստանի պետական ազգարային համալսարանի
գիտական խորհրդի կողմից

Գրախոսներ՝ գյուղ. գիտ. դոկտոր Հ.Դ.Ղազարյան
գյուղ. գիտ. դոկտոր Ռ.Ռ.Մանուկյան
տնտ. գիտ. թեկնածու Հ.Վ.Մկրտչյան

Խմբագիր՝ Յ.Վ.Պողոսյան

ԵԶԵԿՅԱՆ Ա.Ս., ԷՖԵՆԴՅԱՆ Պ.Ս.

Ե 193 ՀՈՂԱՅԻՆ ԿԱՐԱՍՏՐ. Դասագիրք բուհերի համար: - Եր.: ՀՊԱՀ,
2008: - 286 էջ:

Դասագիրքը գրված է «Հողային կադաստր» առարկայի ուսումնական ծրագրին համապատասխան և նախատեսված է բուհերի ու քղեցների ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների համար: Այն կհետաքրքրի նաև հողային պաշարների արդյունավետ օգտագործման հարցերով գրադարձ մասնագետներին և ոլորտի ղեկավարներին:

ԳՄԴ 65.9 (2) 32-5 ց73

ISBN 978-9939-54-000-9

© Ա.Ս.Եզեկյան, Պ.Ս.Էֆենդյան, 2008 թ.

© Հայաստանի պետական ազգարային համալսարան, 2008 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Հոդը հասարակության կենսագործունեության հիմքն է, զյուղատնտեսական արտադրության գլխավոր միջոցը և ունի իր գինը: Ինչպես յուրաքանչյուր արտադրական ռեսուրսի, այնպես էլ հողի գինը շուկայական տնտեսության պայմաններում ձևավորվում է պահանջարկի և առաջարկի հարաբերակցության հիման վրա: Հողային սահմանափակ պաշարների արդյունավետ օգտագործման, հողային հարաբերությունների և հարկային քաղաքականության կարգավորման գործում կարեոր նշանակություն ունի հողի տնտեսական գնահատումը:

Հայաստանի Հանրապետությունում էապես մեծացել է ազրարային, մասնավորապես՝ հողային հարաբերությունների տնտեսական, սոցիալական ու քաղաքական նշանակությունը, հատկապես՝ բերրի հողերի խիստ սահմանափակության և պարենային անվտանգության տեսակետից: Հողային կադաստրը կոչված է ստեղծել հողերի քանակական, որակական, տնտեսական և իրավական ճգործ տեղեկությունների համակարգ:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո հանրապետության բոլոր հողերը դարձան պետության սեփականությունը: Հոդի մասին ստույգ տեղեկատվության հիման վրա որոշվում էր հողային կադաստրի բովանդակությունն ու դրա վարման կարգը: Հողային կադաստրը իրենից ներկայացնում էր հողի մասին տեղեկատվության ամփոփ տեղեկագիրը: Պետական միջոցների հաշվին պարբերաբար կատարվում էին զյուղատնտեսական հողատեսքերի, հողօգտագործողների գրանցում, քանակական, որակական հաշվառում և տնտեսական գնահատում: Հողերի մյուս կատեգորիաների համար (քաղաքների, բնակավայրերի, տրանսպորտի, արդյունաբերության և այլն) հողային կադաստրները վարում էին խոշորացված տվյալներով: Հողերի կատեգորիաների, սեփականատերերի, մեկ անձից մյուսին տրամադրելու ցանկացած փոփոխությունները կատարվում էին կառավարական մարմնների որոշումների հիման վրա և ամրագրվում հողօգտագործման իրավունքի պետական ակտերով:

Հայաստանում անկախության հոչակումից ի վեր հողային հարաբերություններն էապես փոխվեցին: Գյուղատնտեսական նշանակության հողերի գգալի մասը տրամադրվեց զյուղացիական տնտեսություններին: Ձևավորվեցին մասնավոր սեփականության վրա հիմնված նոր տնտեսական հարաբերություններ, իմնադրվեց հողի շուկա, ակտիվացավ հատկապես փոքր հողամասերի առք ու վաճառքը:

Նախկինում մշակված հողային կադաստրում բացակայում էին ներկային յուրաքանչյուր զյուղացիական տնտեսությանը պատկանող հողակտորի գտնվելու տեղի, սահմանակից հողօգտագործողների, հողի որակական բնութագրման և տնտեսական գնահատման վերաբերյալ

տվյալները: Նման պարագայում ծագում էին մշտական սահմանային վեճեր, որոնք հաճախ հնարավոր չեր լուծել փոխադարձ համաձայնությամբ:

Վերջին տասնամյակների ընթացքում բնական ու անտրոպոգեն գործուներն էապես ազդել են հողային, ջրային, անտառային և քնական այլ պաշարների վրա: Հողերի աղտոտվածությունը, հողատարումն ու բացասական այլ երևույթներ ընդունել են այնպիսի աղետայի մասշտարքներ, որ հողերի բերրիության և էկոլոգիական հավասարակշռության վերականգնումն անհնար է առանց բնապահպանական լուրջ միջոցառումների իրականացման: Մեծ քանակությամբ գյուղատնտեսական հողեր վերածվել են այլ հողատեսքերի և չեն օգտագործվում ըստ նշանակության: Արարատյան հարթավայրի հողերի երկրորդային աղակալումն ու գերխոնավացումը, օրգանական նյութերի պաշարների նվազումը և բացասական այլ երևույթներ պահանջում են կատարել հողերի համակողմանի ուսումնասիրություն: Այժմյան պետական հողային կադաստրն իր մեջ ներառում է սեփականության (հողօգտագործման) իրավունքի գրանցում, հողերի քանակական, որակական հաշվառում և տնտեսական գնահատում՝ ապահովելով հողօգտագործման բոլոր մակարդակներում անհրաժշտ տվյալների հավաքում, վերամշակում և պահպանման միասնական մեթոդարանություն, տվյալների հավաստիություն: “Իա հնարավիրություն է տալիս պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հիմնավոր որոշումներ կայացնել՝ յուրաքանչյուր համայնքի, մարզի և ամբողջ հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման համար:

Պետական հողային կադաստրի օբյեկտը հանրապետության ամբողջ հողային ֆոնին է՝ անկախ դրա օգտագործման բնույթից և սեփականության ձևերից:

Հողային կադաստրը վարում են ինչպես վարչատարածքային, այնպես էլ լանդշաֆտաէկոլոգիական միավորների առումով՝ պայմանով, որ յուրաքանչյուր հողօգտագործում լիովին ապահովված լինի հողային կադաստրին վերաբերող անհրաժշտ տեղեկատվությամբ:

Հողային պաշարների արդյունավետ օգտագործման, հողային հարաբերությունների կարգավորման, հողագույքային տնտեսական համալիրի ճիշտ ղեկավարման նպատակով՝ հողերի վերաբերյալ տվյալների հավաքումը, մշակումն ու պետական հողային կադաստրի վարումն ապահովելու համար, ստեղծվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ իր համապատասխան ստորաբաժանումներով: Այդ կոմիտեն մեծ ծավալի աշխատանքներ է իրականացնում հողերի և անշարժ գույքի քարտեզագրման, հողերի քանակական հաշվառման, անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկի (շտեմարանի) ստեղծման, մեթոդման, մեթոդարանության մշակման և կադրե-

թի վերապատրաստման ուղղությամբ: Հանրապետության բոլոր մարզերում և մեծ քաղաքներում ստեղծվել է կադաստրին վերաբերող տեղեկատվության հավաքման, մշակման և պահպանման լայն ցանց: Այժմ հողային կադաստրի համակարգում աշխատանքներ են տարվում հողերի հետազոտության, մոնիթորինգի, որակական բնութագրման, տնտեսական գնահատման և զմի որոշման նպատակով: Ստույգ և արժանահավատ տվյալներ են արամադրվում պետական և տեղական ինքնակառակարման մարմիններին, հողօգտագործողներին, գյուղատնտեսական ձեռնարկություններին, ընկերություններին, որոնք հնարավորություն են ստանում մշակել հողային հարաբերությունների կարգավորման, դեկավարման, տարածքների արդյունավետ կազմակերպման, հողերի բերդիության բարձրացման, շրջակա միջավայրի պահպանության գիտականորեն հիմնավորված միջոցառումներ:

*
* *

Սույն դասագրքի նյութը շարադրված է «Հողային կադաստր» առարկայի ուսումնական ծրագրին համապատասխան: Հիմնական տեսական և գրքնական դրույթները մասուցվում են թվային տվյալների և աղյուսակների տեսքով, ինչը թույլ կտա ավելի լավ յուրացնել առարկան:

Հաշվի առնելով, որ նման դասագիրքը հանրապետությունում հրատարակվում է առաջին անգամ, այն չի կարող գերծ լինել թերություններից և բացքողումներից: Հեղինակները պատրաստակամորեն կրնդունեն բոլոր դիտողություններն ու դրանք հաշվի կառնեն դասագրքի վերահրատարակման ժամանակ:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում բոլոր նախագծահետազոտական, գիտարտադրական հողաշինարարական կազմակերպություններին, հողերի օգտագործման, պահպանման, բարելավման հարցերով գրադիու մասնագետներին, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, դրա ստորաբաժանումների ղեկավարներին ու մասնագետներին, «Հողշինմոնիտորինգ» ՊՈԱԿ-ի ղեկավարներին, առանձին բաժինների, մասնավորապես՝ հողերի գնահատման բաժնի մասնագետներին՝ սույն դասագրքի առանձին գլուխների ու բաժինների ձևակերպմանն օժանդակելու և անհրաժեշտ նյութերի տրամադրելու համար:

ՍԱՍ ԱՌԱՋԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ
ՎԱՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՁՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1

ՀՐՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ

Հայաստանի Հանրապետության ռողային օրենսգրքի 33-րդ հոդվածում նշվում է. «Անշարժ գույքի պետական միասնական կադաստրը հողամասերի ու դրանց վրա ամրակայված անշարժ գույքի հաշվառման, բնական, տնտեսական և իրավական կարգավիճակի, տեղաբաշխման ու չափերի, դրանց որակական բնութագրերի, իրավական ուժիմի, սեփականության և այլ գույքային իրավունքների ու դրանց սահմանափակումների պետական գրանցման, անշարժ գույքի գնահատման հավաստի տեղեկությունների համակարգ է»:

«Հաղաստր»

Աշանակում է հարկման ենթակա առարկաների ցուցակ, հաշվառման ձև:
Հ

Հողային կադաստրի բնույթը, նշանակությունն ու բովանդակությունը ձևավորվում են՝ ելնելով տվյալ երկրի հասարակական ու տնտեսական հարաբերությունների զարգացման առանձնահատկություններից, արտահայտում իշխող հասարակական հարաբերությունների շահերը և ծառայում դրանց:

Պատմականորեն հողային կադաստրն առաջացել է հոդի մասին տեղեկություններ ստանալու օրենկանիվ անհրաժեշտությունից: Պետության համար հողը միշտ էլ եղել է եկամտի կարևոր աղբյուր և դրա հետ կապված՝ տարրեր կարգի հարկուների օրյեկտ: Ուստի անհրաժեշտություն է առաջացել ստեղծել հողերի հաշվառման, այնուհետև՝ հողերի գնահատման, այսինքն՝ հողակադաստրային փաստարդեր:

Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան ունեցել է հողային կադաստրի վարման առանձնահատուկ կարգ ու կազմակերպական իմաստ: Դրա առանձին բաղկացուցիչ մասերը միանգամից չեն ստեղծվել ու ձևավորվել: Հասարակության զարգացման վաղ շրջանում կատարվել է հողերի պարզ հաշվառում: Աստիճանաբար զարգացել և կատարելազործվել են հողերի հաշվառման, խմբավորման և գնահատման մերոդները, սկզբունքները և ուսումնասիրման եղանակները:

Հողային հարաբերությունների բարեփոխումների ընթացքում հոդային կաղաստրի բովանդակությունը զգալիորեն ընդլայնվել է: Ներկայումս պետական հողային կաղաստրը բնութագրվում է որպես հողի և անշարժ գույքի վերաբերյալ բազմանպատակ, բազմաբնույթ և տարրեր մակարդակի անհրաժեշտ ու ստույգ տեղեկությունների համակարգ, որի շնորհիվ պետականորեն կարգավորվում են հողային հարաբերությունները: Այդ համակարգը պետք է ապահովի հողային կաղաստրի հաշվառման օբյեկտների առաջացման, գոյատևման կամ գոյության դադարեցման փաստի պետության կրողմից ընդունումն ու հավաստագրումը:

Հողը բնութագրվում է տարածականությամբ, ուղիելիով, հողային ծածկույթով, բուսականությամբ, ջրերով, որոնք ձևավորում են լանդշաֆտների որոշակի տիպեր: Որպես այդպիսին՝ հողը մարդու կենսագործութեարյան պայմաններն ապահովող սոցիալ-տնտեսական և էկոլոգիական կատեգորիա է:

Որպես բնական պաշար՝ հողը՝

- մարդու գոյության հիմքն է, նրա կենսական կարիքների բավարարման աղբյուրը, մարդկային սերունդների գոյատևման կարեռագույն պայմանը,
- բոլոր կենսահամակեցությունների (բիոցենոզ) և կենսոլորտի գիսավոր օղակը,
- բնության գեղեցկության և հարատևության հիմնական աղբյուրը:

Հողը կարևոր դեր է խաղում մարդու աշխատանքային գործունեության ընթացքում: Մարդի իր աշխատանքով ստեղծում է բույսերի և կենդանիների զարգացման համար անհրաժեշտ պայմաններ, մշակում է հողը, բարելավում դրա ֆիզիկական, կենսաբանական և քիմիական հատկությունները: Որպես աշխատանքի միջոց՝ հողը բնութագրվում է բերրիությամբ և մշակաբույսերի բերքատվությամբ, որպես աշխատանքի առարկա՝ այնպիսի հատկություններով, որոնցով պայմանավորված են մեքենայացված աշխատանքների անցկացման տեխնոլոգիան և բուսաբուծական մթերքի արտադրության վրա կատարված ծախսերի մեծությունը: Ուստի հողը գյուղատնտեսության և անտառային տնտեսության գիսավոր և համընդիանուր արտադրամիջոցն է և միաժամանակ հանդես է գալիս որպես աշխատանքի միջոց և առարկա՝ գյուղատնտեսական հողահանդակների և անտառային զանգվածների տեսքով:

Ծովայական պայմաններում հողը դառնում է սեփականության օբյեկտ (անշարժ գույք), որը զնահատվում է արժեքային կատեգորիաներով (հողի հարկ, վարձավճար, նորմատիվային, շուկայական և գրավային գներ և այլն):

Մեր հանրապետության տնտեսական համակարգում ևս հողը հանդիսական է զայխ որպես մարդկանց գործունեության տարածական հիմք (ոչ գյուղատնտեսական ճյուղերում), որպես աշխատանքի առարկա (գյուղատնտեսության մեջ և օգտակար հանածոների արդյունաբերությունում), որպես արտադրության և աշխատանքի միջոց (գյուղատնտեսության և անտառատնտեսության մեջ), որպես անշարժ գույքի տարր և որպես բնական համակարգի բաղկացուցիչ մաս: Այդ պատճառով էլ հողը համարվում է բնական, տարածական, էկոլոգիական, տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական գործուների միահյուսման բարդ համակարգի արդյունք: Արտադրության այլ միջոցների համեմատությամբ՝ հողն ունի մի շարք առանձնահատկություններ. այն չի տեղափոխվում ու չի վերարտադրվում, ոչնչով չի փոխարինվում, ֆիզիկապես և քարոյապես չի մաշվում, տարածականորեն սահմանափակ է, իսկ ճիշտ օգտագործման դեպքում բարձրանում է նրա բերրիությունը:

Հողը մյուս արտադրամիջոցներից տարբերվում է նաև նրանով, որ երկարատև օգտագործման միջոց է: Դա նշանակում է, որ հողի ներուժը մեկ արտադրական ցիկլի ընթացքում չի սպառվում: Հողը կարող է միաժամանակ օգտագործել տարբեր նպատակներով և տարբեր ձևով հատուցել ներդրված աշխատանքն ու կապիտալը: Ի տարբերություն արտադրության այլ միջոցների՝ դրա օգտագործման վրա զգայի ազդեցություն են բողնում երկրում ընդունված իրավական, քարոյական և սոցիալական նորմերը:

Հողն առանցքային տեղ է զբաղեցնում բնության այլ բաղկացուցիչ մասերի շարքում: Դա է պատճառը, որ անտառային, ջրային, օգտակար հանածոների, կենդանական, բուսական և պետական այլ կաղաստրների համեմատությամբ հողային կաղաստրի նշանակությունն անհերքելի է, քանի որ մնացած բոլոր բնական ռեսուրսները տարածականորեն կապված են կոնկրետ հողային զանգվածների հետ: Բացի այդ, անտառի, ջրի, շենքերի, շինությունների, կենդանական և բուսական աշխարհի և բնական ու անտրոպոգեն այլ ռեսուրսների որակական ու քանակական բնութագրերը, ինչպես նաև դրանց օգտագործման հնարավորությունները մեծապես կախված են հողային զանգվածների բնութագրերից:

Հողային կաղաստը հասուլ տեղ է զբաղեցնում նաև ջրային, անտառային, քաղաքաշինական և այլ թեմատիկ կաղաստների շարքում: Դրանց վարման ժամանակ, տեղեկատվության հավաքագրման համար, հաշվի են առնվում հետևյալ պայմանները՝

- հողային կաղաստը օբյեկտը ամբողջ հանրապետության հողային ֆոնդն է՝ անկախ դրա գերատեսչական պատկանելությունից, սեփականության, նպատակային օգտագործման ձևերից,

- օրենսդրության համաձայն՝ պետական հողային կադաստրի հիման վրա ծևավորվում են հողակադաստրային օբյեկտներ և դրանց սահմաններում կատարվում է պետական կադաստրային հաշվառում և որոշվում են իրավունքները: Կադաստրային հաշվառման առաջնային միավոր է համարվում հողամասն՝ իր ստորգետնյա և վերգետնյա տարածություններով՝ ներառյալ դրա հետ սերտորեն կապված այլ անշարժ գույքն ու օբյեկտները: Այդ հողամասը պետք է ունենա իրավաբանորեն ճանաչված և հաստատագրված սահմաններ, մակերես, տեղադրվածություն, իրավական կարգավիճակ, կադաստրային համար, նպատակային նշանակություն, օգտագործում և այլ բնութագրեր,
- պետական հողային կադաստրն ապահովում է հողերի վարչական և տարածքային հասցեների գրանցումը, հողային հարաբերությունների կոնկրետ օբյեկտների ու սուբյեկտների, ինչպես նաև դրանց հետ կատարվող ընթացիկ փոփոխությունների հաշվառումը,
- պետական հողային կադաստրը կոնկրետ օբյեկտի գոյության և դրա նկատմամբ սեփականության իրավունքի ապացույցն ապահովող միակ պայմանն է: Օբյեկտի կամ դրա նկատմամբ իրավունքի առաջացման, գոյության կամ դրա դադարեցման փաստը հետազայում կարող է վիճարկվել միայն դատական կարգով,
- պետական հողային կադաստրն օրենսդրորեն կարգավորում է գոյություն ունեցող հողային հարաբերությունները,
- պետական հողային կադաստրը օրենսդրի և գործադիր մարմիններին, դրանց կառույցներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրում է հողակադաստրային հավաստի տեղեկատվություն, նաև տեղեկատվական աջակցություն ցուցաբերում գերատեսչական թեմատիկ կադաստրներին,
- պետական հողային կադաստրի տվյալները պարտադիր կիրառվում են անշարժ գույքի պետական գրանցման և դրա հետ գործարքների կատարման, հողային վեճերի լուծման, անշարժ գույքի արժեքային բնութագրերի սահմանման, հողերի օգտագործման և հողաշինարարության պլանավորման անցկացման, կառավարչական որոշումների ընդունման, հողերի նկատմամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների պաշտպանության և այլ դեպքերում:

Պետական հողային կադաստրի տվյալների օգտագործումը հնարավորություն է տալիս լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ բանկա-

յին ակտիվների կառավարումը, անշարժ գույքի սեփականաշնորհումը, Եկոլոգիական, տնտեսական, ժողովրդագրական և սոցիալական իրավիճակի վերլուծությունը, տարածքների զարգացման կառավարումը, տարբեր միջոցառումների պլանավորումն ու կազմակերպումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը, անշարժ գույքի հետ կապված գործարքները և հողի շրջանառության ձևավորումը, վիճակագրական տվյալների վերահսկումը, բնակչությանը իրազեկ դարձնելը, արժեքայի շուկայի ձևավորումը, անշարժ գույքի տեղաբաշխության որոշումը, հողամասերի արդյունավետ օգտագործումն ու պահպանումը և այլն:


Այսպիսով՝ պետական հողային կադաստրը հանրապետության հողային ֆոնդի, դրա վարչատարածքային միավորների (մարզ, համայնք), առաջնային օրյեկտների և սույնեկտների կաղաստրային հաշվառման միասնական պետական բազմատիճան կառավարչական տեղեկատվական համակարգ է, որը հասարակության կողմից ընդունված գաղափարների, տնտեսական, սոցիալական, բարոյական և էքսիկ նորմերի վրա հիմնված՝ հողային հարաբերությունների պետական կարգավորման հիմնական մեխանիզմներից մեկն է:

Հողային կադաստրի բնագավառում կատարվող հետազոտությունների և հիմնախնդիրների բարոյակարգ թույլ է տալիս այն անվանել գիտություն, որն ուսումնասիրում է երկրի հողային ֆոնդի ընդհանուր բնութագիրը, դրա ձևավորման և զարգացման օրինաչափությունները, ստեղծում միասնական պետական տեղեկատվական համակարգ՝ դառնալով հողաբարական և նյութական հարաբերությունների տարածական հիմք, համընդհանուր արտադրության միջոց և բնական պաշար:

Որպես կազմակերպական-կառավարչական գործողությունների և միջոցառումների համակարգ՝ հողային կադաստրը կարելի է համարել հողակադաստրային կոնկրետ միջոցառումների, գործողությունների և աշխատանքների ամբողջություն, ըստ որի կատարվում է հողերի հաշվառում և գնահատում, սեփականատերների և հողօգտագործողների գրանցում:

Այժմ հանրապետության հողային կադաստրը ներառում է անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր՝ հողերի իրավական վիճակի, դրանց բանակական և որակական հաշվառման, տնտեսական գնահատման, տեղաբաշխության, որակական բնութագրի, արժեքի մասին՝ ըստ հողերի տիրապետումնան, տնօրինման և հողօգտագործման, հողերի նպատակային նշանակության՝ կատեգորիաների:

Այսպիսով՝ պետական հողային կադաստրը բաղկացած է հետևյալ հիմնական մասերից՝ հողատիրապետման, հողի տնօրինման և հողօգտագործման գրանցում, հողային ֆոնդի բանակական և որակական հաշվառում, հողի բնիտում և հողերի տնտեսական և արժեքային գնահատում (նկ. 1):



Նկ. 1. Հողային կադաստրի բաղկացուցիչ մասերը:

ԳԼՈՒԽ 2

ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

2.1. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հողային կադաստրը նպատակառությամբ պատմական գործընթաց է: Հնուց ի վեր մարդկային հասարակությունը հողերի նկարագրման, դասակարգման, զնահատման կարիք է օգացել: Դեռևս նախնադարյան հասարակարգում մարդիկ որոշակի հողամասերից սնունդ են հայրայթել, դրանց վրա կացարաններ կառուցել և այդ բնագավառում իրենց կուտակած գիտելիքներն ու փորձը փոխանցել հաջորդ սերունդներին:

Ժամանակի ընթացքում հողերի օգտագործումը, հաշվառումը, հիմնական հատկությունների նկարագրումը, հողամասերի զնահատումը դառնում է ավելի կազմակերպված: Հողերի հաշվառման, բաշխման, հողային պաշարների զնահատման գործընթացի բարդացումը, հողային հարաբերությունների զարգացումը նշտապես պահանջում են հողագնահատման աշխատանքների նկատմամբ գիտական մոտեցումների ու եղանակների կատարելագործում: Գիտական առումով՝ հողային կադաստրն ունի հետևյալ առանձնահատկությունները՝

- հողային կադաստրը ժամանակի և տարածության մեջ անընդհատ իրականացվող գործընթաց է,
- այն պահանջում է անհրաժեշտ տեղեկատվության հավաքում, վերլուծություն և օգտագործում, ինչի արդյունքում լուծվում են հողի և դրա հետ անխաղելիորեն կապված անշարժ գույքի գնահատման խնդիրները,
- շուկայական հարաբերությունների պայմաններում հողային կադաստրի արդյունքներն ազդում են հողային պաշարների և տնտեսության մյուս ճյուղերի կառավարման մեխանիզմների կատարելագործման վրա,
- հողային կադաստրի ուսումնասիրման առարկան հողն է՝ իր հատկություններով՝ որպես նյութական բարիքների աղբյուր և արտադրության համընդիանությունը:

Հողային կադաստրին կարելի է տալ հետևյալ բնորոշումը.

Հողային կադաստրը գիտություն է հողի՝ որպես արտադրության համընդիանությունը միջոցի զնահատման ձևերի և մեթոդների համակարգման, տեղեկատվական ապահովման օբյեկտիվ օրինաչափությունների մասին՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից հողօգտագործման օբյեկտի վրա իրականացվող նպատակառությամբ ներգործության ընթացքում:

Մյուս կողմից՝ հողային կադաստրը հողային ֆոնդի իրավական, բնական և տնտեսական վիճակի, օգտագործման և պահպանության վերաբերյալ տեղեկությունների ամբողջություն է: Այդ տեղեկությունների հավաքումն ու համակարգումը իրականացվում է միասնական մերողիկայով, որն ապահովում է հողային ֆոնդի բնութագրման հետևյալ կողմերը՝

- հողերի բաշխումն ըստ հողային իրավունքի սուբյեկտների (տեղեկություններ՝ թե ում և ինչ իրավունքով են պատկանում առանձին հողամասերը կամ հողային ֆոնդի զանգվածները),
- հողերի բաշխումն ըստ նպատակային օգտագործման կատեգորիաների (տեղեկություններ այն մասին, թե տնտեսության որ ճյուղուն են օգտագործվում հողերը՝ ելնելով դրանց բնապատմական և տնտեսաէկոլոգիական հատկություններից),
- հողերի որակական վիճակն՝ ըստ տնտեսական օգտագործման համար էական նշանակություն ունեցող որոշակի հատկանիշների,
- հողի արտադրողական հատկությունների գնահատումը՝ ելնելով բերդիությունից:

Հողային օրենսդրության և նորմատիվային ակտերի համաձայն՝ հողային կադաստրի հիմնական նպատակն է ապահովել բոլոր հողերի արդյունավետ օգտագործումն ու պահպանումը, հողի սեփականատելութիւնը և հողօգտագործողների իրավունքների պաշտպանությունը, հողի հարկի սահմանման և քաղաքացիական շրջանառության մեջ հողի մասնակցության համար օբյեկտիվ հիմքերի ստեղծումը:

Հողակադաստրային տվյալների միասնությունն ու համադրելիությունն ապահովում է կադաստրի վարման սկզբունքների ու մերողների միասնականության, ինչպես նաև հողակադաստրային փաստաթղթերի միասնականացման շնորհիվ:

Հողային կադաստրը, որպես բոլոր հողերի վերաբերյալ տեղեկությունների ամբողջություն, իրականացվում է տարածքային, անտառային, ջրային և բնական այլ պաշարների կադաստրների հետ՝ համատեղեկության սկզբունքի և փոխադարձ սերտ կապի հիման վրա:

Հողի սեփականության և հողօգտագործման բնագավառում, շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում, հողը հանդես է գալիս ոչ միայն որպես տնտեսավարման, այլ նաև որպես շուկայական շրջանառության մեջ ներգրավված անշարժ գույքի հատուկ առարկա: Այս դեպքում հողակադաստրային տեղեկատվությունը հիմք է հանդիսանում հողի արժեքի գնահատման համար, եթե հողի շուկան և շրջանառությունը գործում են նորմալ պայմաններում:

2.2. ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Պետական հողային կադաստրի օբյեկտն է Հայաստանի Հանրապետության միասնական հողային ֆոնդը:

Պետական հողային կադաստրի առարկան հողային ֆոնդի բնական վիճակի մասին անհրաժեշտ և հավաստի տեղեկատվության պետական բազմանպատակ համակարգի ստեղծումն է ու գործողության մեջ դնելը:

Պետական հողային կադաստրը անհրաժեշտ պայմանների է ապահովում՝ հողերի արդյունավետ օգտագործման հետ կապված հետևյալ խնդիրները լուծելու համար՝

- հողային հարաբերությունների և հողօգտագործման խնդիրների կարգավորում,
- ներդրումային և հարկային քաղաքականության իրականացում,
- հողերի օգտագործման և պահպանման նպատակով տարրեր տիպի պլանների և նախագծերի մշակում,
- հողային իրավունքի սուբյեկտների տնտեսական և այլ բնույթի գործունեության գնահատում,
- օպերատիվ և կայուն հողային շրջանառության ստեղծում,
- հողամասերի նկատմամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանություն և հողային վեճերի լուծում,
- հողօգտագործող ֆիզիկական և իրավաբանական շահագրգիռ անձանց հողակադաստրային տեղեկատվության տրամադրում՝ հողի շրջանառություն ապահովելու համար,
- հաշվառման օբյեկտի գոյության կամ գոյության դադարեցման փաստի՝ պետության կողմից ճանաչում,
- հողերի պետական հաշվառում, դրանց օգտագործման և պահպանման հսկողության իրականացում,
- հողային պաշտպանության կամ պահպանության կարգավորում և կարգավորում,
- հողերի ճիշտ գնահատման հիման վրա հողի վարձի սահմանում,
- անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և դրա հետ կապված գործարքների պետական գրանցման ապահովում:

Այս տեսակետից պետական հողային կադաստրի վարման խնդիրն է հավաքել, խմբավորել, ընդհանրացնել, բարձացնել, պահպանել և հողօգտագործողներին տրամադրել հողի և դրա վրա տեղադրված անշարժ գույքի վերաբերյալ ստույգ և հավաստի տեղեկատվություն:

2.3. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

«Հողային կադաստր» առարկան ուսումնասիրում է հողի՝ որպես արտադրության համընդիանուր միջոցի գնահատման եղանակներն ու մերողներն ապահովող, խմբավորող և մշակող տեղեկատվական համակարգի ստեղծման օրինաչափորյունները:

Տեղեկատվական համակարգի ստեղծման օրինաչափորյուններն ի հայտ են զայս կադաստրի առարկայի (հողային տարածք, հողամաս և այլն) վրա տնտեսավարող սուբյեկտի նպատակառուղիված ներգործության ընթացքում:

Հողային կադաստրի իրավական, տնտեսագիտական, տեխնիկական կողմերի բարդացումը՝ էկոլոգիական դիտարկումների ուժեղացման հետ մեկտեղ, պահանջում են մշտական կատարելագործել դրա վարման եղանակներն ու մերողները՝ հողօգտագործման բոլոր նակարդակներում (հողամաս, ձեռնարկություն, շրջան, քաղաք, մարզ, հանրապետություն): Այդ խնդիրների լուծման գործում կարևորվում է հողային կադաստրի տարրեր բնագավառներն ուսումնասիրող այլ առարկաների դերը (հողային պաշարների օգտագործման կանխատեսում, հողերի համակարգված դիտարկման գիտական հիմունքներ, հողային իրավունք և այլն):

Հողային կադաստրը որպես գիտություն գիտավորաապես օգտագործում է տնտեսագիտական ուսումնասիրությունների և մաքենատիկական մոդելավորման մեթոդները, այն է՝ վիճակագրական, մենագրական, հաշվարկականացորդուկտիվ, տնտեսագիտամաթեմատիկական, գիտական կանխատեսման փորձարարական մեթոդներ (ոլոնամիկ շարքեր, էքստրապոլյացիա, բազմությունների տեսություն, ուղեղային գրոհի, փորձագիտական գնահատականների մեթոդներ և այլն):

Վիճակագրական մեթոդն օգտագործվում է փաստացի նյութերի հավաքագրման և խմբավորման ժամանակ՝ հողային կադաստր օբյեկտի վերաբերյալ տվյալների գիտական վերլուծության կիրառումով:

Մենագրական մեթոդը ծառայում է առանձին տիպիկ երևույթների, փաստերի, նպատակների ուսումնասիրման և մշակման համար: Այդ ընթացքում, սովորաբար, բազմակողմանիորեն ուսումնասիրվում են լավագույն, առաջավոր տնտեսությունները՝ դրանց փորձը տարածելու նպատակով:

Վիճակագրության մեջ որոշակի առարկայի ուսումնասիրման համար ելակետային տեղեկատվության ստացումը կոչվում է **դիտարկում**: Այն զանգվածային տվյալների պլանաչափ հավաքագրման գործընթաց է: Վիճակագրական դիտարկման ձևերից են հաշվետվությունն ու հաշվեգրումը:

Վիճակագրական դիտարկումները լինում են անընդհատ (ընթացիկ) և ընդհատվող: Ընթացիկ դիտարկման ժամանակ ուսումնասիրվում է

առարկայի փոփոխությունների ամբողջ գործընթացը, այսինքն՝ իրականացվում է առարկայի համակարգված դիտարկում:

Ընդհատվող դիտարկումը լինում է պարբերական և միանվագ: Պարբերական անցկացվում է որոշակի ժամկետից հետո (օրինակ՝ հոդերի ուսումնափրություն, հատակագծաքարտեզագրական նյութերի ճշգրտում և այլն): Միանվագ դիտարկումներն անցկացվում են՝ առարկան որոշակի ժամկետում կամ հատուկ առաջադրանքով ուսումնասիրելու նպատակով:

Վիճակագրական դիտարկումները լինում են համատարած, երբ վերլուծության են ենթարկվում առարկայի բոլոր բնութագրերը, և ոչ համատարած, երբ ընդգրկվում է միավորի մի մասը:

Վիճակագրական դիտարկման ժամանակ կիրառվում են տարրեր մերողներ՝ հիմնական զանգվածի (ընտրվում են օբյեկտի հիմնական միավորները), ընտրանքային և մենագրական:

Վիճակագրական դիտարկման հիմնական եղանակներն են անմիջականը (հողակաղաստրային փաստաբերի անհատական լրացում) և հարցումայինը (հարցման հիմնա վրա ստացված տվյալների գրանցում):

Հիմնամիջի շարքերի մեթոդն իրենից ներկայացնում է այնպիսի թվային ցուցանիշների դասակարգում, որոնք արտացոլում են ամբողջության միավորների թվի կամ հատկանիշների մեծության փոփոխությունները ժամանակի ընթացքում:

Զուգահեռ շարքերի կամ առարկայի հատկանիշների տվյալների համադրելության մեթոդ:

Հաշվեկշռային մեթոդը կիրառվում է գումարային հավասար ցուցանիշների համեմատության դեպքում:

Վերլուծական խմբավորումների մեթոդը կիրառվում է տարրեր հատկանիշների միջև փոխադարձ կապերը վերլուծելու ժամանակ:

Բարդ երևույթների բազմագործոն վերլուծության առավել կատարյալ մեթոդներից է **կոռելյացիոն վերլուծության** մեթոդը:

2.4. ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՍԱՆ ՀԻՄՍԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Պետական հողային կադաստրի վարման հիմնական սկզբունքներն են.

1. Բազմանպատակ և բազմաստիճան բնույթը: Պետական հողային կադաստրը հանրապետության հողային պաշարների և վարչատա-

2. Պետական հողային կադաստրի համակարգի միասնականությունը: Այն ենթադրում է մեթոդների և տեխնոլոգիաների ամրողականություն, հողային կադաստրի վարման և հողակադաստրային տեղեկատվության ու փաստաբերդի համակարգի համաձայնեցվածություն՝ ինչպես հողային ֆոնդի բոլոր կատեգորիաների հողերի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի կամ տրյեկտների առումով։ Այդ սկզբունքը չի բացառում, որ հողային կադաստրի վարման ընթացքում հաշվի առնվեն նաև տարածքային առանձնահատկությունները։

3. Հողային կադաստրի տվյալների համատեղիությունն ու համադրելիությունը: Հողակադաստրային տեղեկությունները պետք է լինեն համատեղի և համադրելի քաղաքաշինական, անտառային, ջրային, բնական պաշարների և պետական գերատեսչական այլ կադաստրների տեղեկությունների հետ։ Այդ սկզբունքի կիրառումը ապահովում է բնական պաշարների վերաբերյալ տվյալների հավաքումը՝ միասնական մեթոդիկայով։

4. Հողային կադաստրի վարման անընդհատությունը: Հողային հարաբերությունների վերակազմավորման և սեփականության ձևերի նորմավորման, հողօգտագործման, հանրապետության հողային ֆոնդի և դրա առանձին կատեգորիաների քանակական և որակական բնութագրերի փոփոխման, հողերի անտրոպոգեն ծանրաբեռնվածության աճի ընթացքում տեղի են ունենալ հողային ֆոնդի կազմի և բաշխվածության փոփոխություններ։ Հետևապես՝ անհրաժեշտ է ապահովել հողային կադաստրի վարման անընդհատությունը՝ տեղեկատվության համընդհանուր կամ ընտրանքային, անընդմեջ կամ պարբերաբար բարմացման շնորհիվ։

5. Հողակադաստրային տեղեկատվության հավաստիությունն ու ծցքսությունը: Կադաստրային տեղեկությունների հավաստիությունը սահմանվում է՝ ըստ հողային ֆոնդի փաստացի վիճակին և օգտագործմանը դրանց համապատասխանության աստիճանի։ Վարչատարածքային տարրեր մակարդակներում հողակադաստրային տեղեկատվության ծցքտությունը պետք է ապահովի կրնկրեա նպատակների և խնդիրների իրականացում։

6. Հողային կադաստրի տեղեկությունների լիակատարությունը: Հողի սեփականության, տիրապետման և օգտագործման վարչատարածքային տարրեր մակարդակների և ձևերի համար նախատեսված հողա-

7. Հողային կադաստրի տվյալների բազմակողմանիությունն ու համընդգրկելիությունը: Հողային կադաստրի համակարգի հավաստի տեղեկությունները վերաբերում են հողային ֆոնդի օգտագործման բոլոր բնագավառներին (իրավական, տնտեսական, էկոլոգիական, կազմակերպատնտեսական և այլն): Հողային ֆոնդի մասին ստույգ և ամբողջական տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հողերը՝ անկախ դրանց գերատեսչական կամ տնտեսական կարգավիճակից, ինչպես նաև սեփականության ձևերից: Յուրաքանչյուր բացրողում և թերացում հանգեցնում են կադաստրային տվյալների խեղաքյուրման:

8. Էլեկտրոնային և քղթային կրիչների վրա ամփոփված կադաստրային տվյալների իրավաբանական համագործությունը: Տվյալների շիամընկելու դեպքում առաջնությունը տրվում է քղթային կրիչներին:

9. Հողակադաստրային փաստարդերի անժամկետությունը: Հողերի պետական միասնական կադաստրի տեղեկագիրը, կադաստրային գործերն ու կադաստրային քարտեզները առհավետ օգտագործման փաստարդեր են: Դրանց ոչնչացումը կամ որևէ փաստարդի հանումը արգելվում է օրենքով: Արդիականությունը կորցրած փաստարդերը պահպանում են լիազորված պետական օրգանները (արխիվները):

10. Հողակադաստրային տվյալների օգտագործման պարտադիր լինելը: Պետական հողային կադաստրում գրանցված տեղեկությունները իրավաբանական առումով օրինական են բոլոր օգտագործողների համար՝ ներառյալ դատական, հարկային և ֆինանսական օրգանները: Այդ տվյալները պարտադիր են հողային հարաբերություններին վերաբերող հարցերի պարզաբանման և հողային ֆոնդի օգտագործման խնդիրների լուծման ընթացքում: Դրանք ենթակա են պարտադիր կիրառման նաև հողերի օգտագործման և պահպանման պլանավորման ժամանակ, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանության գլխավոր սիենաների մշակման, բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նախագծերի կազմման, հողերի հատկացման (առք ու վաճառք), հողաշինարարության անցկացման, տնտեսական գործունեության գնահատման, հողի վճարների չափերի որոշման (հողի հարկ, վարձավճար, նորմատիվային, շուկայական և գրավային գներ), հողային վեճերի լուծման, հողերի օգտագործման պետական վերահսկողության և դիտարկման, ինչպես նաև այլ միջոցառումների իրականացման համար: Հաստատված

11. Հողակադասագրային տվյալների մատչելիությունը: Հողային կադաստրի տվյալները պետք է լինեն առավելագույնս նատչելի շահագրգիռ իրավաբանական և ֆիզիկական բոլոր անձանց համար (բացառությամբ այն տվյալների, որոնք պետական կամ առևտուրային գաղտնիք են պարունակում): Դրանք պատշաճ կերպով ներկայացնելու համար պետք է կիրառել նաև հաշվողական տեխնիկա և համակարգչային տեխնոլոգիաներ: Հողային կադաստրի տվյալները կարող են ներկայացվել տեղեկատվական բանկի ստեղծման համար: Այդ պարագայում հաշվի է առնվազան նաև համապատասխան կազմակերպությունների և գերատեսչությունների մասնակցությունը: Պետական գաղտնիք հանդիսացող կամ սեփականատիրոջ համար վտանգ ներկայացնող տեղեկությունները կարող են կրել փակ բնույթ:

12. Հողային կադաստրի արդյունավետությունը: Հողային կադաստրի կազմակերպման և վարման համար անհրաժեշտ է կիրառել այնպիսի մեթոդներ, տեխնոլոգիաներ, եղանակներ ու ձևեր, որոնք ապահովում են հողակադաստրային տվյալների հավաքումը, խմբավորումն ու պահպանումը՝ ենթակա դրանց տնտեսական, էկոլոգիական, սոցիալական և այլ բնույթի արդյունավետությունից: Հողային կադաստրի վարման արդյունավետությունը գնահատելու ժամանակ նպատակահարմար է հաշվի առնել հողակադաստրային տվյալների օգտագործման ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ արդյունքը:

13. Պետական հողային կադաստրի կենտրոնացված ղեկավարությունը: Հանրապետությունում հողերի և անշարժ գույքի պետական կադաստրի վարումը, հողօգոտագործողների գրանցումը, հողային ֆոնդի հաշվառումը, բնութագրումը, տնտեսական գնահատումը, պետական վերահսկողությունը պետք է իրականացվի մեկ միասնական կենտրոնից:

2.5. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԴԱՍԱԿՐԳՈՒՄՆ ՈՒ ԶԵՎԵՐԸ

Հողային կադաստրի համակարգի բաղկացուցիչ մասերն ու ենթահամակարգերի հարաբերական ինքնուրույնությունը հնարավորություն են տալիս կադաստրային գործընթացն իրականացնել առանձին փուլերով՝ հաշվի առնելով տնտեսության պահանջներն ու հնարավորությունները:

Հողի՝ որպես բնական պաշարի ու սոցիալ-տնտեսական և էկոլոգիական հարաբերությունների օբյեկտի հատկությունների բազմազանությունը պահանջում է հողային կադաստրը դասակարգել ըստ հիմնական տիպերի, մակարդակների, տեսակների, տարատեսակների նպատակային նշանակության և այլն:

Ըստ բնույթի, բովանդակության և աշխատանքների կատարման հաջորդականության՝ հողային կադաստրը լինում է՝

- հիմնական կամ առաջնային,
- ընթացիկ:

Հողային կադաստրի նշված երկու տեսակներն օրգանապես փոխակցված են և ներկայացնում են միասնական գործընթացի տարրեր փուլեր: Հիմնական հողային կադաստրի խնդիրն է ստանալ կադաստրային շրջանացման ենթակա հողերի բնական, տնտեսական, իրավական և էկոլոգիական վիճակի վերաբերյալ առաջնային տեղեկություններ: Այդ ընթացքում հավաքվում, վերլուծվում և խմբավորվում են բոլոր այն նյութերն ու փաստաթղթերը, որոնք պարունակում են տեղեկություններ՝ հողերի իրավական կարգավիճակի, հողատեսքերի քանակական և որակական բնութագրերի, հողերի օգտագործման բնույթի, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, նյութական և դրամական միջոցների և աշխատանքային ծախսերի վերաբերյալ: Հողային կադաստրի առանձին մասերի վարման համար որոշվում է հավաքված նյութերի հավաստիությունն ու ամրողականությունը: Այնուհետև կազմվում է հողային կադաստրի իրականացման ծրագիր, որը հաշվի է առնվում յուրաքանչյուր բաղկացուցիչ մասին վերաբերող աշխատանքի բնույթն ու ծավալը:

Ստացված տեղեկատվությունը, մշակելուց, քննարկելուց և հաստատելուց հետո, դառնում է ելակետային՝ օրենսդրական փաստաթղթերի կազմման համար: Դրա հիման վրա հողային կադաստրի փաստաթղթերում կատարվում է առաջնային գրանցում:

Հիմնական հողային կադաստրի վարման ընթացքում անցկացվում են քարտեզագրման, հողերի հետազոտությունների, նկարագրությունների և գնահատման մեծածավալ աշխատանքներ, որոնք, ըստ անհրաժեշտության, իրականացվում են պարբերաբար:

Հիմնական հողային կադաստրի ներդրումից հետո՝ հողային պաշարների տնտեսական օգտագործման ընթացքում, տեղի են ունենում ինչպես հողերի կազմի, որակի և արդյունավետության վերաբաշխման, այնպես էլ հողատերերի և հողօգտագործողների կազմի փոփոխություններ:

Հիմնական հողային կադաստրի տվյալների արդիականությունն ապահովելու նպատակով կադաստրային փաստաթղթերում մշտապես կատարվում են ճշգրտումներ: Այդ կապակցությամբ մշակվում է ընթացիկ հողային կադաստր, որի խնդիրն է համապատասխան փաստաթղթերում ժամանակին գրանցել այն բոլոր օրինական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում իմնական հողային կադաստրի վարումից հետո:

Ընթացիկ հողային կադաստրի վարման ժամանակ հայտնաբերված հողօգտագործման տարածքների անօրինական մեծացումը, ապօրինի հողօգտագործումը, առանց համապատասխան իրավաբանական ձևակերպման հողերի փոխանցումը մեկ սեփականատիրոջից կամ հողօգտագործողից մյուսին, առանց բավարար հիմնավորման արժեքավոր հողերի անցումը ցածրաթեք հողերի շարքը և այլ անօրինական փոփոխություններ հողային կադաստրի փաստաթրերում չեն գրանցվում:

Ընթացիկ հողային կադաստրը ընդգրկում է ոչ բոլոր տարածքները, այլ այն մասերը, որտեղ կատարվել են փոփոխություններ:

Այսպիսով՝ հողային կադաստրի երկու տեսակները (հիմնական և ընթացիկ) հնարավորություն են տալիս ստանալ ոչ միայն հողային ֆոնդի վիճակի և օգտագործման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, այլ նաև ժամանակին իրականացնել հողերի օգտագործման և պահպանման հսկողություն, հողատերերի և հողօգտագործողների իրավունքների պաշտպանություն: Այս առումով հիմնական և ընթացիկ հողային կադաստրների միջև գոյություն ունի սերտ կապ: Հիմնական հողային կադաստրը տալիս է հողային ֆոնդի լրիվ բնութագիրը և հիմք է ստեղծում ընթացիկ կադաստրի վարման համար, որոշում դրա գործառույթների սահմանները: Ընթացիկ կադաստրը բացահայտում, բարձացնում և լրացնում է հիմնական կադաստրում անփոփլած տեղեկությունները՝ այն համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին:

Ենթակա հողային ֆոնդի օգտագործման բնույթից՝ հողային կադաստրը դասակարգվում է ըստ տեսակների և տարատեսակների: Գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրը համարվում է կադաստրի տեսակ, իսկ վարեկահողերի, բազմամյա տնկարկների, բնական կերահանդակների կադաստրը՝ տարատեսակ: Բնակավայրերի հողերի կադաստրը ընդգրկում է կառուցապատված տարածքների, արդյունաբերական, հանգստյան գոտիների և կադաստրի այլ տարատեսակները:

Հողային ֆոնդի կազմում գոյություն ունեն կադաստրի հետևյալ տեսակները՝

- գյուղատնտեսական նշանակության հողերի,
- բնակավայրերի հողերի,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուց վածքների օբյեկտների հողերի,
- հասուկ պահպանվող տարածքների հողերի,
- հասուկ նշանակության հողերի ,
- անտառային ֆոնդի հողերի,
- ջրային ֆոնդի հողերի,

- պահուստային հողերի:

Իր հերթին՝ յուրաքանչյուր տեսակի հողային կադաստր, ըստ նշանակության, ստորաբաժանվում է ենթատեսակների: Գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրը ստորաբաժանվում է՝

- գյուղատնտեսական հողատեսքերի,
- գյուղատնտեսության մեջ չօգտագործվող հողերի (խախտված հողեր, թփուտներ, ճահիճներ և այլն):

Բնակավայրերի հողերի կադաստրը ստորաբաժանվում է հետևյալ տեսակների՝

- քաղաքների հողերի,
- քաղաքատիպ ավանների հողերի,
- առողջարանների և այլ հատուկ բնակավայրերի հողերի,
- գյուղական բնակավայրերի հողերի և այլն:

Անտառային ֆոնդի հողերի կադաստրի երկու տարատեսակներն են՝

- անտառներով ծածկված հողերը,
- անտառներով չծածկված հողերը:

Բոլոր տեսակների և տարատեսակների հողային կադաստրներն, ըստ գործառնական նշանակության, լինում են **նպատակային** և **բազմանպատակ**: Հողերի նպատակային կադաստրը նախատեսվում է որևէ գործողության համար, օրինակ՝ հարկման (հարկային կադաստր), հողասեփանատերերի իրավունքի պաշտպանության (իրավաբանական հոդային կադաստր) և այլն:

Բազմանպատակ հողային կադաստրը հետապնդում է բազմաթիվ հիմնարար նպատակներ (հարկում, հողի նորմատիվային գնի սահմանում, հողի բերրիության բարձրացման միջոցառումների պլանավորում, հողերի և շրջակա միջավայրի պահպանություն և այլն):

Ելեկով պատկանելությունից՝ հողային կադաստրն ըստ մակարդակների ստորաբաժանվում է՝

- առանձին հողատեսքի,
- ազդուանողաթուային զանգվածի առանձին հողամասի, կամ ամբողջ ազդուանողաթուի,
- գյուղատնտեսական ձեռնարկության հողերի,
- վարչական մարզի հողերի,
- բնակավայրի հողերի,
- հանրապետության հողային կադաստր:

Հողային կադաստրի ստորաբաժանումն, ըստ տեսակների, տարատեսակների և պատկանելության մակարդակների, ունի կարևոր տնտեսական նշանակություն և հնարավորություն է տալիս հողային կադաստրի վարումն իրականացնել փուլ առ փուլ:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

3.1. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարդկային հասարակության զարգացման ընթացքում՝ հողի նըկատմամբ սեփականության տարրեր ձևերի առաջացմանը զուգընթաց, անհրաժեշտություն առաջացավ պաշտպանել բոլոր սուբյեկտների իրավունքները: Հողի նկատմամբ իրավունքի ամրագրման համակարգի ստեղծման հարցում շահագրգոված են առնվազն երկու հզոր ուժ: **առաջինն** անհատն է (կամ ընտանիքը), որը ճգոտում է, որպեսզի հանրութեն ճանաչվեն հողի նկատմամբ իր իրավունքները և բացառվեն ուննագությունները, **երկրորդը՝** պետությունը, որը կոչված է նվազագույնի հասցնել հողային վեճերը, հաշվառել և գնահատել իր հողային պաշարները, արդյունավետ միջոցառումներ մշակել հարկման մեխանիզմի զարգացման համար:

Հայաստանը, որպես աշխարհի հնագույն երկրներից մեկը, ունեցել է հողի հաշվառման և գնահատման իր մոտեցումներն ու համակարգը: Յավոր, կադաստրային համակարգի գոյության վերաբերյալ պահպանված տեղեկություններ կան միայն Յարական Ռուսաստանի Ժամանակաշրջանից:

Իրոք, Արևելյան Հայաստանը, 1828 թվականից դառնալով Ռուսական կայսրության հեռավոր ծայրամասերից մեկը, ենթարկվում էր այն բոլոր փոփոխություններին, որոնք տեղի էին ունենում Ռուսաստանում: Հովհաննես Թումանյանի հավաքած տվյալներով՝ 1894 թ. Արևելյան Հայաստանում գյուղատնտեսական հողատարածությունների 89 %-ը համարվում էր պետական և արքունական, 8,7 %-ը՝ խոշոր մասնավոր հողատիրական և միայն 2,3 %-ը՝ անհատական գյուղացիական տնտեսությունների հողեր: Կարելի է ասել, որ Հայաստանի գյուղացիությունը 20-րդ դար էր թևակոխել, պահպանելով, հիմնականում, հողօգտագործման համայնքային սկզբունքը: Դրա էությունը նրանում էր, որ գյուղի աշխատավոր բնակչությունը միավորվում էր մի համայնքում, գյուղացին ստանում էր գյուղի հողօգտագործման սահմաններում եղած պետական, արքունական, կալվածատիրական կամ վաճառապատկան հողերը, որոնք որոշակի պայմաններով (հարկերով, պարհակներով) բաշխվում էին ըստ գյուղա-

յիական ծիսերի, և յուրաքանչյուր ծովիս մշակում էր իրեն հատկացված հողակտորը:

Խորհրդային իշխանությունն իր հետ բերեց նաև ազգարային հարաբերությունների արմատական փոփոխություններ: Պետությունը դարձավ հողի միակ սեփականատերը: Հայաստանի Հեղկոմը 1920 թ. դեկտեմբերի 28-ին ընդունեց «Հռոերի պետականացման մասին» դեկրետը, իսկ 1921 թ. ապրիլի 12-ին՝ «Սոցիալիստական հողաշինարարության անցնելու կանոնադրության մասին» որոշումը: Դա, ըստ Էռյանի, Ռուսաստանում 1918 թ. ապրիլի 18-ին ընդունված «Հռոյի սոցիալիզացիայի մասին» օրենքի կրկնությունն էր: Հանրապետության ամբողջ հողային ֆոնդը դարձավ պետական սեփականություն, և գյուղատնտեսական հողերը հասարակական հիմունքներով բաշխվեցին աշխատավոր գյուղացիության միջև՝ ըստ շնչերի քանակի: Այսպիսով՝ 1921-1922 թթ. ընթացքում Հայաստանի գյուղացիությանը բաժանվեց 623,6 հազար հեկտար հող: Պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի աշխատավոր գյուղացին ստացավ հող՝ անժամկետ օգտագործման իրավունքով: Սակայն այդ իրավիճակը տևեց մինչև գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը (1923-1933 թթ.): Այժմ հաճախակի կրկնվող «հողը վերադարձվեց իր տիրոջը» արտահայտության փոխարեն ավելի ճիշտ կլինի ասել, որ «ի վերջո՝ հողը ձեռք բերեց իր տիրոջը», քանի որ մեր ամբողջ պատմության ընթացքում հայ գյուղացին միայն անցյալ դարի քանական թվականներին է հողատեր եղել: Խորհրդային Հայաստանի հողային հարաբերությունների պատմության մեջ 1921-1927 թթ. դիտարկվում են որպես գյուղի ներքին հողաբաժնան ժամանակաշրջան: ՀՍՍՌ Հողժողովադատը նշում էր, որ Սովետական Հայաստանում «գյուղի ներքին ժամանակավոր հողաբաժնումն ավարտվել է 1926-1927 թթ.»:

Խորհրդային տարիներին գոյքի նկատմամբ իրավունքների գրանցման գործառույթներն իրականացրել են տեխնիկական գոյքագրման բյուրոները (ՏԳԲ): Սակայն գրանցման համակարգը լիարժեք չէր կարող գործել, քանի որ ԽՍՀՄ-ում հողը պետական սեփականություն էր, իսկ առք ու վաճառքի ենթակա էին միայն բնակչության միջոցների հաշվին կառուցված, անձնական սեփականություն հանդիսացող շենքերն ու շինությունները: Բացակայում էր հողային կադաստրի միասնական համակարգը: Հողերի վերաբերյալ հաշվառումները, դրանց գրանցումն ու այլ գործողությունները կատարվում էին անջատ՝ մեկը մյուսի հետ չհամաձայնեցված:

1954 թ. դեկտեմբերի 31-ին ՍՍՌ-Մ Մինիստրների սպեադի կողմից ընդունված «ՍՍՌ-Մ հողային փոնի պետական միասնական հաշվառման մասին» որոշումը նոր փոլ հանդիսացավ երկրի հողերի հաշվառման գործում: Այդ որոշման համաձայն՝ ըստ հողօգտագործողների և հողատեսքերի, պարտադիր կարգով պետական միասնական հաշվառման էին

Ենթակա ՍՍՌ-Մ, այդ թվում նաև՝ մեր հանրապետության, բոլոր հողերը: ՍՍՌ-Մ գյուղատնտեսության մինիստրության 1956 թ. մայիսի 27-ի որոշմամբ հաստատվեցին հաշվառման նոր փաստաթղթեր՝ հողերի օգտագործման իրավունքի ակտը, հողօգտագործման գրանցման պետական գիրքը, իսկ նույն թվականի փետրվարին հաստատվեց «Հողերի պետական հաշվառման կարգի և հողօգտագործման գրանցման մասին» հրահանգը:

Խնդիր դրվեց կատարել ոչ միայն հողերի քանակական, այլ նաև որակական հաշվառում: Ըստ հողօգտագործողների իրականացվեցին հողագիտական, երկրաբուսաբանական խոշորամաշտար հետազոտություններ, որոնք հնարավորություն տվեցին հողերի քանակական և որակական հաշվառումը գիտական հիմքերի վրա դնել և աստիճանաբար անցնել հողերի բոնիտման և տնտեսական գնահատման աշխատանքներին:

1968 թ. ընդունված ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների հողային օրենսդրությունում հատուկ տեղ էր հատկացված պետական հողային կադաստրին, որն իր մեջ ներառում էր հողերի գրանցման, քանակական և որակական հաշվառման, բոնիտման և տնտեսական գնահատման տվյալները: Գիտահետազոտական, փորձարարական և արտադրական հետազա աշխատանքները նպաստեցին հողային կադաստրի համակարգի ստեղծմանը: Մշակվեցին հողերի բոնիտման և տնտեսական գնահատման առարկայի, չափանիշների, ցուցանիշների մշակման միասնական ձևեր:

1976 թ. հաստատվեց «Հողերի գնահատման համամիութենական (ժամանակավոր) մեթոդիկան», որով հատակեցվեցին հողագնահատման աշխատանքների կատարման կարգը և բովանդակությունը: 1977 թ. մայիսի 10-ին ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդն ընդունեց «Պետական հողային կադաստրի վարման կարգի մասին» որոշումը, որը սահմանեց երկրում պետական հողային կադաստրի միասնական համակարգ:

Հանրապետության հողային կադաստրի վարումը արդյունավետ դարձնելու նպատակով իրականացվեցին բոլոր հողօգտագործողների և պետական ֆոնդի հողերի տնտեսական գնահատման աշխատանքներ, հողօգտագործողներին, պլանավորող մարմիններին և շահագրգիռ կազմակերպություններին տրվեցին հողերի կադաստրային գնահատման նյութեր, կազմվեց հանրապետության հողային կադաստրի ատլասը:

Հայաստանի Հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորմանն ուղղված բարեփոխումների առաջին քայլն էր հողի և գյուղատնտեսական այլ հիմնական միջոցների սեփականաշնորհումը:

Սեփականաշնորհման իրավական ապահովման համար հիմք հանդիսացան ՀՀ Գերագոյն խորհրդի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» (31.10.1990 թ.), «Գյու-

դացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» (22.01.1991 թ.), «Ձեռնարկությունների և ձեռնարկչատիրական գործունեության մասին» (14.03.1992 թ.) օրենքները, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրը (29.01.1991 թ.) և մի շարք այլ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր:

Հոդի բաժանումն իրականացվեց հավասար՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով: Հնարավորության սահմաններում՝ յուրաքանչյուր ընտանիք ստացավ տարբեր տեսակի հողեր, օրինակ՝ ոռոգելի վարելահող, անջրդի վարելահող, բազմամյա տնկարկներ (պտղատու և խաղողի այգիներ) և խոտհարքներ: Արոտավայրերը մնացին որպես պետական սեփականություն, իսկ ամրող վարելահողերի քառորդ մասը՝ որպես պահուստ: Ընտանիքին հանձնված յուրաքանչյուր տեսակի հողամասի տեղը որոշվեց վիճակահանուրյամբ:

Այսպիսով՝ ազգարային բարեփոխումների արդյունքում, նախկին մոտ 1200 կոլտնտեսությունների, խորհունտեսությունների և միջտնտեսական ձեռնարկությունների հիմքի վրա կազմավորվեցին բազմաթիվ ու բազմաբնույթ սուրբեկտներ, գլխավորապես՝ անհատական գյուղացիական տնտեսություններ: 2006 թ. հունվարի 1-ի դրույթամբ՝ գյուղացիական տնտեսությունների քանակը հասնում էր շուրջ 339,2 հազարի: Դրանց կողմից տնօրինվող գյուղատնտեսական հողատեսքները կազմում են 469,7 հազ. հա, որից վարելահողերը՝ 368,4 հազ.հա (78,1%):

Հանրապետության հողային ֆոնդի առկայությունը և գյուղատնտեսական հողատեսքների բաշխվածությունն ըստ մարզերի 2006 թ. հուլիսի 1-ի դրույթամբ ունեցել է հետևյալ պատկերը (աղ. 1):

Հանրապետության մեկ «պայմանական» տնտեսություն միջին հաշվով տնօրինում է 1,4 հա հողատեսք (որից՝ 1,1 հա վարելահող), 1,4 գրում խոշոր եղջերավոր անասուն (որից՝ 0,7 կով), 1,5 գրում ոչխար և այլն ու զբաղվում 4-8 գյուղատնտեսական արտադրատեսակի արտադրությամբ, որոնք ել հիմնականում օգտագործվում են սեփական կարիքների բավարարման համար, այսինքն՝ սպառվում են տնտեսության ներսում: Ծովական է հանգում արտադրանքի մոտ 40 %-ը, իսկ ոռոգելի հողատեսքները շունեցող տնտեսություններն իրացնում են իրենց արտադրանքի միայն 22 %-ը: Միջին գյուղացիական տնտեսությունը բաղկացած է երեք հողակտորներից, որոնցից մեկը ոռոգելի է, իսկ երկուսը՝ անջրդի:

Հարկ է նշել, որ ի սկզբանե հողային բարեփոխումները հանրապետությունում շունեին գիտականորեն հիմնավորված ռազմավարություն, գործողության ծրագիր և ընդհանուր հայեցակարգ: Դրանք կատարվեցին կայծակնային արագությամբ՝ առանց բնակչության՝ հատկապես գյուղացիության կարծիքն ու շահերը հաշվի առնելու:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության հոդային ֆոնդի առկայությունը և գյուղա-
տնտեսական հողատեսքերի բաշխվածությունն ըստ մարզերի 2006 թ. հուլիսի
1-ի դրությամբ, հազ. հա

Մարզի անվանումը	Վարչա- կան տարածքը	Գյուղատրն- տեսական նշանակութ- յան հողեր, ընդամենը	Այլ բվում՝				
			Վարելա- հող	բազմամ- յա տրն- կարկներ	խոտ- հարք	արոտա- վայրեր	այլ հողա- տեսքեր
Արագածոտն	275,6	218,2	54,6	3,7	3,2	138,1	18,6
Արարատ	208,9	157,8	27,4	7,5	2,8	79,0	41,0
Արմավիր	124,2	97,0	43,2	8,4	0,3	23,6	21,6
Գեղարքունիք	534,9	352,8	80,9	0,0	38,0	180,9	52,9
Լոռի	378,9	251,2	42,1	0,5	35,7	145,9	27,0
Կոտայք	209,3	162,1	37,8	2,4	10,8	84,6	26,5
Շիրակ	268,0	229,7	79,8	0,0	11,7	125,2	12,9
Սյունիք	450,5	335,1	43,8	1,1	7,7	176,4	106,1
Վայոց ձոր	230,8	209,3	16,3	1,2	4,9	109,1	77,8
Տավուշ	270,4	112,2	25,4	2,0	12,5	61,1	11,2
Երևան	22,7	4,4	1,6	0,6	0,0	1,1	1,1
Ընդամենը ՀՀ	2974,3	2129,6	453,0	27,2	127,5	1125,0	396,9

Փաստորեն՝ իրավական իիմքերը ստեղծվում էին բարեփոխում-ների ընթացքում: Օրենսդրական շատ դրույթներ բխում էին չփորձարկված առաջարկությունների և գործողությունների բովանդակությունից:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հողային հարաբերությունների բարեփոխումները բարդ և երկարատև գործընթաց են, քանի որ, իրավասոցիալական համային հարցերը լուծելուց բացի, պետք է փոխվի նաև քաղաքացիների հոգեբանությունը, հասունանա հողի սեփականության իրավունքի ընթանումն ու գիտակցումը:

Անկ սոցիալ-տնտեսական համակարգից մյուսին անցնելը հաճախ ուղեկցվում է ճգնաժամային ցավագին երևույթներով, հատկապես, երբ խոսքը վերաբերում է կոնունիսատական և ազատ շուկայական համակարգերին: Անցումային շրջանի հետոցիալիստական 27 երկրների մի մասում, մասնավորապես՝ Եվրոպական երկրներում, պահպանվեց պետության ակտիվ դերը սեփականաշնորհման կարգավորման գործընթացում, ինչը տնտեսությունը գերծ պահեց խոր ճգնաժամից և սոցիալական ցնցումներից: Հայաստանի Հանրապետությունը զնաց պետության դերի թերազնահատման, «շուկային թերապիայի» մողեկի կիրառման ուղիով, փորձելով ներմուծել մի շարք խոշոր տնտեսական բարեփոխումներ՝ որքան հնարավոր է արագ անցնել մասնավոր սեփականության վրա իմնված ազատ շուկայական հարաբերություններին: Գների ազատա-

կանացումը հանգեցրեց արտադրության ծավալների խիստ կրճատմանն ու բնակչության կենսամակարդակի կտրուկ անկմանը:

Գյուղատնտեսությունը նույնպես չխոսափեց ճգնաժամից. 1992-1993 թթ. ճյուղի համախառն արտադրանքը կրճատվեց 13,3 %-ով, հիմնովին փոխվեց գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը, հատկապես կրճատվեցին կերային մշակաբույսերի, պտղի և հատապտղի ու խաղողի տարածությունները: Տնտեսությունների չափազանց փոքր չափերը՝ պետության ակտիվ աջակցության բացակայության պայմաններում, հանգեցրին հողի բերրիդության իշեցմանը, խոշննդուեցին գյուղատնտեսությունում ինդուստրիալ տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների ներդրման և կիրառման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Գյուղատնտեսությունում, ըստ Հունական շիրականացվեցին լոլոր ներդրումային ծրագրեր: Բացակայում էր ապահովագրական համակարգը: Գյուղացուն՝ իր արտադրած գյուղմթերքի իրացումից ստացված համախառն եկամտից, մնում էր միայն 25 %:

Հասարակական կյանքի այս կամ այն կողմից յուրաքանչյուր վերափոխում չի ոչնչացնում գյուղություն ունեցող սոցիալ-տնտեսական կառուցվածքի հիմքերը: Այդ պատճառով էլ հողային բարեփոխումները պետք է դիտարկել որպես հողային հարաբերությունների և հողօգտագործման կառուցվածքի փուլային փոփոխությունների նպատակապաց գործընթաց: Այդ փոփոխությունները շոշափում են հողի սեփականության, տիրապետման, տնօրինման և օգտագործման ձևերի վերափոխման, հողային հարաբերությունների կարգավորման, տնտեսական լծակների ձևավորման հարցերը:

1991-1995 թթ. հողային բարեփոխումները կոչված էին իրագործելու բարդ և բազմակողմանի համալիր խնդիրներ՝

- անցում հողերի բազմասեփականության ձևերին (տիրապետում, տնօրինում, հողօգտագործում),
- հողերի բաշխման սոցիալական արդարության և տնտեսական հիմնավորվածության ապահովում,
- տնտեսավարման բոլոր ձևերի համար հավասար տնտեսական պայմանների ստեղծում,
- հողային հարաբերությունները կարգավորող, դրանց արդյունավետությունը ու պահպանումը խթանող տնտեսական լծակների ստեղծում,
- հողերի վատրաբացման և մյուս բնական պաշարների վրա ազդրող բացասական երևոյթների կանխում, դրանց վերականգնման աշխատանքներին պետության աջակցության ապահովում:

3.2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՂԱՍՏՐԻ ՀԱՍՏԱՐԳԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունում բազմասեփականության ինստիտուտի ներդրման հետ մեկտեղ առանձնակի անհրաժեշտություն առաջացավ պետականորեն ճանաչել և երաշխավորել անշարժ գույքի նկատմամբ բոլոր սուբյեկտների իրավունքները, ինչի արդյունավետ իրականացման համար առաջնահերթ խնդիր դարձավ անշարժ գույքի կադաստրի միասնական համակարգի ստեղծումը: ՀՀ կառավարության 1997 թ. № 234 որոշման համաձայն՝ ստեղծվեց ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչություն, որի հիման վրա կառավարության 1999 թ. հունիսի 28-ին (№ 442 որոշում) ստեղծվեց ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝ իր 48 տարածքային ստորաբաժանումներով: Այդ որոշման 3-րդ կետը սահմանում է, որ «անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումն ընդգրկում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, անշարժ գույքի հաշվառումը, կադաստրային քարտեզագրումը, անշարժ գույքի կադաստրային գնահատումը, անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումը»:

Հանրապետությունում հողային բարեփոխումների օրենսդրական իրավական փաստաթղթերի ստեղծման ամրող գործընթացը կապված է անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գործունեության հետ: Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ խնդիրները՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումն ու կադաստրի համակարգի գործունեության ապահովումը,
- անկախ սեփականության ձևից՝ գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների պետական գրանցման իրականացումը,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ անկախ սեփականության ձևից՝ անշարժ գույքի պետական կադաստրային քարտեզագրումը, թվային կադաստրային քարտեզների կազմումը,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ անշարժ գույքի կադաստրային գնահատումը, հողի հարկի, գույքահարկի բազայի ստեղծումը,
- անշարժ գույքի ծածկագրման (կողավորման) համակարգի, պետական գրանցման ծածկագրերի մշակումն ու ներդրումը,

- անշարժ գույքի պետական գրանցման, հաշվառման, կադաստրային քարտեզագրման, գնահատման, համակարգի ոլորտների լիցենզագործման աշխատանքներում համաշխարհային փորձի կիրառումը,
- անշարժ գույքի պետական համակարգված դիտարկումների կազմակերպումն ու իրականացումը, անշարժ գույքի շուկայի վերլուծումն ու տեղեկատվության հրապարակումը,
- անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումը, կադաստրային գործերի և պետական գրանցման փաստաթղթերի պահպանումը,
- կադաստրային քարտեզագրողների, ոիելքորների, անշարժ գույքի շուկայական գնահատողների լիցենզագործումը,
- կադաստրի ավտոմատացված համակարգի ներդրումը,
- անարժ գույքի, դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության հավաստիթյան, ամբողջականության, մատչելիության, թարմացման և հրապարակայնության ապահովումը,
- կոմիտեի տարածքային ստորաբաժանումների ղեկավարումը, կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, մեթոդական օգնության կազմակերպումը,
- իր իրավասության սահմաններում՝ հողային քաղաքականության, հողային կառավարման սկզբունքների մշակումը, անշարժ գույքի հետ կապված հարաբերությունների կարգավորումը,
- բնակավայրերի գլխավոր հատակագծերի, հողերի օգտագործման սխեմաների կազմման համար անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,
- կազմված նախագծերի վերաբերյալ եզրակացության տրամադրումը,
- բազմաբնույթ կադաստրների վարման համար անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,
- համակարգում մատուցվող ծառայությունների, գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության դիմաց գանձվող վճարների հաստատումը,
- համակարգում ֆինանսական հոսքերի կենտրոնացումը, համակարգի եկամուտների և ծախսերի պլանավորումը,
- բնագավառի գործունեությունը կարգավորող օրենսդրական և իրավական նորմատիվ ակտերի նախագծերի մշակումը, նոր-

- իր իրավասության սահմաններում՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը, անշարժ գույքի կաղաստի ծրագրերի իրականացումը,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառնությունների իրականացումը:

Հողային հարաբերությունների զարգացումը նպաստեց պետական հողային կաղաստի բաղկացուցիչ մասերի վարմանը: Ընդունվեցին մի շարք իրավահաստատող փաստաթրեր: Իրավաբանորեն տարանջատվեցին «հողի նկատմամբ սեփականության իրավունք» և «հողի օգտագործման իրավունք» հասկացությունները: Ծրագառության մեջ դրվեցին հողաբաժինները, հողի նորմատիվային և շուկայական գները, հողի հարկ, վարձավճար և այլ նոր հասկացությունները: Զեավորվեցին հողային նոր հարաբերությունները:

ՀՀ Սահմանադրությամբ հստակեցվեցին հողի և հողային հարաբերություններում ծագող հարցերը. «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Յուրաքանչյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք: Սեփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը»:

Գյուղացիական տնտեսություն վարելու համար որպես սեփականություն տրամադրվող հողամասի չափը հանրապետության տարրեր մարզերում և համայնքներում տարրեր է. այն կախված է համայնքի գյուղատնտեսական հողատարածքի և ծիների ու շնչերի քանակից: Օրինակ՝ Արարատի մարզում գյուղացիական մեկ տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 0,6 հա, Արմավիրում՝ 0,8, Շիրակում՝ 2,4, Սյունիքում՝ 3,1 հա հողատարածք: Գյուղատնտեսության մեջ գրաղված մեկ աշխատողին բաժին է ընկնում 0,9 հա մշակվող հողատարածք:

Ինչպես նշեցինք, հանրապետությունում հողերի սեփականաշնորհումը հանգեցրեց մի շարք բացասական հետևանքների: Փոխվեցին առանց այն էլ մասնատված փոքր հողահանդակների տեխնոլոգիական հատկությունները: Մանր հողաբաժիններում գերակշռող դարձավ ձեռքի աշխատանքը: Առանձին հողասեփականատերեր, զրկված լինելով հողի

մշակման մեքենաներից և գործիքներից, հրաժարվեցին բնակավայրից հեռու գտնվող իրենց հողարաժիններից:

Միևնույն ժամանակ մենք ականատես եղանք մեկ որիշ ծայրահեղության, երբ հողի մասնավորեցումից հետո պետությունը չդարձավ զյուլացու հովանավորն ու աջակիցը՝ նրան բողնելով երկրագործության հետ կապված բոլոր հոգսերի ծանրության տակ: Արդյո՞ք, դա էր պահանջում ազգարային համակարգի բարեփոխումը:

Այստեղ ծագող առաջին տեսական հարցը վերաբերում է տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհնան գործընթացների փոխարարելությանը: Արտադրական միջոցների սեփականաշնորհումը բարեփախումների մի մասն է միայն, ինչն ինքնին, չի կարող ցանկալի արդյունք տալ: Գյուղատնտեսության մեջ հողի սեփականաշնորման ընթացքում ուշադրությունից դրւում մնացին այդ նույն ճյուղը սպասարկող արտադրական ենթակառուցվածքների օղակները՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (մեքողները), զյուղատնտեսության տեխնիկական սպասարկման ողջ գործընթացը, ճանապարհաշնորհյունը, ջրամատակարարումը, տեղեկատվությունը, ինչպես նաև այդ ճյուղի գենետիկ բազայի վերաբարդության հարցերը (սերմնաբուծություն, բույսերի պաշտպանություն, անասնաբուժություն, տոհմային գործ և այլն): Գյուղատնտեսության ենթակառուցվածքային նշված օղակները լուծարվեցին, սակայն դրանք առ այսօր գրեթե ոչնչով չեն փոխարինվել:

Հաջորդ տեսական հարցը կապված է սեփականաշնորհումը որպես «հրաշագործություն» դիտելու պատրանքի հետ: Սկզբնական շրջանում տարածված էր այն կարծիքը, որ սեփականաշնորհումն ինքնարերաբար կծնի մասնավոր սեփականություն և սեփականատերերի նոր՝ միջին խավ, որը և երկիրը կիանի ճգնաժամից: Իրականում մասնավոր սեփականությունը ոչ այնքան իրավական, որքան տնտեսական կատեգորիա է: Օրենսդրական ակտով այն կարելի է միայն հռչակել, մինչդեռ իրականություն դառնալու համար այն պետք է ծագի և հասունանա որպես տնտեսական հարաբերություն՝ որևէ բարիքի (օրյեկտի) տնօրինման, տիրապետման, օգտագործման, օտարնան և այլ առիթով:

Պատմությունը վկայում է, որ մասնավոր սեփականությունը կարելի է վերացնել օրենսդրական ակտով, սակայն նույն արագությամբ այն ստեղծել հնարավոր չէ, ինչպես հնարավոր չէ իրավական ակտով վերափոխել տնտեսական հարաբերությունների ամրող բովանդակությունը:

Այս առումով Հայաստանի Հանրապետությունում իրականացված բարեփոխումները միայն նախադրյալներ ստեղծեցին հողային նոր հարաբերությունների իրավական և տնտեսական կարգավորման մեխանիզմների կիրառման համար: Հասարակական սեփականությունից հողը դարձավ քաղաքացիների տիրապետման, օգտագործման և տնօրինման առարկա, զրանցվեցին նախկինում գոյություն ունեցող և նոր ձևավորված

հողօգտագործողները: Աստիճանաբար կատարելագործվեց հողի սեփականության իրավունքի գրանցման մեխանիզմը:

Հողի սեփականության իրավունքի գրանցման փաստաթղթերի հանձնումը կապված էր մեծածավալ կադաստրային քարտեզագրման աշխատանքների, տեղանքում սահմանների հաստատման, ամրակայման և գրանցման միասնական համակարգի ստեղծման հետ: ՀՀ Ազգային ժողովը 1999 թ. ընդունեց «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքը, որով կարգադրվեցին հանրապետությունում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը և պետական գրանցում իրականացնող համակարգի գործունեությունը: Հաստագրվեցին պետական գրանցման հիմնական խնդիրները: Որոշվեց, որ պետական գրանցումն իրականացնում է անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգը, որը կազմված է ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման հանրապետական մարմնից և դրա տարածքային ստորաբաժանումներից: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից անմիջապես հետո տրվում է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական:

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականն այն միակ փաստաթությն է, որը հաստատում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքը և սեփականատիրոջն իրավունք է տալիս կատարել անշարժ գույքի հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործարքներ:

Հողային բարեփոխումները թույլ տվեցին վերացնել հողի նկատմամբ սեփականության պետական մենաշնորհը, որով օրենսդրորեն առաջին անգամ հողը տրամադրվեց քաղաքացիներին՝ որպես մասնավոր սեփականություն: 1994 թ. ընդունվեց «Հողի հարկի մասին» օրենքը, հատակեցվեցին հողի վճար, հողային հարկ, վարձավճար, հողի գին հասկացությունները: Հողի հարկը վճարում են հողի սեփականատերները, իսկ հողի վարձը՝ պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողները:

Հաջորդ կարևոր միջոցառումներից է հողասեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման կատարելագործումը: Այդ նպատակով կատարվում է հողերի քանակական և որակական հաշվառում, կադաստրային քարտեզագրում, հողերի կադաստրային գնահատում: Պետական հողային կադաստրի համակարգում ստեղծվեց իրավական, մեթոդաբանական, տեղեկատվական, նյութատեխնիկական և ֆինանսական բազա: Ընդունվեցին բազմաթիվ օրենսդրական և իրավական ակտեր, որոնց հիման վրա մեր հանրապետությունում կարգավորվում են հողային հարաբերությունները:

Հողային հարաբերությունների իրավական կարգավորման կարևոր քայլերից մեկը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի ընդունումն էր, որով սահմանվեց «հողի սեփականության իրավունք» հասկացությունը: ՀՀ հողային օրենսգրքով **առաջին անգամ հողը համարվեց անշարժ գույքի օբյեկտ**: Այստեղ նշվեց, որ հողը և հողի վրա ամրակայված գույքը համարվում են անշարժ գույք: Օրենքով թույլատրվեց հողամասի վրա ոչ միայն ծավալել գյուղատնտեսական գործունեություն, այլ նաև սահմանված կարգով այն օգտագործել որպես անձնական օժանդակ տնտեսության, անհատական բնակելի տան կառուցման, վարձակալության հանձնելու և գրավ դնելու օբյեկտ: Ըուկայական տնտեսության պայմաններում հողը դարձավ առք ու վաճառքի առարկա (նկ. 2):

Հողասեփականատերն իրավունք ունի իր հայեցողությամբ, իրեն պատկանող հողամասի նկատմամբ, կատարել ցանկացած գործողություն, որը չի հակասում օրենքին և այլ անձանց իրավունքներին ու օրենքով պահպանվող շահերին, այդ թվում հողամասը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, այն գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի՝ հողային հարաբերությունների օբյեկտներ են համարվում հողամասերը և դրանց նկատմամբ իրավունքները: Հողային հարաբերությունների սուբյեկտներ են պետությունը, համայնքներն ու իրավաբանական անձինք:

Սեփականության իրավունքի հետ միասին գույքային իրավունքներ են համարվում գրավի իրավունքը, գույքի օգտագործման իրավունքը, սերվիսությունները:

Հողային հարաբերությունների բարեփոխումների ընթացքում ընդունվեցին մի շարք իրավական փաստարդեր: Տարածատվեցին «հողի նկատմամբ սեփականության իրավունք» և «հողի օգտագործման իրավունք» հասկացությունները: Առաջացավ «հողաբաժն» նոր հասկացությունը: Միաժամանակ ընդունվեցին մի շարք իրավական փաստարդեր՝ հողի կադաստրային արժեքի, վարձավճարի, հողի հարկի վերաբերյալ: Հստակեցվեցին հողի հետ կատարվող գործառնությունների պայմանները:

Կարևոր փաստարդերից է Հայաստանի Հանրապետությունում 1994 թ. ընդունված «Հողի հարկի մասին» օրենքը: Այն սահմանում է, որ հանրապետությունում հողի հարկ վճարողներն են հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողները: Այդ օրենքով հաստատվում է, որ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկնան օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային գուտ եկամուտը՝ 15%-ի չափով: Գյուղատնտեսական հողատեսքերի գնա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐԸ

(ընդունված է 2001 թվականի մայիսի 2-ին)

Սույն օրենսգիրը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելազգործման, հողի տնտեսավարման տարրեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը՝ ենթալով հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից, որի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման:

Հողի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը չափոր է վճառ պատճառի շրջակա բնական միջավայրին, երկրի պաշտպանունակությանն ու անվտանգությանը, չպետք է խախտի քաղաքացիների և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը:

Հողած 33. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրը

1. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրը հողամասերի ու դրանց վրա ամրակայված անշարժ գույքի հաշվառման, բնական, տնտեսական և իրավական կարգավիճակի, տեղաբաշխման ու չափերի, դրանց որակական բնութագրերի, իրավական ռեժիմի, սեփականության և այլ գույքային իրավունքների ու դրանց սահմանափակումների պետական գրանցման, անշարժ գույքի գնահատման հավաստի տեղեկությունների համակարգ է:

2. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկությունները հաշվի են առնվում հողերի պահպանումը և օգտագործումը ծրագրավորելիս, հողամասեր տրամադրելիս, պետության ու համայնքների կարիքների համար վերցնելիս, հողի հետ կապված գործարքներ կատարելիս, հողի համար վճարների չափերը որոշելիս, հողաշինարարություն իրականացնելիս, հողի օգտագործմանը և պահպանման ուղղված տնտեսական գործունեությունը գնահատելիս ու այլ միջոցառումներ իրականացնելիս:

3. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրը մեկ միասնական համապետական համակարգ է:

4. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը ներառում է՝

- 1) հողամասերի և դրանց վրա ամրակայված անշարժ գույքի պետական հաշվառումը, քարտեզագրումը.
- 2) հողամասերի և դրանց վրա ամրակայված անշարժ գույքի գնահատումը.
- 3) հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների, դրանց սահմանափակումների, ներառյալ՝ սերվիտուտների, պետական գրանցումը.
- 4) անշարժ գույքի վերաբերյալ միասնական տեղեկատվական բանկի ստեղծումը և կառավարումը:

5. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը սահմանվում է օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

հատման այդ նորմատիվների հիման վրա կատարված հաշվարկներով հողի հարկի և վարձավճարի ընդհանուր գումարը հանրապետությունում 1997-2000 թթ. ընթացքում տարեկան կազմել է շուրջ 6,4 մլրդ. դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից աշխատանքներ են կատարվում հանրապետության անշարժ գույքի, այդ թվում՝ գյուղատնտեսական հողատեսքների նորմատիվային արժեքի մշակման և դրանց շուկայական գների դիտարկումների վերաբերյալ: Մշակվում է գյուղատնտեսական հողատեսքների կադաստրային գնահատման մեթոդիկա, որը հնարավորություն կտա գյուղատնտեսական հողատեսքները գնահատելու որպես անշարժ գույք՝ դրանց տալով արժեքային գնահատական:

Հանրապետությունում անշարժ գույքի սեփականության ձևերի առաջացման հետ աստիճանաբար ձևավորվում են շուկայական հարաբերություններ: Կատարվում են անշարժ գույքի, այդ թվում՝ հողանասերի առ ու վաճառքի, փոխանակման, ժառանգության, գրավի, հիփորեքի տարրեր գործարքներ:

Հոդի շուկայի առաջացմանը խոչնայութում է դրա հավաստի գնի բացակայությունը: Որպես հողային հարկի հիմք՝ հաշվարկային կադաստրային գուտ եկամուտը սպառել է իրեն և չի համապատասխանում շուկայական հարաբերությունների զարգացմանը: Հոդը՝ որպես անշարժ գույք, չունի հավաստի գին և դուրս է մնում տնտեսական շրջանառությունից: Դիտարկումներից պարզվում է, որ հոդի շուկայական գինը մոտ տաս անգամ ցածր է հաշվարկային գուտ եկամուտի հիման վրա որոշված նորմատիվային արժեքից: Ուստի անհրաժեշտ է կատարելագործել հողերի գնահատման մեթոդիկան՝ հողերին տալով ստույգ արժեքային գնահատական: Հայաստանի Հանրապետության «Անշարժ գույքի մասին» օրենքով և ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 1998 թ. հունվարի 21-ի № 20-Կ հրամանով՝ հանրապետությունում կանոնակարգվեցին անշարժ գույքի հաշվառման և սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման աշխատանքները: Այդ փաստաթղթերով անշարժ գույքի հաշվառումը, պետական գրանցումը և կադաստրային գնահատումն իրականացնում է ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչությունը (հետագայում՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե) և դրա տարածքային ստորաբաժանումները:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2004 թ. տվյալներով՝ հանրապետությունում առանձնացվել է 2,5 մլն միավոր անշարժ գույք: Ավարտվել են կադաստրային քարտեզագրման աշխատանքները հանրապետության բոլոր համայնքներում (շուրջ 2,2 մլն միավոր անշարժ գույք): Ծզգրտվել են քարտեզագրված միավորների նկատմամբ իրավունքները, մինչև 2004 թ. ապրիլը

գրանցվել է անշարժ գույքի ավելի քան 1,2 մլն միավոր, և սեփականատերերը անվճար ստացել են սեփականության իրավունքի վկայականներ:

Հողային կադաստրի զարգացման կարևոր փաստարդեր են ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի ծածկագրման կարգը հաստատելու մասին» 1998 թ. փետրվարի 17-ի № 91, ՀՀ կառավարության առմբեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում պետական միասնական կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ստեղծման և «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության արամադրման կարգը հաստատելու մասին» 1998 թ. մարտի 9-ի № 155 որոշումները: Այդ որոշումներում հողի և անշարժ գույքի կադաստրի առաջնային խնդիրներից են հանրապետության անշարժ գույքի կադաստրային ծածկագրումը, տեղեկատվական բանկի ստեղծումը և տեղեկատվության արամադրումը: Անշարժ գույքի ծածկագիրն առաջին դասակարգիչն է և ձևակերպվում է տեխնիկատնտեսական ու տցիալական դասակարգման և ծածկագրման միասնական համակարգի ստանդարտների պահանջներին համապատասխան: Կադաստրային ծածկագիրը թվերի համակցություն է, որը համապատասխանում է անշարժ գույքի միավորներին և պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ այն գոյություն ունի որպես ֆիզիկական և իրավական մեկ ամբողջություն: Անշարժ գույքի ավտոմատացված համակարգը և տեղեկատվական բանկը ներկայացնում են անշարժ գույքի պետական հաշվառման, կադաստրային գնահատման, անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավագործությունների պետական գրանցման փաստաթղթերի ամբողջություն: Հողային բարեփոխումների հերթական փուլի իրականացմանն է վերաբերում ՀՀ կառավարության «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման արամադրման կարգը հաստատելու մասին» 2001 թ. ապրիլի 12-ի № 286 որոշումը: Ըստ այդ կարգի՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումը, կառուցապատման իրավունքի և օգտագործման արամադրման իրականացման համար պահանջման առաջնային դաշտագծերով, բնակավայրերի գլխավոր հատակագծերով և այլ փաստաթղթերով: Պետության սեփականության հողամասերն օտարվում են՝

- սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով,
- ուղղակի վաճառքի միջոցով,
- աճուրդով:

Պետության և համայնքների սեփականության հողամասերը տրամադրվում են սեփականության կամ օգտագործման իրավունքով:

Մարզերում և համայնքներում միասնական ձևով հողերի օտարումը կազմակերպելու նպատակով մշակվել են մի շարք փաստաթղթեր (պայմանագրեր):

Այսպիսով՝ հողային բարեփոխումների արդյունքում բոլոր սուբյեկտների միջև ձևավորվեցին անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի շուկայական հարաբերություններ: Հողն՝ իր ընդհանուր հատկությունների հետ մեկտեղ, ձեռք է բերել անշարժ գույքի կարգավիճակ՝ դառնարկ շուկայական հարաբերությունների առարկա: Սկսվել է հողերի շուկայական շրջանառության գործընթացը, լայն կիրառում են գտել վճարովի հողօգտագործումը, նոր սեփականության (օգտագործման), հողատիրապետման, տնօրինման, հողի գուավի, սերվիսութիւնի իրավունքի ձևերը:

Սակայն հողային բարեփոխումների ընթացքում դեռևս իրենց լուծումը չեն գտել հողաշինարարության, հողերի արդյունավետ օգտագործման և բերրիության բարձրացման հարցերը: Խախտվել է շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը: Ներկայում չկա հանրապետության հողերի օգտագործման և պահպանման պետական հայեցակարգ, չեն մշակվում հողերի օգտագործման տարածքային սխեմաներ: Բացակայում է զիտականորեն հիմնավորված զյուղատնտեսական ապրանք արտադրողների հողատիրության հատուկ դիրքորոշումը: Անհրաժեշտ է հիմնովին վերանայել հողային բարեփոխումների հայեցակարգը: Շուկայական հարաբերությունների հաստատմանը զուգահեռ դրա հիմքում պետք է դնել հանրապետության աշխարհաքաղաքական և բնապահպանական հիմնախնդիրների լուծումը՝ ապահովելով քաղաքական, տարածական և էկոլոգիական անվտանգությունը: Այդ նպատակներին հասնելու իրավական հիմքն է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրը, որով սահմանվում են հողային հարաբերությունների պետական կարգավորման մեխանիզմները, տնտեսավարման տարբեր կազմակերպական, իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման ուղիները, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպատշական միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը, ինչպես նաև հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունը՝ որպես ժողովրդի կենսագործունեության պայման:

ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԸ ՈՐՊԵՍ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՂԱԿ

4.1. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԸ ՈՐՊԵՍ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՕՂԱԿ

Պետական հողային կադաստրը հանրապետությունում հողային հարաբերությունների կարգավորման և ղեկավարման կարևոր մեխանիզմն է: Պլանային տնտեսությունից շուկայականին անցնելու ընթացքում անխուսափելիորեն շրջանառության մեջ են մտնում հողերը և անշարժ գույքը՝ դառնալով իրավական և տնտեսական հարաբերությունների հիմնական մասնակիցը:

Պետական հողային կադաստրի համակարգի միջոցով լուծվում են համապետական և մարզային խնդիրներ, ինչը թույլ է տալիս իրականացնել մի շարք կարևոր գործողություններ հետևյալ բնագավառներում.

- **Իրավական հարաբերությունների բնագավառում** հողի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և դրանց հետ կապված գործարքների ապահովում, ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների պետական և դատական սպառապահություն, սեփականատերերի, օգտագործողների, ինչպես նաև վարձակալների՝ հողամասերի և այլ անշարժ գույքի իրավունքի հանդեպ վստահության ձևափորում, իշխանության և սուբյեկտների միջև հողօգտագործման իրավունքի սահմանագաղատում:
- **Տնտեսական բնագավառում** հողային վճարումների բյուջետային մուտքերի ապահովում և հարկման բազայի ընդլայնում, հողերի տնտեսական (կադաստրային) գնահատում, դրանց շուկայական շրջանառության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, հողի և այլ անշարժ գույքի հարկման մեխանիզմի կատարելագործում պայմանավորված օգտագործվող հողամասերի և անշարժ գույքի օբյեկտների շուկայական արժեքից ու շահութաբերությունից կատարվող վճարումներով: Հողային կադաստրի շնորհիվ նվազագույնի է հասցվում այն հողօգտագործողների և սուբյեկտների թիվը, որոնք օգտագում են անօրինական կամ չիհմնավորված արտոնություններից: Այն նպաստում է նաև ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի արժեքի ավելացմանը և դրանք պաշտպանում արժեգրկումից:
- **Անշարժ գույքի, բաժնետոմսերի, փոխառությունների և այլ արժեքորերի շուկայի ձևափորման բնագավառում** անհրաժեշտ պայման-

Տնտեսավարման նոր պայմաններում անհրաժեշտ է ձևավորել կարգավորվող, սոցիալապես կողմնորոշված հողային շուկա, ինչը հնարավորություններ կատեղի՝ ներդրումները խրախուսելու, օբյեկտներ ձեռք բերելու, հանրապետության անշարժ գույքի շրջանառությունը ինտենսիվ դարձնելու համար: Ծովայական հողային հարաբերությունների ոչ բավարար զարգացումը թույլ չի տալիս ֆինանսները լրիվ չափով ներդնել հողային սեփականության մեջ, արդյունքում առաջանում են կանխիկ դրամական միջոցների շրջանառության զգալի կորուստներ:

Հայաստանի Հանրապետությունում դեռևս ապահովված չէ հողի շուկայի կայուն զարգացումը: Հողային բանկերի, նոտարական գրասենյակների, դատարանների, վարկավորման և ապահովագրական համակարգի անկատարության, ինչպես նաև հողային կադաստրի համակարգում հողերի կադաստրային գնահատման ստույգ տվյալների բացակայության հետևանքով հողային հարաբերությունները հողասեփականատերերի, հողօգտագործողների միջև դեռևս կրում են տարերային քննույթ: Այս ոլորտում ստվերային երևույթները նվազեցնելու համար անհրաժեշտ է կիրառել ֆինանսավարկային այնպիսի սկզբունքներ, որոնք հիմնված են հողատիրապետման, տօրինման և հողօգտագործման, վարկային հարաբերությունների տարրեր պարտավորությունների վրա:

Ծովայական հողային հարաբերություններում գույքային արժեքների օգտագործման լծակները հողօգտագործող սուրյական համարավորություն են տալիս հողերի շրջանառության միջոցով ձևավորել ֆինանսական զգալի կապիտալ, դրա շնորհիվ բյուջե ներգրավել լրացուցիչ միջոցներ և ներդրումային ռեզերվներ: Բացի այդ՝ շրջանառության մեջ դրվող հողային արժեքերը հզոր խթանիչ ներգործություն են ունենում ֆոնդային շուկայի ենթակառուցվածքի ձևավորման և ամբողջ հանրապետության ու մարզերի ֆինանսական շուկայի զարգացման վրա:

Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինները հնարավորություն են ստանում լրացուցիչ միջոցներ ձեռք բերել՝ շենքերի, շինությունների վերակառուցման, ներդրումային նախագծերի իրականացման համար:

Պետական հողային կադաստրի համակարգի ստեղծման կազմակերպական հարցերը լուծելու համար անհրաժեշտ է՝


- կատարել գոյություն ունեցող գիտատեխնիկական, նախագծա- տնտեսական մշակումների վերանայում, որոշել դրանց օգտա-

- կազմել հնարավոր փոփոխությունների ու լրացումների ծրագիր, ապահովել դրանց նատչելիությունն ու համակարգի ստեղծման փուլայնությունը,
- այն համապատասխանեցնել պետական ստանդարտներին ու նորմերին,
- ապահովել պետական հողային կադաստրի համատեղելիությունը տարածքային տեղեկատվական համակարգի և մյուս կադաստրների պլանների ու ծրագրերի հետ,
- կատարել տեխնոլոգիական, կազմակերպական և ֆինանսական պայմանների վերլուծություն, որոշել կատարվող աշխատանքների կազմը, հաջորդականությունն ու արժեքները:

Պետական հողային կադաստրի նորմատիվակիրավական հիմքն ամբողջությամբ որոշվում է երկրի գյուղավոր օրենքով՝ Սահմանադրությամբ և հողային օրենսդրությամբ: Գործող օրենսդրական և նորմատիվային ակտերը պետք է լինեն համադրելի:

Պետական հողային կադաստրի կազմակերպման խնդիրն է կարգավորել հողային հարաբերությունների և հողօգտագործման հարցերը հողային օրենսդրության շրջանակներում՝ հանրապետական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակներով:

Ստորև տրվում է իրավունքի աղբյուրների դասակարգումը (նկ. 3):



4.2. ՀՈՂԱԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՔՐԸ

Հողային կադաստրը սերտորեն կապված է հողաշխնարարության հետ: Շուկայական տնտեսության պայմաններում հողային կադաստրի վարման և հողաշխնարարական նախագծման ընթացքում առաջին հերթին հողը դիտվում է որպես անշարժ գույք, շուկայական շրջանառության առարկա, բնական կարևոր պաշար և արտադրության միջոց:

Հողային պաշարների արդյունավետ օգտագործումն ու պահպանումը պայմանավորված են տարածքի հողաշխնարարական կազմակերպման մակարդակով, ինչը ստեղծում է լավագույն պայմաններ բոլոր հողօգտագործողների համար:

Հողաշխնարարությունը հողային հարաբերությունների կարգավորմանը, հողային պաշարների կառավարմանը, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարմանը, հողերի արդյունավետ օգտագործման ու պահպանման կազմակերպմանը, հողերի մոնիթորինգին, հողաշխնարարության տարածքային և ներտնտեսային ծրագրեր (փաստաթրեր) կազմելուն ուրված պետական միջոցառումների համալիր է: Այն իր մեջ ներառում է հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպումը ոչ ոչ միայն գյուղատնտեսական արտադրության մեջ, այլ նաև արդյունաբերության, տրանսպորտի և այլ ճյուղերում:

ՀՀ հողային օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հողաշխնարարությունն ապահովում է՝

- հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման ծրագրավորումը և կազմակերպումը՝ անկախ սեփականության սուբյեկտից ու տնտեսավարման ծեներից,
- գյուղատնտեսական հողերի պահպանման համապետական ու տարածքային ծրագրերի մշակումը,
- հողամասերը տեղանքում ամրացնելը, հողամասերի հատակագծերի, հողամասի տրամադրման վերաբերյալ փաստաթրերի նախապատրաստումը,
- հանրապետական, մարզային, համայնքային, միջհամայնքային, ներտնտեսական հողաշխնարարական և հողի օգտագործման ու պահպանության այլ նախագծերի մշակումը,
- խախտված հողերի վերականգնումը, հողաշերտերը ջրային ու հողմային հողատարումից, անապատացումից, ցեխաջրերից, փլուզումներից, ջրածածկումից, ճահճացումից, չորացումից, պնդացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային բափոններով, ռադիոակտիվ և քիմիական նյութերով աղտոտումից պաշտպանելու, գյուղատնտեսական հողերը բարելավելու, նոր հողեր յուրացնելու, հողը պահպանելու և դրա բերրիությունը

- հատուկ պահպանվող տարածքների տեղաբաշխման և դրանց սահմանագծման հիմնավորումը,
- մարզերի, համայնքների վարչական սահմանների, սեփականատերերի և հողօգտագործողների հողանասերի սահմանների նկարագրումը, ամրացումը և փոփոխությունը,
- հողաշինարարության գծով տեղագրական, գեղդեզիական, քարտեզագրական, հողային, ազրոքիմիական, երկրաբուսարանական, պատմական ու մշակութային և այլ հետազոտական աշխատանքների իրականացումը,
- հողային ֆոնդի պետական հաշվառումը, գույքագրումը և չօգտագործվող, ինչպես նաև ոչ արդյունավետ օգտագործվող կամ իր նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի բացահայտումը,
- հողային պաշարների վիճակի և օգտագործման կադաստրային ու քենատիկ քարտեզների և ատլասների կազմումը,
- անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը,
- հողերի մոնիթորինգը,
- նոր հողանասերի կազմավորման, հողանասերի միավորման ու բաժնաման, գոյություն ունեցող հողանասերի կարգավորման միջոցառումների իրականացումը:

Հողաշինարարությունը, մելիորատիվ այլ միջոցառումների հետ միասին, նպաստում է զյուլատնտեսական շրջանառության մեջ նոր հողերի ներգրավմանը, դրանց որակական հատկությունների բարելավմանը, բերրիության բարձրացմանը, տեխնիկայի արդյունավետ օգտագործմանն ու այլ ոլորտի հետ կապված այլ հարցերի լուծմանը:

Հողային պաշարների վերաբերյալ նման տեղեկատվությունը ստացվում է հողային կադաստրի միջոցով: Կադաստրային տվյալները ելակետային ցուցանիշ են՝ միջհամայնքային և ներհամայնքային հողաշինարարական նախագծեր և ծրագրեր կազմելու համար:

Հողաշինարարությունն իրականացվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով՝ հողանասերի սեփականատերերի, օգտագործողների նախաձեռնությամբ:

Հողաշինարարության օբյեկտներ են Հայաստանի Հանրապետության, ՀՀ մարզերի, համայնքների, առանձին տնտեսավարող սուրբեկտների տարածքները, դրանց առանձին մասերն ու հողանասերը:

Հողաշինարարությունն իր բնույթով ստորաբաժանվում է երեք տեսակի՝ միջհամայնքային, ներհամայնքային և առանձին հողանասերի կամ հողատարածքների:

Միջհամայնքային հողաշխնարարությունն իրականացվում է՝ հանրապետության հողային պաշարների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, համայնքների վարչական սահմանների փոփոխությունները, միջհամայնքային ծրագրերն իրականացնելու նպատակով՝ հանրապետության ամբողջ տարածքի, մարզերի կամ հարակից մի քանի համայնքների տարածքներում՝ պետության միջոցների հաշվին:

Ներհամայնքային հողաշխնարարությունն իրականացվում է համայնքի տարածքի կազմակերպման, հողերի արդյունավետ կառավարման և օգտագործման նպատակով՝ առանձին համայնքի տարածքում՝ դրա միջոցների հաշվին:

Առանձին հողամասերի կամ հողատարածքների հողաշխնարարությունն իրականացվում է հողօգտագործման սահմանների ծցգրտման, նոր առաջացած հողամասերի սահմանների տեղադրման, նոր հողերի յուրացման, այգիների հիմնման, ցանքաշրջանառության կիրառման և այլ հողապաշտպան միջոցառումների իրականացման նպատակով՝ տընտեսավարող սուրեկտների հողերի կամ դրանց մի մասի տարածքում՝ հողօգտագործողի միջոցների հաշվին:

Հողաշխնարարության կազմակերպումն ու իրականացումը կատարվում է չորս հիմնական փուլով՝

- հողաշխնարարական հետազոտություններ,
- հողաշխնարարական փաստաթղթերի (սխեմա, նախագիծ) մշակում,
- հողաշխնարարական գործի կազմում,
- նախագծի իրականացում:

Հողաշխնարարական հետազոտությունը կատարվում է՝ հողերի որակական և քանակական վիճակի մասին տեղեկություն ստանալու համար, և իր մեջ ընդգրկում է հետևյալ աշխատանքները՝

- ա) գեղղեցիական և քարտեզագրական աշխատանքներ,
- բ) հողագիտական, երկրաբուսաբանական և այլ հետազոտություններ ու հետախուզումներ,
- գ) հողի բոնիտում,
- դ) հողերի հաշվառում ըստ նպատակային նշանակության, սեփականության ձևերի:

Գեղղեցիական և քարտեզագրական աշխատանքների նյութերը կիմք են հանդիսանում հողագիտական, երկրաբուսաբանական և այլ հետազոտությունների ու հետախուզումների, հողերի հաշվառման, որակական գնահատման, դրանց արդյունավետ օգտագործման և հեռանկարային զարգացման, ինչպես նաև միջհամանյթային, ներհամայնքային և առանձին հողամասերի կամ հողատարածքների հողաշխնարարության համար:

Հողագիտական, երկրաբուսաբանական և այլ հետազոտություններն ու հետախուզումներն իրականացվում են հողի վիճակի մասին տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հողմահարված, հեղեղված, ջրածածկված, ճահճացած, երկրորդային աղակալման ենթարկված, չորացած, պնդացած, արտադրական ու կենցաղային թափոններով, ռադիոակտիվ ու քիմիական նյութերով աղտոտված, վարակված և այլ վնասակար ազդեցության ենթարկված հողերի հայտնաբերման համար, ինչն էլ օգտագործվում է հողերի բոնիտման ժամանակ:

Հողի հաշվառման նպատակն է որոշել հողաշինարարական օբյեկտի գտնվելու վայրը, ճշտել դրա սահմանները, ինչպես նաև հայտնաբերել չօգտագործվող, անարդյունավետ օգտագործվող կամ նպատակային նշանակությամբ չօգտագործվող և օրենսդրության խախտումներով օգտագործվող հողերը:

Հողաշինարարական փաստաթղթերի մշակման հիմք են հանդիսանում հողաշինարարության իրականացման մասին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, հողաշինարարություն իրականացնելու վերաբերյալ պայմանագրերը, ինչպես նաև դատարանի վճիռները:

Հողաշինարարական նախագծերի մշակումն անհրաժեշտ նախապայման է՝ հողերի արդյունավետ օգտագործման հեռանկարային ծրագրերի կազմման, հողերի ճիշտ տեղաբաշխման, տարածքի կազմակերպման բարելավման և հողերի արդյունավետ օգտագործման ու դրանց պահպանության այլ ուղղությունները որոշելու համար:

Հողերի արդյունավետ օգտագործումն ու դրանց պահպանությունը ներառում է հետևյալ հիմնական աշխատանքները՝

- հողերի արդյունավետ օգտագործման և դրանց պահպանության վերաբերյալ առաջարկությունների մշակում,
- հողերի գյուղատնտեսական շրջանացում,
- հողերի առանձնացում, ինչի շրջանակներում քաղաքացիներին և իրավաբանական անձանց կարող են տրամադրվել հողամասեր,
- հողերի առանձնացում, որոնք կարող են ընդգրկվել հատուկ հողային ֆոնդերում,
- հողերի առանձնացում՝ ըստ դրանց նպատակային նշանակության (կատեգորիաների) և հողատեսքերի:

Միջհամայնքային հողաշինարարությունն իր մեջ ընդգրկում է աշխատանքների հետևյալ տեսակները՝

- հողաշինարարական նոր օբյեկտների կազմակերպում, գոյություն ունեցողների կանոնակարգում,

- վարչատարածքային միավորների սահմանների ճշգրտում, նըկարագրում և ամրացում,
- հողաշխնարարական օբյեկտների սահմանազատում,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հողամասերի արդյունավետ օգտագործում՝ գյուղատնտեսական արտադրություն կազմակերպելու նպատակով,
- միջոցառումների մշակում, որոնք ուղղված են գյուղատնտեսական հողատեսքերի բարելավմանը. նոր հողերի յուրացմանը, խախտված հողերի ռեկուլտիվացմանը, հողերի վերականգնմանն ու կրնակացմանը, հողերի պահպանությանը հողմահարումից, հեղեղումներից, ջրածածկումից, ճահճացումից, երկրորդային աղակալումից, չորացումից, պնդացումից, արդյունարական և կենցաղային թափոններով, ռադիոսպակտիվ և քիմիական նյութերով աղտոտումից, վարակումից և այլ բացասական երևույթներից:

Հողաշխնարարական նոր օբյեկտների առաջացումն ու գոյություն ունեցողների կանոնակարգումն իրականացվում է հետևյալ պայմաններում՝

- հողաշխնարարական օբյեկտի սահմանների փոփոխության, այդ թվում՝ դրանց տեղաբաշխվածության թերությունների (շերտընդիշություն, սեպաձևություն, կտրտվածություն, ձգվածություն և այլն) վերացման դեպքում,
- հողաշխնարարական օբյեկտների սահմանների վերականգնման ընթացքում,
- քաղաքացիներին և իրավաբանական անձանց հողամասեր տրամադրելիս,
- հողամասերի վերացման դեպքում, այդ թվում՝ զննան միջոցով,
- հողամասերի վերաբաշխման դեպքում:

Հողաշխնարարական նոր օբյեկտների առաջացման, գոյություն ունեցողների կանոնակարգման համար հիմք են հանդիսանում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տվյալները, հողաշխնարարական, քաղաքաշխնական և հողի օգտագործմանն ու պահպանությանը վերաբերող այլ փաստաթղթերը:

Հողաշխնարարական նոր օբյեկտների առաջացման, գոյություն ունեցողների կանոնակարգման համար որոշվում են.

- հողաշխնարարական օբյեկտների սահմանների տեղաբաշխվածությունը, այդ թվում՝ ըստ հողաշխնարարական օբյեկտների՝ սահմանափակ օգտագործվող հողամասերի սահմանները,
- հողօգտագործման տարբերակները, հաշվի առնելով հողամասի չափը, նպատակային նշանակությունը, հողի բույլատրված օգ-

- հողաշինարարական օբյեկտների և (կամ) դրանց օգտագործումը մը, սահմանափակ օգտագործվող հողամասերի մակերեսները,
- հողի այլ բնութագրիչները:

Հողաշինարարական օբյեկտների սահմանագատումը տեղանքում դրանց ամրակայումն ու կապակցումն է կոռորդինատային ցանցին: Դրա համար հիմք են հանդիսանում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տվյալները, հողաշինարարական, քաղաքաշինական և հողի օգտագործման, վերաբաշխման ու պահպանության հետ կապված այլ փաստաթղթերը:

Հողաշինարարական փաստաթղթերի տեսակներն են՝

- Հայաստանի Հանրապետության տարածքի հողաշինարարական գյուղավոր հատակագիծը, վարչատարածքային միավորների հողաշինարարական հատակագծերը,
- հողաշինարարական օբյեկտների սահմանագատման նյութերը,
- միջհամայնքային և ներհամայնքային հողաշինարարական նախագծերը,
- գյուղատնտեսական հողատեսքերի բարելավման, նոր հողերի յուրացման, խախտված հողերի վերականգնման, հողերը հողմահարումից, ջրածածկումից, ճահճացումից, երկրորդային աղակալումից, չորացումից, պնդացումից, արտադրական և կենցաղային բափոններով, ռադիոակտիվ և քիմիական նյութերով աղտոտումից, վարակվելուց և այլ վնասակար ազդեցությունից պահպանելու նպատակով կազմված նախագծերը,
- հողագիտական, երկրարուսաբանական և այլ հետախուզական ու հետազոտական աշխատանքները, ինչպես նաև հողերի գնահատման ու հաշվառման նյութերը,
- հողերի վիճակի և օգտագործման թեմատիկ քարտեզներն ու ատլասները, որոնք արտացոլում են հողերի վիճակի և օգտագործման բնութագրերը, հողերի գոտիավորման և բնական-գյուղատնտեսական շրջանացման տվյալները, հողերի պահպանան ու ռացիոնալ օգտագործման միջոցառումների կազմակերպումը:

Հողաշինարարական փաստաթղթերով որոշվում են հողօգտագործողների համար պարտադիր միջոցառումները, որոնք ուղղված են հողերի արդյունավետ օգտագործմանն ու պահպանմանը:

Հողաշինարարական գործն իր մեջ ներառում է յուրաքանչյուր հո-
դաշինարարական օբյեկտի համար անհրաժեշտ փաստաթղթերը և այդ
օբյեկտներին վերաբերող այլ նյութերը:

Հողաշինարարական փաստաթղթերի փաթեթում ընդգրկվում են՝

- օբյեկտի հողաշինարարական նախագծերը,
- հողաշինարարական օբյեկտի սահմանազատման նյութերը,
- հողաշինարարական օբյեկտների քարտեզները (հատակագծե-
րը),
- գյուղատնտեսական հողատեսքերի բարելավման, նոր հողերի
յուրացման, խախտված հողերի վերականգնման, հողերը հող-
մահարումից, հեղեղումներից, ջրածածկումից, ճահճացումից,
երկրորդային աղակալումից, չորացումից, պնդացումից, ար-
տադրական և կենցաղային թափոններով, ռադիոակտիվ և քի-
միական նյութերով աղտոտումից, վարակումից և այլ վնասա-
կար ազդեցությունից պահպանելու նպատակով կազմված նա-
խագծերը,
- հողագիտական, երկրաբուսաբանական և այլ հետախուզական
ու հետազոտական աշխատանքները, ինչպես նաև հողերի գնա-
հատման ու հաշվառման նյութերը,
- հողերի վիճակի և օգտագործման թեմատիկ քարտեզներն ու
ատլասները, որոնք արտացոլում են հողերի վիճակի և օգտա-
գործման բնութագրերը, հողերի գոտիավորման և բնական-գյու-
ղատնտեսական շրջանացման տվյալները, հողերի պահպան-
ման և ռացիոնալ օգտագործման միջոցառումների կազմակեր-
պումը:

ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ, ՄՇԱԿԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԼՈՒՄԾԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

5.1. ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՍՏԱՑՄԱՆ Եղանակները

Հողային կադաստրի մշակման և վարման համար անհրաժեշտ է հավաքել վերլուծել և խմբավորել հողերի բնական, տնտեսական, իրավական վիճակի վերաբերյալ տվյալները, որոնք ստացվում են տարրեր եղանակներով ու մեթոդներով։ Առաջին հերթին դա վերաբերում է վերգետնյա, օդալուսագեղեղիական և տիեզերական հանույթներին, ինչպես նաև հողագիտական, երկրարուսաբանական, հիդրոերկրաբանական, ագրորիմիտական, տնտեսական, վիճակագրական և այլ բնույթի հետագոտումներին։ Հողակադաստրային տեղեկատվության ստացման այս կամ այն եղանակի ընտրությունը կախված է հողային կադաստրի նշանակությունից։ Այսպես՝ հողատարածությունների մակերեսների հաշվառման համար կատարվում է տեղանքի հանույթ, հողերի բնական ցուցանիշների որոշման համար՝ տարածքի հետազոտում, իսկ հողերի տնտեսական գնահատման նպատակով հավաքվում, մշակվում և վերլուծվում է հողերի տնտեսական օգտագործման վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը։ Հողակադաստրային տվյալների համակարգումն անհրաժեշտ է՝ հողօգտագործողների արտադրական գործունեության ընթացքում դրանց նպատակային օգտագործման, ինչպես նաև հողային ֆոնդի կառավարման համար։ Առանձին հողօգտագործողների հողատեսքերի մակերեսի վերաբերյալ տվյալները համակարգվում են ըստ հողօգտագործողների խմբերի, համայնքի, մարզի և այլն։ Նման ձևով խմբավորվում են հողերի բնական հատկություններին և գնահատման տնտեսական ցուցանիշներին վերաբերող տեղեկությունները։

Հողային կադաստրի տվյալների հավաստիությունն ու լիակատարությունը կախված է նաև դրանց ստացման եղանակներից։ Այդ նպատակով կիրառվում է **գծագրական** մեթոդը, ըստ որի հողը բնութագրվում է տարածական չափերով ու տեղադրվածությամբ։ Այդ մեթոդի կիրառումը պահանջում է կատարել չափագրական գործողություններ, այսինքն՝ հատուկ հանույթներ և տեղանքի հետազոտում։ Ստացված տեղեկություններն արտացոլվում են հատակագծաբարտեղագրական նյութերում, որոնք համապատասխան մասշտաբներով պատկերվում են թղթի վրա՝ ցույց տալով հողերի տարածական տեղադրությունը, վիճակը և օգտա-

գործում: Հողերի տարածական տեղադրությունը բնութագրվում է հողամասի ձևով, կողմերի հարաբերակցությամբ, կից գտնվող հողերի սահմանների ուրվապատկերներով և այլն:

Առանց հատակագծաքարտեզագրական նյութերի անհնար է ունենալ հավաստի տեղեկատվություն հողային կադաստրի բոլոր բաղադրիչների մասին: Այդ նյութերն ապահովում են հողակադաստրային տվյալների ակներևությունը, կանխում բացքողումներն ու կրկնությունները: Դրանք ստանում են տեղանքի վերգետնյա կամ օդալուսանկարահանումների միջոցով: Վերգետնյա (թեռողիտային, մենգուլային և այլ) հանույթները կիրառվում են փոքր տարածությունների վրա՝ հողերի կառուցվածքի և օգտագործման մեջ ընթացիկ փոփոխությունների հաշվառման ժամանակ: Այդպիսի հանույթների միջոցով ստացված հատակագծաքարտեզագրական նյութերը պետք է ապահովին հողային կադաստրի տեղեկատվության անհրաժեշտ ճշտությունը, որը կախված է հատակագծի մասշտաբից: Ինտենսիվ հողօգտագործման, ոռոգելի երկրագործության, բազմամյա տնկարկներով գրադարձված տարածքներում օգտագործվում են 1:5000, 1:10000 մասշտաբի քարտեզներ: Գյուղական բնակավայրերի և քաղաքների հողերի կադաստրի վարման համար կիրառվում են 1:2000 և 1:500 մասշտաբները:

Հողակադաստրային տեղեկատվության բարձր ճշտություն ապահովելու նպատակով կատարվում է տարածքների օդալուսանկարահանում: Այն հնարավորություն է տալիս ամենայն մանրամասնությամբ տալ հողօգտագործման քանակական և որակական բնութագիրը, ինչը հնարավոր չէ ստանալ վերգետնյա հանույթների ընթացքում: Հողային պաշարների բազմակողմանի ուսումնափարման և բնութագրման նպատակով այժմ կիրառվում են հանույթների տիեզերական, ուղղողության և լազերային մեթոդները: Այդ մեթոդներով հնարավոր է կատարել ոչ միայն տարածքների տեղագրական հանույթ, բնութագրել երկրի մակերևույթը, այլև քափանցել հողի խորքը, բացահայտել ստորգետնյա ջրերի խորության մակարդակը, ջրատար շերտերը, ջրի պաշարները և այլն: Դրանց միջոցով հնարավոր է կատարել ցանքատարածությունների գույքագրում, վերահսկել հողի խոնավությունը, բուսականության վիճակը և այլն:

Տիեզերական հանույթները հնարավորություն են տալիս բացահայտել գյուղատնտեսական հողատեսքերի ընդլայնման հնարավորությունները, մշակել հողերի բարելավման, հողատարման դեմ պայքարի, հողերի աղագերծման միջոցառումներ և այլն:

Հողակադաստրային տեղեկատվություն ստանալու համար կատարվում են **ազրոտնտեսական** և **մասնագիտական** հետազոտումներ:

Ազրոտնտեսական հետազոտումների ընթացքում հողատեսքերի որակական հատկությունների վերաբերյալ տեղեկությունները ստացվում են դրանց արտաքին հատկանիշների և տնտեսական օգտագործման հի-

ման վրա: Գործնականում դա իրականացվում է յուրաքանչյուր հողօգտագործման սահմաններում գտնվող բոլոր հողամասերի դիտարկումներով՝ ըստ հողի տիպի, մեխանիկական կազմի, հունուսային հորիզոնի հզորության, գետնաջրերի խորության մակարդակի, քարքարոտության, հողատարման, լանջի թերության աստիճանի և բոլոր այն ցուցանիշների, որոնք պայմանավորում են հողի թերրիտորիոն ու հողերի արդյունավետ օգտագործման հնարավորությունները: Սակայն միայն այդպիսի դիտարկումներով հնարավոր չէ լրիվ բնութագրել հողատեսքերը: Անհրաժեշտ է կատարել **մասմագիտական**՝ հողագիտական, ազորքիմիական, մեկիորատիվ և երկրաբուսաբանական հետազոտություններ:

Հողագիտական հետազոտությունների խնդիրն է բացահայտել հողերի բնական հատկությունները, որոնք որոշվում են դաշտային հետազոտությունների և լարորատոր անալիզների միջոցով: **Ազրորիմիական** հետազոտությունների ընթացքում բացահայտվում է հողերի սննդանիցութերով ապահովածության և բույսերի կողմից դրանց յուրացման մատչելիության աստիճանը: **Մելիորատիվ** հետազոտությունների ընթացքում որոշվում է հողերի կոլտուր-տեխնիկական վիճակը, գետնաջրերի խորության մակարդակը, խոնավացման աստիճանը, քարքարոտությունը և այլն: **Երկրաբուսաբանական** հետազոտությունների նպատակն է որոշել բնական կերահանդակների բուսական կազմը և որակական հատկությունները:

5.2. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՏԾԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԱՑՍԱՆ, ՄԵՍԿՍԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հողային կադատը վարման ընթացքում հողերի իրավական, բնական և տնտեսական վիճակի վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ստացման, մշակման և վերլուծության ժամանակ լայնորեն կիրառում են վիճակագրական մեթոդները, որոնք իրականացվում են որոշակի հաջորդականությամբ, ներառելով հետևյալ նյութերն ու աշխատանքների տեսակները՝

- վիճակագրական դիտարկումների հիմնական ձևեր, տեսակներ ու եղանակներ,
- հողային կադատը տվյալների ամփոփում և խմբավորում,
- բացարձակ, հարաբերական և միջին մեծություններ,
- հողային կադատը տվյալների վերլուծության վիճակագրական մեթոդներ և այլն:

Վիճակագրական դիտարկումների հիմնական ձևեր, տեսակներն ու եղանակները: Հողերի կադատարային գնահատման ընթացքում հավաքվում և խմբավորվում են հողատեսքերի օգտագործման, դրանց որա-

կական բնութագրման, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, համախառն արտադրանքի, կատարված ծախսերի, շահութաբերության և այլ ցուցանիշների վերաբերյալ զանգվածային տվյալներ։ Այդ նպատակով կիրառվում է **վիճակագրական դիտարկումների** մեթոդը, որը բույջ է տալիս հողագնահատման աշխատանքների ընթացքում հավաքել հողատեսքերի կառուցվածքի, հողային ծածկույթի, ցանքատարածությունների, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, աշխատանքային և նյութական ծախսերի վերաբերյալ տվյալներ, վերլուծել հողերի օգտագործման բնույթը և կատարել համապատասխան եզրակացություններ՝ տարբեր որակի հողերի օգտագործման արդյունավետության, կատարված ծախսերի, դրանց հատուցման վերաբերյալ և կազմել համապատասխան գնահատման սանդղակներ։

Դիտարկումներն անձևացվում են որոշակի պլանով, որտեղ նշվում են դրանց ձևերը, տեսակներն ու եղանակները, ինչպես նաև իրականացման մեթոդները։ Վիճակագրական դիտարկումների ձևերից են **հաշվետվությունն ու ցուցակագրումն**։

Հաշվետվության կազմնան ընթացքում վիճակագրական մարմինները՝ որոշակի ժամանակահատվածում ու սահմանված ձևերով, համապատասխան ձեռնարկություններից ու կազմակերպություններից ստանում են անհրաժեշտ նյութեր։ Հաշվետվության ձևերը և դրանց ներկայացման ժամկետները սահմանում է հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը։ Ելեկով նյութերի ստացման կարևորությունից և անհրաժեշտությունից՝ սահմանվում են հաշվետվության ներկայացման տարրեր ժամկետներ՝ ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան։

Հողային կադաստրի համակարգում լայն կիրառում ունեն տարեկան հաշվետվությունները։ Զեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարները ներկայացնում են հողօգտագործման վերաբերյալ տարեկան հաշվետվություն՝ ներառելով հողերի կազմում կատարված փոփոխությունները։

Դիտարկման ձևերից են նաև **հաշվեգրումները**, երբ վիճակագրական մարմինները նյութեր են հավաքում՝ որոշակի տարիներին կատարված հետազոտումների հիման վրա՝ բազմամյա տնկարկների, մելիորատիվ կառույցների, ոռոգելի և չորացված հողերի, վարելահողերի գույքագրման տեսքով։

Ըստ գրանցման բնույթի՝ դիտարկումները լինում են **ընթացիկ** (անընդհատ) և **ընդհանուն**։

Ընթացիկ դիտարկումների ժամանակ օրիենտի վիճակի վերաբերյալ փոփոխությունները գրանցվում են սիստեմատիկարար։ Ընթացիկ դիտարկում է, օրինակ՝ հողերի սեփականության (հողօգտագործման), տնամերձ հողերի վերաբերյալ փոփոխությունների գրանցումը։

Ընդհատում դիտարկումների դեպքում վոփոխությունները գրանցվում են որոշակի ժամկետում: Այդ դիտարկումները լինում են պարբերական և միանվագ: **Պարբերական** դիտարկումները են հատակագծաբարտեզագրական նյութերի ճշգրտումները, հողերի գնահատման աշխատանքները և այլն:

Միանվագ դիտարկումների ընթացքում երևոյթներն ուսումնասիրվում են որոշակի ժամանակահատվածում կամ հատուկ պատվերով: Դրանց թվին են պատկանում բազմամյա տնարկների հաշվառումը, հողերի գույքագրումը, հողագիտական, երկրաբուսաբանական, մելիորատիվ հետազոտությունները, հողերի և հողօգտագործումների հանույթները և այլն:

Հատ հետազոտության օբյեկտի ընդգրկման աստիճանի՝ դիտարկումները լինում են համատարած և ոչ համատարած: **Համատարած** դիտարկման ընթացքում գրանցվում են հետազոտվող օբյեկտի բոլոր միավորներն՝ առանց բացառության: Օրինակ՝ հողօգտագործման հաշվառումն ըստ հողատեսքերի, դրանց կառուցվածքի և տարածության, հողագիտական, երկրաբուսաբանական համատարած հետազոտությունները, ընդհանուր հողօգտագործումը գնահատելու բոլոր տեղեկությունների հավաքումը և այլն:

Ոչ համատարած դիտարկումները կատարվում են հետազոտվող օբյեկտի որոշակի միավորի վերաբերյալ տվյալներ հավաքելու նպատակով: Դա իրականացվում է իմբնական զանգվածի, ընտրանքային, հարցաքերքային և մենագրական մերողներով: **Հիմնական զանգվածի** մերողի էությունը նրանում է, որ դիտարկվում են հետազոտվող օբյեկտի ոչ բոլոր միավորները, այլ իմբնական (գերակշռող) մասը, իսկ ներացած ոչ բնորոշ հատվածները մնում են դիտարկումներից դուրս: **Ընդրանքային** դիտարկումների ընթացքում հետազոտվում է ամբողջության միայն որոշ մասը, իսկ ստացված արդյունքները տարածվում կամ վերագրվում են ամբողջ օբյեկտին: Օրինակ՝ հողագնահատման սանդղակներ մշակելու համար կատարվում է որոշակի պահանջներին համապատասխանող տիպական տնտեսությունների ընտրություն: Ստացված տվյալներն ընդունվում են որպես ելակետային ցուցանիշներ, որոնք օգտագործվում են հողագնահատման շրջանի մեջ մտնող բոլոր համայնքների հողերի բոնհատման և տնտեսական գնահատման համար: Վիճակագրական առանձին տվյալներ ստանալու նպատակով օգտագործվում է դիտարկման **հարցաքերքային** ձևը, որն իրականացվում է հատուկ մշակված և որոշակի անձանց կամ ձեռնարկության կողմից ուղարկված հարցաքերքերով (անկետաներով): **Մենագրական** դիտարկման ժամանակ օբյեկտների տիպական միավորների նկարագրությունը հնարավորություն է տալիս ամենայն խորությամբ ուսումնասիրել այնպիսի հարցեր, որոնք հնարավոր չեն պարզել զանգվածային դիտարկումների ընթացքում:

Վիճակագրական դիտարկումների հիմնական մեթոդներից են անմիջական, փաստաթղթային և հարցման եղանակները: **Անմիջական** դիտարկումների ընթացքում հողակաղաստրային տեղեկությունները ստացվում են մասնագետների անմիջական դիտարկումների շնորհիվ, օրինակ՝ տեղագրական չափագրումները, հատակագծաքարտեզագրական նյութերի ճշգրտումը, ցանքատարածությունների, տնամերձ հողերի չափագրումները և այլն: Դիտարկումների **փաստաթղթային** մեթոդով ստացված տվյալներն օգտագործվում են տարրեր տեսակի հաշվետվություններում: Դրանցից են հողօգտագործման վիճակի, ռողությի հողատարածությունների, աշխատանքային և նյութական ծախսումների, մշակաբույսերի բերատվության վերաբերյալ փաստաթղթերը և այլն:

Դիտարկումների **հարցման** մեթոդը հիմնված է առանձին անձանց ցուցունքների վրա: Հողային կարաստի վարման գործում այն ունի սահմանափակ կիրառություն: Օգտագործվում է սակավ տարածված հողերում գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը որոշելու, մշակաբույսերի նախորդների տեղաբաշխվածության սխեմաներ կազմելու ժամանակ՝ ցանքաշրջանառության վերաբերյալ տեղեկություններ չինելու դեպքում:

Հողակաղաստրային տվյալների ամփոփումն ու խմբավորումը: Վիճակագրական դիտարկումների արդյունքում ստացված հողակաղաստրային տեղեկատվությունը ծավալուն է և բազմազան: Դրա վերլուծությունը դեռևս չի կարող հիմք ծառայել հիմնավորված եզրակացություններ անելու համար: Ուստի կարևոր նշանակություն է ստանում վիճակագրական մշակման մեթոդներով հավաքված բազմաթիվ տվյալների ամփոփումն ու խմբավորումը:

Վիճակագրական տվյալների **ամփոփումն** իրականացվում է դիտարկումների ընթացքում ստացված հետազոտական տվյալների միավորման միջոցով: Ամփոփման պարզագույն ձևը հետազոտվող ցուցանիշների գումարի հաշվարկն է: Օրինակ՝ այս կամ այն համայնքի գյուղատնտեսական հողատեսքերի ընդհանուր մակերեսի ցուցանիշը ստանալու համար անհրաժեշտ է մեկ աղյուսակում հավաքել և անփոփել համայնքի բոլոր հողօգտագործողներին վերաբերող ցուցանիշները:

Վիճակագրական տվյալների **խմբավորման** ընթացքում կարևոր է որոշել, թե ինչ ցուցանիշների հիման վրա է այն կատարվում: Դա կրչվում է ցուցանիշային խմբավորում, որն ունի բվային կամ քանակական արտահայտություն: Եթե ցուցանիշներն ընդունում են նկարագրական բընույթ, ապա խմբավորումը կոչվում է պրոչի (բնութագրական): Մեկ ցուցանիշով խմբավորումը կոչվում է պարզ, իսկ մի քանի ցուցանիշների հիման վրա կատարված խմբավորումը՝ համակցված (բարդ):

Քացարձակ, հարաբերական և միջին մեծություններ: Հողակադաստրային տվյալների համադրելիության և բնութագրման համար լայնորեն կիրառվում են քացարձակ, հարաբերական և միջին մեծություններ:

Քացարձակ մեծությունը բնութագրում է հետազոտվող երևոյթի չափը, որն արտահայտվում է բնեղեն, պայմանական, աշխատանքային, արժեքային միավորներով (հեկտար, գենտմետր, կերամիավոր, դրամ, բալ և այլն):

Հողակադաստրային աշխատանքներում հաճախ մեկ երևոյթը համեմատվում է մի այլ երևոյթի հետ, որի համար օգտագործվում են հարաբերական մեծություններ՝ գործակիցներ, տոկոսներ: Կիրառվում են նաև միջին մեծություններ, որոնք արտացոլում են հետազոտվող երևոյթների ընդհանրացված բնութագիրը՝ մեկ ցուցանիշով: Լինում են միջին թվաբանական, միջին կշռված, միջին քառակուսիների մեծություններ: Միջին թվաբանականն օգտագործվում է այն դեպքում, եթե առանձին հատկության մեծությունը հանդիպում է մեկ անգամ: Այն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\bar{X} = \frac{x_1 + x_2 + \dots + x_n}{n} = \frac{\sum x}{\sum n},$$

որտեղ \bar{X} -ը ցուցանիշների միջին թվաբանական մեծությունն է, x_1, x_2, \dots, x_n -ը՝ ցուցանիշների անհատական մեծություններ, n -ը՝ ցուցանիշների անհատական մեծությունների քանակը:

Միջին կշռված մեծության հաշվառումը լայն կիրառում ունի հողերի կադաստրային գնահատման աշխատանքներում: Այն օգտագործվում է, եթե ցուցանիշների առանձին մեծություններն ունեն ոչ միասնական թվային կրկնություն, և որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\bar{X} = \frac{x_1 f_1 + x_2 f_2 + \dots + x_n f_n}{f_1 + f_2 + \dots + f_n} = \frac{\sum xf}{\sum f},$$

որտեղ f_1, f_2, \dots, f_n -ը հատկանիշների անհատական մեծությունների տեսակաբար կշիռն է:

Տվյալների վերլուծության վիճակագրական մեթոդներից է առանձին գործոնների՝ հողերի գնահատման խմբերի և բերրիության միջև եղած կապի գծային հաշվառման կիրառումը՝

$$Y = a_0 + b_1 x_1 + b_2 x_2 + \dots + b_n x_n,$$

որտեղ Y -ը կախյալ փոփոխականն է (բերքատվությունը), b_1, b_2, \dots, b_n -ը՝ ուղղեախայի գործակիցները, որոնք քանակապես արտահայտում են կախյալ փոփոխականի մեծացումը՝ մեկ միավորով, x_1, \dots, x_n -ը՝

$x_2 \dots, x_n$ -ը՝ տնտեսական գործողությունները, a_0 -ն՝ հավասարման ա-
զատ անդամը:

Նման գծային հավասարումը կիրառվում է այն դեպքում, եթե ընտ-
րության մեջ առկա են հողերի գնահատման երկու կամ ավելի խմբեր և
մեկ կամ երկու գնահատման խմբերի հողերի բերրիություններ:

Առավել մեծ բարդություն է ներկայացնում, ըստ գնահատման
խմբերի, մի շարք տարիների միջին բազմային բերրիության որոշումը:
Այդ նպատակով կիրառվում են բազմաթիվ գործողությունների կոռելյացիոն
վերլուծության մեթոդները: Այժմ կիրառվում է բազմանդամ ոեզրեսիայի
գծային հավասարումը՝

$$Y = a_1x_1 + a_2x_2 + \dots + a_nx_n,$$

որտեղ Y -ը բերրիությունն է կամ համախառն արտադրանքի մեծությու-
նը, x_1, x_2, \dots, x_n -ը՝ հողերի գնահատման խմբերի տեսակարար
կշիռը՝ տվյալ հողօգտագործման ընդհանուր տարածության մեջ,
 a_1, a_2, \dots, a_n -ը՝ բազմանդամ ոեզրեսիայի որոնելի գործակիցը:

Այդպիսի հավասարումների օգնությամբ խնդրի լուծման համար
օգտագործվում են ժամանակակից համակարգչային ծրագրեր և տեխնի-
կա:

ԳԼՈՒԽ 6

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԲԱԶԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

6.1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԲԱԶԱՅԻ ՆԵՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս անշարժ գույքի և հողային կադաստրի պրակտիկայում ձևափորվել է երկու հասկացություն՝ անշարժ գույքի կադաստրի տվյալների բանկ և բազա:

Տվյալների բանկը ժամանակակից էլեկտրոնային տեխնիկական միջոցների օգնությամբ հավաքված տվյալների, ծրագրերի, լեզվական և այլ միջոցների ամբողջություն է, որը նախատեսում է տվյալների կենտրոնացված հավաքում և պահպանում:

Տվյալների բազան տվյալների համակարգված ամբողջություն է, որոնք հավաքվում, մշակվում և պահպանվում են էլեկտրոնային տեխնիկական միջոցների օգնությամբ: Տվյալների բազայի ստեղծման և վարման համար (թարմացում, մուտքի ապահովում, լրատվության տրամադրում և այլն) օգտագործվում է լեզվական և ծրագրային միջոցների հավաքակազմ, որը կոչվում է տվյալների բազայի դեկավարման համակարգ:

Առանձին վարչատարածքային միավորի մակարդակով հողակադաստրային տվյալների բանկի և բազայի ստեղծման նպատակն է անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը՝ տրամաշրջանի ռազմավարական պահանագործման և կառավարման, ֆինանսական և ներդրումային քաղաքականության իրականացման, հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողաշինարարության, մոնիթորինգի անցկացման համար:

Անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկը կազմված է անշարժ գույքի բանական ու դրական պետական հաշվառման, կադաստրային գնահատման և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցման փաստաթղթերից: Այդ փաստաթղթերի տեղեկատվական բանկի ստեղծման, տեղեկատվության պահպանման և տրամադրման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին» 1998 թ. մարտի 9-ի № 155 որոշմամբ, ըստ որի փաստաթղթերը պահպան են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային

ստորաբաժնումներում, տեղեկատվական և քարտեզագրման կենտրոններում: Անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկը ներառում է ձեռագիր և մերենացիր տեքստային փաստաթղթեր, հողամասերի, շենքերի, շինությունների հատակագծեր, սխեմաներ, կադաստրային քարտեզներ (հատակագծեր), անշարժ գույքի հաշվառման գրքեր, անշարժ գույքի պետական գրանցման միասնական մատյաններ, անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթեր:

Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժնումները, տեղեկատվական և քարտեզագրման կենտրոնները անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկում ընդգրկված փաստաթղթերը պահում են անժամկետ:

Անշարժ գույքի կադաստրի առաջնային խնդիրներից է տեղեկատվական բանկի ստեղծումը, ինչը կապված է մեծ ծախսերի հետ և շատ աշխատատար է: Այդ պատճառով շատ երկրներում կադաստրի համակարգը ստեղծվել է հարյուրամյակների ընթացքում: Վերջին տասնամյակների պրակտիկան ցույց է տվել, որ առավել արդյունավետ և տնտեսապես նպատակահարմար է ձևավորել անշարժ գույքի կադաստրի այնպիսի համակարգ, որն իր մեջ միավորում է անշարժ գույքի հաշվառումը, գնահատումը և դրա նկատմամբ իրավունքների գրանցումը: Այդպիսի մուտքումը տնտեսապես արդարացված է նաև Հայաստանի Հանրապետության համար, քանի որ բոլոր է տախս կրճատել ծախսերը և ժամկետները:

Որպես միասնական տեղեկատվական համակարգ՝ անշարժ գույքի կադաստրն իր մեջ ներառում է փաստաթղթերի հետևյալ հիմնական խմբները՝

- անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանը,
- կադաստրային քարտեզը,
- անշարժ գույքի միավորի կադաստրային գործը:

Վերոհիշյալ փաստաթղթերը պարունակում են ամփոփ տվյալներ անշարժ գույքի պետական գրանցման օբյեկտների և սուբյեկտների մասին:

Անշարժ գույքի տեղեկատվական բանկի տվյալները կարող են ներկայացվել ինչպես ավանդական թղթային տեսքով, այնպես էլ էլեկտրոնային կրիչների վրա:

Կադաստրային աշխատանքների իրականացման ժամանակ քարտեզագրական նորագույն տեխնիկայի (արքայնակային դիրքային կայաններ, էլեկտրոնային տախտումներեր և այլն) օգնությամբ ստացված նյութերի և հավաքված փաստաթղթերի մշակման նպատակով համակարգիչների օգտագործումն արագացնում է տեղեկատվական բանկի կազ-

մակերպման աշխատանքները և պայմաններ ստեղծում՝ թղթայինից թրվային տեխնոլոգիաներին անցնելու համար: Վերջիններիս ներդրումը անշարժ գույքի կադաստրի համակարգում տալիս է հետևյալ առավելությունները՝

- արագանում է կադաստրային աշխատանքների իրականացման գործընթացը (քարտեզագրում, հաշվառում, գնահատում, գրանցում),
- տվյալների հավաքման և մշակման ընթացքում բարձրանում է ստանդարտացման մակարդակը,
- անշարժ գույքի կադաստրի տվյալներից օգտվելու ընթացքում դյուրին է դառնում օգտագործողների մուտքը,
- կրճատվում են թղթային արխիվների պահպանման համար պահանջվող տարածքները:

Համակարգչային տեխնիկայի կիրառումը թույլ է տալիս տեղեկատվական բանկի մեջ ներառվող փաստարդերից յուրաքանչյուրի ստեղծման համար օգտագործել համապատասխան ծրագիր: Օրինակ՝ թվային կադաստրային քարտեզների ստեղծման համար օգտագործվում են քարտեզագրական ստանդարտ ծրագրեր, իսկ կադաստրային գործերի արխիվացման, անշարժ գույքի հաշվառման, գնահատման և գրանցման համար՝ կիրառական ծրագրեր՝ ելեկտրոն գործող օրենսդրությունից:

Անշարժ գույքի տեղեկատվական բանկում ընդգրկվող տվյալների մուտքագրման, մշակման, պահպանման և ներկայացման համար ստեղծվում է տվյալների համապատասխան բազա՝ համակարգչային տեխնիկայի օգտագործման շնորհիվ:


Տվյալների բազայի ստեղծման (կազմակերպման) համար առաջադրված սկզբունքները պետք է համապատասխաննեն՝

- համակարգի նպատակային նշանակությանը, այսինքն՝ ապահովեն անշարժ գույքի ու դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության պահպանումն ու մշակումը,
- համակարգի գործառնական նշանակությանը, այսինքն՝ ապահովեն անշարժ գույքի կադաստրի վարման տեխնոլոգիական ավտոմատացումը,
- տվյալների բազայի նկատմամբ առաջադրված ստանդարտ պահանջներին (տվյալների ամբողջականություն, ոչ թույլատրելի մուտքերից պաշտպանվածություն, ընդարձակում և այլն):

6.2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հստ ներկայացման ձևի՝ անշարժ գույքի կադաստրի համակարգում առկա տեղեկատվությունը բաժանվում է երկու տիպի՝ գրաֆիկական և սեմանտիկ (աղյուսակային և տեքստային): Ընդ որում՝ գրաֆիկական տվյալների բազան պարունակում է տեղեկատվություն անշարժ գույքի միավորի դիրքի և ձևի մասին, իսկ սեմանտիկը՝ տվյալներ անշարժ գույքի որակական և քանակական ցուցանիշների, ինչպես նաև դրանց նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների մասին: Անշարժ գույքի գրաֆիկական և սեմանտիկ տվյալներն իրար հետ կապված են անշարժ գույքի կադաստրի միավորի ծածկագրի միջոցով:

Անշարժ գույքի տեղեկատվական բանկն ունի հետևյալ կառուցվածքը (նկ. 4):



Նկ. 4. Անշարժ գույքի տեղեկատվական բանկի կառուցվածքը:

Անշարժ գույքի գրաֆիկական տվյալների բազան ստեղծվում է ծրագրային ապահովմանը համապատասխան՝ երկրատեղեկատվական համակարգի միջոցով, որի օգնությամբ էլ այն նեկավարվում և արտացոլվում է: Երկրատեղեկատվական համակարգն իրականացնում է՝

- գրաֆիկական տվյալների բազայի դեկավարում (գրաֆիկական տվյալների մուտքագրում, նշակում և արտացոլում),
- գրաֆիկական տվյալների բազաներում անշարժ գույքի միավորի կադաստրային ծածկագրի նշակում,

- սեմանտիկ տվյալների բազաներին ուղղված հարցումների ձևակերպում,
- գրաֆիկական և տեքստային տեղեկատվության պատրաստում և տպագրում:

Ուսատրային տեղեկատվության տվյալների բազան պարունակում է միանալիք որևէ կոռորդինատային համակարգին (պետական, տեղական, պայմանական) կապակցված պլանշետների ռաստրային պատկերներ: Ուսատրները ստացվում են պլանշետների պատկերամուտքափորման (սկանավորման) միջոցով: Ուսատրները ծառայում են որպես ենթահիմք՝ վեկտորային քարտեզների համար: Դրանցում պատկերված տեղեկատվությունը չի կատարում հաշվողական և որոնողական դեր:

Վեկտորային տեղեկատվության տվյալների բազան պարունակում է թվայնացված (կետերի, գծերի և բազմանկյունների ձևով ներկայացված) և տարբեր շերտերում տեղադրված ու անշարժ գույքի միավորներ ձևավորող կադաստրային օբյեկտներ: Դրանց ներկայացման ձևը բույլ է տալիս հաշվարկել գծերի երկարությունները, հողամասերի մակերեսները, կատարել որոնողական տարբեր ֆունկցիաներ: Առանց վեկտորային տեղեկատվության անհնար է իրականացնել կադաստրի հետ կապված ավտոմատացված գործընթացները:

Գրաֆիկական տվյալների բազան կադաստրային թվային քարտեզների կազմնան հիմքն է: Գրաֆիկական տեղեկատվությունը ներկայացվում է կադաստրային թվային քարտեզների տեսքով, որոնց կազմնան համար օգտագործվում են ծրագրավորման ժամանակակից միջոցներ: Թվայնացման արդի ծրագրերը բույլ են տալիս մշակել ոչ միայն ավանդական ճանապարհով (մենգուլային, տախիեռնետրական և հորիզոնական հանույթներ), այլև ժամանակակից գեղողեզիական սարքավորումների (էլեկտրոնային տախիեռնետր, արբանյակային դիրքային կայան) միջոցով ստացվող քարտեզագրական տեղեկատվությունը: Թվային կադաստրային քարտեզներում ողջ տեղեկատվությունը պատկերվում է շերտերի ձևով, ընդ որում՝ յուրաքանչյուր շերտում առկա է միայն մեկ տիպի տեղեկատվություն:

Կադաստրային քարտեզների վրա պատկերվում են հիմնականում հողամասերի, շենքերի և շինությունների շերտերը: Բացի այդ՝ պատկերվում են նաև ստորգետնյա և վերգետնյա հաղորդակցության ուղիները, հողատեսքերը, բնապահպանական, սանիտարական, քաղաքաշինական գոտիները և այլն: Կադաստրային քարտեզներն օգտագործվում են ոչ միայն անշարժ գույքի գրանցման աշխատանքների ժամանակ, այլև տվյալ համայնքի հողերի օգտագործման սիեմաների, բնակավայրերի գիսավոր հատակագծերի կազմնան և բազմաթիվ այլ նպատակների համար: Միևնույն ժամանակ՝ այլ բնույթի տվյալներով լրացվելուց հետո

կադաստրային քարտեզները ձեռք են բերում քազմաֆունկցիոնալ նշանակություն, ծառայելով որպես քարտեզագրական հիմք՝ քազմաբնույթ կադաստրների վարժան համար: Այժմ տեղեկատվական կենտրոնում կազմվում են Հայաստանի Հանրապետության տարրեր մարզերի գյուղական համայնքների տարածքների բվային կադաստրային քարտեզները: Տեղեկատվական կենտրոնում թվային քարտեզներ կազմելու համար օգտագործվում են աշխարհի շատ երկրներում լայն կիրառում ունեցող ծրագրերը:

Անշարժ գույքի սեմանտիկ տվյալները: Անշարժ գույքի տեղեկատվական բանկի սեմանտիկ (տեքստային և աղյուսակային) տվյալների օգնությամբ նկարագրում են անշարժ գույքի պետական գրանցման օբյեկտներն ու սուբյեկտները: Սեմանտիկ տվյալների բազան ստեղծվում է համապատասխան ծրագրային ապահովման՝ տվյալների բազաների կառավարման համակարգի օգնությամբ և պարունակում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ անշարժ գույքի հաշվառման և գրանցման գործընթացների վերաբերյալ:

Սեմանտիկ տվյալների բազան պարունակում է՝

- անշարժ գույքի միավորների տվյալներ,
- անշարժ գույքի պետական գրանցման սուբյեկտների տվյալներ,
- անշարժ գույքի պետական գրանցման օբյեկտների տվյալներ,
- անշարժ գույքի նկատմամբ իրավունքներն ու սահմանափակումները հաստատող փաստաթղթերի տվյալներ,
- կադաստրային գրքերի տվյալներ:

Անշարժ գույքի միավորների տվյալների բազան պարունակում է անշարժ գույքի միավորների կադաստրային ծածկագրերի, դրանց նպատակային նշանակության և օգտագործման նպատակի, մակերեսի, արժեքի, քանակի ու դրակի տվյալների մասին տեղեկատվություն:

Անշարժ գույքի պետական գրանցման սուբյեկտների տվյալների բազան պարունակում է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց նախն: Պետական գրանցման սուբյեկտների տվյալների բազան ունի այնպիսի կառուցվածք, որով այն միանշանակ առանձնանում է մնացած այլ սուբյեկտներից:

Անշարժ գույքի պետական գրանցման օբյեկտների տվյալների բազան պարունակում է անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների մասին անհրաժեշտ տվյալներ:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքներն ու սահմանափակումները հաստատող փաստաթղթերի տվյալների բազան ընդգրկում է անշարժ գույքի տնօրինման, օգտագործման և տիրապետման իրավունքներ սահմանող և հաստատող փաստաթղթերի մասին տեղեկություններ:

Կադաստրային գործերի տվյալների բազան պարունակում է հրդումներ կադաստրային գործերին, որոնցում պահպանվում են անշարժ գույքի տեխնիկական, տնտեսական և իրավաբանական նկարագրությունները:

Անշարժ գույքի նկարագրություններն ընդգրկում են հետևյալ տրվյալները՝

- հողամասերի կադաստրային ծածկագիրը՝ հասցե, նպատակային նշանակություն, ընդհանուր մակերես, օգտագործման նպատակ, նպատակային օգտագործման մակերես, կադաստրային արժեք,
- շենքերի կադաստրային ծածկագիրը՝ հասցե, շենքի տիպ, օգտագործման նպատակ, ընդհանուր մակերես, բնակելի մակերես, կադաստրային արժեք,
- շինությունների կադաստրային ծածկագիրը՝ հասցե, շինության անվանում, մակերես, կադաստրային արժեք,
- բնակելի տան կադաստրային ծածկագիրը՝ հասցե, օգտագործման նպատակ, կրնունալ ապահովածության, տարածագնահատման գոտիականության գործակից, տանիքի առկայություն, հարկերի քանակ, հարկի ծավալ, բնակելի տան հարկի գործակից, ծածկի, շինանյութի տեսակ, մաշվածություն, արտաքին հարդարում, վնասվածություն, ավարտվածություն, պատշգամբի մակերես, պարսպի շինանյութի տեսակ, ծավալ,
- բնակարանի կադաստրային ծածկագիրը՝ հասցե, շինանյութի տեսակ, տարածագնահատման գոտիականության գործակից, բնակարանի հարկի գործակից, բնակելի ծածկի գործակից, հարկի բարձրության գործակից, ծածկի շինանյութի տեսակ, ավարտվածություն, մաշվածություն, վնասվածություն:

Պետական գրանցման օրենքուների նկարագրություններն ընդգրուկում են հետևյալ տրվյալները՝

- սեփականության իրավունքով անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը՝ սեփականատերերի անուն, ազգանուն, սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր, սեփականության վկայականի համար,
- գրավի իրավունքով անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը՝ գրավատուի մասին տվյալներ, գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական, գրավի պայմանագիր, տեղեկություններ նախորդ գրավի մասին, գրավի վկայականի համար, գրավի իրավունքի դադարումը հաստատող փաստաթղթեր,

- վարձակալության (Ենթավարձակալության) իրավունքով անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը՝ վարձակալի և վարձատուի անուն (անվանում), վարձակալության պայմանագրի համար, ամիս, ամսաթիվ, վճարի չափ, գործողության ժամկետ, Ենթավարձակալության առկայություն, վարձակալության վերաբերյալ լուսուցիչ տեղեկություններ,
- սերվիսուտի իրավունքով անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը՝ տվյալներ սերվիսուտի իրավունք ձեռք բերած սեփականատիրոջ մասին, սերվիսուտով փոխանցվող իրավունքներ, սերվիսուտի պայմանագրի գործողության ժամկետ, սերվիսուտի վկայականի համար, սերվիսուտի իրավունքի դադարումը հաստատող փաստաթուղթ:
- սահմանափակման իրավունքով անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը՝ տվյալներ սահմանափակման իրավունք ձեռք բերած սեփականատիրոջ մասին, սահմանափակման սկիզբը հաստատող ամսաթիվ, սահմանափակման իրավունքի դադարումը հաստատող փաստաթուղթ:

Պետական գրանցման սուբյեկտների նկարագրություններն ընդգրկում են հետևյալ տվյալները՝

- ֆիզիկական անձանց (քաղաքացիների) մասին՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տարեթիվ, ամսաթիվ, ծննդավայր, քաղաքացիություն, անձր հաստատող փաստաթղթի անվանում և համար, հասցե, հեռախոս,
- իրավաբանական անձանց մասին՝ անվանում, պետական գրանցման ծածկագիր, գրանցման տարեթիվ, ամսաթիվ, հարկային ծածկագիր, իրավաբանական հասցե, հեռախոս:

Տեքստային և աղյուսակային տվյալների ձևակերպման հիմնական աղյուրներն են.

- տվյալներ, որոնք պարունակվում են պետական գրանցման սուբյեկտների կողմից ներկայացվող դիմումներում և իրավաբանական փաստաթղթերում,
- տվյալներ, որոնք ձևակերպվում են տեղագննման, չափագրման, գնահատման և այլ գործողությունների արդյունքում:

Անշարժ գույքի տեղեկատվական բանկը չի կարող լիարժեք գործել առանց վերոհիշյալ տեքստային և աղյուսակային տվյալների: Այդ պատճառով անշարժ գույքի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ունենալու համար անհրաժեշտ է գրաֆիկական տվյալների մուտքագրմանը գուգահետ իրականացնել տեքստային և աղյուսակային տվյալների մուտքագրման նախապատրաստական աշխատանքներ: Այդ նպատակով օգտագործվում են համակարգչային մի քանի ծրագրեր: Դրանց

Հնորիհվ անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի վերաբերյալ գրաֆիկական և սեմանտիկ տվյալները կարող են հանդես գալ փոխկապակցված, և անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների մասին հնարավոր կյինի ստանալ լիարժեք տեղեկատվություն:

Տեղեկատվության տրամադրման կազմ: Անշարժ գույքի պետական կադաստրի համակարգում տեղեկատվության տրամադրումը բաց է: Անշարժ գույքի կադաստրի տվյալների մասին տեղեկատվությունից կարող են օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գրծադադիր, դատական, տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկությունները, կազմակերպությունները, բանկերը, օտարերկրյա իրավաբանական անձինք և քաղաքացիները:

Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի մասին տեղեկատվություն տրամադրում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումները, տեղեկատվական և քարտեզագրական կենտրոնները:

Կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմիններն անշարժ գույքի մասին տեղեկատվությունը տրամադրում են՝ նշելով անշարժ գույքի միավորի սեփականատիրոջ անունը (անվանումը), անշարժ գույքի գտնվելու վայրը, չափը, կադաստրային արժեքը, անշարժ գույքի գրավի (հիփորեքի), սահմանափակումների, այդ թվում՝ սերվիսուտի առկայությունը, անշարժ գույքի չափագրման, կադաստրային հանույթների, հատակագծերի ու գնահատման մասին տվյալները և այլ իրավագորություններ:

ՀՈՂԱՍԱԽ ՆԿԱՏՄԱՐՔ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Սեփականության իրավունքը երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8- և 31-րդ հոդվածներով.

Հոդված 8. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Հոդված 31. Յուրաքանչյուր ոք իրավունքը ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը շպետք է վճառ պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

7.1. ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Սեփականության իրավունքը սուրյեկտի Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբնորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբնորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, բերքի, պոտուների, աճի, ծնածի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբնորեն ապահովված հնարավորությունն է:

Սեփականատերն իրավունքը ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին շխակատող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը շխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Սեփականատերը կարող է իր գույքը հանձնել այլ անձի հավատարմագրային կառավարման: Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է գույքը կառավարել ի շահ սեփականատիրոջ կամ նրա կողմից նշված երրորդ անձի:

Հողը ազգային հարստություն է և ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու սեփականությունը:

Հողի սեփականության իրավունքից շեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ քաղաքացիություն չունեցողները օգտվում են հողամասի վրա ամրակայված շենքերի, շինուալիքների նկատմամբ սեփականության իրավունքից, եթե օրենքով և միջազգային պայմանագրերով այլ բան չի նախատեսված:

Սեփականության իրավունքով հողամասի ձեռքբերման ձևերն ու կարգը սահմանվում են «ՀՀ հողային օրենսգրքով» և դրա հիման վրա ընդունվող իրավական այլ ակտերով:

Հողամասը որպես սեփականության իրավունքի օրինակ: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը տարածվում է հողի և դրա վրա ամրակայված անշարժ գույքի նկատմամբ:

Հողամասի տարածքային սահմանները որոշվում են օրենքով սահմանված կարգով՝ լիազորված պետական մարմնի կողմից սեփականատիրոջ տրված փաստարդերի հիման վրա:

Հողային հարաբերությունների սուրյեկտաներ են Հայաստանի Հանրապետությունը, համայնքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձինք և քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, միջազգային կազմակերպությունները, հասուն կացության կարգավիճակ ունեցող անձինք:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք շեն կարող հողի նկատմամբ ունենալ սեփականության իրավունք: Նրանք կարող են լինել միայն հողի օգտագործողներ:

Բացառություն են կազմում միայն Հայաստանի Հանրապետությունում կացության հասուն կարգավիճակ ունեցող անձինք:

Հողային հարաբերությունների օբյեկտները հողամասերն են և դրանց նկատմամբ իրավունքները:

Հողամասը հողի վերգետնյա և ստորգետնյա տարածքի մասն է, որն ունի ամրագրված սահմաններ, տարածք (նակերես, ծածկագիր), գտնվելու վայր, իրավական կարգավիճակ՝ օրենքներով նախատեսված սահմանափակումներով հանդերձ, որոնք գրանցված և արտացոլված են անշարժ գույքի պետական միասնական կադաստրում:

Հողամասի սահմաններն ամրագրվում են կադաստրային քարտեզներում, սեփականության, օգտագործման իրավունքը հաստատող փաստարդություն և արտացոլվում են տեղանքում:

Հողամասի իրավական կարգավիճակը ներառում է դրա նկատմամբ սահմանված կարգով գրանցված սեփականության և այլ գույքային իրավունքներն ու սահմանափակումները, նպատակային նշանակությունը:

Հողամասերն ու դրանց նկատմամբ իրավունքներն ու օգտագործման նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև հողամասերին ամրակայված օրյեկտները (հողաշերտերը, մեկուսի ջրային օրյեկտները, անտառները, բազմամյա տնկարկները, շենքերը, շինուալիքները), որոնք անհնար է հողից անջատել առանց դրանց նշանակությանը վճառ պատճելու, շրջանառության մեջ են գտնվում անբաժան ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Հողամասը կարող է լինել բաժանելի և անբաժանելի:

Բաժանելի է այն հողամասը, որն առանց իր նպատակային նշանակության և թույլատրված օգտագործման փոփոխության կարող է բաժանվել մասերի, որոնցից յուրաքանչյուրը կարող է լինել պետական գրանցման ենթակա ինքնուրույն հողամաս:

Անբաժանելի է այն հողամասը, որն իր նպատակային նշանակությամբ ու թույլատրված օգտագործմամբ չի կարող բաժանվել ինքնուրույն հողամասերի:

Հողամասը կարող է անբաժանելի ճանաչվել օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա:

Սեփականության իրավունքից հրաժարվելու դեպքում նշված հողամասը կարող է տրվել տարածքային տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքների տիրապետմանը:

7.2. ՀՈՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության և այլ գույքային իրավունքները: Քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը հողամասերն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքն է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ:

Հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի նաև նաև պղեցման, ժառանգման, առը ու վաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Հողամասերի ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքը: Երկու կամ մի բանի անձանց մոտ սեփականու-

թյան, օգտագործման ներքո գտնվող հողանար նրանց է պատկանում համապատասխանաբար՝ ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքով:

Հողանասի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքը ծագում է երկու կամ մի քանի անձանց սեփականության իրավունքով այն հողանաս անցնելիս, որը չի կարող բաժանվել առանց դրա նպատակային նշանակության փոփոխման կամ օրենքի ուժով ենթակա չէ բաժանման, ինչպես նաև սեփականատերերի կողմից իրենց պատկանող հողամասերը կամովին՝ պայմանագրի հիմնան վրա, մեկ հողամասում միավորելիս:

Օրենքներով և այլ իրավական ակտերով, հողաշինարարական և քաղաքաշինական փոստարդերով սահմանվում են հողամասերի նվազագույն չափերը, որոնցից ցածր չի բոլորարվում ընդհանուր սեփականությունից առանձնացնել հողամասեր (ըստ օրենքի՝ անբաժանելի հողամասեր):

Սեփականատերերից մեկին պատկանող շենքի, շինության վերակառուցման չի հանգեցնում ընդհանուր հողամասում նրա բաժնի մեծացմանը՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության:

Ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասի տնօրինումը, տիրապետումը և օգտագործումն իրականացվում է Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Հողանաս օգտագործման տրամադրելը: Հողանար սեփականատերն օգտագործման է տրամադրում կառուցապատման, անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունքով:

Արգելվում է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելը: Նման հողամասերը կարող են փոխանցվել միայն սեփականության իրավունքով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերի, որոնց փոխանցումը սեփականության իրավունքով արգելված է:

Հողանասի անհատույց (մշտական) օգտագործման իրավունքը: Հողանասի անհատույց (մշտական) օգտագործում է համարվում սեփականատիրոջ կողմից այլ անձի՝ օգտագործման իրավունքով անժամկետ տրամադրված հողամասի տիրապետման և օգտագործման իրավունքը: Սեփականատիրոջ կողմից հողամասի անհատույց (մշտական) օգտագործման իրավունքը կարող է տրամադրվել պայմանագրով սահմանված կարգով՝ կառուցապատման իրավունքով կամ առանց դրա:

Հողային օրենսգիրքի 75-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերում անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված հողամասերի օգտագործողները, պետական կառավարման ու տե-

դական ինքնակառավարման մարմինների համաձայնությամբ կարող են հողամասերը հանձնել վարձակալության, ինչպես նաև կամովին հրաժարվել դրանցից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Անհատույց օգտագործման իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները կարգափորվում են Քաղաքացիական օրենսգրքով:

Հողամասի վարձակալության իրավունքը: Հողամասի վարձակալության իրավունքը վարձակալության պայմանագրի պայմաններով վճարի դիմաց հողամասի ժամկետային օգտագործման իրավունքն է:

Հողամասի սեփականատերը պայմանագրով կարող է վարձակալին տրամադրել հողամասի ենթավարձակալության և գրավ դնելու իրավունքներ:

Քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները վարձակալության պայմաններով հողամասեր են տրամադրել, կարող են այդ մարմինների համաձայնությամբ իրենց հողամասերը փոխանակել կամ կամովին հրաժարվել դրանցից:

Վարձակալության կարող են հանձնվել պետության և համայնքի, իրավաբանական անձանց ու քաղաքացիների սեփականության ներքո գտնվող հողամասերը:

Վարձակալած հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը վարձատուի համաձայնությամբ կարող է որպես ավանդ ներդրվել իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում՝ դրանց կանոնադրություններին համապատասխան, ինչպես նաև տրամադրվել ենթավարձակալության:

Պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարուց ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերինը, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի:

Պետության և համայնքի հողերից հողամասերի վարձակալության իրավունքը տրամադրվում է մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով:

Հողամասերի՝ առանց մրցույթի տրամադրման դեպքերը սահմանում է կառավարությունը:

Վարձակալության պայմանագիրը կրկին կնքելիս նախապատվության իրավունքը վարձակալության ժամկետի շրջանակներում փոխանցվում է իրավահաջորդության կարգով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Վարձատուի փոփոխման դեպքում վարձակալության պայմանագիրը կարող է դադարել միայն Քաղաքացիական օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

Հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները: Պետության և համայնքների սեփականություն համարվող հողերից տրամադրված կամ այլ հիմքերով ճեռք բերված հողամասերի նկատմամբ իրավունքները կարող են սահմանափակվել՝

- որոշակի անձանց դրանք վաճառելու կամ այլ կերպ օտարելու արգելքով կամ որոշակի անձանց ցանկացած պահի կամ սահմանված ժամկետում օտարելու պարտավորությամբ,
- վարձակալության կամ ենթավարձակալության հանձնելու արգելքով,
- վաճառքի դեպքում հայտարարված գնով գնելու նախապատվության իրավունքով,
- որոշակի ժառանգների՝ որպես ժառանգություն փոխանցելու պայմանվ (գյուղատնտեսական հողերի համար),
- որոշակի ժամկետներում սահմանված կարգով համաձայնեցված նախազծով հողամասի կառուցապատումն սկսելու և ավարտելու կամ յորացնելու կամ կառուցապատման իրավունքը բացառելու պայմանվ,
- հողամասում գտնվող գեղղեզիական կետերը պահպանելու պահնջով,
- առանց սահմանված կարգով համաձայնեցման անշարժ գույքի արտաքին տեսքը փոփոխելու, վերակառուցելու, շենքերը և շինությունները քանդելու արգելքով,
- ճանապարհի կամ դրա մի մասի շինարարության, վերանորոգման և պահպանման պայմանով,
- գործունեության առանձին տեսակների արգելքով,
- հողամասի նպատակային օգտագործման փոփոխման արգելքով,
- բնապահպան պահանջների պահպանման կամ որոշակի աշխատանքներ կատարելու, ներառյալ՝ կենդանական աշխարհը, հողաշերտը, հազվագյուտ բույսերը, բնության, պատմության և մշակույթի հուշարձանները, հնէարանական օբյեկտները պահպանելու պայմանով,
- իր հողամասում սահմանված ժամկետում և սահմանված կարգով այլ անձանց որորդության, ձկնորսության, վայրի բույսեր հավաքելու իրավունք տրամադրելու պայմանով,
- վայրի կենդանիների գոյության, բնական միջավայրի ուղիների պահպանման պայմանով,

- այլ պարտավորություններով, սահմանափակումներով կամ պայմաններով:

Հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները սահմանվում են անմիջականորեն՝ օրենքով, այլ իրավական ակտերով, պայմանագրով կամ դատական կարգով:

7.3. ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՐՎԻՏՈՒՏԸ, ԳՐԱՎԸ, ՀԻՓՈԹԵԶԸ

Հողամասի սերվիսուսոք: Հողամասի սերվիսուտը մեկ կամ մի քանի սեփականատերերի հողամասերից սահմանափակ օգտվելու իրավունքն է:

Սերվիսուտը կարող է սահմանվել հողամասերի սեփականատերերի համաձայնությամբ կամ դատական ակտով:

Հողամասի սեփականատերն իրավունք ունի պահանջել, ներառյալ՝ դատական կարգով, որ իրեն սերվիսուտ տրամադրվի հողամասը պահպանելու և սպասարկելու համար:

Հողամասը կարող է ծանրաբեռնվել հետևյալ սերվիսուտներով՝

- հողամասով անցնելու կամ երթևեկելու համար,
- հողամասով էլեկտրահաղորդման, կապի գծերի, ջրամատակարարման և գազամատակարարման խողովակաշարերի անցկացման, շահագործման և վերանորոգման համար,
- այլ հողամասի հողի բարեկավման նպատակով հողում դրենաժային աշխատանքներ կատարելու համար,
- հողամասից ջուր վերցնելու համար,
- հողամասով անասունների անցնելու, խոտհնձի, անասուններ արածացնելու համար՝ տեղական պայմաններին և սովորույթներին համապատասխան ժամանակահատվածում,
- հողամասով ինչպես մասնավոր, այնպես էլ հանրության համար անհրաժեշտ հետախուզական, հետազոտական և այլ աշխատանքներ իրականացնելու համար,
- հողամասի սահմաններում գտնվող գեղրեզիական կետերին, պատմության, մշակութային և հնագիտական հուշարձաններին անարգել մոտենալու համար,
- իր հողամասի շենքերը, շինությունները սահմանակից հողամասի կամ դրանում եղած շենքերի, շինությունների վրա հենելու կամ որոշակի բարձրությամբ հարևան հողամասի վրա կախելու համար,
- սահմանակից հողամասում շենքերի, շինությունների բարձրությունը սահմանափակելու համար,
- սահմանակից հողամասում պաշտպանական անտառատընկարկելու կամ այլ բնապահպանական օբյեկտներ ստեղծելու համար,

- այլ սերվիտուտներ, առանց որոնց անհնար է բավարարել հողամասն իր նշանակությամբ օգտագործելու համար անհրաժեշտ պահանջները:

Սերվիտուտ կարող է սահմանվել ցանկացած իրավունքում գտնվող հողամասի նկատմամբ ու կարող է լինել ժամանակավոր և (կամ) մշտական:

Սերվիտուտը պետք է հնարավորին չափ նվազ ծանրաբեռնի հողամասը:

Սերվիտուտով ծանրաբեռնված հողամասի սեփականատերն իրավունք ունի վճար պահանջել այն անձանցից, ի շահ որոնց սահմանվել է սերվիտուտը, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

Սերվիտուտները ենթակա են պետական գրանցման:

Սերվիտուտը պահպանվում է հողամասը մեկ անձից մյուսին անցնելիս:

Սերվիտուտով ծանրաբեռնված հողամասի սեփականատիրոջ պահանջով սերվիտուտը կարող է դադարեցվել դրա հիմքերի վերացման կամ հողամասի նպատակային նշանակության փոփոխման կապակցությամբ:

Եթե սերվիտուտով ծանրաբեռնվելու արդյունքում հողամասը չի կարող օգտագործվել իր նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան, սեփականատերն իրավունք ունի դատական կարգով պահանջել դադարեցնել սերվիտուտը կամ փոփոխել նպատակային նշանակությունը:

Սերվիտուտի հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ քաղաքական օրենսգրքով:

Գրավի իրավունքը գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է՝ գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարումն ապահովելու համար:

Գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարումն ապահովելու համար:

Գրավի տեսակներն են՝

- գրավականը,
- գրավատուին հանձնված գույքի գրավը,
- իրավունքների գրավը,
- դրամական միջոցների գրավը,
- կոշտ գրավը,
- շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավը,
- հիփորեքը:

Հիփոթեքի հասկացությունը: Հիփոթեք է համարվում գրավը, որի առարկան, անկախ նրանից այն անշարժ, թե շարժական գույք է, մնում է գրավատուի կամ երրորդ անձի տիրապետման և օգտագործման ներքո:

Հիփոթեքի պայմանագրով կարող են գրավ դրվել միայն քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությանը պատկանող հոդամասերը: Հոդամասի նկատմամբ ընդհանուր սեփականության դեպում հիփոթեք կարող է սահմանվել քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատկանող այն հոդամասի նկատմամբ, որը բնեղենով առանձնացված է ընդհանուր սեփականության ներքո գտնվող հոդամասից:

Պետական հոդամասերը գրավի, հիփոթեքի առարկա կարող են լինել միայն համայնքի ավագանու որոշմամբ:

Հոդամասի մի մասի գրավ, հիփոթեք թույլատրվում է միայն օրենքով սահմանված կարգով՝ հոդամասը բաժանելուց և առանձին հոդամաս դարձնելուց հետո:

Օգտագործման իրավունքը ձեռք բերված հոդամասի գրավ, հիփոթեք թույլատրվում է միայն սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ:

Գրավի, հիփոթեքի պետական գրանցումից անմիջապես հետո գրավառուին տրվում է գրավի, հիփոթեքի իրավունքի պետական գրանցման վկայական:

Գույքի հիփոթեքի իրավունքի գրանցումն ու գույքի հիփոթեքի իրավունքի պետական գրանցման վկայականը չեղյալ են համարվում.

- գրավի, հիփոթեքի վկայականի տիրոջ դիմումով,
- գրավառուի և գրավառուի համատեղ դիմումով,
- գրավը, հիփոթեքը դադարեցնելու մասին դատարանի որոշումով, վճռով:

Հոդամասի գրավի, հիփոթեքի հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրերով:

7.4. ԳՈՒՅՔԱՅԻՆ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Տիրազորիկ է համարվում այն հոդամասը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ իրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից:

Տիրազորկ հոդամասի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել վաղենության ուժով:

Տիրազորկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու հիմքերն ու կարգը սահմանվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրերով:

Քաղաքացին կամ իրավաբանական անձը, որը հողամասի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Տիրապետման վաղեմությունը վկայակոչող անձը կարող է իր տիրապետման ժամկետին միացնել այն ժամանակը, որի ընթացքում այդ հողամասին տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է ինքը:

Մինչև ձեռքբերման վաղեմության ուժով հողամասի կամ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը, հողամասը կամ գույքը որպես սեփականություն տիրապետող անձն իրավունք ունի պաշտպանել այն երրորդ անձից, որը գույքի սեփականատերը չէ և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ իմքնով որևէ նկատմամբ չունի տիրապետման իրավունք:

Հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերած անձը այլ իրավունքը ստանում է պետական գրանցման պահից:

Իմքնակամ զրադեցրած հողամաս է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով չհատկացված հողամասը:

Տիրազորկ հողամասի, ինքնակամ զրադեցրած հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման, վերջինիս վաղեմության հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով:

Հողամասի ժառանգության իրավունքը: Ժառանգության դեպքում հողամասը անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց՝ ըստ կտակի և ըստ օրենքի: Ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության նակատագիրը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում:

Հողամասի օգտագործման իրավունքի անցումը խնամակալության: Հողամասի օգտագործման իրավունքի անցումը խնամակալության նշանակում է ժամանակավորապես անցումն այն անձանց, ովքեր չեն համարվում հողի սեփականատեր, սակայն իրազորդում են իրենց խնամակալական իրավունքներն անշափահաս ժառանգորդի վրա (ժառանգության իրավունք ստացած անշափահաս սեփականատիրոջ չափահաս դառնալու ամբողջ ընթացքում): Անշափահաս ժառանգորդները չեն կորցնում հողի սեփականության իրավունքը, սակայն մինչև նրանց չափահաս դառնալը հողամասի փաստացի օգտագործումն, ըստ օրենքի, իրականացնում է խնամակալը:

Հողամասերը խնամակալին անցնում են՝ գյուղացիական, անձնական օժանդակ տնտեսություն վարելու, այգեգործության համար, շինությունների սպասարկման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՐԻ ՕԲՅԵԿՏ

8.1. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության սահմաններում գտնվող ամբողջ հողային ֆոնդն՝ անկախ տնօրինման, տիրապետման կամ օգտագործման ձևերից, հանդիսանում է պետական հողային կադաստրի օբյեկտ։ Հողային պաշարները դասակարգվում են ըստ մի շարք հատկությունների՝

- վարչատարածքային պատկանելության,
- հողերի կատեգորիաների (կախված հիմնական նպատակային նշանակությունից և օգտագործման բնույթից),
- սուբյեկտների, հողային հարաբերությունների և իրավական կարգավիճակի,
- հողատեսքերի և այլն։

Ըստ վարչատարածքային հատկանիշների՝ հողային պաշարների հաշվառումն անհրաժեշտ է դառնում այն առումով, որ հանրապետության մարզերին և համայնքներին իրավունք է տրվում կարգավորել իրենց իրավասությունից բխող հողային հարաբերությունների հարցերը։

Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդն, ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների), դասակարգվում է՝

- գյուղատնտեսական նշանակության,
- բնակավայրերի,
- արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուց վածքների օբյեկտների,
- հատուկ պահպանվող տարածքների,
- հատուկ նշանակության,
- անտառային,
- ջրային,
- պահուտային հողերի։

Հողերի տիրապետման, օգտագործման կազմում առանձնացվում են որոշակի հողատեսքեր, որոնք պլանաշափորեն և սիստեմատիկաբար օգտագործվում են որոշակի արտադրական նպատակներով և որոնք ունեն որակապես տարրեր բնապատմական և այլ հատկություններ։

Հողատեսքերը լինում են գյուղատնտեսական (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլն) և ոչ գյուղատնտեսական (անտառներ, թփուտներ, ճահիճներ, կառուցապատված տարածքներ և այլն): Հողատեսքերի օգտագործման բնույթի վրա որոշակի ազդեցություն են գործում դրանց բնական հատկությունները: Այդ պատճառով էլ առանձնացվում են ոչ միայն հողատեսքի տեսակներ, այլ նաև տարատեսակներ (օրինակ՝ գուղձավորված, թփապատված, գերխոնավ արտաներ): Բացի այդ՝ կարող են լինել նաև չօգտագործվող հողատեսքեր՝ թափոններով զբաղեցված տարածքներ, աղբանոցներ, ձորակներ, ավազուտներ, քարհանքեր, մայր ապարի զանգվածային ելքեր և այլն:

Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը 2008 թ. կազմում է 2974,3^{*} հազ. հա: Հողերի հաշվառման տվյալներից պարզվում է, որ հանրապետության հողային ֆոնդի մեջ գերակշռող են համարվում գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 2122,1 հազ. հա (71,4 %), ապա՝ անտառային նշանակության հողերը՝ 370,6 հազ. հա (12,5 %), հատուկ պահպանվող տարածքները՝ 229,3 հազ. հա (7,7 %) և այլն (աղ. 2):

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի բաշխվածությունն ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) 01.07.2008 թ. դրույթամբ

Հ/հ	Նպատակային նշանակությունը (կատեգորիաներ)	Տարածությունը	
		ընդհանուր, հազ. հա	%-ը ընդհանուրից
1	Գյուղատնտեսական նշանակության	2122,1	71,4
2	Բնակավայրերի	151,0	5,1
3	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	28,2	0,9
4	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	12,1	0,4
5	Հատուկ պահպանվող տարածքների	229,3	7,7
6	Հատուկ նշանակության	31,7	1,1
7	Անտառային	370,6	12,5
8	Զրային	28,6	0,9
9	Պահուստային հողերի	0,7	0,01
Ընդամենը		2974,3	100


* Հողային ֆոնդը ենթակա է ճշտման:

Հանրապետության գլխավոր հողային հարստության՝ գյուղատրն-տեսական հողատեսքերի տարածությունը կազմում է 2122,1 հազ. հա (ամբողջ հողային ֆոնի 71,4 %-ը), որից վարելահողեր՝ 452,1 հազ. հա (21,3 %), բազմամյա տնկարկներ՝ 29,6 հազ. հա (1,4 %): Բնական կերահանդակների տարածությունը կազմում է. խոտհարքներ՝ 6,0 %, արոտներ՝ 52,7 %: Գյուղատնտեսական հողատեսքերի մեջ զգայի տարածություններ են գրավում այլ հողերը (ճանապարհներ, ձորեր, խախտված հողեր, բարհանքեր, ավազահանքեր, ճահիճներ և այլն)՝ 394,6 հազ. հա, 18,6 % (աղ. 3 և նկ. 5):

Աղյուսակ 3

ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքն ըստ հողատեսքերի

Հ/հ	Հողատեսքերը	Տարածություն	
		ընդհանուր, հազ. հա	%-ը ընդհանուրից
1	Վարելահող	452,1	21,3
2	Բազմամյա տնկարկներ՝ բնդամենք	29,6	1,4
	այդ թվում՝ պտղատու այգիներ	14,0	0,6
	խաղողի այգիներ	15,6	0,8
3	Բնական կերահանդակներ՝ բնդամենք	1245,8	58,7
	այդ թվում՝ խոտհարքներ	127,5	6,0
	արոտներ	1118,3	52,7
4	Այլ հողատեսքեր	394,6	18,6
	Ընդամենք գյուղատնտեսական հողատեսքեր	2122,1	100



Նկ. 5. Գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքը:

Հողերի որակական վիճակը բնութագրվում է բնական հատկություններով: Հողամասի՝ որպես հողակաղաքատրային հիմնական միավորի կամ բնական միատարր հողամասի՝ որպես կադաստրի տարրի ընտրությունը հնարավորություն է տալիս հանրապետության ամբողջ տարածքում պետական հողային կադաստրը վարել միասնական համակարգով:

Հայաստանի Հանրապետությունում հողային բարեփոխումների ընթացքում փոխվել են հողերի օգտագործման նախկին ձևերը, ի հայտ են եկել սեփականության և օգտագործման բազմաթիվ ձևեր և նոր հասկացություններ՝ տիրապետում, տնօրինում, օգտագործում, վարձակալում, սերվիսուտ, հիփորեք և այլն: Հանրապետության հողային ֆոնդի բաշխվածությունն ըստ սեփականության և օգտագործման ձևերի բերված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

**ՀՀ հողային ֆոնդի բաշխվածությունն
ըստ սեփականության սուբյեկտների**

Հ/հ	Սեփականության սուբյեկտները	Տարածությունը	
		ընդհանուր, հազ. հա	%-ը ընդհանութիւնից
1	Քաղաքացիների սեփականություն	525,8	17,7
2	Իրավաբանական անձանց սեփականություն	18,3	0,6
3	Համայնքային սեփականություն	1060,4	35,6
4	Պետական սեփականություն	1369,8	46,1
Ընդամենը		2974,3	100

Հանրապետության հողային ֆոնդի մեջ գերակշռող են պետական սեփականության հողերը՝ 1369,8 հազ. հա (46,1 %), ապա համայնքային սեփականության հողերը՝ 1060,4 հազ. հա (35,6 %): Քաղաքացիների սեփականության հողերի ընդհանուր տարածությունը կազմում է հողային ֆոնդի շուրջ 17,7 %-ը:

8.2. ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գյուղատնտեսական նշանակության հողեր: Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի՝ գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը:

Գյուղատնտեսական նշանակության հողերն, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝

- վարելահողերի,
- բազմամյա տնկարկների,

- խոտհարքների,
- արոտավայրերի,
- այլ հողատեսքերի:

Գյուղատնտեսական հողատեսքերը ենթակա են հատուկ պահպանության: Այդ հողերի փոխադրումը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի բույսատրվում է բացառիկ դեպքերում՝ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված կարգով:

Գյուղատնտեսական նշանակության հողամասերը տրամադրվում են սեփականության կամ օգտագործման իրավունքով՝ սեփականության բոլոր սուբյեկտներին:

Գյուղատնտեսական նշանակության հողերը տրամադրվում են իրավաբանական անձանց՝ կողեկտիվ սեփականության, անժամկետ կամ ժամանակավոր օգտագործման, ինչպես նաև վարձակալության հիմունք-ներով:

Գյուղատնտեսական նշանակության հողերը քաղաքացիներին և ֆիզիկական անձանց կարող են տրամադրվել անձնական սեփականության, անժամկետ՝ ժառանգաբար տիրապետելու, ժամանակավոր օգտագործելու կամ վարձակալելու իրավունքով՝

- գյուղացիական (ֆերմերային) տնտեսություն վարելու համար,
- անձնական օժանդակ տնտեսության համար,
- այգեգործության համար,
- անասնապահության համար և այլն:

Կողեկտիվ, կոռպերատիվ տնտեսությունները, բաժնետիրական ընկերությունները հողեր կարող են ունենալ կողեկտիվ համատեղ և բաժնեմասային սեփականության, անժամկետ և ժամկետային օգտագործման, ինչպես նաև վարձակալության իրավունքներով:

Կողեկտիվ բաժնետիրական սեփականությունը ձևավորվում է տրնտեսության առանձին աշխատողների հողային բաժինների գումարով: Ձեռնարկության յուրաքանչյուր աշխատող, ինչպես նաև այդ տարածքի վրա ապրող թոշակառուները, սպասարկող ձեռնարկությունների աշխատողները հողային բաժին ստանում են անվճար՝ տվյալ վարչական տարածքի համար միջին նորմի սահմաններում: Յուրաքանչյուր բաժնետիր կարող է դուրս գալ ձեռնարկության կազմից և հիմնել գյուղացիական տնտեսություն:

Կոռպերատիվ տնտեսությունների, բաժնետիրական ընկերությունների և ոչ պետական այլ գյուղատնտեսական ձեռնարկությունների իրավական կարգավիճակը որոշվում է ՀՀ հողային օրենսգրքով: Այդ տրնտեսությունները պարտավոր են հողն օգտագործել ըստ նպատակային նշանակության, կիրառել հողերի պահպանման համար անհրաժեշտ մելիորատիվ և կուտոր-տնտեսական միջոցառումներ, որոնք կնպաստեն

հոդի բերրիության բարձրացմանը: Կոռպերատիվ տնտեսությունները, բաժնետիրական ընկերությունները և ոչ պետական այլ գյուղատնտեսական ձեռնարկություններն իրավունք ունեն օգտագործելու ոչ միայն իրենց արամադրված հողամաք, այլ նաև դրա տարածքում գտնվող համընդհանուր օգտակար հանածոները (կավ, ավազ, խիճ, քար և այլն), անտառային տնկարկները և ջրային առյուրները՝ արտադրական, բնակելի և մշակութակենցաղային կառույցների շինարարության և ներտնտեսային այլ կարիքների համար՝ պահպանելով հողատարածքի օգտագործման նպատակային նշանակությունը: Մեփականատերերին իրավունք է վերապահվում հոդը գրավ դնել հիփորեքային բանկում:

Պետական գյուղատնտեսական ձեռնարկությունները, պետական տոհմարուծական, սելեկցիոն տնտեսությունները, սորտափորձարկման կայանները, հողային օրենսդրության համաձայն, ունեն հողերի օգտագործման նույն իրավունքներն ու պարտականություններն, ինչպես մյուս հողօգտագործողները:

Պետական գյուղատնտեսական ձեռնարկությունները կարող են ունենալ անժամկետ և ժամկետային օգտագործման հողեր: Աշխատանքային կողեկտիվի ընդհանուր ժողովի դրոշմանը պետական ձեռնարկությունը կարող է վերակազմավորվել բաժնետիրական ընկերության հոդը բաժանելով փայտաթինների: Առանձին բաժնետերեր կարող են դրւու գալ ձեռնարկության կազմից՝ վերցնելով իրենց փայտաթինը: Մասնագիտացված գյուղատնտեսական ձեռնարկություններում այդ իրավունքը բացակայում է:

Գիտահետազոտական, ուսումնական և գյուղատնտեսական այլ ձեռնարկություններին, գյուղատնտեսական արտադրաստեխնիկական ուսումնարաններին և հանրակրթական դպրոցներին հոդը տրամադրվում է անժամկետ (մշտական) օգտագործման կամ վարձակալական հիմունքներով: Նշանակած սուբյեկտների հողօգտագործումը ոչ թե հիմնական, այլ լրացուցիչ գործունեություն է: Սահմանված չափից մեծ հողամաս կարող է տրամադրվել օգտագործման կամ վարձակալական հիմունքներով:

Գյուղացիական տնտեսություն վարելու իրավունքով հոդի տրամադրումը հաստատվել է «Գյուղացիական, գյուղացիական կողեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքով: Հողաբաժինը՝ սեփականության կամ վարձակալության իրավունքով, տրամադրվում է գյուղացիական տնտեսության գլխավորի անունով, ով կարող է լինել յուրաքանչյուր չափահաս քաղաքացի: Մեփականության տրամադրման հողաբաժնի սահմանային չափաբաժինը (յուրաքանչյուր անդամի համար) հաստափում է համայնքի կողմից՝ ելնելով տնտեսության մասնագիտացումից, հոդերի առկայությունից և տեղական պայմաններից: Գյուղացիական տնտեսություններին սահմանված հողաբաժնի չափերից ավելի հողամասեր տրամադրվում են վարձակալական հիմունքներով և այլ պայման-

ներով: Գյուղացիական տնտեսության տարածքը ձևափորվում է նախկին կղլտնտեսությունների և խորհտնտեսությունների կամ գյուղատնտեսական այլ ձեռնարկությունների, ինչպես նաև բոշակառուների, սպասարկման ոլորտի աշխատողների հողարաժինների հաշվին: Գյուղացիական տնտեսությունների անդամներն իրավունք ունեն իրենց սեփականություն հանդիսացող հողամասն, առանց մասնատելու, վաճառել, ժառանգել, վարձակալությամբ տրամադրել, գրավ դնել և այլն՝ պահպանելով հողերի օգտագործման նպատակային նշանակությունը:

Անձնական օժանդակ (գյուղացիական) տնտեսություն վարելու համար հողամաս կարող է տրամադրվել յուրաքանչյուր չափահաս քաղաքցուն՝ որպես սեփականություն կամ վարձակալությամբ՝ անկախ նրա մշտական բնակության վայրից և գրաղմունքից: Անվճար սեփականության իրավունքով տրամադրվում է սահմանված հողարաժնի չափով հողամաս: Հողարաժնի չափից ավելի հողամասը ձեռք է բերվում պայմանագրային գներով կամ այն տրվում է վարձակալությամբ: Հողարաժնի կարող է տրամադրվել առանձին հողային զանգվածներով (կտորներով): Բնակավայրի կոնվակտ կառուցապատման դեպքում հողամաս է տրվում երկու տեղից՝ տան հարևանությամբ և բնակելի գոտու սահմաններից դուրս:

Անձնական օժանդակ տնտեսություն վարելու համար հողի սեփականության իրավունքի փաստարուր է համարվում տեղական իշխանության հետ կնքված պայմանագիրը, իսկ հողարաժնից ավելի հողահատկացման համար լրացուցիչ կնքվում է առք ու վաճառքի կամ վարձակալության պայմանագիր:

Անձնական օժանդակ տնտեսություն վարող սեփականատերն իրավունք ունի հողատարածքը ժառանգել, վաճառել, կարձաժամկետ վարձակալությամբ հանձնել այլ անձի՝ չփոխելով հողի օգտագործման նպատակային նշանակությունը:

Այգեգործության և անասնապահության համար հողամասեր կարող են տրամադրվել առանձին քաղաքցիներին, ինչպես նաև ըստ աշխատանքի և բնակության վայրի ստեղծված միավորումներին (ընկերություններին): Այգեգործական ընկերության հողային զանգվածները կազմված են առանձին քաղաքցիների անհատական հողամասերից և ընկերություններին կողեկտիվ սեփականության իրավունքով կամ անժամկետ օգտագործման իրավունքով հատկացված ընդհանուր օգտագործման հողերից: Այդ նպատակներով հատկացված հողերի սեփականության իրավունքի փաստարուր է համարվում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված վկայականը կամ անժամկետ օգտագործման իրավունքի վկայականը: Ընկերության անդամներն օգտվում են հողի սեփականության բոլոր իրավունքներից:

Խոտհարքները քաղաքացիներին կարող են տրամադրվել սեփականության իրավունքով՝ անժամկետ կամ վարձակալական իիմունքներով, գյուղատնտեսական մյուս հողատեսքերի օգտագործման կարգավհակով:

Արտավայրերը կարող են տրամադրվել քաղաքացիներին, ձեռնարկություններին, կազմակերպություններին՝ տեղական ինքնակառավարման մարմնների կողմից ընդունված կարճաժամկետ վարձակալության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքի համաձայն:

Այդպիսի հողամասերի օգտագործման իրավունքի փաստաթուղթը է վարձակալական կամ ժամանակավոր օգտագործման պայմանագիրը: Հողամասի շափերը սահմանվում են կողմերի պայմանագործությամբ և չեն նորմավորվում: Հողամասի օգտագործման պայմանները սահմանվում են պայմանագրում՝ կողմերի համաձայնությամբ:

Ավտոտնակների կառուցման համար հողամասեր տրամադրվում են քաղաքացիներին կամ ավտոտնակների կառուցման կոռուպտատիվներին (անժամկետ օգտագործման կամ վարձակալության իրավունքով): Այդ հողօգտագործողների իրավունքներն ու պարտականությունները հաստատված են ՀՀ հողային օրենսգրքով կամ կոռուպտատիվների կանոնադրություններով:

Քաղաքների, ավանների և գյուղական բնակավայրերի հողերն այն տարածքներն են, որոնք նախատեսվում են դրանց կառուցապատման և զարգացման համար: Այս կատեգորիայի հողերի հիմնական նպատակային նշանակությունը նրանում է, որպեսզի քավարարվեն տվյալ բնակավայրում ապրող նարդկանց բնակարանային, արտադրական, տցիալական, մշակութակենցաղային պահանջները:

Բնակավայրի հողեր են համարվում քաղաքի, ավանի և գյուղական բնակավայրի գլխավոր հատակագծի սահմաններում ընդգրկված բոլոր հողերը, իսկ գլխավոր հատակագծերի բացակայության դեպքում՝ բնակավայրի փաստացի կառուցապատված կամ այդ նպատակների համար տրամադրված հողերի ամբողջությունը: Բնակավայրի հողերը բաժանվում են քաղաքայինի և գյուղականի:

Քաղաքային և գյուղական բնակավայրերի հողերի շարքին կարող են դասվել հողային ֆոնդի կազմում առկա բոլոր նպատակային նշանակության հողերն՝ իրենց հողատեսքերով և գործառնական նշանակությամբ, որոնք գտնվում են այդ բնակավայրի համար որոշված սահմաններում և սահմանագատված են տեղանքում: Բնակավայրերի սահմանների նկարագրությունը հաստատվում է օրենքով: Քաղաքային բնակավայրերի հողամասերի սահմանագիծը համայնքի արտաքին սահմանն է:

Գյուղական բնակավայրերի հողամասերի սահմանագիծը տեղանքում առանձնացվում է այլ նպատակային նշանակության հողերի սահմանագծից և չի համընկնում համայնքի արտաքին սահմանի հետ:

Բնակավայրի հողերն օգտագործվում են քաղաքաշինական նպատակներով՝ բնակավայրերի գլխավոր հատակագծերի, մանրամասն կառուցապատման նախագծերի համաձայն:

Բնակավայրերի արտաքին սահմաններում և դրանցից դուրս գտնվող հողամասերը քաղաքաշինական նպատակներով օգտագործվում են բնակավայրերի գլխավոր հատակագծերին համապատասխան և դրանցով սահմանված կարգով:

Քաղաքաշինական նշանակության հողերը և դրանց կազմը. Քաղաքաշինական նշանակության հողեր են համարվում հանրապետությունում բնակչության կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայր ստեղծելու կամ այն փոփոխելու նպատակով շենքերի, շինությունների, գծային ենթակառուցվածքների կառուցապատման, բարեկարգման համար բնակավայրերում և բնակավայրերի սահմաններից դուրս այդ նպատակների համար տրամադրված կամ նախատեսված հողերը:

Գործառնական առումով՝ քաղաքաշինական նշանակության հողերը լինում են՝

- բնակելի,
- հասարակական,
- արտադրական,
- հատուկ նշանակության,
- ընդհանուր օգտագործման:

Քաղաքաշինական նշանակության հողերի դասակարգումն, ըստ գործառնական նշանակության, սահմանվում է հողերի օգտագործման սխեմաներով, բնակավայրի գլխավոր հատակագծերով և մանրամասն հատակագծման նախագծերով:

Բնակելի նշանակության հողեր են համարվում անհատական բնակելի տեսքերի, դրանց կից օժանդակ շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերի, ամառանցների, առանձին կանգնած ավտոտնակների և բնակելի նշանակության առանձին շենքերի ու շինությունների կառուցման համար տրամադրված կամ նախատեսված հողամասերը:

Բնակելի շինությունների ցանկը սահմանում է կառավարության կողմից լիազորված պետական մարմինը:

Հասարակական գործառնական նշանակության հողեր են համարվում բնակչության սոցիալական սպասարկման, հանգստի, սպորտի և զրուցաքաղաքային կազմակերպման, վարչական և հասարակական կազմակերպությունների շենքերի, շինությունների կառուցման և սպասարկման համար տրամադրված կամ նախատեսված հողամասերը:

Պետական ձեռնարկություններին, կազմակերպություններին հողը կարող է տրամադրվել անժամկետ օգտագործման կամ վարձակալությամբ: Այլ ձևի սեփականություն ունեցող ձեռնարկություններին, կազմա-

կերպություններին հողը կարող է տրամադրվել որպես սեփականություն կամ վարձակալությամբ: Հողի սեփականության իրավունքի հաստատման փաստարուրք է համարվում անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը կամ վարձակալության պայմանագիրը:

Արտադրական գործառնական նշանակության հողեր են համարվում արդյունաբերության, տրանսպորտի, առևտիքի, կապի, էներգետիկայի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններ ապահովող շենքերի, շինույթյունների, ինչպես նաև ընդերքի օգտագործման գծային ենթակառուցվածքների և արտադրական այլ շինույթյունների կառուցման և սպասարկման համար տրամադրված կամ նախատեսված հողամասերը: Արտադրական նշանակության հողերը կոչված են ապահովելու արտադրական և վարչական շենքերի, կառույցների, մշակութակենցաղային նշանակության օբյեկտների և շինույթյունների տեղադրման տարածքային բազան:

Արդյունաբերական հողերի իրավունքի օբյեկտ են համարվում արդյունաբերական ձեռնարկություններին արտադրություն կազմակերպելու համար տրամադրված հողամասերը: Այդ կարգի հողերի իրավունքի սուրբեկությունները են համարվում պետական, կոռուպերատիվ և մասնավոր ձեռնարկությունները, իսկ արտահանող արդյունաբերությունում նաև առանձին բաղաքացիները:

Պետական արդյունաբերական ձեռնարկություններին հողամասերը տրամադրվում են անժամկետ օգտագործման և վարձակալությամբ, կոռուպերատիվներին և մասնավոր ձեռնարկություններին՝ սեփականության (օբյեկտի սեփականացնորհման ընթացքում), ինչպես նաև ժամանակավոր օգտագործման և վարձակալական իրավունքով:

Ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողերի թվին են դասվում բնակավայրերի ներսում գտնվող փողոցները, հրապարակները, տրանսպորտային և ճարտարագիտական ենթակառուցվածքները, կանաչ գոտիները, գերեզմանոցները և բնակչության ընդհանուր օգտագործման այլ տարածքները: Ընդհանուր օգտագործման հողերի պահպաննան գոտիները և դրանց օգտագործման նպատակով սահմանափակումները գտնվում են կառավարության իրավասության շրջանակներում:

Ընդհանուր օգտագործման հողերը հանրային սեփականություն են և սեփականության իրավունքով չեն տրամադրվում:

Օգտակար հանածոների շահագործման նպատակով հատկացված հողերի հիմնական նշանակությունը նրանում է, որպեսզի այդ տարածքներում ապահովվի օգտակար հանածոների արդյունավետ և խնայողական օգտագործումը՝ առանց շրջակա միջավայրին վնաս պատճառելու: Դրանք միաժամանակ ծառայում են որպես արդյունաբերության տեղաշաշման տարածքային գործոն: Առաջին դեպքում հողը հանդես է գալիս

որպես աշխատանքի առարկա, իսկ երկրորդ դեպքում՝ աշխատանքի միջոց:

Համբնդիանուր օգտակար հանածոները (ավագ, կավ, խիճ, քար) կարող են լինել արդյունաբերական և ոչ արդյունաբերական (ներհամայնքային կարիքների համար): Ոչ համբնդիանուր օգտակար հանածոները (ածուխ, նավթ, գազ, տորֆ) կարող են լինել միայն արդյունաբերական և կոչվում են լեռնաարդյունաբերական:

Ընդերքի մշակման նպատակով հողամասերի տրամադրման հիմնական պայմանը հատկացման իրավունքն է, որը հաստատվում է համապատասխան ակտով: Նման ակտեր տախս են տեղական ինքնակառավարման մարմինները: Ստանալով այդ իրավունքը՝ ձեռնարկությունը պարտավոր է շահագործումից հետո անցկացնել խախտված հողերի ռեկուլտիվացում:

Հատուկ գործառնական նշանակության հողերի թվին են դասվում պաշտպանական, սահմանային, ուսումնական նշանակության հողերը և օրենքով պաշտպանվող շինությունների օգտագործման ու սպասարկման համար հատկացված հողամասերը:

Հատուկ գործառնական նշանակության հողամասերի տրամադրման և օգտագործման կարգը և դրանց նկատմամբ սահմանափակումները, պաշտպանական գոտիները, հատուկ կարգավորման դրույթները, քաղաքաշինական գործունեություն ծավալելու կարգը որոշում է ՀՀ կառավարությունը, իսկ նրա կողմից լիազորված պետական մարմինները սահմանում են հատուկ նշանակության շենքերի ու շինությունների ցանկը:

Տրանսպորտի օբյեկտների հողեր են համարվում համապատասխան շինությունների շահագործման, պահպանման, շինարարության և վերականգնման համար տրամադրված հողերը: Հողամասերի շափերը որոշվում են նախագծային փաստաթղթերի հիման վրա: Այդ հողերը բաժանվում են հետևյալ հիմք խմբերի՝ երկարուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակաշարային և ջրային:

Երկարուղային տրանսպորտի հողեր են երկարգծերի, հատկացման գոտիների, շենքերի, շինությունների, մուտքային կառույցների և երկարուղային տրանսպորտը սպասարկող օբյեկտների համար տրամադրված հողերը: Այդ կարգի հողային հարաբերությունների սուրյեկտ են հանդիսանում երկարուղու տարածքային բաժանմունքները: Հողամասի շափերը հաստատվում են նորմատիվային և նախագծային փաստաթղթերով:

Նախագծային փաստաթղթերի համաձայն՝ երկարգծի շահագործման նորմատիվներով նախատեսվում են ձյունապաշտպան, հակասողանքային գոտիներ, որոնցում սահմանվում է հողերի օգտագործման հատուկ ռեժիմ:

Ավտոմոբիլային տրանսպորտի հողեր են համարվում ճանապարհածության մեջ առաջանակագործությունների (ազդանշանային սարքեր, տեխնիկական շենքեր, կամուրջներ) և ավտոտրանսպորտի սպասարկման օրյեկտների (լիցքավորման և տեխսպասարկման կայաններ, բեռնափառականներ, կանգառներ) գրաղեցրած հողամասեր:

Այս կարգի հողային հարաբերությունների սուբյեկտ են համարվում ճանապարհների շինարարությունը, շահագործումն ու սպասարկումն իրականացնող կազմակերպությունները (ճանապարհավերականգնողական շինարարական վարչություններ, տարրեր ձեռնարկություններ և անհատ քաղաքացիներ):

Օդային տրանսպորտի հողեր են համարվում օդային տրանսպորտի օրյեկտների (օդանավակայաններ, ուղղարիոային կայաններ, օդային տրանսպորտի կառավարման օրյեկտներ, ռադիոհեռուակառավարման կետեր), ինչպես նաև սպասարկման շինությունների և կառույցների (տեխնիկական տարածքներ, օդանավերի նորոգման գործարաններ, փորձահրապարակներ, պահեստներ, բազաներ, ծառայողական, բնակելի և մշակութակենցաղային շինություններ) գրաղեցրած հողամասերը: Հողային հարաբերությունների սուբյեկտներ են համարվում օդային տրանսպորտի կազմակերպությունները, որոնց հող է տրանսպորտի անժամկետ օգտագործման պայմանվում:

Անվտանգ բարիչքների և օրյեկտների նորմալ շահագործման համար հատկացվում են պաշտպանական գոտիներ:

Խողովակաշարային տրանսպորտի հողեր են համարվում վերգետնյա գլխավոր խողովակաշարերի, դրանց սպասարկող շինությունների, ինչպես նաև ստորգետնյա խողովակաշարերի սպասարկման վերգետնյա շինությունների համար տրամադրված հողամասերը: Այս կատեգորիայի հողային հարաբերությունների սուբյեկտներ են խողովակաշարային տրանսպորտի շինարարական և շահագործական կազմակերպությունները, որոնց հողամասեր են տրամադրվում ինչպես անժամկետ, այնպես էլ ժամանակավոր օգտագործման պայմանով՝ համաձայն նորմատիվային և նախագծային փաստաթթերի: Ըստ խողովակաշարի տրամագծի չափի՝ որոշվում է հատկացման գոտին: Ստորգետնյա գլխավոր խողովակաշարերի համար հատկացման գոտին տրամադրվում է ժամանակավոր օգտագործման և կազմում է 28-45 մ՝ ըստ խողովակաշարի տրամագծի (զյուղատնտեսական հողատեսքերի վրա այն հավասար է 20-35 մ): Այդ հողերը չեն հանդիսանում սահմանակից հողօգտագործողների հողերի կազմից: Հատկացման գոտու հողամասերի օգտագործման համար սահմանվում է հատուկ կարգավիճակ:

Կապի օրյեկտների հողեր են համարվում էլեկտրական ցանցի գծերի և կապի գծերի գրաղեցրած հողերը: Նման ցանցերը բաղկացած են

օդային և ստորգետնյա մալուխներից: Այդ դասին են պատկանում նաև օդային գծերի հենասյուների սպասարկման շինություններով և կառույցներով գրադեցված հողերը: Հողային հարաբերությունների սուբյեկտներ են համարվում կապի շինարարական և շահագործող ձեռնարկությունները: Հողամասերը տրամադրվում են անժամկետ օգտագործման (շահագործման ողջ ընթացքում), համաձայն նորմատիվային և նախագծային փաստաթղթերի, ինչպես նաև ժամանակավոր օգտագործման՝ շինարարական և վերականգնողական աշխատանքների կատարման ընթացքում:

Էլեկտրական ցանցի և կապի գծերի երկայնքով, կախված հսանքի լարումից, սահմանվում են հողերի օգտագործման անվտանգության հատուկ գոտիներ, որոնք հարակից հողօգտագործումների կազմից չեն հանդիւմ: Այդ գոտիները ծառայում են օբյեկտների պահպանման և նորմալ սպասարկման համար: Օդային էլեկտրացանցերի համար այդ տարածքների չափերը կազմում են 10-30 մ: Բնակավայրերում այդ գոտին կրճատվում է մինչև 2-10 մ: Ստորգետնյա մալուխների պաշտպանիչ գոտին հավասար է 1 մ՝ յուրաքանչյուր կողմից:

Պաշտպանության կարիքների համար հողամասերը տրամադրություն են գորամասերին՝ անժամկետ օգտագործման պայմանով: Հողերի հաշվառման ժամանակ նշվում է միայն դրանց ընդհանուր տարածությունը:

Հատուկ պահպանվող տարածքների հողեր են համարվում պատմամշակութային, բնապահպանական, գիտական, առողջարարական և այլ արժեքավոր նշանակություն ունեցող հողամասերը:

Ըստ գործառնական նշանակության՝ հատուկ պահպանվող տարածքների հողերը, լինում են՝

- բնապահպանական,
- առողջարարական նպատակների համար նախատեսված,
- հանգստի համար նախատեսված,
- պատմական և մշակութային:

Հատուկ պահպանվող տարածքների հողերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների ցանկը որոշում է կառավարության կողմից լիազորված պետական մարմնը:

Բնապահպանական հողեր են համարվում բնական, գիտական, գեղագիտական նշանակություն ունեցող և հատուկ պահպանության ու հանգստի համար նախատեսված բնության հողաբանների, արգելոցների, ազգային և ծառարանական գրոսայինների ու պարկերի, բուսաբանական այգիների, արգելավայրերի (բացառությամբ՝ որտրդական) հողերը:

Բնապահպանական նշանակության հողամասերի օգտագործման համար սահմանվում է հատուկ կարգավիճակ և առանձնացվում են պաշտպանության գոտիներ, որոնցում արգելվում է կատարել բնությանը

վնաս հասցնող գործողություններ: Այդ գոտիների սահմաններում ամ-
րացվում են հատուկ նշաններ:

Բնապահպանական նշանակության հողամասերի օգտագործման
կարգավորման դրույթները, պաշտպանության գոտիները սահմանվում են
օրենքով: Բնապահպանական գոտիներում գտնվող հողամասերը սեփա-
կանատերերից և հողօգտագործողներից հետ չեն վերցվում:

Պետական բնական արգելոցներ են համարվում հատուկ պահ-
պանվող համալիրները, որոնք ունեն բնապահպանական, գիտական,
կենսաբանական, բուսական և կենդանական աշխարհի առանձին տե-
սակների պահպանության նշանակություն ունեցող հողեր:

Բնական ազգային պարկերը ձևավորվում են կառավարության
որոշումներով: Ազգային պարկերի հողամասերը հանվում են տնտեսա-
կան շրջանառությունից և տրամադրվում դրանց դեկավարությանն՝ ան-
ժամկետ օգտագործման նպատակով: Ծառաբանական և բուսաբանա-
կան այգիների հողերի հատկացման և օգտագործման կարգը նոյնն է:

Արգելոցային օբյեկտների շրջակայրում հաստատվում են հատուկ
պաշտպանական գոտիներ:

Վերականգնողական նշանակության հողեր են համարվում կազ-
մակերպված հանգստի և զբոսաշրջության՝ հանգստյան տների, առողջա-
րանների, այգիների, անտառապուրակների, սպորտային ճամբարների,
քաղաքամերձ և կանաչ գոտիների համար նախատեսված և օգտագործ-
վող հողամասերը:

Այդ հողամասերի վրա արգելվում է դրանց գործառնական նշանա-
կությանը հակասող ցանկացած գործունեություն:

Առողջարարական գործառնական հողեր են համարվում հիվան-
դությունների կանխարգելման և բուժման կազմակերպման համար բարե-
նապատ կիմայական և այլ բնական պայմաններ ու գործուներ ունեցող
տարածքները:

Բնական բուժական գործուների պահպանության նպատակով
սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ: Դրանց
սահմաններում գտնվող հողամասերը սեփականատերերից և հողօգտա-
գործողներից հետ չեն վերցվում:

Այդ գոտիների սահմանները տեղանքում առանձնացվում են հա-
տուկ նշաններով:

Առողջարարական նշանակության հողամասերի օգտագործումը
կարգավորող դրույթները և պահպանության գոտիները սահմանվում են
օրենքով:

Պատմամշակութային գործառնական նշանակության հողեր են
համարվում պատմամշակութային արժեքների պահպանության, հուշա-
գրուսայգիների, հուշահամալիրների, հնագիտական և ճարտարապետա-
կան հուշարձանների, պատմամշակութային արգելոցների և արգելավայ-

թերի, պատմական, մշակույթի և հնագիտական օբյեկտների, դամբարանադաշտերի և պատմամշակութային այլ արժեքներով գրադեգված հողամասերը:

Պատմամշակութային նշանակության հողամասերի օգտագործման համար սահմանվում են պաշտպանության գոտիներ, որոնք տեղանքում առանձնացվում են հատուկ նշաններով, իսկ հողամասերի օգտագործումը կարգավորող դրույթներն ու պահպանության գոտիները ամրագրվում են օրենքով:

Պատմամշակութային պահպանության գոտիների սահմաններում գտնվող հողամասերը սեփականատերերից և հողօգտագործողներից հետ չեն վերցվում: Այդ հողամասերի վրա արգելվում է դրանց գործառնական նշանակությանը հակասող գործունեություն:

Անտառային նշանակության հողեր են համարվում անտառապատ, կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության, ինչպես նաև անտառով չծածկված, բայց անտառային տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողերը: Անտառային հողերի կազմում կարող են լինել գյուղատնտեսական հողատեսքեր, թփուտներ, հողերի պահպանության նպատակով հիմնված անտառաշերտեր և այլ հողեր:

Անտառային հողերն ըստ գործառնական նշանակության դասակարգվում են՝

- պաշտպանական նշանակության,
- հատուկ նշանակության,
- այլ նշանակության:

Ըստ հողատեսքերի՝ անտառային հողերը բաժանվում են՝

- անտառների,
- վարելահողերի,
- խոտհարքների,
- արոտների,
- թփուտների,
- այլ հողերի:

Անտառային հողերի դասակարգումն ըստ հողատեսքերի սահմանվում է անտառային հողերի օգտագործման սխեմայով:

Զրային նշանակության հողեր են համարվում ջրային օբյեկտներով, գետերով, բնական և արհեստական ջրամբարներով, լճերով, ճահիճներով, հիդրոտեխնիկական և ջրատնտեսական կառույցներով գրադեգված հողերը:

Զրային նշանակության հողամասերի օգտագործման, տրամադրման կարգը, օգտագործման նկատմամբ սահմանափակումները և պաշտպանական գոտիները սահմանվում են կառավարության կողմից: Դրանց կազմը որոշում է կառավարության լիազորված պետական մարմինը: Այդ

հողերի վրա քաղաքաշինական գործունեությունը բույլատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Զբերով ծածկված հողերը, ափային և առանձնացված գոտիներն օգտագործվում են տարրեր սուբյեկտների կողմից՝ տարրեր նպատակներով (ձկնորսություն, բեռների տեղափոխում, ջրամատակարարում, ռոռոգում): Զրային օբյեկտները տրամադրվում են անժամկետ (մշտական) կամ ժամանակավոր օգտագործման:

ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՀՈՂԱՍՍԵՐԻ ԾԱԾԿԱԳՐՈՒՄԸ

9.1. ՏԱՐԱԾՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պետական հողային կադաստրի վարման գործընթացը ներառում է առանձին հողամասերի՝ որպես կադաստրային հաշվառման օբյեկտի նկարագրությունն ու անհատականացումը: Այսինքն՝ հողամասին տրվում է այնպիսի բնութագիր, որը թույլ է տալիս տվյալ հողամասը տարբերել մյուսներից: Այդպիսի բնութագիր է հողամասի կադաստրային համարը:

Հողամասի կադաստրային համարը Հայաստանի Հանրապետության տարածքում և ժամանակի մեջ չկրկնվող առանձին հողամասի համարն է, որը, հողերի հաշվառման նարմինների կողմից տրվելու հետո, պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ այն մնում է որպես գրանցված իրավունքի միասնական օբյեկտ:

ՀՀ տարածքում առանձին հողամասերի չկրկնվող կադաստրային համարների ձևավորման համակարգն ապահովող հիմնական միջոցը տարածքի կադաստրային բաժանումն է:

Կադաստրային բաժանումը հողամասերի կադաստրային համարների ձևավորման նպատակով տարածքի կադաստրային միավորների վերը ներքև համաստորադաս բաժանումն ու համարակալումն է:


Կադաստրային բաժանման հիմնական խնդիրներն են՝

- տարածքի բաժանումը կադաստրային համաստորադաս միավորների՝ վերևից ներքև,
- կադաստրային միավորների սահմանների ձևավորումը,
- կադաստրային միավորների համարակալումը (նկ. 6):

Կադաստրային գոտիավորման արդյունքն է պետական հողային կադաստրի կազմում այնպիսի փաստաթղթերի ստեղծումը, որոնք ապահովում են հողամասերի կադաստրային հաշվառումը և որոշում դրանց տեղադրությունը:

Կադաստրային միավորի տակ հասկացվում է կադաստրային գոտիավորման համակարգում տարբեր մակարդակների տարածքային միավորների ընդհանրացված անվանակարգումը (կադաստրային մարզ, համայնք, քաղաքացիություն, պահանջական մաս, կադաստրային ելակետային տարածքներ և այլն՝ համարակալումը վերևից ներքև), որոնց սահմանները որոշված, հաստատված և գրանցված են ընդունված կարգով և ունեն հողամասի կադաստրային թվային համարին համապատասխանող դիրքային համար:

Տարածքի բաժանումը կաղաստրային միավորների իրականացվում է հիմքային գծերով:



Նկ. 6. Տարածքի կաղաստրային բաժանման սխեմա:

Հիմքային գիծը երկու կամ մի քանի հարակից կաղաստրային միավորների ընդհանուր սահմանն է: Հիմքային գծերի հատման կետերով ձևավորում են սահմանների հատվածները, որոնցով տարածքները բաժանվում են կաղաստրային միավորների:

9.2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՀՈՂԱՍՍԱՆԵՐԻ ԾԱԾԿԱԳՐՈՒՄԸ

Ծածկագրման աշխատանքներն իրականացվում են կաղաստրային հանուրագրման աշխատանքներից հետո: Աշխատանքների իրականացման արդյունքում ծածկագրվում են անշարժ գույքի բոլոր միավորները՝ հողամասերը, շենքերը, շինությունները, բնակարանները, ոչ բնակելի տարածքները և այլն:

Կաղաստրային բարտեղի վրա անցկացվում են համայնքների վարչական սահմանները և բնակավայրի գիծը, ճանապարհները (փողոցները), երկարուղիների, բնական լանջաֆոտի գծերը: Վերոհիշյալ գծերի հատումներից ձևավորվում են առանձին կաղաստրային թաղամասեր:

Ծածկագրման սկզբնական փուլում մշակվում է հանրապետության, մարզերի, քաղաքների, համայնքների ծածկագրման համարների սխեման (աղ. 5-7), այնուհետև ձևավորվում են թաղամասերի, հողամասերի, բնակելի շենքերի, բնակարանների և կաղաստրային ստորին այլ միավորների համարները:

Սկզբում կողավորվում են քնակավայրերի գծից ներս գտնվող կադաստրային թաղամասերը: Կողավորումն սկսվում է քնակավայրի հյուսիսարևմտյան ուղղությամբ՝ զիգզագաձև: Թաղամասերի կողավորումը (համարակալումը) սկսվում է 001-ից:

Աղյուսակ 5

Հայաստանի Հանրապետության մարզերի ծածկագրերի ցանկ

Երևան	01
Արագածոտն	02
Արարատ	03
Արմավիր	04
Գեղարքունիք	05
Լոռի	06
Կոտայք	07
Շիրակ	08
Սյունիք	09
Վայոց ձոր	10
Տավուշ	11

Աղյուսակ 6

Երևան քաղաքի թաղային համայնքների ծածկագրերի ցանկ

Աջափնյակ	001
Ավան	002
Արաբկիր	003
Դավիթաշեն	004
Էրեբունի	005
Կենտրոն	006
Մալաթիա-Մերաստիա	007
Նոր Նորք	008
Նորք-Մարաշ	009
Նորբարձեն	010
Շենգավիթ	011
Քանաքեռ-Զեյթուն	012

Արագածոտնի մարզ

Աշտարակ	001
Ապարան	002
Թալին	003
Ագարակ (Աշտարակի տարածաշրջան)	004
Ագարակ (Թալինի տարածաշրջան)	005
Ալագյազ	006
Ակունք	007
Աղձք (Զորավ)	008
Ամրե թազա	009

Բնակավայրի ծածկագրումից հետո կադաստրային բաղամասերի առանձնացումն ու ծածկագրումն իրականացվում է բնակավայրից դուրս գտնվող տարաքըներում՝ այն նույն սկզբունքով, որը կիրառվել է բնակավայրերի ծածկագրման ժամանակ: Բնակավայրից դուրս գտնվող տարածքի ծածկագրումը սկսվում է բնակավայրի վերջին ծածկագրին հաշորդող հարյուրակ գումարած մեկ թվից, այսինքն՝ բնակավայրից դուրս գտնվող տարածքների կադաստրային ծածկագրերի միջև թողնվում են պահուստային համարներ՝ անհրաժեշտության դեպքում բնակավայրի տարածքում նոր առաջացած կադաստրային բաղամասերի ծածկագրման համար: Օրինակ՝ եթե բնակավայրում ծածկագրվել է մինչև 085 համարի կադաստրային բաղամասը, ապա բնակավայրից դուրս գտնվող կադաստրային բաղամասերի ծածկագրումն սկսվում է 101-ից: 086-ից մինչև 101 համարները համարվում են պահուստային:

Հողանասերի վրա շենքերն ու շինությունները ծածկագրվում են ըստ իրենց նշանակության. նախ ծածկագրվում են անհատական բնակելիք տները, ապա՝ օժանդակ կառույցները: Շենքերն ու շինությունները կողավորվում են հողանասի հյուսիսարևմտյան նասից՝ 001 թվով, և այդ գործողությունը շարունակվում է ժամացույցի ալարի ուղղությամբ: Օրինակ՝ Արարատի մարզի Դեղձուտ համայնքի 28 բաղամասի 5-րդ հողանասի կադաստրային ծածկագիրն է 03-037-028-005, իսկ այդ հողանասի վրա գտնվող բնակելի տան ծածկագիրը՝ 03-037-028-005-001:

Իրականացված աշխատանքների շնորհիվ կադաստրային բարտեզի վրա ծածկագրվում են անշարժ գույքի բոլոր միավորները: Օրինակ՝ Երևան քաղաքի Արաքլիք համայնքի 24-րդ բաղամասի 12-րդ հողանասի 2-րդ շենքի 18-րդ բնակարանի կադաստրային ծածկագիրը կունենա հետևյալ տեսքը՝ 01-003-024-012-002-018:

Թաղամասերի կողավորման ավարտից հետո կողավորվում են գծային կառույցները՝ փողոցները, ճանապարհները, ելեկտրահաղորդման գծերը, ջրանցքները, երկարուդին և այլն:

Կադաստրային ենթատարածքի սահմաններում յուրաքանչյուր տիպի գծային կառույց կազմում է առանձին կադաստրային բաղամաս, իսկ այդ կադաստրային բաղամասի ներսում գծային կառույցի առանձին հատվածները՝ առանձին հողամասեր (միավորներ):

Գծային կառույցների կադաստրային բաղամասերի տիպային կողման են՝

- փողոցներ՝ 901,
- խճուղային ճանապարհներ՝ 911,
- դաշտային (գրունտային) ճանապարհներ՝ 912,
- երկարուղի՝ 921,
- տրամվայի գծեր՝ 922,
- մետրոպոլիտենի գծեր՝ 923,
- ջրանցքներ՝ 931,
- դրենաժներ՝ 932,
- ջրմուղի գլխավոր խողովակաշարեր՝ 941,
- կոյուղու գլխավոր խողովակաշարեր՝ 942:

ՀՀ ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾՐՋԱՆԱՑՈՒՄԸ

10.1. ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾՐՋԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային գնահատումն իրականացվում է հանրապետության տարածքի հողակադաստրային շրջանացման հիման վրա: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է հանրապետության տարածքի չափազանց բարդ բնատնտեսական և հողային պայմաններով, որոնք զգալիորեն ազդում են հողերի ծագումնաբանական հատկությունների, դրանց տնտեսական օգտագործման և, վերջին հաշվով, նաև հողերի գնահատման ցուցանիշների վրա:

Հանրապետության հողային ֆոնդի հողակադաստրային շրջանացումն ամբողջ տարածքի բաժնանման այնպիսի գիտական համակարգ է, որը բնութագրվում է բնական, հողային և տնտեսական գրեթե միատարր պայմանների հայտնաբերմամբ, նպաստում է հանրապետության մարզելում գյուղատնտեսական արտադրության ճիշտ տեղաբաշխման ու մասնագիտացմանը, տնտեսական օբյեկտիվ նախապայմանների ստեղծմանը:

Լեռնային տարածքների շրջանացման համար կարևոր նշանակություն ունեն բնական գործոնների ուղղաձիգ գոտիական բաշխման օրինաչափությունները: Ուղղաձիգ բնական գոտիներն իրենց առանձնահատկություններով նման չեն լայնական գոտիներին: Դրանց միջև կան էական տարրերություններ՝ պայմանավորված լեռնային տեղանքներում կլիմայական ու հողային պայմանների, հողերի լեռնային տեսակների ծագումնաբանական յուրահատկությամբ: Այդ պատճառով լեռնային տարածքներում գյուղատնտեսական արտադրությունը տարվում է բնության բարդ ու ռիսկային պայմաններում: Նշված տարածքների հողակադաստրային շրջանացման ժամանակ հաշվի են առնվում տեղային բնաւնտեսական առանձնահատկությունները: Հանրապետության ոչ մեծ տարածքում հանդիպում ենք կլիմայական, հողային, բուսական և այլ պայմանների բազմազանության բարդ գուգակցություն: Թեքությունները, տեղանքի խիստ կտրտվածությունը, բազմաթիվ լեռնաշղթաներն ու այլ գործոններ ստեղծել են եղանակի խիստ հակադրություն՝ մոտ տարածությունների և միանման բարձրությունների գոտիներում: Հողակադաստրային շրջանացման ժամանակ հանգամանորեն ուսումնասիրվում ու հաշվի են առնվում ոչ միայն բնակչինայական և հողային առանձնահատկությունները, այլև արտադրական պայմանների ողջ համալիրը:

Հայաստանի Հանրապետության տարածքն ունի բազմազան ու բարդ ռելիէֆ: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը կազմում է 1800 մ: Հանրապետության տարածքը ծովի մակերևույթի նկատմամբ գտնվում է 400-4095 մ բարձրության վրա: 10^0C -ից բարձր ջերմաստիճանի գումարը տատանվում է 500-ից մինչև 4000, իսկ առանձին վայրերում հասնում է 4500-ի, տեղումների տարեկան միջին գումարը տատանվում է 200-960 մմ սահմաններում, իիդրոթերմիկ գործակիցը հավասար է 0,15-2,0:

Հանրապետության տարածքի մոտ 10 %-ը գտնվում է ծովի մակերևույթից 500-1000 մ բարձրության գոտում, իսկ մնացած մասը՝ լեռնային գոտու սահմաններում, ըստ որում՝ 47 %-ը՝ 1000-2000 և 43 %-ը՝ 2000 մետրից բարձր գոտու (աղ. 8):

Հանրապետության տարածքում առկա է բնական ուղղաձիգ գոտիների երկու իմանական համալիր: Հյուսիսային մասում (Քոն գետի ավազան) հողառաջացումը կատարվում է կլիմայական առավել չափավոր պայմաններում: Ընդհանուր տեղադրություն ունեցող Արաքս գետի ավազանում շրային պայմանների հետևանքով առկա են կիսանանապատային հողեր:

Բարդ ռելիէֆի, բարձրությունների և մակերևույթի ձևի զգալի տատանումները, երկրաբանական կառուցվածքի, ինչպես նաև ջրաբանական պայմանների բազմազանությունը նպաստել են տարածքի խայտարես բուսածածկույթի և հողերի տեսակների ձևավորմանը:

Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հողագիտության և ազգորդիմայի գիտական կենտրոնի տվյալների՝ առանձնացվում են հողերի ծագումնարանական 14 տիպ, 46 ենթատիպ, 123 սեռ, բազմաթիվ տեսակներ և տարատնակներ: Առանձնացված 14 տիպից 8-ն ունեն բաշխվածության գոտիական բնույթ և գրադեցնում են հանրապետության տարածքի 91%, մնացած մասը կազմում են ոչ գոտիական հողերը:

Լեռնաշղթաների, առանձին գագաթների տեղադրության բազմազանությունն ու դիրքի առանձնահատկությունները ևս ստեղծել են եղանակի խիստ հակադրություն՝ մոտ տարածությունների և միանման բարձրությունների գոտիներում: Կլիմայի բոնիտումը հողակադաստրային շրջանացման կարևոր օղակներից մեկն է:

Կլիման դասվում է գյուղատնտեսության համար բնույթան առավել կարևոր գործոնների թվին և դրա շրջանացումը, ի թիվս հողերի ջրաերկրաբանական, տնտեսական, ազրոքիմիական, ազրոմելիորատիվ, անտառներատիվ և այլ շրջանացումների, առաջնակարգ տեղ է գրադեցնում հանրապետության տարածքի հողակադաստրային շրջանացման համակարգում:

Ելելով հողագնահատման և հողային կադաստրի վարման նպատակներից՝ հանրապետության տարածքի բնագյուղատնտեսական, ագրոկիմայական, հողագյուղատնտեսական և շրջանացման այլ ձևերի գոյություն ունեցող նյութերի հիման վրա, «Հայպետհողիննախագիծ» ինստիտուտում (ներկայում՝ «Հողշինոնիտորինգ» ՊՈԱԿ) մշակել է հանրապետության տարածքի հողակաղաստրային շրջանացման համակարգ (նկ. 7), ըստ որի առանձնացված միավորները (քարձրից՝ ցածր) հողային կադաստրի վարման բնագյուղական հիմքն են և հանդես են զայիս որպես հողերի հրավական վիճակի հաստատման և համեմատական գնահատման կարևոր միավոր: Այն ապահովում է հողային կադաստրի նյութերի համարյականությունը, համեմատականությունը, հնարավորություն է տալիս մշակել հողի տարբերակված գներ և գյուղատնտեսական արտադրության վարման գիտականորեն հիմնավորված միջոցառումներ:

Հողակաղաստրային շրջանացման ընթացքում հավաքվում, ուսումնասիրվում և վերլուծվում են յուրաքանչյուր բնատնտեսական գոտու բնակլիմայական, հողային, հողօգտագործման, տնտեսական և գյուղատնտեսական արտադրության վարման պայմաններին վերաբերող նյութերը: Յուրաքանչյուր միավորի համար կազմվում է վերոհիշյալ պայմանները բնութագրող համեմատական տեղեկագիր և տրվում է ամփոփ բնութագիր:

Բնագյուղատնտեսական գոտին շրջանացման հիմնական և ամենաբարձր միավորն է: Այն բնութագրվում է բնական պայմանների յուրահատուկ համալիրով, որը կապված է հողառաջացման, բույսերի հանքային սննդառության, ջերմության և խոնավության հաշվեկշիռների կարևոր գործոնների հետ: Գոտիական տիպի գյուղատնտեսական արտադրությանը բնորոշ է ազդութեանիկայի ընդհանուր բնույթը, որը պայմանավորված է ագրոկիմայական գործոններով, հանքային պարարտանյութերի արդյունավետության նկարդակով և այլն:

Գոտիների առանձնացման հիմնական ցուցանիշ են հողի տիպը և ենթափայլը, համապատասխան բուսականությունը, տարածների ջերմապահվածությունը, տարեկան մքննորտային խոնավացման աստիճանը:

Բնագյուղատնտեսական մարզը շրջանացման համակարգում գոտու մի մասն է, որը բնութագրվում է միկրոկիմայի տարեկան փոփոխությունների հետ կապված հողային ծածկույթի առանձնահատկություններով: Մարզերը միմյանցից տարբերվում են կլիմայի չորայնությամբ, խոնավությամբ, ձնատառությամբ, վեգետացիոն շրջանի տևողությամբ, ջերմության և խոնավության ապահովվածության փոփոխականությամբ, հողի ջրածերմային ռեժիմով և կենսաբանական արդյունավետությամբ: Հանրապետության տարածքը Կովկասի խոշոր լեռնագրության համակարգում կազմում է Փոքր Կովկասի լեռնամարգագետնատափաստանային մարզի մի մասը:

Բնագյուղատնտեսական օլրուզը մարզի մի մասն է: ՀՀ տարածքում առանձնացված է չորս բնագյուղատնտեսական օկրուզ: Դրանք խոշոր տարածքային համալիրներ են, որոնք արտացոլում են գյուղատնտեսական արտադրության տիպերը: Օկրուզները բնութագրվում են տարածքի որոշակի գեոնորֆոլոգիական առանձնահատկություններով, հողառաջացնող մայրական տեսակներով, հողային ծածկույթի կառուցվածքով, տարրեր մեխանիկական կազմ, հզորություն, հողատարման և աղակալման աստիճան ունեցող հողերի օրինաչափ հարաբերակցությամբ:

Բնագյուղատնտեսական օկրուզը կարևոր օղակ է շրջանացման համակարգում: Այն առանձնացվում է գյխավորապես ըստ խոշոր տարածքների հարթավայրային և լեռնային ռելիեֆի, հողառաջացնող մայրական տեսակների, հողային ծածկույթի և ագրոկինայական միատիպության:

Հանրապետության տարածքում առանձնանում են հետևյալ բնագյուղատնտեսական օկրուզները:

1. Կենտրոնական հրաբխային (կիսաանապատափաստանային և լեռնատափաստանային):
2. Կենտրոնական փոքրկովկայան (անտառափաստանային, լեռնաանտառային և լեռնատափաստանային հյուսիսային):
3. Զանգեզուրի (անտառափաստանային, լեռնաանտառային և լեռնատափաստանային հարավարելյան):
4. Բարձր լեռնային (լեռնային մարգագետնատափաստանային և լեռնամարգագետնային):

Առանձնացված օկրուզներից առաջին երեքն իրենց բնույթով համարվում են երկրագործական, իսկ ծովի մակերևույթից 2400 մետրից բարձր գտնվող հանրապետության ամբողջ բարձր լեռնային օկրուզի տարածքները օգտագործվում են որպես ամառային հեռագնաց արոտավայրեր:

Ստորև տրվում է բնագյուղատնտեսական օկրուզների համառոտ բնութագիրը:

1. Կենտրոնական հրաբխային կաղաստրային օլրուզը գրադեցնում է ՀՀ հարավարևմտյան և կենտրոնական մասը: Շրջանի սահմաններն անցնում են Արարատյան դաշտի հյուսիսային (քեկման) գծով, արևմուտքից՝ Արագածի հարավարևմտյան լանջերով, արևելքից՝ Զանգեզուրի լեռնաշղթայով, իսկ հյուսիսից՝ հրաբխային բարձրավանդակի ջրբաժան գծով:

Գեոնորֆոլոգիական տեսակետից՝ տվյալ ֆիզիկաաշխարհագրական շրջանն իրենից ներկայացնում է հրաբխային սարահարեր, գոգահովիտներ և միջին բարձրություն ունեցող ծալքավոր արիդ-դենուդացիոն լեռների մի մարզ:

Սարահարթերի մի մասն ունի խորդուքորդ բլրածն քարքարոտ մակերևույթ: Լեռնալանջերի միջին և ցածրադիր մասերում ու միջլեռնային տարածքներում շատ են ժամանակավոր գործող հեղեղատները և սելավահուները: Օկրուզի արևելյան և հարավարևելյան (Արփայի գոգահովիտ) հատվածների տարածքը գրադեցված է Ուրցի և Վայոց ձորի միջին բարձրության լեռներով: Ուժեղ հողատարման և ղենուղացիոն երևոյթների հետևանքով այստեղ հանդիպում են արմատական ապարների ելքերով կամ դրանց թեկորներով ծածկված զառիթափ լանջեր, խոր սելավահուների, կիրճերի և հարթեցված ռելիեֆի ձևեր:

Հրաբխային բարձրավանդակը բնորչվում է տարբեր աստիճանի խոնավացումով, 220-850 մն տարեկան տեղումների քանակով, հաճախակի կրկնակող չոր եղանակով և օդի ջերմաստիճանի օրական և սեզոնային զգալի տատանումներով: Հարթավայրում օդի ջերմաստիճանն ամռան ամիսներին բարձրանում է մինչև $+42^{\circ}$, միևնույն ժամանակ լեռներում այն չի գերազանցում $+10-15^{\circ}$: Զմռան ընթացքում լեռնային շրջաններում ջերմաստիճանը հաճախ իջնում է մինչև $30-35^{\circ}$, նկատվում է կայուն 1-1,5 մ հաստությամբ ձյան ծածկույթ: Խոնավացման գործակիցը տատանվում է 0,15-ից 2,50-ի սահմաններում:

Հանրապետության այս տարածքում խիստ արտահայտված է լեռնային երկրներին բնորչ, միմյանց հաջորդող բնական գոտիների և լանդշաֆտների ուղղածից գոտիականությունը: Այստեղ հողային ծածկույթը խայտարդես է և ներկայացված է հողերի բազմաթիվ գոտիական տիպերով, ենթատիպերով ու սեռերով:

Բնական պայմանների խայտարդետությունն անդրադարձել է հողերի բերրիության, արտադրական ունակության, դրանց տնտեսական արդյունավետության վրա: Այդ տարբերությունները նկատվում են կադաստրային օկրուզի տարբեր լամշաֆտային գոտիներում: Ենթելով դրանից՝ այս օկրուզում առանձնացվում են գնահատման մի շարք շրջաններ (տես նկ. 7):

2. **Կենտրոնական փոքրկովկասյան կաղաստրային օկրուզը** գրադեցնում է հանրապետության տարածքի հյուսիսարևելյան մասը՝ Լոռու և Տավուշի մարզերը: Այն կազմում է երկրի տարածքի 19 %-ը: Դրա սահմաններում կենտրոնացած է հանրապետության անտառային տարածքների 60 %-ը, այդ պատճառով զյուղատնտեսական հողատեսքերն օկրուզում գրադեցնում են փոքր տարածություն (155 հազ. հա): Այստեղ շատ են միջին բարձրության (մինչև 3000 մ) մոնուկինալ ծալքավոր կառուցվածք ունեցող էրոզիոն-դենուղացիոն լեռները, որոնք բավականաչափ քայլաված են, որոց հատվածներում էլ ունեն խիստ մասնատված տեսք: Լեռները հիմնականում տարածվում են հարավից դեպի հյուսիս, առանձին լեռնարազուկներով աստիճանաբար իջնում են քոր գետի հովիտը և աննկատելիորեն միանում դրան: Տվյալ ֆիզիկաաշխարհագրական շրր-

ջանի սահմաններում առանձնանում են այլուվիալ-պրոյուվիալ հարքություններ և դրանց կից դարավանդան խիստ մասնատված ցածրադիր նախալեռներ, ծալքավոր և կոշտածալքավոր կառուցվածք ունեցող խիստ մասնատված էրոզիոն-դենուլացիոն միջին բարձրության անտառապատ լեռներ, միջին բարձրության հրաբխային լեռներ ու լավային հարքություններ և բարձրադիր գրահածն մասնատված լեռներ: Այս օկրուզին բնորոշ է չափավոր խոնավ լեռնաանտառային կլիման, որն ընդգրկում է 700-2400 մ բարձրության վրա գտնվող տարածքները: Զմեռը մեղմ է, բավական երկարատև: Անառը նույնպես մեղմ է, ոչ շոգ: Տարեկան տեղումների քանակը 550-700 մմ է, ողի միջին տարեկան ջերմաստիճանը՝ $9,0-6,0^{\circ}\text{C}$: Խոնավացման գործակիցը տատանվում է մեծ սահմաններում՝ $0,6-1,5$:

Այստեղ ձևավորվել են անտառային դարչնագույն և անտառային գորշ հողեր, ինչպես նաև հետանտառային սևահողեր, որոնք, ըստ ռելիեֆի ձևի, տեղաբաշխվածության և մարդու տնտեսական գործունեության ազդեցության, տարբեր հատվածներում ունեն տարբեր բերրիություն և տնտեսական արդյունավետություն: Ելենով դրանից՝ այս օկրուզի սահմաններում առանձնացվում է գնահատման երեք շրջան:

3. Զանգեզուրի կաղաստրային օկրուզը գրադեցնում է հանրապետության ընդհանուր տարածքի 22 %-ը: Այստեղ տարածված են ծալքավոր, կոշտածալքավոր կառուցվածք և էրոզիոն-դենուլացիոն ռելիեֆ ունեցող միջին բարձրության լեռները, որոնք հողատարման հետևանքով խիստ մասնատված և քայլայված են: Ուշագրավ է, որ այս գոտին ոչ միայն ՀՀ տարածքի, այլև Անդրկովկասի առավել մասնատված շրջանն է: Տարածքին բնորոշ է չափավոր խոնավ լեռնաանտառային կլիմա, այն ընդգրկում է 1400-2300 մ բարձրության վրա գնտվող տարածքներ: Զմեռը մեղմ է, բավական երկարատև: Տարվա սեզոննային ջերմաստիճանային փոփոխությունները տեղի են ունենում ավելի հավասարաշատի: Տարեկան տեղումների քանակը, միջին տվյալներով, 550-700 մմ է, խոնավացման գործակիցը տատանվում է 0,6-1,5-ի սահմաններում: Օղի հարաբերական խոնավությունը, մյուս շրջանների համեմատությամբ, զգալիորեն բարձր է՝ 70-75 %:

Բնակլիմայական այսպիսի պայմաններում զարգանում են անտառային դարչնագույն և անտառային գորշ հողեր, հետանտառային դարչնագույն և սևահողեր, որոնք ունեն հողատարման տարբեր աստիճան ու ցածր արտադրողականություն: Օկրուզի սահմաններում առանձնացվում է գնահատման երեք շրջան:

4. Բարձր լեռնային կաղաստրային օկրուզը գրադեցնում է հանրապետության բոլոր օկրուզների բարձր լեռնային գոտու 2300-2400 մ բարձր լեռնատարածքները, որոնք գտնվում են լեռնատափաստանային և լեռնամարգագետնային գոտիների սահմաններում, ուր խիստ կլիմայի պայմաններում գյուղատնտեսական մշակաբույսեր չեն տեղաբաշխվում: Այդ

տարածքներն օգտագործվում են որպես ամառային հեռագնաց արոտավայրեր: Հողերի գնահատումը կատարվել է այդ տարածքների երկարուսարանական հետազոտությունների հիման վրա:

Հողակադաստրային օկրուգների սահմաններում առանձնացված հողակադաստրային շրջանները բնութագրող ցուցանիշները բերված են աղյուսակ 8-ում:

10.2. ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Հողերի գնահատման նպատակով բնազյողատնտեսական օկրուգի սահմաններում առանձնացվում են հողագնահատման (կադաստրային) շրջանները: Հողագնահատման շրջանին բնորոշ են հողերի օգտագործման ռեզինալ առանձնահատկությունները՝ կապված բնական, տեխնոլոգիական և տնտեսական պայմանների հետ: Դրանով էլ կանխորշվում են զյուղատնտեսական արտադրության մասնագիտացումն ու արդյունավետությունը: Հողագնահատման շրջաններն առանձնացնելիս, բնական պայմաններից բացի, իինք են ընդունվել համայնքներում հողօգտագործումը կազմակերպելու բնույթը, մշակաբույսերի տեսակային և սորտային կազմը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության համալիր միջոցառումների անհրաժեշտությունը և այլն:

Հայաստանի Հանրապետության լեռնային հողօգտագործման պայմաններում հաճախ համայնքների ու մարզերի հողօգտագործման սահմաններ են դառնում բնական խոշոր գետորդիոգիական տարրերը (լեռնազագարներ, գետեր, լճեր և այլն): Երբեմն մեկ համայնքի հողօգտագործումը ճգփում է տվյալ գետորդիոգիական շրջանի կամ ջրահավաք ավազանի ներքին հարթավայրային մասից մինչև լեռնազագարները՝ ջրբաժանները՝ ընդգրկելով 2-3 բնական գոտիներ: Տվյալ պարագայում գնահատման շրջանի սահմաններն անցնում են համայնքի հողօգտագործման սահմանների բնական գոտիներով՝ այն բաժաններով առանձին գնահատման շրջանների: Համայնքների զյուղատնտեսական հողատեսքերը գնահատվում են առանձին ցուցանիշներով: Նման շրջանացումը համապատասխանում է հողօգտագործման աշխատանքների մեթոդական պահանջներին: Այստեղ հաշվի է առնվում այն, որ ելակետային ցուցանիշների ստացման համար գնահատման շրջանում պետք է ընդգրկվեն 30-ից ոչ պակաս զյուղատնտեսական ծերեարկություն կամ համայնք, ինչը կարևոր մերողական պահանջ է՝ ելակետային տվյալների վիճակագրական մշակման համար:

Հողագնահատման շրջանացման տնտեսական էությունն այն է, որ յուրաքանչյուր գնահատման շրջան ներառում է գրեթե միատարր բնական և տնտեսական պայմաններ ունեցող հողօգտագործողներ: Դրանց

արդյունավետությունը փոփոխվում է որոշակի օրինաչափությամբ, որն իր քանակական արտահայտությունն է ստանում հողերի տնտեսական գնահատման ընթացքում:

Ելեկով վերը քննարկված առանձնահատկություններից՝ հողագնահատման օկրուզների սահմաններում առանձնացվել են 15 երկրագործական և բնական կերահանդակների երեք հողակաղաստրային շրջաններ (տես նկ. 7):

Ստորև տրվում է երկու հողակաղաստրային շրջանների բնութագիրը:

Մերձարաբյան գնահատման շրջանը գրադարձ պատճենում է Արաքս գետի միջին հոսանքի ջրահավաք մասը, գտնվում է ծովի մակերևույթից 800-1000 մ բարձրության սահմաններում՝ ըստ Էության հանդիսանալով Արարատյան ավազանի բոլոր մասերից հոսող ջրերի բեռնարափման գոտի: Ուելիեֆը հարթավայրային է, կազմավորված ժամանակակից լճառողակային-ջրաբեկորային նստվածքներից՝ ավազակավերից, կավերից, ճալաքարերից և ավազներից:

Կիման չոր է, խիստ ցանքային, ձմեռը ցուրտ է ու սակավաճյուն: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին կազմում է մոտ -6°C , բացարձակ նվազագույնը՝ -30°C : Ամառը տևական է, շոգ, չորային, միջին ջերմաստիճանը հունիս-օգոստոսին՝ մոտ $+26^{\circ}\text{C}$, առավելագույնը՝ $+42^{\circ}\text{C}$: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 250 մմ է: Տարվա ընթացքում մրնողորտի խոնավության գործակիցը մինչև 0,10 է:

Մերձարաբյան հողակաղաստրային շրջանը բացարձակ ոռոգելի երկրագործության գոտի է: Հողածածկույթը ներկայացված է հիմնականում գորշ մարգագետնային ոռոգելի հողերով՝ ոռոգելի խոնավ մարգագետնային գորշ ենթատիպերով: Կախված ստորերկրյա ջրերի մակարդակից, քիմիական բաղադրությունից և հանքայնացման աստիճանից՝ ձևավորվել են աղուտ-ալկալի հողեր, որոնք խոշոր զանգվածներով հանդիպում են Արաքս գետի երկայնքով:

Գնահատման շրջանի վարելահողերի ընդհանուր մակերեսը շուրջ 40 հազ. հեկտար է, որը հանրապետության վարելահողերի 8,1%-ն է:

Մերձարաբյան հողակաղաստրային շրջանը ներկայացված է Արմավիրի և Արարատի մարզերի 152 համայնքով: Գնահատման այս շրջանը, հանքապետության հողակաղաստրային մյուս շրջանների համեմատությամբ, աշքի է ընկածում զյուղատնտեսության ինտենսիվ վարձան բարձր աստիճանով, որտեղ հողատարածության միավորի հաշվով արտադրանքի ելքը մի քանի անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը և որտեղ ստացվում է բուսաբուծական ճյուղի համախառն արտադրանքի շուրջ 35 %:

Սևամի հողակաղաստրային գնահատման շրջանը ընդգրկում է Սևանա լճի ավազանի ողջ տարածքը, ինչպես նաև հարավից՝ Կոտայքի

մարզի բարձրադիր համայնքները՝ ծովի մակերևույթից 1800-2400 մ բարձրության վրա: Ուղիելքը աստիճանական ալիքային, բույլ, տեղ-տեղ միջին մասնատված է, սարահարթանման տեղամասերն ալիքած են: Լեռնատափաստանային տարածությունների գերակշռող մասը ծածկը-ված է հրաբխային նորագույն նստվածքներով՝ անդեգիտարազալտներով, բազալտներով, անդեգիտադաշտներով, ինչպես նաև նստվածքային ապարներով:

Հողակադաստրային շրջանի կլիման զով է, չափավոր խոնավ: Զմեռը ցրտաշունչ է: Օդի ջերմաստիճանի բացարձակ նվազագույնը -42°C է: Ամառը կարճատև է ու զով, հուլիսի միջին ջերմաստիճանը $+12\text{-}13 - 17\text{-}19^{\circ}\text{C}$ է: Տարեկան տեղումների քանակը 500-650-ից մինչև 650-725 մմ է: Խոնավացման գործակիցը տարվա ընթացքում տատանվում է $0,37\text{-}0,83$ սահմաններում: Հողածածկույթը ներկայացված է լվացված տիպիկ, մասամբ՝ սովորական սևահողերով և գետահովտամարգագետնային հողերով:


Հողակադաստրային այս շրջանի վարելահողերի ընդհանուր մակերեսը 87,9 հազ. հեկտար է և կազմում է հանրապետության վարելահողերի 19,5 %-ը:

Սևանի հողակադաստրային շրջանի մեջ են մտնում Կոտայքի մարզի 6, Գեղարքունիքի մարզի 87 համայնքներ (քացի նախկին Շամբարակի շրջանի 6 համայնքներից, որոնք, ըստ վստամայի, ընդգրկվել են Վերին Դեբեդ-Աղստևի գնահատման շրջանում):

Հողակադաստրային շրջանը մասնագիտացված է կարնամսային անասնապահության, ոչխարաբուծության, կարտոֆիլի և հացահատիկի արտադրության ուղղությամբ:

Վերոհիշյալ սկզբունքներով ու բովանդակությամբ նկարագրվում են հանրապետության տարածքի ճյուս օկրուզներն ու հողակադաստրային շրջանները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԿԱԴԱՍՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՍԽԵՄԱ



Նկ. 7:

**Հայաստանի Հանրապետության տարածքի հողակաղաստրային
շրջանները բնութագրող հիմնական ցուցանիշները**

Հ/Հ	Գ-նահատման շրջանների անվանումները	Հանահատման վեհականությունը	Վիճակը՝ ջեղատության վեհականությունը	10°C-ից բարձ ջեղատությունից զարգացնելու գույնը	Տարեկան տեղափոխ քայլությունը, մմ	Տարեկան տեղափոխ քայլությունը (տոպաց) Խոնավությունը	Օրերի քանակը		Գերակշռող հողատիպերը և ենթատիպերը	Առաջատար մշակաբույսերը
							>5°C	>10°C		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Սերծարաբյան	165	800-950	4200- 4050	160-250	0,25-0,22	240-250	200-110	Մարգագետնային գորշ ոռոգիլի, մարգագետ- նային գորշ խոնավ ոռոգիլի, մարգագետ- նահովտային բաց գունավորված	Հացահատիկ, բան- ջարային մշակաբույ- սեր, կարտոֆիլ, խա- ղող, պտուղ, բազ- մամյա խոտ, բռտա- նային մշակաբույսեր
2	Ուրց-Կոտայք- Շամիրամ	182	950-1400	4050- 3050	225-475	0,22-0,35	210-240	160-200	Գորշ տիպիկ, մուգ գորշ, բաց շագանակա- գույն	Հացահատիկ, ծիսա- խոտ, բանջարային մշակաբույսեր, կար- տոֆիլ, բազմամյա խոտ
3	Կոտայք-Թալին	82	1500-2000	3050- 1050	400-675	0,35-0,65	180-210	160-180	Շագանակագույն, մուգ շագանակագույն, սևա- հող կարբոնատային	Հացահատիկ, ծիսա- խոտ, բազմամյա խոտ
4	Վեդի-Ներքին Արփա	30	950-1400	4050- 3050	225-475	0,18-0,26	200-220	100-160	Գորշ տիպիկ, բաց շա- գանակագույն, գետսա- հովտամարգագետնա- յին	Հացահատիկ, ծիսա- խոտ, կարտոֆիլ, բազմամյա խոտ
5	Ուրց-Վայոց ձոր	47	1600-2100	3750- 3700	475-725	0,26-0,85	160-200	140-160	Շագանակագույն, մուգ շագանակագույն, սևա- հող կարբոնատային	Հացահատիկ, ծիսա- խոտ, բազմամյա խոտ

Այլուսակ 8-ի շարտնակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
6	Ախորյան-Սպիտակ	85	1400-2000	3050-2050	400-525	0,27-0,35	150-180	80-130	Մուգ շագանակագույն, սևահող կարբոնատային, սևահող տիվիկ, սևահող կրազորկ	Հացահատիկ, ճակրնեխ, բաջարային մշակաբույսեր, կարտոֆիլ, բազմամյա խոտ
7	Աշոցք	54	1800-2200	2050-1350	525-625	0,35-0,7	80-100	110-130	Սևահող կարբոնատային, սևահող տիվիկ, սևահող կրազորկ	Հացահատիկ, բազմամյա խոտ
8	Սևան	100	1800-2400	1950-1050	375-600	0,3-1,25	120-140	60-130	Սևահող կարբոնատային, սևահող տիվիկ, սևահող կրազորկ, գետահովտամարգագետնային	Հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա խոտ, ծխախոտ
9	Ապարան-Հրազդան	64	1700-2400	2500-1050	560-840	0,35-1,2	120-140	100-160	Սևահող կարբոնատային, սևահող տիվիկ, սևահող կրազորկ, մուգ շագանակագույն, անտառային դարչնագույն	Կարտոֆիլ, հացահատիկ, ծխախոտ, բազմամյա խոտ, բանջարային մշակաբույսեր
10	Ներքին Դեբեդ-Աղստև	58	800-1200	3750-2850	440-560	0,2-0,5	220-240	170-220	Սևահող կարբոնատային, սևահող կրազորկ, ճնակարբոնատային, անտառային գորշ, անտառային դարչնագույն	Ծխախոտ, հացահատիկ, պստու, խաղող, կարտոֆիլ, բազմամյա խոտ
11	Վերին Դեբեդ-Աղստև	42	1000-1600	2850-1950	560-675	0,34-0,62	160-200	110-170	Սևահող կարբոնատային, սևահող տիվիկ, անտառային դարչնագույն	Կարտոֆիլ, հացահատիկ, բանջարային մշակաբույսեր, բազմամյա խոտ,
12	Փամբակ-Ներքին Ջորագետ	31	1400-2100	2200-1650	640-700	0,52-0,7	140-160	100-120	Սևահող կարբոնատային, սևահող տիվիկ, կրազորկ, մարգագետնասևահողային	Հացահատիկ, ծխախոտ, կարտոֆիլ, բանջարային մշակաբույսեր, բազմամյա խոտ

Աղյուսակ 8-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
13	Վերին Չորագետ	36	1250-1900	2200-1600	670-770	0,6-1,1	160-220	130-150	Սևահող շագանակագույն, կարբոնատային, տիպիկ, կրազուրկ, անտառային դարչնագույն	Հացահատիկ, ծխախոտ, կարտոֆիլ, բազմամյա խոտ
14	Մյունիք	57	1400-1700	4500-4000	500-650	0,12-0,19	200-260	100-160	Սևահող կարբոնատային, սևահող տիպիկ, կրազուրկ, անտառաճրմակարբոնատային, տիպիկ	Հացահատիկ, բազմամյա խոտ, կարտոֆիլ, բանջարային մշակաբույսեր,
15	Որոտան	60	1500-2300	4200-1700	500-850	0,17-0,53	100-200	120-160	Գետահովտամարգագետնային, անտառային դարչնագույն, անտառային տափաստանային	Հացահատիկ, ծխախոտ, բազմամյա խոտ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ
ՍԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՄՄՆ ԵՎ ՎԱՐՄԱ
ՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 11

ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

11.1. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հողային կադաստրի օբյեկտների պետական գրանցումը պետական հողային կադաստրի վարման բաղկացուցիչ մասն է: Այն հանդես է գալիս որպես կոնկրետ հողատարածքի օգտագործման իրավունքի ձևակերպման իրավական միջոցառում, որով իրականացվում է համապատափական գրանցում՝ պետականորեն հաստատված կադաստրային փաստաթղթերում: Միաժամանակ այն հողերի վերաբերյալ քանակական, որակական և արժեքային հավաստի տեղեկությունների հավաքման, խմբավորման, վերլուծության և պահպանման հատուկ միջոցառում է:

Օբյեկտների բնութագրման ժամանակ առաջնակարգ տեղ է հաստկացվում իրավական տեղեկատվությանը, որի հավաքումն ու ձևակերպումն իրականացվում է հողային իրավունքի օբյեկտների գրանցման ընթացքում:

Գրանցումը գործողություն (ակտ) է, որի միջոցով հաստատագրվում է որոշակի իրողություն (գործողություն, վիճակ):

Իրավական վիճակի գրանցումը բնութագրվում է անշարժ գույքի իրավունքի պատկանելության, հողօգտագործման սահմանափակումների ծավալի և բնույթի, սերվիտուտների առկայության, հողային ֆոնդի համապատասխան կատեգորիային պատկանելության վերաբերյալ տվյալներով: Հողերի գրանցման յուրահատկությունը նրանում է, որ հողային կադաստրի վարման ամբողջ ընթացքում հողամասերի վերաբերյալ տեղեկատվության ստացմանը տրվում է պետական կարգավիճակ:

Գույքի նկատմամբ իրավունքի իրավաբանական գրանցումը կարգավորվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով: Այստեղից հետևում է, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական և իրավաբանական գրանցումը սերտորեն կապված են միմյանց հետ: Օրենքում նշվում է, որ հոդի նկատմամբ իրավունքի գրանցման համար անհրաժեշտ փաստաթուղթ է համարվում հոդամասի կադաստրային հատակագիծը, որը ձևակերպվում է հոդային կադաստրի պահանջներին համապատասխան: Այսինքն՝ հոդամասը, որպես այս կամ այն սուբյեկտի իրավունքի օբյեկտ, գրանցվում է այն պահից, եթե տեղանքում հաստատվում են հոդամասի սահմանները, կատարվում է դրա դիրքի ձևակերպումը, տրվում է կադաստրային համար, որոշվում է նպատակային նշանակությունը և գրանցվում իրավունքը:

Պետական գրանցման հիմնական խնդիրներն են՝

- պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը,
- աջակցությունը անշարժ գույքի շուկայի կայացմանը,
- գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվական համակարգի ստեղծումը,
- պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և դատական մարմիններին, իրավաբանական անձանց, բանկերին, քաղաքացիներին գույքի ու դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,
- գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տվյալների մատչելիության, օբյեկտիվության և անընդիմատության ապահովումը:

Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի սեփականության իրավունքի սուբյեկտներն են՝

- Հայաստանի Հանրապետությունն՝ ի դեմս Ազգային ժողովի և կառավարության,
- համայնքներն՝ ի դեմս տեղական ինքնակառավարման մարմինների,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,
- Հայաստանի Հանրապետության ոչ պետական ձեռնարկություններն ու կազմակերպությունները,
- օտարերկրյա պետությունները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, միջազգային կազմակերպությունները (Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող կամ ՀՀ և այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերին ու համաձայնագրերին համապատասխան):

Հայաստանի Հանրապետության տարածքում պետական գրանցման ենթակա են՝

- սեփականության, տնտեսավարման, օպերատիվ դեկավարման, ցնահ ժառանգության, մշտական օգտագործման, վարձակալության իրավունքները, հիփորեքը, սերվիտուտը,
- հողի նկատմամբ իրավունքի դադարեցումը, փոխանցումը և հաստատումը, սահմանափակումը կամ փոփոխումը,
- այլ իրավունքներ, որոնց ցուցակը հաստատվում է ՀՀ օրենսդրական ակտերով:

Հողի և անշարժ գույքի այլ օբյեկտների հետ կատարվող գործողությունների ընթացքում պարտադիր պահանջվում է իրավապահ մարմինների վկայագիրը: Նոտարի կողմից հաստատված փաստաթուղթը համարվում է իսկական, այդ առիթով յուրաքանչյուր վեճ լուծվում է միայն դատական կարգով, որտեղ որպես պատասխանող հանդես է գալիս նոտարական գրասենյակը:

Հողի և անշարժ գույքի վերաբերյալ պարտադիր գրանցման փաստարդեր են համարվում օրենքով սահմանված փաստաթուղթերը:

Հողային կադաստրի համակարգում գրանցման օբյեկտ է համարվում հողամասը: Ոչ հեռու անցյալում օբյեկտների բնութագրման ընթացքում կիրավում էր «Հողօգտագործում» հասկացությունը: Հողօգտագործումը դիտվում էր որպես գրանցման հիմնական միավոր, որպես հողամաս՝ բնության մեջ ամրակայված սահմաններով, օրինական հիմունքներով պատկանում էր որոշակի իրավաբանական անձին կամ քաղաքացուն, պետական իրավասու մարմնի որոշման հիման վրա տրվում էր օգտագործման:

Գրանցումը կատարվում էր շրջանային (քաղաքային) պետական հողականաստրային գրքերում և կոչվում էր հողօգտագործման պետական գրանցում: Այն կատարում էր շրջանային հողաշինարարական ծառայության պաշտոնատար անձը, որն անձնական պատասխանատվություն էր կրում հողօգտագործման գրանցման տվյալների արժանահավատության համար: «Հողօգտագործում» տերմինն ընդունելի էր ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձի համար: Հողի սեփականության պետական իրավունքի պայմաններում օգտագործման իրավունքը տրվում էր միայն խորհրդային իշխանության օրոք: Հողամասի սեփականության իրավունքի այլընտրանք չկար, և գրանցման ընթացքում կազմվում էր անժամկետ (մշտական) օգտագործման իրավունքի պետական ակտ: Եթե հողամասը տրամադրվում էր որոշակի ժամանակով (ժամկետային, երկրարաժամկետ կամ կարճաժամկետ օգտագործման), ապա կնքվում էր պայմանագիր: Պահուատային հողերի ժամկետային օգտագործումը ձևակերպվում էր վկայագրով:

Հոդի նկատմամբ պետական սեփականության մենաշնորհի վերացումը, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ընդլայնումն անհրաժեշտություն առաջացրեցին պետական հողային կադաստրի համակարգում վերանայել ինչպես գրանցման հիմքերն, այնպես էլ փաստաթղթերի բովանդակությունը: Պահանջվեց ճշտել հողերի գրանցման օրենկումների բնութագրման համար օգտագործվող հասկացությունները:

Այժմ «հոդօգտագործում» հասկացությունն ընդլայնվել է: Այն կապված է հոդի նկատմամբ այնպիսի իրավունքների հետ, որոնք են սեփականությունը, ցմահ ժառանգությունը, վարձակալությունը, ինչպես նաև վերջին տարիներին ի հայտ եկած տնտեսավարման իրավունքը, օպերատիվ կառավարումը, սերվիսուտները, հիփորեզները և այլն:

Հոդի նկատմամբ իրավունքի բազմարիվ ձևերի հետ միասին հողագրանցման հիմնական միավոր է ընդունվում «հոդատեփականություն» հասկացությունը, որն ամբողջությամբ արտացոլում է գույքի (հոդի) սեփականության, տիրապետման, օգտագործման փաստի էությունը (այսինքն՝ տնտեսավարմանը և այլ գործողություններով դրա օգտակար հատկությունների օգտագործումը): Հոդամասերի նկատմամբ գույքային կամ պայմանագրային իրավունքներն իրականացվում են տիրապետման իրավունքով՝ օգտագործման կամ տնօրինման միջոցով: Ինչպես օգտագործելը, այնպես էլ տնօրինելը կարող են իրական դառնալ՝ փաստացի գույքային տիրապետման պայմաններում: Բացառություններ լինում են, բայց, որպես կանոն, հոդային հարաբերություններին չեն վերաբերում:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն մշակում և իրականացնում է հանրապետության տարածքում անշարժ գույքի շուկայի բնագավառում ընդհանուր քաղաքականությունը, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, ինչպես նաև գույքի վերաբերյալ տեղեկատվական համակարգի ստեղծումը, տեղեկատվության տրամադրումը և համակարգի գործունեության կառավարումն ու վերահսկումը:

Պետական գրանցման համակարգի հիմնական փաստաթղթերն են՝

- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանը,
- կադաստրային քարտեզը (հատակագիծը),
- անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար կազմված կադաստրային գործը:

Գրանցման մատյանում, անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար, որին տրվել է առանձին կադաստրային ծածկագիր՝ անկախ սեփականության ձևից, լրացվում է գրանցման առանձին թերթիկ:

Գրանցման թերթիկը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- անշարժ գույքի միավորի նկարագրություն, որտեղ նշվում են հոդամասի, շենքի, շինության կադաստրային ծածկագրերը, գտնվելու վայրը, օգտագործման նպատակը և այլ տվյալներ,
- անշարժ գույքի միավորի նկատմամբ իրավունքները, ինչպես նաև այդ իրավունքների սուբյեկտները և վերջիններիս վերաբերող տվյալները,
- անշարժ գույքի միավորի նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիսուտները:

Անշարժ գույքի միավորի կադաստրային քարտեզները (հատակագծերը) տեղանքի փոքրացված և ընդհանրացված արտապատկերներն են՝ համապատասխան մասշտարով և պայմանական նշաններով, որոնցում պատկերված են անշարժ գույքի միավորները (անկախ սեփականության ձևից), դրանց տեղադրությունը, սահմանները, մակերեսը, տեսքն ու տեսակները, վերգետնյա և ստորգետնյա հաղորդակցությունների ցանցերը և այլ տվյալներ:

Կադաստրային քարտեզներում նշված հոդամասերի, շենքերի, շինությունների և այլ ամրակայված գույքի սահմանագծերի և շրջադարձային անկյունների կոորդինատային համակարգը կապակցվում է ՀՀ գործող ընդհանուր կոորդինատային համակարգին: Կադաստրային քարտեզները լինում են տարրեր ձևի ու մասշտաբների:

Անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի նկատմամբ իրավունքներն ու սահմանափակումները հաստատող փաստաթղթերն են՝

- անշարժ գույքի սուբյեկտներին որպես սեփականություն կամ օգտագործում հատկացված հողերի (տնամերձ, այգեգործական (ամառանոցային), բնակելի տան շինարարության և դրա սպասարկման, գյուղացիական կամ գյուղացիական կոլեկտիվ տրնտեսություն վարելու, ինչպես նաև քաղաքաշինական գործունեություն ծավալելու համար) և շենքերի, շինությունների նախագծերը,
- անշարժ գույքի օտարման (ձեռքբերման), վարձակալության, ենթավարձակալության, օգտագործման, գրավի, հիփորեքի, փոխանակման և սերվիսուտների պայմանագրերը, ինչպես նաև սերվիսուտների վերաբերյալ դատական որոշումները, վճիռները,
- հողը կամ շենքերը, շինություններն օգտագործման հանձնելու մասին որոշումները կամ պայմանագրերը,
- հոդամասի սահմանների փոփոխման, միավորման և բաժանման մասին պայմանագրերը,
- անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման մասին որոշումները, վճիռներն ու դատավճիռները,

- հողի կամ շենքերի, շինությունների օգտագործման կամ վարձակալության իրավունքի դադարեցման մասին որոշումներն ու վճռները,
- անշարժ գույքից կամ դրա մի մասից սեփականատիրոց իրաժարվելու մասին որոշումները,
- անշարժ գույքի նվազմամբ սեփականության իրավունքները և վերջիններիս սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումը կամ դադարեցումը հաստատող փաստաթղթերը:

Անշարժ գույքի պետական գրանցումը իրականացվում է պետական հաշվառման տվյալների, անշարժ գույքի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթերի, անշարժ գույքի սեփականության իրավունքի սուբյեկտների դիմումների հիման վրա: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող սուբյեկտները Հայաստանի Հանրապետության կառավարության առջնքեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմիններին են ներկայացնում օրենքով սահմանված գրանցման ենթակա փաստաթղթերը: Տարածքային մարմինները ստուգում են դրանց համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը: Անհամապատասխանության դեպքում, ընդունելու օրվանից սահմանված ժամկետում, փաստաթղթերը վերադարձվում են՝ թերությունների մասին պարտադիր նշումներով: Փաստաթղթերի ստուգումից հետո անշարժ գույքի միավորի վերաբերյալ կազմվում է կադաստրային գործ և գրանցման նաշյանում կատարվում է գրառում:

Հողի և գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները՝ սեփականության, օգտագործման իրավունքը, գրավը, հիփոքերը, սերվիտուտները, այլ սահմանափակումները, շարժական գույքի նկատմամբ իրավունքները, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ իրավունքները, ենթակա են պետական գրանցման՝ գործարքների կնքման օրվանից ընդունված ժամկետում՝ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում՝ ըստ անշարժ գույքի գտնվելու վայրի:

Գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, այդ բվում՝ գրավի, հիփոքերի պետական գրանցումն իրականացվում է՝ ըստ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում մուտքագրված դիմումների հերթականության, ինչը որոշվում է հաշվառման նաշյանում նշված ամիս-ամսաբվով և ժամով:

Գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող սուբյեկտները, պետական գրանցման նպատակով, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղական ստորաբաժանումներին դիմումի հետ միասին ներկայացնում են օրենքով նախատեսված փաստաթղթերը:

Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ տեղեկությունները փոխանցվում են անշարժ գույքի պետական կոմիտեի տեղեկատվական կենտրոն: Պետական գրանցումը կատարվում է՝ սկսած փաստաթղթերն անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղական ստորաբաժանումներ ներկայացնելու օրվանից՝ սահմանված ժամկետում:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից անմիջապես հետո տրվում է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական (Ակ. 8): Վկայականում նշվում են անշարժ գույքի սեփականատիրող, օգտագործողի անունը (անվանումը), անշարժ գույքի միավորի ծածկագիրը, պետական գրանցման համարը, գույքի նկատմամբ իրավունքները, սերվիտուտները, նպատակային նշանակությունը, չափերը, հատակագիծը, լրացուցիչ այլ տվյալներ:

Գրավի, հիփորեքի իրավունքի պետական գրանցումը կատարվում է գրավի, հիփորեքի առարկա հանդիսացող գույքի գտնվելու վայրում՝ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից: Այն կատարվում է գրանցման մատյանում՝ գրավի, հիփորեքի առարկա հանդիսացող գույքի գրանցման թերթիկի համապատասխան բաժնում: Գրավով, հիփորեքով պարտավորության ծավալի, ժամկետի, ինչպես նաև գրավ, հիփորեք դրված անշարժ գույքի սեփականատիրող փոփոխման դեպքում, գրավառուի համաձայնությամբ, գրանցման մատյանում կատարվում է գրավի, հիփորեքի գրանցման փոփոխություն: Գրավի, հիփորեքի իրավունքի պետական գրանցումից հետո գրավառուին տրվում է գրավի, հիփորեքի իրավունքի գրանցման վկայական: Վկայականում նշվում են գրավի, հիփորեքի պայմանագրի գրանցման ամիս-ամսաթիվը, ժամը և գրանցման համարը: Այն վավերացվում է ստորաբաժանման պատասխանատու անձի ստորագրությամբ և կնիքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
(ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԳՐԱՆՑՄԱՆ

Նկ. 8:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ճԱՆԱՀՎՈՒՄ
ԵՎ ՊԱՌՊԱՆՎՈՒՄ Ե ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ:

ՅՈՒՐԱԶԱՆՉՅՈՒՐ ՈՔ ՈՒՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱ-
ՈԱՆԳԱՄՆ ԻՐԱՎՈՒՆՔ:

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԻՐ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՄԲ ՏԻՐԱՊԵ-
ՏՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՏՆՈՐԻՆՈՒՄ Է ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ
ԳՈՒՅՔՔԸ: ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ
ՉՊԵՏՔ Է ՎՆԱՍ ՊԱՏճԱՌԻ ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ, ԽԱԽՏԻ
ԱՅԼ ՄՆՋԱՅՅ, ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ԾԱՀԵՐԸ:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՐՈԴ Է ԶՐԿԵԼ ՄԻԱՅՆ ԴԱ-
ՏԱՐԱՆԸ՝ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Անշարժ գույքի վարձակալության իրավունքի պետական գրանցումը կատարվում է վարձակալության առարկա հանդիսացող անշարժ գույքի գունվելու վայրում՝ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում: Անշարժ գույքի վարձակալության իրավունքի պարտավորությունների, ժամկետի, ինչպես նաև վարձակալության տրված անշարժ գույքի սեփականատիրոջ փոփոխման դեպքում կատարվում է անշարժ գույքի վարձակալության իրավունքի վերագրանցում, եթե դա նախատեսված է պայմանագրում: Անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցումն ուժի մեջ է մինչև պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը: Գրանցումը կատարվում է գրանցման մատյանի վարձակալության առարկա հանդիսացող անշարժ գույքի միավորի գրանցման թերթիկի համապատասխան բաժնում: Գրանցումից հետո տրվում է անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայական:

Անշարժ գույքի սեփականատերը կարող է սերվիտուտի իրավունք տրամադրել գրավոր կնքված պայմանագրի համաձայն կամ դատարանի որոշումով, վճռով: Գրանցման մատյանի համապատասխան թերթիկում լրացվում է սերվիտուտի բնույթը, գործողության ժամկետը, վճարի չափը, սերվիտուտի պայմանները կամ սահմանափակումները, սերվիտուտի իրավունք տվող և սերվիտուտից օգտվող անձանց տվյալները և այլն: Սերվիտուտի տրամադրման վերաբերյալ փոփոխությունները կատարվում են շահագրգիռ անձանց գրավոր դիմունների կամ դատարանի որոշման, վճռի առկայության դեպքում:

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումները, քննիչի, դատախազի, դատարանի որոշումների, իրավաբանական անձանց լուծարման, վերակազմակերպման գործընթացն իրականացնող մարմինների գործույնների (որոշումների) հիման վրա, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում են սահմանափակումների պետական գրանցում՝ գրանցման մատյանի սահմանափակման առարկա հանդիսացող անշարժ գույքի միավորի գրանցման թերթիկի համապատասխան բաժնում:

Այդ մասին գրանցում կատարելուց հետո տարածքային ստորաբաժանումն արգելանք է դնում դրանց վրա և գրավոր տեղեկացնում շահագրգիռ կողմներին:

Սահմանափակումներով օգտագործվող անշարժ գույքի օբյեկտների իրավահարաբերությունների գրանցումը համեմատաբար նոր երևույթ է: ՈՒստի գրանցման գործողությունները պահանջում են համապատասխան հետազոտություններ և գործողությունների հետագա կատարելագործում:

Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք կարող են փոփոխել սեփականության իրավունքով իրենց պատ-

կանող անշարժ գույքի սահմանները, միավորել դրանք, ինչպես նաև բաժանել մի քանի մասերի: Փոփոխությունները կատարվում են պայմանագրի, դատարանի որոշման, վճռի առկայության դեպքում, որոնց հիման վրա կատարվում են փոփոխություններ գրանցման մատյանի՝ տվյալ անշարժ գույքի միավորի գրանցման թերթիկում (գրանցման նախկին թերթիկը փակելու և նորը բացելու միջոցով) և կադաստրային քարտեզներում դրա առկայության դեպքում: Անշարժ գույքի նախկին ծածկագիրը համարվում է չեղյալ և տրվում է նոր ծածկագիր: Անշարժ գույքի սահմանների փոփոխման, միավորման կամ բաժանման վերաբերյալ պայմանագրերի պետական գրանցումը կարող է մերժվել, եթե այդ փոփոխությունները հակասում են օրենքին, քաղաքաշինական, հողաշինարարական կամ սանիտարական նորմերին:

Հողամասերի օգտագործման, դրանց տարածության, տեղադրվածության, տնտեսական և որակական բնութագրի տվյալները պետական հողային կադաստրի փաստաթղթերում անցկացվում են հողամասերի սահմանագաղտնական տվյալների՝ տեղագրագեղեղիկական, քարտեզագրական, մոնիթորինգային, հողաշինարարական, հողագիտական և այլ հետազոտությունների և հանույթների հիման վրա:

Յուրաքանչյուր կատեգորիայի հողամասերի համար ընդունվում է տեղեկությունների որոշակի ցուցակ: Հողամասերի տնտեսական բնութագրմանը վերաբերող տեղեկությունները գրանցվում են պետական հողային կադաստրում՝ պետական կադաստրային, այլ տիպի գնահատման, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվական ակտերի հիման վրա:

Տարածքային գոտիների վերաբերյալ տեղեկությունները պետական հողային կադաստր են մուտքագրվում համապատասխան գոտիավորում իրականացնող մարմինների տվյալների հիման վրա:

Տեղեկություններն անցկացվում են թղթի և էլեկտրոնային սկավառակների վրա: Տարածայնությունների դեպքում առաջնորդյունը տրվում է թղթի վրա գրանցված տեղեկություններին:

Պետական գրանցումը հաջորդում է հողամասերի և անշարժ գույքի իրավական ձևակերպմանը (հողամասերի սահմանագաղտում), այսինքն՝ բնության մեջ դրանց սահմանները հաստատելուց, հողօգտագործման թերությունները վերացնելուց և ճիշտ սահմանները որոշելուց հետո: Տեղանքում հողամասերի սահմանները որոշում են համապատասխան մասնագետներն ու մարմինները, որոնց իրավատրյան ներքո գտնվում է տրվյալ հողամասը:

Տեղանքում հողամասերի սահմանների ամրագրումը, հողային հարաբերությունների սուրյեկտների իրավունքի իրավաբանական ձևակերպումը, գրանցման փաստաթղթերում համապատասխան գրառում կատարելը հնարավորություն են տալիս ամրագրել գույքային իրավական

կարգավիճակը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները, խուսափել հողի և գույքի ինքնակամ բռնագրավումից, դրանց ոչ նպատակային օգտագործումից, ժամանակավոր օգտագործումից, վերացնել գույքային վեճերի և իրավախախոռների ծագման հիմքերը: Պետական գրանցման ժամանակ բույլ տրված սխալների ուղղումը կատարվում է գույքի սեփականատիրոջ կամ օգտագործողի դիմումի հիման վրա կամ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնատար անձի նախաձեռնությամբ՝ անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում: Եթե բույլ տրված սխալները չեն փոփոխում գույքի պատկանելությունը, դրա նկատմամբ իրավունքների բնույթը, որակական և քանակական բնույթագրերը, անշարժ գույքի գրանցման պաշտոնատար անձը կարող է ուղղել դրանք՝ այդ մասին տեղյակ պահելով շահագրգիռ կողմերին: Հակառակ դեպքում ուղղումներ կարող են մտցվել միայն շահագրգիռ կողմերի գրավող համաձայնության առկայության դեպքում:

Պետական գրանցումը մերժվում է, եթե գրանցման համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենտուրային պահանջներին՝

- կազմված են օրենքով սահմանված կարգին ոչ համապատասխան,
- բացակայում է պետական գրանցման վճարի արտոնագիրը,
- ներկայացվել են մատիտով գրված, ջնջումներով, ուղղումներով, ինչպես նաև անփորորեն ձևակերպված փաստաթղթեր:

Գրանցումը մերժելու դեպքում դիմողին հնգօրյա ժամկետում գրավոր տեղյակ են պահում պատճառների մասին: Պետական գրանցման համակարգը բաց է:

11.2. ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՄՐԻ ՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՐՄԻՆՄԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՓՈԽՀԱՐՄԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Պետական հողային կադաստրի վարման պատվիրատումները, տեկնկատվության աղբյուրներն ու դրա սպառողներն են՝

- իրավաբանական և ֆիզիկական անձինք,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- տարածքային կառավարման և պետական կառավարման մարմինները,
- հողամասերի սահմանագծմամբ և ձևափորմամբ գրաղվող մարմինները:

Ֆիզիկական և իրավաբանական անձինք դիմում և անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացնում անշարժ գույքի պետական հաշվառման համար: Դիմումի մեջ նշվում են պատվիրատուի մտադրությունները, իր անձնական տվյալները, ինչպես նաև հաշվառման ենթակա օրյեկտի իրավունքը հաստատող փաստարդերը: Ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավունքը ունեն պետական հողային կադաստրի մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ:

Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են լինել կադաստրային հաշվառման պատվիրատու, եթե՝

- հողամասերը տեղական ինքնակառավարման մարմինների սեփականությունն են,
- հողերի գույքագրումը կատարվել է իրենց պատվերով,
- տարածքային գոտիների կադաստրային հաշվառման դեպքում:

Տեղական ինքնակառավարման մարմինները համարվում են պետական հողային կադաստրի տեղեկատվության սպառողներ: Դիմողին տրվում են օրյեկտի կադաստրային հաշվառման տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իրավունքի պետական գրանցման համար: Տեղեկություններից են՝ օրյեկտի կադաստրային հատակագիծը, օրյեկտի բնութագրուման վերաբերյալ տվյալները (քաղվածք հողային կադաստրից) և հաստատված ձևով այլ տվյալներ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝ իր ստորաբաժնումներով, հողերի հաշվառման գործընթացն իրականացնելուց հետո, հողերի հաշվառման գրքում կատարում է հետևյալ գործողությունները՝

- պատրաստում է բոլոր հողամասերի հաշվառման կադաստրային հատակագծերը (քարտեզները),
- իրականացնում է իրավունքի վկայականի նախնական լրացումը,
- դիմողին է փոխանցում բոլոր փաստարդերը՝ հողամասի իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով իրավատու մարմիններին ներկայացնելու համար:

Իրավասու մարմինները կատարում են գրանցում, լրացնում են հողամասի իրավունքի վկայականը և այն հանձնում կադաստրային հաշվառման մարմիններին:

Հարկային ծառայությունների հետ պետական հողային կադաստրի փոխագործողությունն իրականացվում է ՀՀ կառավարության «Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման կարգի և անշարժ գույքի համակարգված դիտարկումների (մննիտորինգի) իրականացման մասին» 1997 թ. հոկտեմբերի 22-ի № 465 որոշման և «Հողի հարկի մասին» օրենքի հիման վրա (նկ. 9):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն պետական հողային կադաստրի վարման ընթացքում հաստատում և հարկային նարմիններին է ուղարկում (ըստ հողամասերի տեղադրվածության տարածքային բաժինների) տեղեկություններ՝ հողամասերի, սեփականատերերի փոփոխությունների, ինչպես նաև հողի բնութագրի փոփոխությունների մասին, որոնք ազդում են հողի հարկի մեջության վրա:

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և հարկային նարմինների միջև տեղեկատվության փոխանակումը կատարվում է հաստատագրված ժամանակացույցով և անվճար: Տեղեկությունները փոխանցվում են բոլոր կամ էլեկտրոնային մագնիսական սկավառակների վրա:

Տեղեկատվության տրամադրման կարգը: Գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններից կարող են օգտվել բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձններ: Անշարժ գույքի միավորի կադաստրային գործի տրամադրումը, բացի օրենքով նախատեսված դեպքերից, չի բույսատրվում: Օրենքով նախատեսված դեպքերում, կադաստրային գործի տրամադրելիս, այն պատճենահանվում է և պահպում անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից՝ մինչև կադաստրային գործի վերաբարձնելը:

Տեղեկությունները տրամադրելիս տրվում են կադաստրային գործից քաղվածքները կամ փաստաթղթերի պատճենները: Տրամադրման ժամանակ նշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ անունը, անվանումը, անշարժ գույքի գտնվելու վայրը, սեփականության, օգտագործման, գրավի, հիփորեթի, գրանցված իրավունքների սահմանափակումները (այդ թվում՝ սերվիսությունների առկայությունը), անշարժ գույքի չափագրման, կադաստրային հանույթների, հատակագծերի, գնահատման և անշարժ գույքի նկատմամբ այլ իրավունքների տվյալները: Տրամադրված տեղեկությունները հաստատվում են գրանցման տարածքային ստորաբաժանման կնիքով: Տեղեկատվության տրամադրումը վճարովի է:

Պետությունը գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորության երաշխավորն է: Գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքներն ու սահմանափակումները հաստատող փաստաթղթերը պահպում են անժամկետ փաստաթղթային ձևով և համակարգչային սկավառակների վրա: Փաստաթղթերը փչացնելու, ոչնչացնելու, հափշտակելու, կորցնելու, բարցնելու, անփոյք պահպանելու, ինչպես նաև դրանցում պարունակվող պետական, ծառայողական և առևտրային գաղտնիք կամ իրապարակման ոչ ենթակա տեղեկություններ հրապարակելու դեպքում, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

12.1. ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հողերի հաշվառումը հողային կադաստրի բաղկացուցիչ մասն է: Այն հողային պաշարների քանակական, որակական և տնտեսական վիճակի վերաբերյալ տեղեկությունների ստացման, խմբավորման և բարմացման պետական միջոցառում է, որն անհրաժեշտ է կառավարման խնդիրներ լուծելու համար:

Հաշվառման ենթակա է հանրապետության ամբողջ հողային ֆոնդը: Հաշվառվում են հողային հարաբերությունների օբյեկտների (սեփականության, հողօգտագործման) սահմաններում գտնվող բոլոր միավորները: Հաշվառումն իր մեջ ներառում է սեփականության, օգտագործման, տիրապետման տրամադրված բոլոր հողերը, ինչպես նաև վարչատարածքային միավորները և պահուստային հողերը:

Հողերի հաշվառման հիմնական խնդիրն է հողային ֆոնդը բնութագրել ըստ նպատակային նշանակության՝ հողերի կատեգորիաների, հողօգտագործման, սեփականության, հողատեսքերի, հողերի տեսակների ու տարատեսակների: Այդ կապակցությամբ ուսումնասիրվում և հաշվառվում է հողերի վիճակը ոչ միայն իրավական, այլ նաև բնական ու տնտեսական տեսանկյունից: Հաշվառել՝ նշանակում է հողերի օգտագործման իրավունքն անխստելորեն կայել դրանց տնտեսական օգտագործման նպատակահարմարության հետ: Հողերը հաշվառվում են՝

- որպես անշարժ գույք, շուկայական հարաբերությունների օբյեկտ,
- որպես տարածական հիմք՝ բնակելի կառույցների, արդյունաբերության, գյուղատնտեսության, ջրային և անտառային տրնտեսության օբյեկտների, տրանսպորտի և կապի ձեռնարկությունների, մշակույթի, առողջապահության, սպորտի, հանգստի և այլ օրյեկտների տեղադրման նպատակով,
- տարբեր նպատակային օգտագործման համար տրամադրվող տարածքների, հողային զանգվածների, հողամասների և առանձին հողատեսքերի չափերը պարզելու համար,
- որպես գյուղատնտեսական և անտառային տնտեսության գրլիավար արտադրամիջոց, ինչը պահանջում է ունենալ հողերի օգտագործման քանակական և որակական հատկությունների վերաբերյալ հատուկ տեղեկատվություն:

Հողերի հաշվառման նպատակն է հավաքել, մշակել, վերլուծել և պահպանել հողերի քանակական, որակական և տնտեսական օգտագործման վերաբերյալ բոլոր այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են հողերի արդյունավետ օգտագործման և պահպանության համար: Քանի որ հողերն օգտագործվում են տարրեր նպատակային նշանակությամբ, դրանց հաշվառմանը ներկայացվում են ոչ միանման պահանջներ, որոնք ել ծառայում են հողի հաշվառման համակարգի ձևավորմանը: Ելնելով դրանից՝ հաշվառումը մի դեպքում հանդես է գալիս որպես պետական միջոցառում, իսկ մյուս դեպքում՝ գերատեսչական:

Որպես պետական միջոցառում՝ հողերի հաշվառումը կոչված է լուծել հողային պաշարների արդյունավետ օգտագործման և պահպանության համապետական հիմնախնդիրները: Տվյալ դեպքում պետությունն է որոշում հողերի հաշվառման խնդիրները, բովանդակությունն ու անցկացման կարգը՝

- հողահաշվառման տեղեկատվության բովանդակությունը, ստացման մեթոդները,
- հաշվառման և հաշվետվության փաստաթղթերի ձևերն ու բռվանդակությունը,
- հաշվետվության ներկայացման ժամկետները,
- հողերի հաշվառման վերահսկողության կարգը:

Յուրաքանչյուր կազմակերպության, ձեռնարկության, քաղաքացու հողօգտագործման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կատարվում է հողերի ներտնտեսային հաշվառում (ըստ հողատեսքի տեսակի և տարատեսակի), որը հիմնվում է հաշվառման պետական և գերատեսչական պահանջների վրա: Հաշվառման հիմքում դրվում են հողերի փաստացի վիճակը և օգտագործման ձերի հատակագծաքարտեզագրական նյութերը: Հաշվառման է ենքակա ամբողջ հողային ֆոնդն՝ ըստ վարչատարածքային միավորների, հողերի կատեգորիաների, հողօգտագործողների և հողատեսքերի: Հողերի հաշվառումը կատարվում է միասնական մեթոդիկայով, որն ապահովում է տվյալների համադրելիությունն ու համեմատելիությունը:

Հողերի հաշվառումը ճիշտ կատարելու պայմաններն են՝

- հաշվառման ժամանակին և անընդհատ անցկացումը,
- հողերի քանակական և որակական փոփոխությունների կանոնակարգված հաշվառումը,
- հաշվառման համապատասխան տեղեկությունների ստացման և գրանցման համաձայնեցումը,
- հողերի հաշվառման տվյալների պարզ և մատչելի լինելը,
- հողահաշվառման և հողակադաստրային փաստաթղթերի համապելիությունը:

Հողերի հաշվառման ընթացքում ստույգ տեղեկությունների ստացման և վերլուծության համար անհրաժեշտ է օգտագործել այն մեթոդներն ու տեխնիկական միջոցները, որոնք ապահովում են նվազագույն ծախսեր և տեղեկատվության բարձր որակ:

Այսփասով՝ հողերի հաշվառմար պետական միջոցառում է, որն ուղղված է դրանց քանակական, որակական, քանական հատկությունների, տեղադրվածության, տնտեսական վիճակի և օգտագործման ձևերի մասին բազմապիսի տեղեկությունների հավաքմանը, խմբավորմանն ու վերլուծությանը:

12.2. ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԶԵՎԵՐԸ

Ըստ առաջադրված խնդիրների, բովանդակության և աշխատանքի ծավալի՝ հողերի հաշվառմար լինում է առաջնային (հիմնական) և ընթացիկ: Դրանք հողի հաշվառման միասնական կարգի երկու փոխկապակցված փուլերն են:

Առաջնային (հիմնական) հաշվառման նպատակն է ստանալ անհրաժեշտ տվյալներ հողանասերի չափերի, տեղադրվածության, որակական վիճակի, բաշխվածության, օգտագործման մասին և դրանք գրանցել հողականաստրային փաստաթղթերում:

Առաջնային հաշվառման խնդիրներն են՝

- հաշվառման ենթակա տարածքների վերաբերյալ գոյություն ունեցող նյութերի հավաքումը, խմբավորումն ու վերլուծությունը,
- առաջնային հաշվառման համար անհրաժեշտ ելակետային տվյալների և հատակագծային նյութերի ստացման նպատակով հանույթների և հետազոտությունների կատարումը,
- հաշվառման ենթակա տարածքների, հողատեսաքննիքի տեսակների, տարատեսակների չափերի և որակական վիճակի որոշումը,
- հողահաշվառման հատակագծային նյութերի պատրաստումը,
- հողահաշվառման փաստաթղթերի սկզբանական գրանցումը,
- հողային ֆոնդի կազմի և, ըստ կատեգորիաների, հողատեսաքննիքի, հողօգտագործողների, վարչական միավորների բաշխվածության որոշումը:

Հողերի առաջնային հաշվառման տվյալների ստացման պարտականությունները դրամ են հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և դրա համակարգում գործող հողաշխմարարական ծառայությունների և ձեռնարկությունների վրա:

Հողերի առաջնային հաշվառումն անցկացվում է առանձին հողօգտագործողների, համայնքների, մարզերի, ավելի խոշոր միավորների սահմաններում և հանրապետությունում՝ աճրողությամբ վերցրած:

Առաջնային հաշվառումն անցկացվում է պարբերաբար, ելնելով անհրաժեշտությունից՝

- նոր հաստատված հողակադաստրային փաստաթղթերի հերթական գրանցման դեպքում,
- հողերի կրկնակի հանույթներից և հետազոտություններից հետո,
- հողագնահատման աշխատանքներից հետո,
- նոր հողատիրության և հողօգտագործման կազմակերպման կամ գոյություն ունեցողների վերակազմավորման դեպքում:

Առաջնային հաշվառումն իր մեջ ներառում է հետևյալ փուլերը՝

- նախապատրաստական աշխատանքներ,
- դաշտային աշխատանքներ,
- հաշվառման արդյունքների ձևակերպում:

Նախապատրաստական աշխատանքների ընթացքում հավաքվում, խմբավորվում և վերլուծվում են հողօգտագործմանը, հողատիրության ընդհանուր տարածությանը, հողատեսքերի կառուցվածքին, հողերի որակական վիճակին վերաբերող նյութերն ու փաստաթղթերը: Հավաքած նյութերը մանրակրկիտ վերլուծվում են, ստուգվում է դրանց ամրողականությունը, հավաստիրությունն ու օբյեկտիվությունը: Ելնելով անհրաժեշտությունից՝ կատարվում է նյութերի ճշգրտում, իսկ տեղեկատվության անբավարար լինելու դեպքում ձեռնարկվում են լրացուցիչ աշխատանքներ:

Դաշտային աշխատանքների՝ հանույթների, հետազոտությունների, հատակագծային նյութերի ճշգրտման նպատակն է անհրաժեշտ տեղեկությունների հաստատումը տեղանքում: Դաշտային աշխատանքներից հետո կատարվում է հողերի անալիզ, հողահաշվարկային նյութերի ձևակերպում, մակերեսի հաշվում, հատակագծային նյութերի կազմում:

Սահմանված կարգով խմբավիրեկուց, վերանայելուց և հաստատելուց հետո պատրաստի նյութերը համարվում են ելակետային տվյալներ՝ հողակադաստրային փաստաթղթերում գրանցելու համար: Փոփոխությունները ներառվում են հողահաշվարկային բացատրագրերում: Կազմվում են նաև հողակադաստրային քարտեզներ (հողօգտագործման, հողատիրության, համայնքի, մարզի):

Հողերի առաջնային հաշվառման արդյունքում տրվում է հողերի չափերի, բաշխվածության, վիճակի և օգտագործման բազմակողմանի բնութագիր: Որոշվում է սեփականության (հողօգտագործման), համայնքի, վարչական մարզի, հողերի կատեգորիաների, տեսակների և տարա-

տեսակների ընդհանուր տարածությունը: Բացի այդ՝ ստացվում են հողատեսքների որակական բնութագրին վերաբերող տվյալներ:

Որպեսզի հողակաղաստրային տվյալները համապատասխանեն իրականությանը, պետք է ժամանակին արձանագրվեն տեղի ունեցող փոփոխությունները: Ուստի հողային կաղաստրի փաստաթղթերում պետք է առկա լինի հողային ֆոնի բնութագրին՝ ըստ կատեգորիաների, հողօգտագործողների, առաջնային հաշվառման ընթացքում ստացված որակական ցուցանիշների և այլն: Դրանով է պայմանավորված հողերի ընթացիկ հաշվառման անհրաժեշտությունը:

Հողերի ընթացիկ հաշվառման նպատակն է, որպեսզի հողակաղաստրային փաստաթղթերում կատարվեն անհրաժեշտ փոփոխություններ, որոնք տեղի են ունեցել հողօգտագործման հիմնական հաշվառումից հետո: Ընթացիկ հաշվառման խնդիրն է՝ վերացնել առաջնային հաշվառման ժամանակ բույլ տրված անշատությունները և գրանցել լրացուցիչ տեղեկություններ՝ նոր պահանջներին համապատասխան:

Ընթացիկ հաշվառման ժամանակ գրանցվում են հողօգտագործման ժամանակ տեղի ունեցած միայն օրինական փոփոխությունները: Հողերի ընթացիկ հաշվառում կատարելիս հողակաղաստրային փաստաթղթերում չեն արտացոլվում հայտնաբերված ինքնակամ հողազավորման համար կատարված մեջ ուրիշին հանձնելը, գյուղատնտեսական հողատեսքների տարածքների կրծատումը, ջրովի և անջրդի հողերի տեղափոխությունը ցածր արտադրողականություն ունեցող հողերի շարքը և այլ փոփոխություններ, որոնք չեն ձևակերպվել հաստատված կարգով: Հողերի արդյունավետ օգտագործման պետական վերստուգիչ մարմինները համապատասխան միջոցներ են ձեռնարկում՝ վերոհիշյալ խախտումները վերացնելու համար:

Հողերի ընթացիկ հաշվառումը կատարվում է ամբողջ տարվա ընթացքում, իսկ տեղի ունեցած փոփոխություններն ամրագրվում են սահմանված ժամկետում:

Փոփոխությունները կարող են լինել երեք տեսակի՝

ա) պետական մարմինների համապատասխան որոշումների հիման վրա հողատիրապետման, հողօգտագործման կամ վարչական միավորների սահմաններում տեղի ունեցող փոփոխություններ,

բ) հողերի տնտեսական օգտագործման, հողաբարելավման և բնության մեջ նախագծի տեղափոխման հետևանքով առանձին հողատեսքների փոփոխություններ,

գ) մարդու գործունեության և բնական գործուների ազդեցության հետևանքով հողատեսքների որակական վիճակի փոփոխություններ:

Հողերի հիմնական և ընթացիկ հաշվառումները փոխսկապակցված փուլեր են: Հիմնական հաշվառումը հիմք է ստեղծում ընթացիկ հաշվառման համար և որոշում դրա գործողության սահմանները: Ընթացիկ հաշվառումը, բարմացնելով և լրացնելով հիմնական հաշվառման տվյալները, ապահովում է հողերի վերաբերյալ տեղեկատվության արդիականությունը: Այդ պատճառով ընթացիկ հաշվառումը պեսոք է կատարվի հիմնական հաշվառումից անմիջապես հետո: Հիմնական և ընթացիկ հաշվառման միջև եղած կայլ խզումը բարդացնում է հողային կադաստրի վարումը, այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար կատարել հողերի հիմնական հաշվառում:

12.3. ՀՈՂԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Հողերի քանակական հաշվառման ընթացրում որոշվում է ոչ միայն հողային ֆոնդի, հողերի կատեգորիաների, վարչատարածքային միավորների, հողօգտագործողների, սեփականատերերի հողերի ընդհանուր մակերեսը, այլև հավաքվում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ ոռոգելի, մելիորացված, բարելավված հողերի, հողատեսքերի տեսակների ու տարատեսակների վերաբերյալ: Հաշվառումը կատարվում է հողատեսքերի փաստացի չափերով՝ հատակագծաքարտեզագրական նյութերի հիման վրա: Մանրանասն հաշվառվում են տարբեր հողատեսքականատերների հողերը, գյուղատնտեսական և անտառտնտեսային նշանակության հողատեսքերը:

Հողերի հաշվառումը կատարվում է ըստ այն հողատեսքերի, որոնք ունեն բնապատմական տարբեր որակական ցուցանիշներ և օգտագործման տարբեր բնույթ: Ցուրաքանչյուր հողատեսք կազմված է առանձին հողակտորից՝ հողամասից:

Հողամասը որոշակի հողային տարածքի մաս է, որի մակերեսն ունի արհեստական կամ բնական սահմաններ, հողակադաստրային քարտեզի վրա ունի իր համարը (ծածկագիրը), տրված է սեփականության կամ օգտագործման իրավունքով և ունի պետական գրանցում: Հողամասն ինչպես չափերով, այնպես էլ որակական ցուցանիշներով, համարվում է առաջնային հաշվառման միավոր:

Հողատեսքը հողային զանգված է, որն օգտագործվում է արտադրական որոշակի կարիքների համար և ունի բնական ու տնտեսական հատկությունների որակական տարբերություններ:

Ըստ բնական պայմանների, որակական վիճակի և տնտեսական օգտագործման բնույթի՝ առանձնացվում են հողատեսքերի ենթատեսակներ: Առանձին հաշվառվում են անօգտագործելի հողատեսքերը (ձորեր, ձորակներ, ազատ տարածքներ, ժայռեր, բարափուլածքներ և այլն): Հողատեսքերն ունեն գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակություն:

Գյուղատնտեսական հողատեսքեր են համարվում այն հողերը, որոնք օգտագործվում են կամ նախատեսված են գյուղատնտեսական արտադրանք ստանալու համար: Դրանք են վարելահողերը, խոպան հողերը, բազմամյա տնկարկները, խոտհարքները, արոտավայրերը, բարելավման ենթակա հողերը:

Վարելահողը գյուղատնտեսական հողատեսք է, որը կանոնավոր կերպով մշակվում և օգտագործվում է գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման նպատակով (ներառյալ բազմամյա խոտարույսերի տակ գտնվող հողերը, ինչպես նաև մաքուր ցեղերը):

Վարելահողերի կազմի մեջ չեն մտնում այգիների ու բազմամյա այլ տնկարկների միջջարային տարածությունները, որոնք ժամանակավորապես օգտագործվում են գյուղատնտեսական մշակաբույսերի տակ: Այդպիսի տարածքները հաշվառվում են բազմամյա տնկարկների կազմում: Վարելահողեր չեն համարվում մշակովի խոտհարքների և արոտավայրերի վարած տարածքները, որոնք օգտագործվում են բուսածածկի բարմացման և բարելավման նպատակով:

Բազմամյա տնկարկները գյուղատնտեսական այն հողատեսքերն են, որոնց վրա աճում են պտղատու ծառեր, խաղողի վազեր, հատապրոդային և բազմամյա այլ բույսեր: Հաշվառման ենթակա է բազմամյա տրնկարկների ամբողջ՝ ներառյալ դարավանդների տարածությունը: Հաշվառումը կատարվում է ըստ տնկարկի հողավանդակի և հողատեսքի գանգվածի:

Բազմամյա տնկարկների կազմում առանձնացվում և հաշվառվում են՝

- պտղատու այգիները, որոնք գրադեցված են ծառատեսակներով և բիւտեսակներով (հնդավոր, կորիզավոր, ընկուզավոր և այլն),
- խաղողի այգիները,
- տնկարանները, որ աճեցվում է պտղատու, խաղողի, հատապտղատու տեսակների տնկանյութ:

Բարելավման ենթակա հողերում իրականացվում են կոլտուր-տեխնիկական, չորացման, քարերի հեռացման, աղազերծման և այլ միջոցառումներ, որոնց նպատակն է դրանք ընդգրկել գյուղատնտեսության կամ անտառատնտեսության մեջ:

Խոպան հողեր են համարվում նախկինում մշակված հողամասները, որոնց վրա մեկ տարուց ավելի չի կատարում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք:

Խոտհարքը այն հողատարածությունն է, որի արտաքին մակերեսը ծածկված է բնական բազմամյա խոտարույսերով և նախատեսված է խոտհնձի համար:

Խոտհարքների կազմում առանձնացվում և հաշվառվում են բարելավված տարածքները: Ըստ անցկացվող միջոցառումների բնույթի և ծավալի՝ դրանք բաժանվում են մակերեսառեն և արմատապես բարելավված խոտհարքների: Մակերեսային բարելավման ժամանակ խոտի ցանքը և խոտածածկի խնամքը կատարում են առանց բնական ճնաշերտի խախտման: Արմատական բարելավման դեպքում ստեղծվում է նոր խոտածածկ՝ ճնաշերտի քայլայումով:

Արտավայրը հողատարածություն է, որի արտաքին մակերեսը ծածկված է բնական բազմամյա խոտաբույսերով, նախատեսված է անասունների արածեցման համար և չի օգտագործվում որպես խոտհարք:

Արտավայրի կազմում առանձնացվում են բարելավված և երկարամյա մշակովի արտաներ, որտեղ իրականացվում են մակերեսային և արմատական բարելավման միջոցառումներ, ստեղծվում է բարելավված խոտածածկ, կանոնավոր կերպով կատարվում են խնամքի աշխատանքներ, պատրաստվում և անցկացվում է արտաշրջանառություն:

Արտաների կազմում առանձնացվում և առանձին հաշվառվում են՝

- մաքուր արտաներ, որոնց մակերեսին բացակայում է ծառաթփուտային բուսականությունը, գուղձերը, բարերը և այլն, կամ դրանց մակերեսը կազմում է տարածության մինչև 10%-ը,
- թույլ գուղձավորված (10-12%),
- միջին և ուժեղ աստիճանի գուղձավորված (20%-ից բարձր),
- տարբեր աստիճանի տրորված արտաներ:

Անտառային տարածքները ծածկված են անտառով: Դրանց կազմի մեջ մտնում են նաև նոսր, հատված, ոչ անտառապատ տարածքները (անտառի զանգվածներում), անտառային տնկարանները:

Անտառաշերտերը արիեստականորեն ստեղծված տնկարկներ են, որոնք նախատեսված են պաշտպանելու հողերը և շինությունները կլիմայական անբարենպաստ պայմանների ազդեցությունից: Դրանք լինում են դաշտապաշտպան, այգեպաշտպան, ափամերձ և այլն:

Ճահիճներն այն հողամասերն են, որոնք գետնաջրերի բարձր մակարդակի և սթենոլորտային տեղումների կուտակման հետևանքով գերխոննապացել են, ինչի արդյունքում առաջացել են քայլայված և կիսաքայլաված բուսական մնացորդների առատ կուտակումներ:

Խախտված հողերի շարքին են դասվում այն հողատարածքները, որտեղ հողային ծածկույթը խախտվել կամ լրիվ ոչնչացել է՝ օգտակար հանածոների արտահանման, երկրաբանական, շինարարական աշխատանքների և այլ պատճառներով:

Գյուղատնտեսության մեջ անօգտագործելի **այլ հողեր** են համարվում՝

- բուսականությունից գուրկ ավազները,


- ձորերը և ձորակները՝ մեկ մետրից ավելի խորությամբ գծային ձև ունեցող հողամասերը, որոնք առաջացել են ռելիեֆի հողատարման հետևանքով: Այստեղ հողային ծածկույթը ձևավորված է թույլ, երբեմն հանդես է գալիս մայրական տեսակների ելքերով,
- սողանքները, փլվածքները, քարափովածքները, մայր ապարի ելքերը, ժայռերը, գլախճարարային գետաբերվածքները,
- այլ անօգտագործելի հողերը:

Հողերի որակական հաշվառումն իր մեջ ներառում է հողերի դասակարգումը, խմբավորումը և բնութագրումն ըստ էկոլոգիական, տեխնոլոգիական, տնտեսական, քաղաքաշինական և այլ հատկությունների: Հողերի որակական վիճակը բնութագրվում է դրանց կատեգորիաներով և դասերով, ռելիեֆով, խոնավացման, աղակալման, հողատարման աստիճանով և այլ հատկանիշներով:

Հանրապետության լեռնային շրջանների հողերի տիպերի ձևավորման գործուներն են կյման, բուսականությունն ու հողային ծածկույթը, ուղղաձիգ գոտիականության դասավորվածությունը և այլն: Հողերի որակական հատկությունների հաշվառումը հնարավոր է արտադրածագումնարանական դասակարգման միջոցով, որի խնդիրն է գործնական նպատակով կատարել տարածքային սահմանազատում՝ զյուղատնտեսության համար առավել պիտանի և այլ նշանակության հողերի միջև:

Հողերի արտադրածագումնարանական դասակարգումն նախատեսվում է հանրապետության ամբողջ հողային ֆոնը բաժանել գոտիական տիպերի, պիտանիության կատեգորիաների և դասերի, տեսակների և տարատեսակների՝ ըստ բնորոշ ցուցանիշների, որոնք առանձնացվում են տարածքի բնագյուղատնտեսական, էկոլոգալանշաֆտային, հողականաստրային շրջանացման ընթացքում: Հայաստանի լեռնային բարդ ռելիեֆի պայմաններում հողերը գտնվում են բնական ծորերով և ծորակներով կտրտված լեռնալանջերի վրա: Վարեկահողերը և ցանքի համար պիտանի հողերը ներկայացված են տարրեր չափերի հողամասերով: Միևնույն համայնքի հողօգտագործման սահմաններում լինում են մի քանի հարյուրից ավելի հողամասեր և հողային միավորներ:

Ելնելով զյուղատնտեսական արտադրության պահանջներից՝ հողերի որակական հատկությունների ուսումնասիրման և դասակարգման հարցում առաջարկվում է երկու մոտեցում. մի կողմից՝ կատարել յուրաքանչյուր հողամասի հողագոյացման գործուների և մարդու տնտեսական գործունեության ազդեցության ուսումնասիրություն և դասակարգում, իսկ մյուս կողմից՝ այդ ուսումնասիրության արդյունքները կիրառել հողերի գիտական և արտադրական օգտագործման միջոցառումների մշակման ընթացքում (նկ. 10):



Նկ. 10. Հողերի որակական դասակարգումը:

Հողերի որակական դասակարգումը կատարվում է երկաստիճան համակարգով. ուղղահայց, որը համընկնում է հանրապետության հողային ֆոնդի բնագյուղատնտեսական շրջանացման գոտիների հետ, և հողիզնական, որն արտահայտում է հողերի պիտանիության կատեգորիաները և դասերը: Բնական գոտիները և հողերի գոտիական տիպերն արտացոլում են բնական միջավայրի հողային պայմանները և դրանց օգտագործման ընդհանուր ուղղությունները (երկրագործություն, անասնապահություն, անտառատնտեսություն և այլն):

Հայաստանի Հանրապետությունում առանձնացվում են հետևյալ բնական գոտիները՝

- կիսաանապատային,
- չոր տափաստանային,
- տափաստանային,
- անտառատափաստանային և անտառային,
- մարգագետնատափաստանային,
- լեռնամարգագետնային:

Դասակարգման հաջորդ փուլում առանձնացվում են հողերի վեց գոտիական տիպերի օգտագործման պիտանիության կատեգորիաներ, որոնք ներկայացնում են միևնույն արտադրական նշանակություն և օգտագործման ուղղություն ունեցող հողերի դասերը:

Հողերի դասակարգման ցածր միավորների (տնկարկների սահմաններում) հողատեսքերի որակական հատկությունների հաշվառումը կատարվում է ըստ հողերի հզորության, դրանց մեխանիկական կազմի, աղակալման-ալկալիացման, խոնավացման, գերխտնավացման աստիճանի, քարքարոսության, հողատարման, հումուսի պարունակության, սննդանյութերով ապահովածության, տեղանքի ռելիեֆի և այլ ցուցանիշների (նկ. 11):

Հողային կադաստրի ընդհանուր համակարգում դասակարգման նյութերն առաջին հերթին կիրառվում են տարբեր մակարդակի (համայնք, մարզ, հանրապետություն) հողօգտագործման հողատեքերի որակական հաշվառման ու գնահատման, ինչպես նաև ներտնտեսային հողաշխնարարության նախագծերում: Այդ նպատակով «Հայպետհողչին-նախագիծ» ինստիտուտը 1985-1990 թթ. կատարել է հանրապետության ամբողջ հողային ֆոնդի (ըստ հողօգտագործողների) դասակարգում, որի արդյունքներն ամփոփվել են հողերի կադաստրային գնահատման նյութերում: Որպես օրինակ ներկայացնենք Շիրակի մարզի Զորակապ համայնքի հողօգտագործման սահմաններում գտնվող հողատեքերի դասակարգման արդյունքները: Այս համայնքում ընդհանուր հողատեքերը կազմել են 1846 հա, որից գյուղատնտեսականը՝ 987 հա կամ ընդհանուր տարածքի 57%-ը, վարելահողերը՝ 566, պտղատու այգիները՝ 6, արոտները՝ 415 հա: Տարածքի 193 հեկտարն այլ հողեր են: Խոշորամասշտաբ հողային հետազոտությունների ընթացքում համայնքի տարածքում առանձնացվել են լեռնային սևահողեր, որոնք հողերի դասակարգման միսենայում ընդգրկվել են 1-ին բնագյուղատնտեսական գոտու մեջ (տափաստանային-Գ):

Համայնքի հողերի դասակարգման նյութերի վերլուծությունից պարզվում է, որ տարածքում առաջին կատեգորիայի՝ վարի հանար պիտանի հողերի մակերեսը կարելի է հասցնել 706 հա: Ըստ հողերի դասերի՝ այն բաշխված է հետևյալ կերպ. 3-րդ դաս՝ 78,6 հա, 4-րդ՝ 172,1 հա, 10-րդ՝ 200, 11-րդ՝ 81,6, 12-րդ՝ 30,9, 13-րդ՝ 2,3 հա: Այստեղից հետևում է, որ վարելահողերի կուտորականացման մակարդակն այդ համայնքի տարածքում ցածր է, դրանց գերակշռող մասը գտնվում է տարբեր քերության լեռնալանջերի վրա, հողերը կտրտված են, հողատարած ու քարքարու: Մելիորատիվ-տեխնիկական միջոցառումներ կիրառելուց հետո արոտներից 41 հա և այլ հողերից 93 հա կարելի է օգտագործել որպես վարելահող: Համայնքի տարածքում ձորակները (15 հա), մայր ապարի ելքերը (5 հա), քարակույտերը (403 հա), քարհանքերի գրաղեցրած տարածությունները (18 հա) գյուղատնտեսական նպատակների համար պիտանի չեն: Հողերի որակական հաշվառման արդյունքներից պարզվում է, որ համայնքում գյուղատնտեսական հողատեքերի տարածությունը կարելի է ավելացնել 13%-ով:

Հանրապետության հողային ֆոնդի դասակարգման տվյալները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական հողատեքերի տարածքների ավելացման հնարավորություններ կան հանրապետության բոլոր համայնքների հողօգտագործման սահմաններում: Պետական հողային կադաստրի համակարգում հողերի դասակարգման արդյունքները հնարավորություն են տալիս ճիշտ կատարել հողերի հաշվառմը, քաշահայտել դրանց արտադրական պիտանիությունը, կատարել հողատեքերի արդ-

յունավետ փոփոխություններ: Դա նպաստում է հողերի հետազոտական, նախագծային և մելիորատիվ աշխատանքների ճիշտ կողմնորոշմանը, որոնք ուղղված են հողերի բարելավմանը, բերդիության բարձրացմանը և շրջակա միջավայրի պահպանմանը:

12.4. ՀՈՂԵՐԻ ՀԱԾՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎԱՆԱԿՆԵՐԸ: ՀՈՂԵՐԻ ՄՈՆԵՏՈՐԻՒՄ

Հողերի հաշվառման ընթացքում ամբողջական տեղեկատվություն կարելի է ստանալ տարբեր եղանակներով, որոնց կիրառումը կախված է հաշվառումը կատարելու պայմաններից, խնդիրներից և տվյալների առանձնահատկություններից: Տեղեկությունները ստացվում են հանույթների, հետազոտումների, չափումների, գույքագրման և հողերի մոնիթորինգի միջոցով (նկ. 12):

Հղողահանդակների (հողատեսքեր, հողամասեր, հողօգտագործում) մակերեսի վերաբերյալ քանակական տվյալները ստացվում են հատակագծաբարտեզագրական նյութերից, որոնք կազմվում են բնույթյան մեջ կատարված հանույթների արդյունքում: Հանույթները լինում են վերգետնյա գործիքային, օդալուսանկարահանումներ և տիեզերական:


Հողերի հաշվառման ընթացքում հիմնական են համարավում օդալուսանկարահանումները, որոնք թույլ են տալիս հողերի չափերի, վիճակի և հողային ֆոնդի օգտագործման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ առանալ համեմատարար արագ և էֆան միջոցներով: Օդալուսանկարահանման նյութերում ոչ միայն արտացոլվում են հողամասերի ուրվագծերը, այլև զյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի սահմանները, բնակելի շենքերն ու շինույթյունները, հողատարման աստիճանը և այլն:

Հողերի բնական հատկությունների որակական ցուցանիշները որոշվում են հետազոտումների և հանույթների նյութերի հիման վրա, որոնց խնդիրն է բացահայտել հողատեսքերի փաստացի վիճակը և որոշել ապագայում դրանց ավելի արդյունավետ օգտագործման հնարավորությունները:

Հետազոտումները լինում են երկու տեսակի՝ ագրոտնտեսական և մասնագիտական:

Ագրոտնտեսական հետազոտումները տեղեկություններ են տալիս հողերի տնտեսական օգտագործման և հողատեսքերի արտարին ցուցանիշների վերաբերյալ: Հողամասերը բնույթագրվում են հողի տիպով, մեխանիկական կազմով, հումուսային շերտի հզրությամբ, հողերի մեքենայացված մշակման համար պիտանիության աստիճանով և հողի բերրիության վրա ազդող այլ ցուցանիշներով: Հետազոտումների արդյունքներն

ամփոփվում են հատակագծային նյութերում և հատուկ մասնագիտական տեղեկագրերում:



Նկ. 12. Հողահաշվառման տեղեկատվության հավաքման եղանակները:

Սասմագիտական հետազոտումները (հողագիտական, ագրոքիմիական, երկրաբանաբանական, մելիորատիվ) հիմնվում են հողերի լարորատոր հետազոտությունների արդյունքների և բնական կերահանդակների գնահատման վրա: Գնահատումը կատարում են՝ հաշվի առնելով բուսածածկի որակը, ստորգետնյա ջրերի մակարդակը և այլ ցուցանիշներ:

Ելակետային տվյալների ստացման և հողերի օգտագործման վերահսկողության նպատակով կիրառվում է հողերի **չափագրում**: Չափագրումները լինում են համատարած և ընտրանքային: Համատարած չափագրման է ենթարկվում ամբողջ հաշվառվող տարածքը, իսկ ընտրանքայինի դեպքում տարածքի մի մասը:

Հողերի գոյցագրումը միանվագ միջոցառում է, որի նպատակն է բացահայտել հողատեսքերի փաստացի առկայությունը և որակական

վիճակը: Գույքագրում կարող է կատարվել ինչպես հաշվառվող ամբողջ տարածության, այնպես էլ դրա առանձին հատվածների վրա: Այդ ընթացքում տվյալներ են հավաքվում հողերի իրավական վիճակի, քանակի և որակի վերաբերյալ:

Հողերի հաշվառման ժամանակ օգտագործվում են նաև **հողերի մոնիթորինգի** տվյալները:

Հողերի մոնիթորինգը հողային ֆոնի վիճակի վերաբերյալ դիտարկումների համակարգ է, որի խնդիրն է ժամանակին ի հայտ բերել հողերի վիճակի փոփոխությունները, տալ դրանց գնահատականը, կանխել և վերացնել բացասական երևոյթների հետևանքները: Ելնելով դրանից՝ հողերի մոնիթորինգն ապահովում է տեղեկատվություն՝ բնօգտագործման, հողերի պահպանման, պետական հողային կադաստրի վարման, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության կանխատեման և այլ խնդիրների լուծման համար:

Հողերի մոնիթորինգը պետական տեղեկատվական համակարգ է և տարածվում է բոլոր կատեգորիաների հողերի վրա՝ անկախ օգտագործման բնույթից և սեփականության ձևից: Մոնիթորինգի իմաստը նրանում է, որ դիտարկումների, հետազոտությունների, հետախուզական աշխատանքների, հանույթների միջոցով բնութագրվի ուսումնասիրվող օբյեկտի վիճակը հետևյալ ցուցանիշներով՝

- հողերի հաշվառում ըստ կատեգորիաների, հողատեսքների, հողօգտագործողների,
- հողերի վիճակի դիտարկումներ,
- շրջակա միջավայրի վրա ազդեցություն գործող արդյունաբերական օբյեկտների վիճակի դիտարկումներ,
- մաքրիչ կառույցների աշխատանքի վերահսկողություն,
- տրանսպորտի աշխատանքի վերահսկողություն,
- ջրամբարների վիճակի, կրնապատային հրապարակների, քաղաքների և այլ օբյեկտների վերահսկողություն,
- մոնիթորինգի ենթարկվող հողերում տնտեսավարող սուբյեկտների արտադրատնտեսական գործունեության փոփոխությունների դիտարկումներ,
- հողերի տնտեսական գնահատման ցուցանիշների փոփոխությունների ուսումնասիրություն:

Կախված դիտարկումների նպատակներից և ներառված տարածքներից՝ հողերի մոնիթորինգը կարող է լինել համապետական կամ տարածային: Այն իրականացվում է համապետական և տարածքային ծրագրերին համապատասխան:

Ըստ ժամանակի՝ փոփոխությունների դիտարկումները լինում են՝

- ցիկլային (կապված տարեկան, սեզոնային և բնական բնույթի այլ փոփոխությունների հետ),
- աստիճանական (էվոլյուցիոն, անդառնալի՝ կապված զարգացման պատճական գործընթացների հետ),
- անտրոպոգեն (կապված մարդկային գործունեության հետ),
- արտակարգ իրավիճակների (կապված երկրաշարժերի, ջրհեղեղների, տարբեր բնույթի վթարների և այլ բնական աղետների հետ):

Հողերի մոնիթորինգի արդյունքներն արտահայտվում են հողային ֆոնդը բնութագրող քանակական և որակական ցուցանիշներով, բացարձակ կամ հարաբերական տվյալներով, յուրաքանչյուր գործոնի ցուցանիշների բնութագրման համար նախօրոք մշակված սանդղակներով ու գործակիցներով: Հողերի մոնիթորինգի իրականացման ընթացքում պահպանվում են բնական պաշարների կաղաստրի և մոնիթորինգի փոխադարձ համատեղելիության և համարելիության սկզբունքները: Այդ փոխադարձ կապն ապահովում է կորորդինատների միասնական համակարգով, հողերի համապետական դասակարգումով և այլ գործոններով:

12.5. ՀՈՂԵՐԻ ՀԱԾՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պետական հողային կաղաստրի համակարգում հողերի հաշվառման վերաբերյալ տեղեկատվություն է տրվում բոլոր կատեգորիայի հողերի համար: Հաշվառումը կատարվում է միասնական մեթոդիկայով, որի ընթացքում պահպանվում են անտառային, ջրային և այլ կաղաստրների հետ համատեղելիության սկզբունքները: Հողերի հաշվառումը բոլոր մակարդակներում դրվում է համապատասխան հողային ծառայությունների վրա:

Ստորին մակարդակում հողերի հաշվառման տվյալների հավաքման աշխատանքները կազմակերպում են համայնքային և ավանային իշխանությունները: Հողօգտագործման, սեփականության, տիրապետման և վարձակալության, հողամասերի նպատակային օգտագործման օբյեկտների և սուրյեկտների, դրանց օգտագործման կարգի վերաբերյալ փոփոխությունների գուանցումն իրականացնում են մարզային և քաղաքային հողաշխնարարական ծառայությունները:

Մարզի (քաղաքի) հողային կաղաստրը պարունակում է հողամասերի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

1. Տեղադրվածության բնութագիրը՝
 - հողամասի կոորդինատները,
 - կաղաստրային համարը:
2. Իրավական վիճակի բնութագիր՝

- հողերի կատեգորիան և նպատակային օգտագործումը,
- հողամասի տարածությունը,
- տեղեկություններ հողերի տնօրինման, տիրապետման և օգտագործման մասին,
- տեղեկություններ հողերի ծանրաբեռնումների մասին:

3. Հողերի քանակական բնութագիրը՝

- յուրաքանչյուր հողօգտագործման և հողատիրապետման տարածությունը,
- առանձին կատեգորիայի հողերի տարածությունը,
- բնակելի և ոչ բնակելի կառուցապատման մակերեսը,
- արտադրական և կենցաղային ենթակառուցվածքների տարածությունը,
- չօգտագործվող հողերի տարածությունը:

4. Հողերի որակական բնութագիրը՝

- հողերի բնութագիրն ըստ բերրիության վրա ազդող հատկանիշների,
- գյուղատնտեսական մշակաբույսեր աճեցնելու համար հողերի պիտանիության աստիճանը,
- անտառային տնկարկների համար հողերի պիտանիության աստիճանը,
- ջրային օբյեկտի և դրա օգտագործման համար հողերի պիտանիության աստիճանը,
- շինարարական օբյեկտների կառուցման և դրանց հետագա օգտագործման համար հողամասերի պիտանիության աստիճանը (քաղաքաշինական ցուցանիշներ, երկրաբանական պայմաններ, էկոլոգիական վիճակ և այլն):

5. Տնտեսագիտական բնութագիրը՝

- հողամասերի գնահատման և արժեքային ցուցանիշները, որոնք հաստատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կազմում ընդգրկված հողաշինարարական ծառայությունները համակարգում են մարզային և տարածաշրջանային համապատասխան կառույցների գործունեությունը, ամփոփում հողային պաշարների առկայության և քանակի վերաբերյալ հաշվետվությունները և ներկայացնում ՀՀ կառավարության հաստատմանը:

Հանրապետության սուբյեկտների մակարդակով հավաքվում են հետևյալ տեղեկությունները.

1. Ըստ հողատեսքերի (նպատակային նշանակության, կատեգորիայի՝)

- հողօգտագործողների քանակը,

- ընդհանուր տարածությունը,
- հողերի տարածությունն ըստ հողատեսքերի. գյուղատնտեսական՝ այդ բվում՝ վարելահողեր, որից ջրովի և անջրով, բազմամյա տնկարկներ (խաղողի այգի, պտղատու այգի և այլն), բնական կերահանդակներ (խոտհարք, արոտ), անտառներ, ճահիճներ, ջրերի տակ, ընդհանուր օգտագործման հողեր, ճաճապարհներ, խախտված հողեր, այլ հողեր:

2. Ըստ սեփականության ձևի և հողի նկատմամբ գույքային իրավունքի (ըստ հողերի կատեգորիաների):

- հանրապետական սեփականություն հանդիսացող հողեր,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց մասնավոր սեփականություն հանդիսացող հողեր,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց մշտական (անժամկետ) օգտագործման հողեր,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց ցմահ ժառանգության իրավունքով տիրապետման հողեր,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց վարձակալության տրված հողեր,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից գրավ դրված (իիվորթերային) հողեր,
- տեղական իշխանությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից հողի հետ կատարված գործարքների քանակը և հողերի տարածությունը:

3. Հատակագծային քարտեզագրական նյութեր.

- 1:10000, 1:5000 մասշտարի ամբողջական հողային հետազոտում,
- 1 : 25000 մասշտարի ազորքիմիական հետազոտում,
- ծանր մետաղների աղերով աղտոտված հողատարածություններ,
- հողատարման ենթարկված գյուղատնտեսական հողատեսքեր:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի վրա են դրված հողերի տվյալների հավաքման, խմբավորման, ուսումնասիրման և պահպանման, ինչպես նաև հողային կադաստրի նյութերի իրատարակման և շահագործություններին ու գերատեսչություններին տեղեկատվություն տրամադրելու պարտականությունները: Միևնույն ժամանակ, զեկույցի տեսքով, կառավարությանն են ներկայացվում հողերին վերաբերող մշակված տեղեկությունները:

Հողային կադաստրը ՀՀ հողային ֆոնդի իրավական, քանակական, որակական և տնտեսական արժեքների վերաբերյալ բազմաստիճան, փոխկապակցված փաստարդերի և ցուցանիշների համակարգ է:

Հողակադաստրային փաստաթղթերի միասնականացումն ու ստանդարտացումը հնարավորություն է տալիս կրծատել փաստաթղթերի տեսակները և ապահովում է տեղեկատվության համարելիությունը:

Հողակադաստրային աշխատանքները կատարելու ընթացքում նախատեսվում է պահպանել հետևյալ սկզբունքները.

1. *Միասնականացում՝ ընթամուրից մասնավորից:* Հողային միասնական փաստաթղթերի և ձևերի ստեղծում, դրա հիման վրա առանձին փաստաթղթերի հաստատում:

2. *Համադրելիություն:* Համակարգի շրջանակներում փաստաթղթերի միաձևություն:

3. *Տեղեկատվության կոմպեքսայնություն:* Հողակադաստրային փաստաթղթերին ներկայացվող պահանջներում պետք է հաշվի առնել բնական պաշարների այլ կադաստրների ցուցանիշների առանձնահատկությունները:

4. *Տեղեկությունների արժանահավասուրյուն ու ամրողականություն:* Հողակադաստրային փաստաթղթերի կազմման ընթացքում պետք է ապահովել տեղեկատվության հավաստի լինելը և դրա իրավական կարգը: Զեակերպումները պետք է լինեն գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

5. *Փաստաթղթերի ներկայացվող պահանջների կայունություն:* Ելնելով հողակադաստրային փաստաթղթերի տեսակների և ձևերի երկարաժամկետ օգտագործման անհրաժեշտությունից՝ պետք է մշակել պետական և ճյուղային կադաստրների ստանդարտներ:

6. *Հողակադաստրային փաստաթղթերի տեսակների և քանակի կրծառում:* Դրան կարելի է հասնել համակարգչային տեխնիկայի ներդրման շնորհիվ:

7. *Խճայողականություն:* Դրան կարելի է հասնել հողակադաստրային փաստաթղթերի ամբողջ համակարգի կատարելագործման միջոցով:

ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՎԵՐԻ ԿԱԶՄՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՈՒՄԸ

13.1. ՀՈՂԵՐԻ ՀԱՃՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՎԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

1. Հողերի հաշվառման տվյալներն ամփոփվում են տարբեր փաստաթղթերում, որոնց մեջ մասը հաստատվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հողային ծառայության կողմից և ունի բոլոր տարածաշրջանների համար միասնական ձև:

2. Հողերի հաշվառման փաստաթղթերը լինում են տեքստային և հատակագծաքարտեզագրական: Դրանց միջև գոյություն ունի սերտ կապ: Տեքստային փաստաթղթերը կազմվում են հատակագծաքարտեզագրական փաստաթղթերի հիման վրա, որոնցում պետք է արտացոլված լինի հողօգտագործման արդի մակարդակը: Այդ տեսակետից հատակագծաքարտեզագրական նյութերը մեծ դեր են խաղում հողային կադաստրի վարման գործում:

Հողակադաստրային փաստաթղթերն ունեն հետևյալ ընդհանուր կառուցվածքը (նկ. 13):


Հատակագծաքարտեզագրական փաստաթղթերն անհրաժեշտ են հողօգտագործման և առանձին հողատեսքերի տարածական արտահայտման և բնութագրման համար: Այդպիսի փաստաթղթերի կազմնան հիմք են հանդիսանում օդալուսանկարահանումները, տիեզերական, տեղագրական, գեոդեզիական և կադաստրային հանույթները:

3. Հողերի հաշվառման ընթացքում օգտագործվում են հետևյալ հատակագծաքարտեզագրական փաստաթղթերը՝ հատակագծեր, քարտեզներ, սխեմաներ, քարտագրամներ: Այդ նյութերում պարզորոշ ուրվագծվում են հողօգտագործման և հողատիրապետման, բոլոր հողատեսքերի սահմանները, դրանց փոխադարձ տեղաբաշխվածությունը, գրաղեցրած տարածությունը և այլն: Քարտագրամներում՝ այդ նյութերից բացի, ցույց են տրվում հողային ֆոնդի տարրեր բնութագրերը, օրինակ՝ հողատարված հողերի տեսակաբար կշիռը, հողերի գնահատման տվյալները, աղակալման աստիճանը և այլն:

4. Հատակագծաքարտեզագրական հիմնական փաստաթղթերն են՝

- հողակադաստրային հատակագծերը,

- հողասեփականության (հողօգտագործման) քարտեզները,
- վարչական մարզի, տարածաշրջանի հողասեփականության (հողօգտագործման) սխեմաները,
- կադաստրային հերթապահ քարտեզները,
- հողային քարտեզները,
- հողօգտագործման ծանրաբեռնումների քարտեզները,
- հողերի տնտեսական գնահատման քարտեզները և այլն:



Նկ. 13:

Ըստ կարևոր է քարտեզագրական նյութերում օբյեկտների երկրաչափական արտահայտման ճշտության ապահովումը, որից կախված են հողականաստրային տվյալների բանկի լրացման ծախսերը և պահպանվող տեղեկատվության ծավալները: Հաշվի առնելով այլ երկրների փորձը՝ համապատասխան աշխատանքի կոնկրետ տեսակի դիացաների քանի համար հարկավոր է ընտրել համապատասխան մասշտաբի և ճշտության քարտեզագրական նյութեր: Օրինակ՝ գյուղական բնակավայրերի քարտեզագրության համար կիրառվում են 1:2000 մասշտաբի հատակագծեր: Ենթադրվում է տվյալ մասշտաբից և քարտեզների, հատակագծերի կազմման գոյություն ունեցող հրահանգի պահանջներից՝ հնարավոր է որոշել օր

յեկտների տեղաբաշխվածության, մակերեսների, չափերի, հատվածների երկարության ճշտությունը և այլն:

Յուրաքանչյուր վարչատարածքային միավորի հաշվառման համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալիս օգտագործվում են տարրեր հատակագծաքարտեզագրական նյութեր: Դա կախված է աշխատանքների կատարման ընթացքում և հեռանկարում տվյալ տարածքների վերաբերյալ նյութերի առկայությունից, տեղեկատվության արժանահավատությունից, դրա ստացման արժեքից, մշակման քարդությունից, այս կամ այն տվյալների օգտագործման նպատակահարմարությունից: Քանի որ հաշվառման նյութերը մշտապես քարմացվում են, ապա անհրաժեշտության դեպքում լրացուցիչ քարտեզագրական տեղեկատվության ստեղծումը տեխնիկական և մեթոդական դժվարություն չի առաջացնում:

5. Ներկայումս հատակագծաքարտեզագրական նյութերը կարող են տրամադրվել ինչպես ավանդական գծագրական, այնպես էլ էլեկտրոնային թվային տեսքով: ՀՀ տարածքում հողակաղաստրային քարտեզագրման ընթացքում այժմ բողարկվում են էլեկտրոնային թվային քարտեզներ:

Տվյալների տեքստային բանկի հիմքն են կազմում հողերի քանակական և որակական հաշվառման նյութերը, որոնք հավաքվում և պահպանվում են հողաշինարարական ծառայությունների կողմից՝ ավանդական (քրբային) կամ էլեկտրոնային սկավառակների տեսքով, ինչպես նաև քաղաքային, համայնքային և գերատեսչական այլ մարմններ ներկայացվող տեղեկությունները՝ կապված անշարժ գույքի, ենթակառուցվածքների և հողօգտագործման հետ:

Տեղեկատվական այլ աղյուր են թվային վիճակագրական նյութերը, որոնք շատ հարմար են անմիջական օգտագործման համար: Դրանցից հատկապես առանձնանում է պետական վիճակագրությունը, որը հնարավորություն է տալիս հաստատագրել բնակչության կազմի, նրա կենսամակարդակի, մշակույթի զարգացման, նյութական պաշարների առկայության և օգտագործման վերաբերյալ գոյություն ունեցող փոփոխությունները:

Վիճակագրական հաշվետվությունները լինում են շաբաթական, ամսական, եռամյակային, կիսամյակային և տարեկան: Բացի այդ՝ հաշվետվությունները կարող են լինել միանվագ:

Տեղեկատվության աղյուր են նաև հողերի առկայության և բաշխվածության վերաբերյալ գիտական հողվածները, գրքերը, հաշվետվությունները և այլն: Չնայած փաստացի շատ նյութերի առկայությանը, դրանք միշտ չեն որ դասակարգված են և հատուկ խմբավորման կարիք են գումար:

Հողային հարաբերությունների օբյեկտներին վերաբերող տվյալներն ունեն հետևյալ դասակարգումը՝

- տեղեկություններ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների, գյուղատնտեսական ձեռնարկությունների, միավորումների և ասոցիացիաների մասին,
- տեղեկություններ կարեոր տնտեսական, գիտական, փորձագիտական և այլ նշանակություն ունեցող գյուղատնտեսական խոշոր ձեռնարկությունների մասին,
- տեղեկություններ ոչ գյուղատնտեսական նշանակության հողային ֆոնդի զանգվածներում հողատիրապետման և հողօգտագործման մասին,
- տեղեկություններ հասուկ իրավական կարգավիճակ ունեցող հողերի սահմաններում գտնվող հողօգտագործողների մասին,
- տեղեկություններ հանրապետական և մարզային ենթակայության հողերի ռացիոնալ և արդյունավետ օգտագործման հետ կապված հողային հարաբերությունների սուբյեկտների սահմանափակումների և ծանրաբեռնումների մասին,
- տեղեկություններ մայրաքաղաքի և մեծ քաղաքների սահմաններում գտնվող հողասեփականության, հողատիրապետման և հողօգտագործման մասին:

6. Հողերի հաշվառման հիմնական փաստաթղթերը կազմվում են «Հողերի առկայության և բաշխման մասին» հաշվետվության և դրան կից հավելվածների հիման վրա: Բացի այդ՝ անհրաժեշտ են հետևյալ տվյալները՝

- անտրոպոգեն և բնական գործոնների բացասական ազդեցության տակ գտնվող հողամասերի տարածությունն ու բնութագիրը (այն դեպքում, եթե տվյալ տարածքում գյուղատնտեսական մթերքի արտադրությունը նվազում է 5-15%-ով կամ վտանգ է սպառնում մարդկային կենսագործունեությանը, օրինակ՝ ռադիոակտիվ նյութերով աղտոտվածությունը),
- հասուկ իրավական կարգավիճակով օգտագործվող հողամասերի տարածությունն ու որակական բնութագիրը,
- հողային ֆոնդի որակական բնութագրման ամփոփ տվյալները:

Հողերի հաշվառման փաստաթղթերի ձևակերպման ընթացքում պետք է օգտագործվեն այլ գերատեսչություններից ստացված հետևյալ տեղեկությունները՝


- ճարտարագիտական ենթակառուցվածքներին վերաբերող տրվյալները,
- քարտեզագրական նյութերը (տեղագրական, հողային, երկրաբանական և այլ քարտեզներ),
- հողագիտական, երկրաբուսաբանական և այլ հետազոտական նյութերը,

- հեռահար զննման նյութերը:

Ըստ դիտարկումների տևողության՝ կարող է օգտագործվել հետեւյալ տեղեկատվությունը՝

- ելակետային տեղեկություններ, որոնք հավաքվում են հողերի առկայությանը վերաբերող տվյալների բանկի ստեղծման պահին (հողերի քաշխում, որակ, զնահատում և այլ նյութեր),
- պարբերաբար հավաքվող տեղեկություններ (օրինակ՝ հինգ տարին մեկ անգամ),
- հողերի մոնիթորինգի տվյալներ,
- հողերի հիմնական որակական հատկությունների երկարամյա դիտարկումների, գյուղատնտեսական արտադրությանը վերաբերող վիճակագրական, օդերևութաբանական դիտարկումների տվյալներ:

7. Ըստ նշանակության և բովանդակության՝ հողերի հաշվառման փաստաթղթերը լինում են հիմնական, օժանդակ և առաջնային (նկ. 14):



Նկ. 14:

8. Հողերի հաշվառման հիմնական փաստաթղթերը կազմվում են հողային հարաբերությունների յուրաքանչյուր սուբյեկտի և օբյեկտի մասին հաշվառման լրիվ տեղեկատվություն տալու նպատակով: Հաշվառման հիմնական փաստաթղթեր են համարվում հողասեփականության (հողօգտագործման) հատակագիծը (քարտեզը) և գրանցման մատյանը, որտեղ, քայլ հողերի քանակական և որակական բնութագրումից, ամփոփված են հողերի գրանցման, բոնիտման և տնտեսական գնահատման տվյալները:

9. Հողասեփականության (հողօգտագործման) մակարդակով հիմնական հաշվառման փաստաթուղթ է հողերի պարզաբանագիրը կամ հողահանդակների տեղեկագիրը, որը ներկայացված են բոլոր հողերի տեսակների և տարատեսակների քանակական հաշվառման տվյալները: Այդտեղ պետք է գրանցվեն բոլոր այն տվյալները, որոնք ամփածեցտ են՝

հանրապետության մարզերի և տարածաշրջանների հողերի առկայության և բաշխման մասին հաշվետվություն կազմելու համար:

Հողերի առկայության և բաշխման մասին հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը) հողերի վերաբերյալ վիճակագրական հաշվետվության միասնական ձև է, որը պարտադիր է բոլոր մակարդակների տարածքային ստորաբաժանումների համար (ձև 22 և հաշվետվություն):

10. Օժանդակ փաստաթղթերը լրացնում և պարզաբանում են հիմնական փաստաթղթերում բերված տեղեկությունները: Օժանդակ փաստաթղթեր են հողօգտագործողների ցուցակը, աշխատանքային տեսրերը, հաշվետվություններին կից հավելվածները, բացատրագրերը, ակնարկները, քարտագրամները, դիագրամները:

11. Առաջնային փաստաթղթերն արտահայտում են գործի փաստացի վիճակը և անհրաժեշտ են հողերի հաշվառումը գրանցելու համար: Առաջնային փաստաթղթերը կազմվում են բնական պայմաններում աշխատանքներ կատարելու ընթացքում: Հողօգտագործման ոլորտում կատարված յուրաքանչյուր փոփոխություն պետք է հաստատագրվի առաջին փաստաթղթերում:

12. Առաջնային փաստաթղթեր են՝

- հանույթների, հատակագծերի ճշգրտման, գույքագրման, մակերևսների ստուգիչ չափումների նյութերը, մակերեսների հաշվառման տեղեկագրերը,
- հողագիտական, ագրոքիմիական, մելիորատիվ, երկրաբուսաբանական հետազոտությունների, հողաշինարարության և անտառաշինության նյութերը,
- տեխնիկական, հաշվապահական և վիճակագրական հաշվառման տվյալները:

13.2. ՀԵՐԹԱՊԱՀ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՎԱՐՈՒՄԸ

Հողամասերի կադաստրային համարների պատկերման և պետական հողային կադաստրի վարման համար կազմվում է հերթապահ կադաստրային քարտեզ, որի վրա նշվում են կադաստրային հաշվառման օբյեկտները:

Հերթապահ կադաստրային քարտեզի վարումը հնարավորություն է տալիս՝

- անցկացնել հողամասերի հաշվառում,
- հողամասերին տալ կադաստրային համարներ,
- մշտապես հետևել հողամասերի ձևերի և բնութագրերի փոփոխություններին,
- բացահայտել հողամասերի սեփականատերերին և օգտագործողներին,
- բացահայտել չօգտագործվող կամ ոչ նպատակային օգտագործվող հողամասերը,
- հողաշինարարության և քաղաքաշինության փաստաթուրերի հիման վրա իրականացնել հողատնտեսական կառուցվածքի փոփոխությունների պլանավորում:

Հողամասերի կադաստրային համարակալումը կատարվում է տարածքի կադաստրային քաժաննան համակարգի հիման վրա: Համայնքի ամբողջ տարածքը քաժանվում է առանձին կադաստրային քաղամասերին:

Որոշակի կարգով ձևավորված կադաստրային քաղամասերը, որպես համեմատաբար կայուն միավորներ, կազմում են կադաստրային զանգվածներ: Դրա նպատակն է համայնքների տարածքում ապահովել հողամարդ գտնելու առավել պարզ ձևը: Հերթապահ կադաստրային քարտեզներում այդ օբյեկտները պատկերելն անհրաժեշտ է, որպեսզի կադաստրային միավորների սահմանում որոշվի հողամասի կադաստրային համարը և դրա տեղադրվածությունը:

Տարածքային գոտիներին են պատկանում կադաստրային հետեւյալ օբյեկտները՝

- վարչատարածքային միավորները (կազմավորումները),
- հատուկ կարգավիճակով օգտագործվող հողերի գոտիները,
- հողերի կատեգորիաների գոտիները,
- տնտեսական գոտիները,
- հողերի որակական հատկությունները բնութագրող գոտիները:

Վարչատարածքային միավորների գործողության գոտին որոշվում է վարչական միավորների տարբեր կազմավորումների սահմաններում:

Հասուկ կարգավիճակով օգտագործվող հողերի գոտին որոշվում է այն հողամասերի կամ դրանց մի հատվածի սահմաններում, որտեղ պետական օրենքների և այլ նորմատիվային ակտերի հիման վրա հողօգտագործումն իրականացվում է սահմանափակումներով:

Հողերի կատեգորիաների գոտիները որոշվում են ՀՀ հողային օրենսդրությամբ հաստատված, ըստ նպատակային նշանակության առանձնացված տարածքների սահմաններով:

Տնտեսական գոտիները վարչատարածքային միավորների սահմաններում որոշակի կարգով առանձնացված տարածքներ են, որը գործում են հողամասերի և անշարժ գույքի այլ օբյեկտների նկատմամբ հողի հարկը, վարձակալական վճարների չափերը և հողի նորմատիվային գները՝ հաստատված պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից:

Հողերի որակական հատկությունները բնուրագոտ գոտիները որոշվում են դրանց մեջիրատիվ վիճակի, հողի կազմի, ուղղման պայմանների, հողերի աղտոտվածության և այլ ցուցանիշներով:

Հերթապահ կաղաստրային քարտեզի վարումն իրականացվում է նորմատիվային փաստադրերով սահմանված կարգով՝ ըստ որի քարտեզագրական նյութերի վրա նշանակվում են կաղաստրային հաշվառման օբյեկտների սահմանները և կատարվում նակագրություններ:

Հերթապահ կաղաստրային քարտեզի վրա նշվում են հողակադաստրային հաշվառման նյութ օբյեկտները, ինչպես նաև այն փոփոխությունները, որ կատարվել են արդեն իսկ պատկերված օբյեկտներում: Այդ օբյեկտների պատկերումը հերթապահ կաղաստրային քարտեզի վրա կատարվում է սահմանված կարգով և հրահանգներով:

Հերթապահ կաղաստրային քարտեզի հիմքն է հիմնական կադաստրային քարտեզը:

Համապատասխան մասշտարի քարտեզի վրա՝ ընդունված կարգի համաձայն, պատկերվում են կաղաստրային օբյեկտների սահմանները: Այդ դեպքում հաշվառման օբյեկտների կաղաստրային համարների արտացոլումը պարտադիր է:

Հերթապահ կաղաստրային քարտեզը քարտեզների թերթերի համակարգ է, որը կազմվում է վարչական բոլոր կազմավորումների տարածքների համար՝ միասնական կաղաստրային ցանցով: Քարտեզների թերթերի դասավորությունը իրականացվում է ընդունված կարգով: Այդպիսի համակարգը հնարավորություն է տալիս համապատասխան մասշտարի քարտեզի վրա ամբողջությամբ պատկերել կաղաստրային հաշվառման օբյեկտը:

Հերթապահ կաղաստրային քարտեզը կարող է բաղկացած լինել միջամայնքային տարածքների, բնակավայրերի և այլ կառուցապատ-

ված տարածքների (օրինակ՝ այգեգործական ընկերությունների) քարտեզներից:

Վարչական կազմավորումների հերթապահ կադաստրային քարտեզի քարտ-սխեմաների ստեղծման գործընթացն ընդգրկում է վեց փուլ (նկ. 15):

Վարչական կազմավորման, բնակավայրի և այլ կառուցապատված տարածքների սահմանների անցկացում 1:100000-1:500000 մասշտարով և նշում:

Հիմնական տեղական կողմնորոշչների անցկացում (գետեր, խոշոր լճեր, հիմնական ճանապարհներ, ռելիեֆի խոշոր ձևեր և այլն):

Վարչական տարածքների սահմանազատման նախագծի անցկացում՝ կոորդինատների տեղական համակարգի համաձայն:

Հերթապահ կադաստրային քարտեզի թերթերի նույնացման համակարգի մշակում:

Հերթապահ կադաստրային քարտեզի թերթերի նույնացման իրականացում:

Հերթապահ կադաստրային քարտեզի թերթերի նույնացման մեթոդների շարադրում:

Նկ. 15. Կադաստրային քարտեզի քարտ-սխեմայի կազմումը:

Հերթապահ կադաստրային քարտեզի թարմացումը կատարվում է հետևյալ դեպքերում՝

- պլանշետների հնացման պատճառով,
- երբ հերթապահ կադաստրային քարտեզի փոփոխման համար կուտակված տվյալները գերազանցում են դրա բովանդակության 30-40%-ը,
- գույքագրման աշխատանքներից հետո,
- հերթապահ կադաստրային քարտեզի թերթերի մասշտարի փոփոխման որոշումն ընդունելուց հետո,
- տեղանքը ավելի ճիշտ և մանրակրկիտ պատկերող քարտեզագրական նյութերի ի հայտ գալուց հետո,
- հերթապահ կադաստրային քարտեզի թերթերի արխիվացումից հետո:

Հերթապահ կադաստրային քարտեզի թարմացումը կարող է կատարվել բոլոր թերթերի, առանձին թերթի և առանձին պլանշետների առումով, եթե ծենքը են թերթում նոր, ավելի ստույգ տվյալներ կամ անհրաժեշտ է լինում կազմել նոր մասշտարի քարտեզները։ Փոփոխությունները կատարվում են, եթե տեղի են ունենում օբյեկտների համապատասխան, ինչպես նաև տեղանքի օբյեկտների էական փոփոխություններ (անհայտացում, գոյացում, ձևի զգալի փոփոխություն):

Հերթապահ կադաստրային քարտեզի փոփոխությունը կատարվում է եղած օբյեկտի կամ դրա մի մասի հեռացման և նոր օբյեկտի կամ դրա մի մասի պատկերման միջոցով։ Հեռացումը կատարվում է համապատասխան հատվածը ներկելու կամ ջնջելու միջոցով։

Հերթապահ կադաստրային քարտեզի բացատրագրում կատարվում են փոփոխությունների վերաբերյալ համապատասխան նշումներ։

ՀՈՂԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հողը, լինելով բնության օրյեկտներից մեկը, ունի այնպիսի հատկություններ, որոնք կարող են գնահատվել որոշակի ցուցանիշներով։ Ըստ օգտագործման նպատակային նշանակության՝ հողերի հատկությունները լինում են տարրեր։ Օրինակ՝ անտառի հիմնան և աճեցման համար հողերը տարրերվում են զյուղատնտեսական մշակաբույսերի համար նախատեսված հողերից։ Այդ պատճառով է տարրեր նպատակային նշանակության հողերի գնահատման մերողական մոտեցումները նոյնապես տարրեր են։

Հողերի գնահատման տվյալներն անհրաժեշտ են՝ հողի հարկի, վարձավճարի չափերի, շուկայական գների նորմերի որոշման, անշարժ գույքի օրյեկտների շուկայական հարաբերությունների պետական կարգավորման, ինչպես նաև հողերի արդյունավետ օգտագործման հնարավորությունների բացահայտման, դրանց օգտագործման և պահպանման հանդեպ պետական վերահսկողություն իրականացնելու, զյուղատնտեսական արտադրության տեղաբաշխումն ու զարգացումն ապահովելու համար։

Նշված խնդիրները ճիշտ և գիտականորեն հիմնավորված կարող են լուծվել, եթե կատարվեն համապատասխան ուսումնասիրություններ, մասնագիտական հետազոտություններ և հատուկ որակական և տեսուսական գնահատման աշխատանքներ՝ հողերի որակական հատկությունները պարզելու համար։ Հողի որակը որոշվում է երկու բաղադրիչներով՝ բերրիությամբ և տեղաբաշխվածությամբ։

ԲԵՐՐԻՈՒԹՅՈՒՆԸ հողի այն հատկությունն է, որը բավարարում է բույսերի պահանջը անհրաժեշտ սննդանյութերի ու խննավորթյան նկատմամբ։ Տարրերում են բնական և արհեստական (ձեռքբերով) բերրիություն հասկացությունները։

ԲՆԱԿԱՆ ԲԵՐՐԻՈՒԹՅՈՒՆԸ ձևավորվում է որոշակի բնակիմայական պայմաններում՝ երկարատև գործընթացի արդյունքում։ Տեղի է ունենում սննդանյութերի կուտակում, ընդ որում՝ դրանց քանակը տարրեր է և կախված է բնակիմայական պայմաններից։ Սի դեպքում՝ բույսերը հեշտ են յուրացնում սննդանյութերը, իսկ մյուս դեպքում՝ վերջիններս նաև չեն կարող յուրացվել՝ բնական որոշ գործոնների բացակայության պատճառով։ Օրինակ՝ խննավորթյան բացակայության դեպքում չեն կարող օգտագործվել հողում եղած սննդանյութերի պաշարները։ Ուստի նման բերրիությունը կոչվում է **պոտենցիալ**։

Արհեստական բերրիությունը ստեղծվում է մարդու աշխատանքի արդյունքում (հողերի բարելավում, մշակում, պարարտացում և այլն):

Տնտեսական (արդյունավետ) բերրիությունը ստեղծվում է կենդանի և նյութականացված աշխատանքի ներդրման շնորհիվ: Ներկայումս անհնար է տարբերակել բնական և արհեստական բերրիությունը: Օրինակ՝ մինչ յուրացումը աճօգտագործելի հողերն ունեին միայն բնական բերրիություն: Այդպիսի հողերի վարի և պարարտացման շնորհիվ տեղի ունեցավ բնական և արհեստական բերրիության զուգակցում, ինչն առաջացրեց տնտեսական բերրիություն:

Որոշ դեպքերում էլ՝ հողի չիմնավորված և ոչ ճիշտ օգտագործման արդյունքում (օրինակ՝ վարի կամ մելիորացիայի հետևանքով առաջանում է հողատարում և գերխոնավացում) իշնում է բնական բերրիության մակարդակը: Այսպիսով՝ լրացողի ներդրումները ոչ միայն չեն բարձրացնում արհեստական և տնտեսական բերրիությունը, այլև նվազեցնում են այն:

Բերրիությունը **փոփոխվող** ցուցանիշ է: Բազմաթիվ գործոնների ազդեցության տակ այն բարձրանում կամ իջնում է: Օրինակ՝ արդյունաբերության, տրանսպորտի և այլ օբյեկտների թափոններով հողի աղտոտման հետևանքով հսկայական տարածություններ կարող են դրւս գալ զյուղատնտեսական օգտագործումից, քանի որ այդ տարածքներից ստացված արտադրանքը դառնում է սննդի համար ոչ պիտանի: Այդ դեպքում կարելի է ասել, որ հողի պոտենցիալ բերրիությունը բարձր է, իսկ տնտեսականը՝ բացակայում է:

Հողի բերրիությունը կարելի է որոշել միավոր տարածությունից գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությանը (բացարձակ ցուցանիշներ), ինչպես նաև միավոր տարածության հաշվով ստացված արտադրանքի և կենդանի ու նյութականացված աշխատանքի ծախսերի հարաբերակցությանը (հարաբերական ցուցանիշներ):

Հողանասերի բերրիության վրա, բացի հողի որակից, մեծապես ազդում է տեղադրվածությունը: Հողանասերի տեղադրվածությունը բնութագրվում է այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են՝ հողերի հեռավորությունը մոտակա քաղաքից, բնակչափայից, տրանսպորտային և ճարտարագիտական հանգույցներից, մթերքի վերամշակման և իրացման կետերից, պարարտանյութերի, զյուղատնտեսական տեխնիկայի բազաներից և այլն:

Հողանասերի որակի վրա անդրադառնում են նաև հողերի տարածատեխնոլոգիական պայմանները, որոնք, ազդելով դաշտային մեքենայացված աշխատանքների, արտադրական և վառեկիքի ծախսերի նորմերի վրա, բարձրացնում են արտադրական ծախսերը: Այդ պայմաններից են դաշտի գոնի երկարությունը, հողանասի մեծությունը, ձևի բարդու-

թյունը, նասնատվածությունը, շերտընդմիջությունը, քարքարոսությունը, դաշտի թեքության աստիճանը և այլն:

Վերոհիշյալ ցուցանիշներից յուրաքանչյուրի դերի քանակական որոշման համար համար կարգով կատարվում է հողակաղաստրային գործողություն՝ հողերի գնահատում:

Հողերի գնահատման նպատակները են որոշել հողամասի որակը բնութագրող բերրիության և տեղադրվածության ցուցանիշները: Հողերի գնահատումը կատարվում է բոնիտման և տնտեսական գնահատման միջոցով:

Բոնիտմը հողերի բնական բերրիության համեմատական գնահատումն է, դրանց խմբավորումն ըստ բնախտորոշիչ հատկությունների, որոնք ազդութեանիկայի և երկրագործության համադրելի մակարդակներում ազդում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության վրա: Բոնիտման տվյալները ցույց են տալիս հողի հարաբերական պիտանիությունը՝ գյուղատնտեսական այս կամ այն մշակաբույսերն աճեցնելու համար:

Բոնիտման օբյեկտները են հողերի տեսակներն ու տարատեսակները, որոնք առանձնացվում են հողերի ազդութաղական խմբավորման ընթացքում:

Բոնիտման առարկան է հողերի կամ դրանց ազդութաղական խմբերի բնական բերրիությունը:

Բոնիտման միավորները են համարվում հողերի բնախտորոշիչ հատկությունները, որոնք եական ազդեցություն են գործում գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության վրա: Այդ հատկություններից (հատկանիշներից) են հողի հումուսային հորիզոնի հզորությունն ու բաղադրությունը, հողի մեխանիկական կազմը, սննդանյութերով ապահովածությունը, ուսակցիան և այլն:

Հողերի բոնիտման ընթացքում մանրամասնորեն վերլուծվում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության միջակայությունը և ազդող հողի ախտորոշիչ հատկությունների ազդեցության չափը և որոշվում այդ ազդեցության քանակական բնութագիրը:

Հողերի բնախտորոշիչ հատկությունների և գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության միջակայության փոխադարձ կապը հաստատվում է կոռելյացիոն վերլուծության մեթոդով:

Կոռելյացիայի գործակիցը բացահայտում է ցուցանիշների միջև գյուղություն ունեցող կապի ամրությունը, այն տատանվում է -1-ից +1 (բացասական կամ դրական կապ): Որքան այդ գործակիցը մոտ է 1-ին, այնքան ամուր է ցուցանիշների միջև կապը:

Հողի տնտեսական բերրիությունը կախված է ինչպես երկրագործության զարգացման մակարդակից, այնպես էլ կենդանի և նյութականացված աշխատանքի ծավալներից: Արտադրողական ուժերի զարգաց-

ման, արտադրության միջոցների կատարելագործման ընթացքում բարելավվում են հողերի որակական հատկությունները, զյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և հողի պոտենցիալ հնարավորությունները: Հողի տնտեսական բերրիությունը որոշվում է արտադրության արդյունքների և արտադրության ծախսերի հարաբերակցությունից:

Տնտեսական գնահատման օրիենտ են հանդիսանում նպատակային տարրեր նշանակությամբ օգտագործվող հողերը: Անօգտագործելի հողերը կարող են գնահատվել տարրեր նպատակների համար դրանց պոտենցիալ օգտագործման հնարավորությունների տեսանկյունից (հողամասերի պոտենցիալ հնարավորությունների գնահատում):

Տնտեսական գնահատման առարկա է հողի տնտեսական (արդյունավետ) բերրիությունը և հողամասի տեղադրվածությունը:

Տնտեսական գնահատման միավոր է համարվում տարրեր բերրիություն և տեղադրվածություն ունեցող հողամասերից ստացված արտադրանքի մեծությունը, արտադրության համար կատարված ծախսերը, հողային ռենտան և հողի գինը:

Հողերի որակը որոշվում է տարրեր բերրիություն և տեղադրվածություն ունեցող հողերի վրա կատարված հավասարամեծ ծախսերի արդյունավետությամբ: Հողերի տնտեսական գնահատման ընթացքում ուշադրություն է դարձվում այն արտադրական ծախսերին, որոնք ներկայացնում են որոշակի խնդիր հողերին: Դրանք համապատասխան բնատնտեսական պայմանների համար հասարակայնորեն անհրաժեշտ արտադրական ծախսեր են:

Հողերի գնահատման ընթացքում տեղեկատվական հիմնական և հավաստի աղբյուր են հողային հարաբերությունների վիճակագրական հաշվետվությունը, հողերի ստրուկտորան, հողային երկրաբուսարանական, ազդուտնտեսական, քարտեզագրական և այլ հետազոտական նյութերը, որոնք ներկայացվում են բացատրագրերի, քարտեզների, գրաֆիկների, սխեմաների տեսքով:

Հողերի գնահատման համար ելակետային տեղեկատվության ստացման ճշգրիտ եղանակ է համարվում զյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, դրանց վրա կատարվող ծախսերի և հողի հատկությունների փոփոխությունների ուղղակի հաշվառման մեթոդը:

Հողերի գնահատման տվյալների հիմնան վրա կազմվում է գնահատման քարտեզ, որի հիմնական նպատակն է՝ գրաֆիկական հիմք ստեղծել զյուղատնտեսական հողատեսքերի և բնակավայրի սահմաններում գտնվող հողերի հարկի, քարձավճարի չափերի, հողային այլ հարաբերությունների կարգավորման համար: Ըստ զյուղատնտեսական հողատեսքերի (վարելահող, բազմամյա տնկարկ, խոտհարք, արոտ), քարտեզի վրա տրվում է յուրաքանչյուր գնահատվող հողամասի համարը, գնահատման խումբը, տեղադրվածությունը, գնահատման բալերը, մակերեսը

(հա) և այլ տեղեկություններ: Հողերի գնահատման քարտեզը կազմվում է համայնքների, գյուղատնտեսական ձեռնարկությունների և այլ խոշոր հողօգտագործողների տարածքի սահմաններում գտնվող հողերի համար՝ ներառելով բնակավայրի տարածությունը:

Գնահատման քարտեզը կազմվում է բալային, ընթացիկ, գրաֆիկական տեղեկատվության, հողերի գույքագրման, կադաստրային քարտեզների, տարածքի դաշտային հետազոտությունների նյութերի հիման վրա:

Գյուղատնտեսական հողատեսքերի գնահատման քարտեզները կազմում են 1:5000 և 1:10000 մասշտաբով: Քարտեզագրման առաջնային միավոր են համարվում միանման բնական պայմաններ ունեցող հողամասերը (գյուղատնտեսական հողատեսքերի մի մասը):

Գնահատման քարտեզներ կարող են մշակվել առանձին բնակավայրի տարածքի համար (քաղաք, ավան, գյուղ, վարչական մարզ): Գնահատման ընդհանրացված ցուցանիշների հիման վրա կազմվում են հանրապետության և մարզերի հողերի գնահատման տարբեր մասշտարի և բովանդակության քարտեզներ:

ՀՈՂԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ԲՈՆԻՏՈՒՄ)

15.1. ՀՈՂԵՐԻ ԲՈՆԻՏՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Բոնիտումը հողերի որակական, համեմատական գնահատումն է: Այն պետական հողային կադաստրի բաղկացուցիչ նաև է, հանդես է գալիս որպես հողերի որակական հաշվառման գործընթաց և գնահատման սկզբնական փուլ: Բոնիտման նպատակն է բացահայտել յուրաքանչյուր հողակտորի բնական բերրիությունն ու պիտանիությունը գյուղատնտեսական մշակաբույսերի համար՝ ազդուկողոգիական այս կամ այն գործոնների համալիր ազդեցության պայմաններում: Հողերի գնահատումն արտահայտվում է համեմատական հարաբերական ցուցանիշներով՝ բարերով, որոնք ցույց են տալիս, թե գյուղատնտեսական այս կամ այն մշակաբույսի աճեցման համար որքանով է մեկ հողակտորը լավ կամ վատ մյուսից: Բոնիտումը կատարվում է ըստ հողօգտագործողների, հողասեփականատերերի, սեփականաշնորհված հողաբաժինների, համայնքի ամբողջ հողօգտագործման պայմանների՝ հողերի որակական գնահատմանն առաջարկվող պահանջները լրիվ բավարարելու համար: Հետագայում այն ամփոփվում է վարչական տարածքների, մարզերի և հանրապետության մասշտարով: Նշված խնդիրը լուծելու նպատակով, գնահատման ենթակա յուրաքանչյուր հողակտորի բնութագրման համար, օգտագործվում է հողի հիմնական հատկություններին, կիմայական պայմաններին և հիմնական մշակաբույսերի բերքատվությանը վերաբերող բազմազան տեղեկատվություն:

Հողային կադաստրի վարման համակարգում բոնիտումը կատարվում է միասնական ծրագրով՝ հանրապետության հողերի տնտեսական գնահատման աշխատանքներին զուգահեռ, նախօրոք մշակված տարածքի կադաստրային շրջանացման սխեմայի հիման վրա: Աշխատանքներն ընթանում են երկու փուլով: **Առաջին փուլում** կատարվում է հանրապետության հողերի գնահատման խոշոր միավորների՝ հողագնահատման շրջանների գյուղատնտեսական հողատեսքերի որակական գնահատում, գնահատման սանդղակների ու գործակիցների մշակում: **Երկրորդ փուլում** կատարվում է հանրապետության սուբյեկտների՝ վարչատարածքային միավորների (մարզի, շրջանի, համայնքի, սեփականատերերի, հողօգտագործողների) գյուղատնտեսական հողատեսքերի գնահատում (բոնիտում):

Բոնիտման գիտական հիմքն են խոշորամասշտար հողագիտական հետազոտական թարմ նյութերը, իսկ օրյեկտը՝ այդ հետազոտությունների հիմքն վրա տարանջատված հողային միավորները՝ տիպը, ենթատիպը, տեսակը, տարատեսակը և այլն:

Բոնիտման համար օգտագործվում են հողերի հիմնական հատկություններին և մորֆոլոգիական հատկանիշներին վերաբերող այն տվյալները, որոնք համեմատաբար հաստատուն են և ժամանակի ընթացքում դանդաղ են փոփոխվում: Այդ ցուցանիշներից են հումուսի պարունակությունը, հումուսային հորիզոնի հզորությունը, ջրակայուն ազրեգատների և կլանված կատիոնների գումարը, հողային լուծույթի ռեակցիան, հողի մեխանիկական կազմը, աղակալման աստիճանը, կարրոնատությունը: Այդ ցուցանիշները բերվում են համայնքների խոշորամասշտար հողագիտական հետազոտությունների հաշվետվորյուններում:

Հողի հատկություններն ու հատկանիշները, ինքնին, անմիջականորեն հողի բերրիության և մշակաբույսերի բերքատվության գործուներ չեն: Դրանք սերտ կապի մեջ են գտնվում միջավայրի, ռելիէֆի, կլիմայի, հիդրոերկրաբանական և այլ պայմանների հետ և կախված են հողում տեղի ունեցող ֆիզիկական, ֆիզիկաքիմիկական և կենսաբանական երեւույթների ցուցանիշներից՝ որպես բերրիության պայման: Վերջիններիս վրա ազրում են երկրագործության կուլտուրան, նյութական և աշխատանքային ծախսումների մակարդակն ու այլ պայմաններ:

Այդ ցուցանիշները ձեռք են բերվում տեղեկատվական աղբյուրներից, գիտահետազոտական նյութերից, տնտեսական գործուներության հաշվետվորյուններից, ինչպես նաև ստացվում են փորձնական ծանապարհով՝ դաշտային պայմաններում կատարված ծախսերի ուղղակի հաշվառումների, դիտարկումների միջոցով:

Համբապետության տարածքի լեռնային ռելիէֆի պայմաններում առավել ցայտուն է արտահայտված բնակլիմայական գործուների ուղղաձիգ գոտիականությունը, որտեղ ջերմության և խոնավության անհավասարաչափ ապահովածությունը հանգեցրել է հողային ծածկույթի խայտարղետությանը, հետևապես՝ նաև բերրիության տարբեր մակարդակներին: Այս հանգանաքը ստիպում է, որպեսզի հողերի բոնիտման ընթացքում, քացի հողային հատկություններից, հաշվի առնվի յուրաքանչյուր բնական գոտու (գնահատման շրջանի) կլիմայական գործուների այն համալիրը, որը սերտ կապ է ստեղծում հողերի հատկությունների և դրանց վրա մշակվող բույսերի բերքատվության միջև: Կլիմայական կարևոր գործուներից են մքննորդտային տեղումների քանակը, ջերմությունը, ոչ սառնամանիքային օրերի թիվը, խոնավացման գործակիցը և այլն:

Տարբեր բնակլիմայական գոտիներում հողերի բերրիությունը պայմանավորող գործուների կազմը և հարաբերակցությունը փոփոխվում են:

Դրա հետ մեկտեղ փոփոխվում են նաև բերքատվության վրա ազդող գործոնները: Բոնիտման ընթացքում հողերի մորֆոլոգիական-ծագումնաբանական հատկությունների հիման վրա ստացված բոնիտման ցուցանիշների հետ:

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը պայմանավորված է, մի կողմից, բնակլիմայական և հողային գործոններով, մյուս կողմից՝ աշխատանքային ու արտադրական ծախսումներով: Այս երկու խումբ գործոններն ազդում են բերքատվության վրա համատեղ, միաժամանակ և կախված են միմյանցից: Ուստի կարելի է համարել, որ հողերի բոնիտման ընթացքում համարելի բերքատվությունը բերրիության առավել հուսալի և համալիր ցուցանիշն է:

Բերքատվության ցուցանիշների օգտագործման հնարավորություններն, ըստ հողերի առանձին տեսակների, շատ սահմանափակ են, քանի որ խայտարդետ հողային ծածկույթի առկայության պայմաններում յուրաքանչյուր հողամասի համար հնարավոր չէ ճեռք բերել համապատասխան տվյալներ: Հարցը լուծում են միանման կամ իրար մոտ հատկություններ ու բերրիության ցուցանիշներ ունեցող հողերի խմբավորման և մաքենատիկական վիճակագրության մեթոդներով՝ այդ խմբերի բերքատվության ցուցանիշները ընդհանրացնելու ճանապարհով, որոնք հետագայում հաշվարկվում են առանձին հողերի համար:

Բերքատվության տվյալների հավաքումը և հաշվառումն ըստ հողախմբերի կատարվում է դաշտային պայմաններում՝ բերքատվության ուղղակի հաշվառման, նմանատիպ տնտեսությունների ընտրության, համատարած հաշվառման և այլ մեթոդներով: Ըստ հողի հատկությունների՝ մշակաբույսերի բերքատվության և կատարված ծախսերի ուղղակի հաշվառման մեթոդիկան մշակվում է առանձին:

Հողերի բոնիտման ցուցանիշները և գնահատման սանդղակները կազմվում են բույսերի աճի ու զարգացման վրա ազդող հողային և կիմայական պայմանների վերլուծության հիման վրա:

Հողերի բոնիտման աշխատանքները կատարվում են հետևյալ փուլերով՝

- գոյություն ունեցող նյութերի, տվյալների հավաքում և նախնական մշակում,
- հողերի մորֆոլոգիական-ծագումնաբանական հատկությունների, կլիմայական պայմանների և գյուղատնտեսական մշակաբույսերի վերաբերյալ տվյալների մշակում և կարգավորում, դրանց միջև գոյություն ունեցող ազդեցության կապի բացահայտում,
- բոնիտման սանդղակի կազմում ըստ կադաստրային շրջանների,
- բոնիտման հանրապետական սանդղակի կազմում,

- հողօգտագործողների, հողասեփականատերերի և այլ սուբյեկտների հողերի բռնիտում,
- բացատրագրերի և աղյուսակային նյութերի պատրաստում:

15.2. **ՓԱՍՏԱՑԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄՆ ՈՒ ՆԱԽՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ**

Հանրապետության հողերի բռնիտման համար անհրաժեշտ են հետևյալ նյութերը՝

- մարզերի, տարածաշրջանների, համայնքների լրիվ ճշտված ցուցակը,
- համայնքների հողասեփականատերերի ցուցակը, նրանց կողմից օգտագործվող հողերի, հողատեսքերի տարածությունը,
- հողօգտագործողների և հողասեփականատերերի հողային քարտեզների վրա առանձնացված հողերի կարգաբանական ցուցակն ըստ հողատեսքերի,
- հողերի լարորատոր անալիզների և մորֆոլոգիական հատկանիշների նկարագրության տվյալները, որոնք ներկայացված են հողային հաշվետվություններում և գրականության աղբյուրներում,
- հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների և բերքատվության վերաբերյալ տվյալները, որոնք հավաքվում են ըստ հողասեփականատերերի՝ նախօրոք նշելով դրանց տեղը յուրաքանչյուր գնահատման շրջանին բնորոշ հողօգտագործման համար,
- հողերի պարարտացման, քիմիացման, բարելավման, մշակման ներենայացման մակարդակի և տեղադրվածության (հեռավորության) վերաբերյալ տվյալները,
- հանրապետության տարածքի հողագնահատման, հողային, կլիմայական, ռելիէֆային և այլ մասնագիտական քարտեզները:

Հողերի ծագումնաբանական և ագրոարտադրական հատկությունների վերաբերյալ հավաքվում է հնարավորինս ընդարձակ տեղեկատվություն, որը պետք է ընդգրկած լինեն տվյալ հողօգտագործման կարգաբանական ցուցակի բոլոր միավորները: Յուրաքանչյուր հողամասի համար ընտրված տվյալները ենթարկվում են մաթեմատիկական մշակման, դուրս է բերվում դրանց միջինը: Հողերի հատկությունների վերաբերյալ անհրաժեշտ ցուցանիշների քանակը կախված է տվյալ տարածքի այս կամ այն գնահատման շրջանում գտնվելու հանգամանքներից:

Հիմնական ցուցանիշներն են՝

- հումուսի պարունակությունը վարելաշերտում,
- հումուսային հողիզոնի հզորությունը,
- ֆիզիկական կավի պարունակությունը,
- լուսակած կատիոնների գումարը,
- ջրակայուն ազքեզատների քանակը,
- հողի այլ հատկությունների վերաբերյալ ցուցանիշները՝ հողատարումը, քարքարոտությունը, աղակալումը, ցեմենտացումը և այլն, որոնք խիստ բացասաբար են անդրադառնում մշակաբույժների աճի ու զարգացման վրա:

Ելնելով բոնիտման ենթակա հողերի տարածքային առանձնահատկություններից՝ վերոհիշյալ ցուցանիշների համակարգը կարող է փոխվել՝ այս կամ այն հատկությունը կարող է որևէ մնալ կամ ավելանան նորերը:

Հստ գնահատման շրջանի՝ հավաքվում և մշակվում են հիմնական մշակաբույժների բերքատվությանը վերաբերող տվյալները, որոնք խմբավորվում են ըստ հողօգտագործողների և սեփականատերերի, այն հաշվով, որ այդպիսի արտադրական միավորների հողային ծածկույթը լինի համեմատաբար միատարր, կամ գերակշռող հողատեսակի գրաված տարածքը լինի 60-70%-ից պակաս: Հանրապետությունում դրանք են հացահատիկային, բանջարաբոստանային մշակաբույժները, բազմամյա, միամյա խոտաբույժները, կարտոֆիլը և այլն:

Բոնիտման սանդղակներ կազմելու ժամանակ հիմք են ընդունվում հացահատիկային մշակաբույժների բերքատվության ցուցանիշները:

Հավաքվում են տեղեկություններ՝ հողերի պարարտացման, հիմնական միջոցների արժեքի և բարեկաված հողերի վրա կատարված ծախսերի, դրանց արդյունավետության վերաբերյալ և այլն:

Բոնիտման նախապատրաստական փուլում ճշգրտվում են նախկինում մշակված հողագնահատման շրջանացման նյութերը:

Բոնիտման ընթացքում որոշ հողերի (հատկապես՝ քիչ տարածված) գնահատման հաճար փաստացի տվյալները հաճախ անբավարար են լինում: Նման դեպքում օգտվում են տարբեր բնույթի ուղղման գործակիցներից, օրինակ՝ ըստ հողերի մեխանիկական կազմի, հողատարման, քարքարոտության, աղակալման աստիճանի, գերխոնավացման և այլն:

Ելնելով հողերի գնահատման նախորդ փուլերի աշխատանքային փորձից՝ ուղղման գործակիցները որոշվում են փորձնական ճանապարհով և գրականության տվյալների հիման վրա:

Բոնիտման ընթացքում հավաքվում և վերլուծվում են բույսերի աճի ու զարգացման վրա ազդող կիմայական գործոնները՝

- մթնոլորտային տեղումների քանակը,
- 10°C -ից բարձր ջերմաստիճանի ընդհանուր գումարը,

- ոչ սառնամանիքային օրերի թիվը,
- խոնավացման գործակիցը:

Հողերի որակական հաշվառումն ու գնահատումը կատարվում են հողաշինարարական, կադաստրային քարտեզների, ինչպես նաև հողագիտական, երկրաբուսարանական, ազրումնելիորատիվ և այլ հետազոտական տվյալների հիման վրա: Դրանք ստացվում են հողերի լաբորատոր հետազոտությունների արդյունքում, հաշվի են առնվում նաև բնական կերահանդակների խոտակազմի քանակական և որակական ցուցանիշները:

Եթե հողերի կադաստրային գնահատման տվյալ փուլում նախկինում կատարված հետազոտությունների նյութերը՝ վաղեմության ժամկետն անցնելու պատճառով, կորցրել են իրենց նշանակությունը, և հողերի բնուրագիրը չի համապատասխանում իրական վիճակին, այդ դեպքում կատարվում են հողային հետազոտությունների ճշգրտման դաշտային աշխատանքներ՝ հանրապետությունում մշակված համապատասխան մեթոդիկայով և հրահանգներով:

Հողերի գնահատման դաշտային հետազոտությունների ընթացքում որոշվում են այն հիմնական հատկությունները, որոնցով պայմանավորվում է բերրիությունը:

15.3. ՀՈՂԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴԱԿԱՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Հողը երկրի հողմահարված վերին կեղևի փիսրուն մասն է, որն օժտված է բերրիությամբ: Յուրաքանչյուր բնակլիմայական գոտում առաջանում են ծագումնաբանական առանձին հողատիպեր, ենթատիպեր, տեսակներ ու տարատեսակներ, որոնք հողի կտրվածքի կառուցվածքով, ֆիզիկաքիմիական ցուցանիշներով, ազրուարտադրական հատկություններով, բերրիությամբ տարբեր են և հանրապետության լեռնային ռելիեֆի ու կիմայի պայմաններում կրում են գոտիական բնույթը:

Հողի տիպը: Տարբեր բնակլիմայական գոտիներում, ըստ հողառաջացման երևույթների բնույթի, ձևավորվում են տարբեր ստրուկտուրա ունեցող հողեր: Դրանց ախտորոշումով առանձնացվում են տիպերն ու ենթատիպերը, որոնք հողերի կարգաբանության հիմնական միավորներն են: Յուրաքանչյուր տիպի մեջ մտնում են հողառաջացման նմանատիպ պայմաններում զարգացող հողեր, որոնք ունեն միևնույն կտրվածք, հորիզոնների որոշակի դասավորություն, ձեռք են բերել բերրիության և արտադրողականության միևնույն ցուցանիշներ: Գլխավոր հողատիպերից են սևահողերը, շագանակագույն հողերը, անտառային դարչնագույն, վաղեմի ոռոգելի գորշ հողերը և այլն:

Հողերի դասակարգման բարձր միավոր է համարվում հողի տիպը։ Հողերի գնահատման առաջին փուլում հանրապետության տարածքում զարգացող հողատիպերի համար կազմվում է որակական գնահատման՝ բոնիտման հիմնական սանդղակ (աղ. 9):

Աղյուսակ 9

ՀՀ հողերի գենետիկական տիպերի և ենրատիպերի գնահատման հիմնական սանդղակ

Գենետիկական տիպը	Ենթատիպը	Գնահատման բար
Լեռնամարգագետնային	- ճմատորֆային - ճմային - թույլ ճմային	-
Լեռնային մարգագետնատափաստանային	- սևահողաննան - տիպիկ	90 85
Անտառային գորշ	- ուժեղ չհագեցված - թույլ չհագեցված	50 55
Անտառային ճմակարբոնատային	- կրագերծված - տիպիկ	55 60
Անտառային դարչնագույն	- կրագերծված - տիպիկ - կարբոնատային	55 60 70
Մարգագետնասևահողային	չի տարանջատվում	95
Սևահող	- կրագերծված - տիպիկ - կարբոնատային	95 100 85
Գետահովտադարավանդային	- ճահճամարգագետնային - մարգագետնային - մարգագետնացված	55 65 60
Շագանակագույն	- բաց շագանակագույն - տիպիկ - մուգ շագանակագույն	55 60 70
Կիսանապատային գորշ	տիպիկ	50
Ոռոգելի մարգագետնային գորշ	- ոռոգելի խոնավ մարգագետնային - ոռոգելի մարգագետնային - ոռոգելի մնացորդային գորշ	84 95 100
Հիդրոմոքաղութակային		
Պալեոհիդրոմոքաղութակացված ալկալիացված		
Սևանա լճի հողագունտներ		

Հաջորդ փուլում մշակվում են հողերի բերրիության վրա ազդող դրական ու բացասական հատկությունների սանդղակներ և ուղղման գործակիցներ:

Հողի հզորությունը: Բերրիության հիմնական ցուցանիշներից է հողի հզորությունը: Հզորությունը է կոչվում հողի մակերեսից մինչև մայրական տեսակն ընկած այն շերտը, որտեղ ընթանում է հողառաջացման ակտիվ գործողություն: Տարրեր հողատիպերի սահմաններում հողի հզորությունը տարրեր է, այն տատանվում է 0,2-2,0 մ և ավելի սահմաններում:

Հզոր հողեր են սևահողերը, անտառային դարչնագույն, ոռոգելի մարգագետնային հողերը և այլն: Սակավ հզոր են գորշ, շագանակագույն հողերը:

Հողերի հզորության գնահատման սանդղակները կազմվում են ըստ հողատիպերի: Ըստ հզորության՝ հողերը լինում են գերհզոր, հզոր, միջին հզոր և սակավագոր (աղ. 10):

Աղյուսակ 10

Հողերի գնահատումն ըստ հզորության

Հողի տիպը և ենթատիպը	Հողի հզորությունը		
	անվանումը	ցուցանիշը, սմ	գնահատականը, բար
Մարգագետնային գորշ, գորշ և շագանակագույն	հզոր	> 50	100
	միջին հզոր	30-50	80
	սակավագոր	< 30	60
Սևահող, անտա- ռային դարչնագույն տափաստանացված	հզոր	> 60	100
	միջին հզոր	40-60	70
	սակավագոր	< 40	50

Հոմոιափ պարունակությունը: Հողի կարևոր հատկություններից է օրգանական նյութերի, օրինակ՝ հումուսի պարունակությունը, որն առաջանում է հողի կտրվածքում՝ հողային միացությունների հաճախը և բարդ ձևափոխությունների հետևանքով: Հումուսի պարունակությունը տատանվում է տարրեր հողատիպերում: Այն հողի հիմնական հատկություններից մեկն է, որից կախված է հողի բերրիությունը: Հումուսով են պայմանավորված բույսերի սննդանյութերով պահովվածությունը, հողի միշտ չարք ֆիզիկաքիմիական հատկությունները և գնահատման ցուցանիշները: Ըստ հումուսով պահովվածության՝ հողերը լինում են սակավ հումուսային, միջին հումուսային և հումուսով հարուստ: Հումուսով հարուստ հողեր են համարվում սևահողերը, մարգագետնատափաստանային, անտառային դարչնագույն հողերը: Սակավ հումուսացված են գորշ, շագանակագույն հողերը և այլն:

Հողերի գնահատումն ըստ հումուսի պարունակության բերված է աղյուսակ 11-ում:

Հողերի գնահատումն ըստ հումուսի պարունակության

Հողի տիպը և ենթատիպը	Հումուսի պարունակությունը հողում		
	անվանումը	ցուցանիշը, %	գնահատականը, քալ
Մարգագետնային գորշ, գորշ և բաց շագանակագույն	բավարար	> 2	100
	միջին հումուսային	1,5-2,0	80
	սակավ հումուսային	< 1,5	70
Շագանակագույն և մուգ շագանա- կագույն	բավարար	> 3	100
	միջին հումուսային	2,5-3,0	80
	միջինից ցածր	2,0-2,5	60
	սակավ հումուսային	< 2	50
Սևահող	բավարար	> 6	100
	միջին հումուսային	4-6	70
	սակավ հումուսային	< 4	50
Անտառային դարչնագույն տա- փաստանացված	բավարար	> 4	100
	միջին հումուսային	3,0-4,0	70
	սակավ հումուսային	< 3	50

Հողի մեխանիկական կազմը: Մեխանիկական կազմը հողի կարևոր հատկություններից է, այն առաջանում է հողմահարման ընթացքում: Հողերի կտրվածքի փոխար զանգվածը բաղկացած է լինում տարբեր տրամաչափի մասնիկներից, որոնց ընդհանուր գումարը կոչվում է հողի մեխանիկական կազմ: Այդ զանգվածի մեջ ֆիզիկական կավի (0,01 մմ մասնիկների) և ավագի քանակի հարաբերակցությամբ հողերը բաժանվում են ծանր կավային, ծանր կավակազային, միջին կավակազային, թերև կա-վակազային և ավագակավային տեսակների:

Հողի մեխանիկական կազմի գնահատմամբ որոշվում են հողի բեր-րիդուրյան և արտադրողականության ցուցանիշները, քանի որ հողի մեխանիկական կազմից են կախված ֆիզիկական, ֆիզիկաքիմիական, ջրա-ջերմային, օդային և հողում ընթացող կենսաբանական բոլոր այլ երևույթ-ները:

Հողերի գնահատումն ըստ մեխանիկական կազմի բերված է աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12
Հողերի գնահատումն ըստ մեխանիկական կազմի

Անվանումը	> 0,01 մմ մասնիկների քանակը, %	Գնահատականը, բալ
Կավային	> 60	60
Ծանր կավավազային	45-60	70
Միջին կավավազային	30-45	100
Թերև կավավազային	20-30	50
Ավազակավային	< 20	20

Հողի ստրոկուրաճ: Հողի ծագումնաբանական, ազդուարյունաբերական բնութագրման և գնահատման համար ստրոկուրան կարեռ հատկանիշներից մեկն է:

Հողը բաղկացած է առանձին մասնիկներից և ազրեգատներից: Յուրաքանչյուր տիպի հողին և առանձին հորիզոններին ներհատուի են ստրոկուրայի որոշակի տեսակներ: Հողի հումուսային վերին հորիզոններին բնորոշ են հատիկային, կնձիկային, հատիկակնձիկային, փոշեհատիկային, իսկ փոխանցնան և ներքին կուտակման հորիզոններին՝ կոշտավոր, ընկուզանման, թեփուկավոր, ամրացված սյունաձև ստրոկուրաները: Հողի ստրոկուրային հատկությունների հիման վրա կազմը վում է գնահատման սանդղակ:

Գնահատման ցուցանիշները բերված են աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13
Հողերի գնահատումն ըստ ստրոկուրային վիճակի

Հողի տիպը և ենթատիպը	Անվանումը	Ջրակայուն ազրեգատների գումարը, %	Գնահատականը, բալ
Խոնավ մարգագետնային գորշ	ստրոկուրային	> 40	100
	միջին ստրոկ.	30-40	75
	թույլ ստրոկ.	< 30	60
Գորշ և բաց շագանակագույն	ստրոկուրային	> 35	100
	միջին ստրոկ.	30-35	70
	թույլ ստրոկ.	< 30	50
Շագանակագույն և մուգ շագանակագույն	ստրոկուրային	> 40	100
	միջին ստրոկ.	30-40	80
	թույլ ստրոկ.	< 30	50
Սևահող և անտառային դարչնագույն	ստրոկուրային	> 50	100
	միջին ստրոկ.	40-50	70
	թույլ ստրոկ.	< 40	50

Հողի կլանունակությունը: Սա այն հատկությունն է, որի շնորհիվ հողն ընդունում և պահպանում է այնպիսի նյութեր, որոնք շփման մեջ են մտնում դրա մասնիկների հետ: Այն օգալի չափով ազդում է հողի ֆիզիկական և քիմիական հատկությունների վրա, չափում է փոխանակվող կատիոնների (կացիումի և մագնեզիումի) գումարով՝ մգ. Էկվ. 100 գ հողում:

Կլանման բարձր ունակություն ունեն այն հողերը, որոնց կլանման համարիրում գերակշռում են կացիումի և մագնեզիումի կատիոնները: Կլանված նատրիումի առկայությունը հողերին տալիս է աղային հատկություն, իսկ ջրածնի առկայությունը՝ քրվային:

Կլանման բարձր ունակություն ունեն սևահողերը, անտառային դարչնագույն, մուգ չափանակագույն հողերը: Հողերի գնահատումն ըստ կլանված կատիոնների գումարի ($\text{Ca}+\text{Mg}$) բերված է աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14

Հողերի գնահատումն ըստ կլանված կատիոնների գումարի

Հողի տիպը և ենթատիպը	Անվանումը	Մգ. Էկվ. 100 գ հողում ($\text{Ca}+\text{Mg}$)	Գնահատականը, բալ
Խոնավ մարգագետնային գորշ և բաց շագանակագույն	ուժեղ	> 30	100
	միջին	20-30	80
	թույլ	< 20	70
Շագանակագույն, անտառային դարչնագույն տափաստանացված	ուժեղ	> 40	100
	միջին	30-40	85
	թույլ	< 30	75
Սևահողեր, գետահովտադարավանդային	ուժեղ	> 50	100
	միջին	40-50	90
	թույլ	< 40	80

Հողի ռեակցիան: Հողի ռեակցիան ծագումնաբանական և արտադրական կարևոր ցուցանիշ է հողերի գնահատման համար: Այն արտացնիշով, ըստ որի դրանք լինում են չեզոք, հիմնային և -ը 7 է, թքու հողերում՝ 7-ից ցածր, իսկ հիմնային հողերում՝ 7-ից ցածր:

3-9 սահմաններում:

Չեզոք հողեր են համարվում սևահողերը և շագանակագույն հողերը: Թույլ հիմնային և հիմնային հողեր են Արարատյան հարթավայրի խոնավ մարգագետնային, աղուտ-ալկալի հողերը, որոնց կլանված համալիրում գերակշռում է նատրիումի կատիոնները: Թույլ թքվային և թքու հողեր են անտառային գորշ, լեռնամարգագետնային, ճահճային հողերը, որոնց կլանված համալիրում գերակշռում է ջրածնի իոնը:

Բերված է աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15

Հողերի գնահատումն ըստ ջրային լուծույթի ռեակցիայի

Անվանումը	ցուցանիշը	Գնահատականը, բալ
Չեզոր	6,5-7,5	100
Թուլլ հիմնային	7,6-8,0	80
Հիմնային	8,1-8,5	60
Ուժեղ հիմնային	> 8,6	40
Թուլլ թթվային	< 6,4	80

15.4. ՈՒՂՂՍԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հողերի բոնիտման ընթացքում դրանց հատկությունների և մշակաբույսերի բերքատվության միջև գոյություն ունեցող ուղղակի կապի վերաբերյալ փաստացի տվյալների առկայության դեպքում հնարավոր է գնահատել հողամասերը: Սակայն արտադրական պայմաններում հաճախ ոչ բոլոր հողերի համար գոյություն ունեն բերրիության տարրերակված փաստացի տվյալներ: Այդ պատճառով գնահատման սանդղակները կազմվում են սահմանափակ հողերի համար:

Հանրապետության վարելահողերի բոնիտման սանդղակները կազմվում են հողերի գիսավոր տիպերի և ենթատիպերի կտրվածքով, որոնք զարգանում են ուղիեֆի հարք պայմաններում, ունեն հզոր հումուսային հորիզոն, միջին և ծանր կավավազային մեխանիկական կազմ, բավարար ազդրության հատկություններ և գերծ են հողի բերրիության վրա բացասական գործոնների ազդեցույթյունից:

Տիպիկ հողերից տարրերվող հողերի բոնիտման բալի մեջ մտցվում է համապատասխան ուղղում: Այդ նպատակով հանրապետության տարրեր բնակլիմայալկան պայմաններում կատարված դիտարկումների հետազոտական նյութերի և գոյություն ունեցող գրականության տվյալների հիման վրա մշակվում են հողի բերրիության վրա ազդրող բացասական գործոնների հաշվառման վերաբերյալ ուղղման գործակիցներ:

Ենթակա յուրաքանչյուր գնահատվող հողամասի տնտեսական պայմաններից՝ ուղղման գործակիցները հնարավորություն են տալիս միշտ գնահատել մեծ քանակով ուրվագծեր:

Ուրդման գործակիցները մշակվում են ըստ՝

- թեքության աստիճանի,
- հողատարման,
- աղակալման,
- քարքարոտության,
- ցեմենտացված շերտի առկայության,
- կլիմայական գործոնների և այլն:

Ենթակա հողային պայմաններից և այս կամ այն բացասական

հատկության ազդեցության աստիճանից՝ բոնիտման սանդղակով որոշված բալերը ենթարկվում են համապատասխան ուղղման։

$$\beta_{\text{հող}} = \beta_h \cdot \alpha_{\text{ուղ}}$$

որտեղ՝ $\beta_{\text{հող-ը}}$ տվյալ հողամասի հողի գնահատման բալն է, β_h -ն՝ հողի հիմնական բալը, $\alpha_{\text{ուղ-ը}}$ ՝ հողի բացասական հատկության ցուցանիշի ուղղման գործակիցը։

Այսպես՝ Ուրց-Կոտայք-Շամիրամ գնահատման շրջանի գյուղատնտեսական հողատեսքերի գնահատման հիմնական բալը կազմում է 80։ Այդ հողերի բույլ հողատարված հողամասերի բալը կկազմի 64 ($80 \cdot 0,8$), իսկ միջին ցեմենտացված հողերի բալը՝ 48 ($80 \cdot 0,6$) և այլն։ Սևանի գնահատման շրջանի սևահողերի հիմնական բալն, ըստ հանրապետական սանդղակի, կազմում է 86։ Այնտեղ հանդիպում են տարբեր աստիճանի թեքության, հողատարված և քարքարոտ հողամասեր։ Թույլ հողատարման գործակցի (0,8) կիրառման արդյունքում որոշման բալը կկազմի՝

$$\beta_h = 86 \cdot 0,8 = 69 \text{ բալ}.$$

Լեռնային երկրագործության պայմաններում հաճախ մի խումբ բացասական հատկություններ (մեխանիկական կազմ, հողատարման և թեքության աստիճան) հանդես են զայիս համատեղ, մեկի արտահայտվածության աստիճանը կախված է մյուսից։ Տվյալ պարագայում հողի բոնիտման բալը ճշգրտվում է ուղղման այն գործակցով, որն ավելի է արտահայտված։ Օրինակ՝ թերև մեխանիկական կազմի և հողատարման միաժամանակյա առկայության դեպքում ուղղումը կատարվում է հողատարման գործակցով։

Հողերի գնահատման ընդհանուր բալի վրա մեծ ազդեցություն են թողնում տարածքի կլիմայական պայմանները։ Կլիման հաշվի է առնվում որպես ուղղման գործակից՝ յուրաքանչյուր հողատեսքի հողերի միջին կշռված բալը որոշելու ժամանակ։

15.5. ՀՈՂԵՐԻ ԲՈՆԻՏՄԱՆ ԲԱԼԵՐԻ ՀԱԾՎԱՐԿՅ

Գյուղատնտեսական հողերի բոնիտման բալերը հաշվարկվում են ըստ հողատեսքերի (ջրովի և անջրդի վարելահողեր, խաղողի և պտղատու այգիներ, խոտհարք, արոտ)։

Վարելահողերի բոնիտման բալերը հաշվարկվում են հողի հատկությունների, կլիմայական պայմանների և հիմնական մշակաբույսերի թերքատվության ցուցանիշների հիման վրա։ Հայատանում ընդունված է հողերի բոնիտման 100-բալային փակ սանդղակը։ Ելնելով հողի լավագույն հատկանիշներից և բարձր թերքատվության համար նպաստավոր պայմաններից՝ հանրապետության հողերի բոնիտման առավելագույն ցուցանիշը է ընդունվում 100 բալ, իսկ համեմատարար աննպաստ պայմանների դեպքում այդ գործակիցը հարաբերականորեն նվազում է։

Հաշվարկները կատարվում են հետևյալ բանաձևով՝

$$\Omega = \frac{g}{g_1} \cdot 100,$$

որտեղ՝ Ω -ն տվյալ հողի բոնիտման բալն է, g -ն՝ հողի հատկությունների, կիմայական գործոնի և բերքատվության ցուցանիշը, g_1 -ը՝ առավելագույն՝ 100 բալ ստացած հողի, կիմայական գործոնի և բերքատվության ցուցանիշը:

Բոնիտման սանդղակը կազմվում է յուրաքանչյուր գնահատման շրջանում առավել տարածված հողերի ենթատիպերի կտրվածքով, որոնք գտնվում են ուղիղեփի հարք պայմաններում, ունեն հզոր հումուսային հորիզոն, միջին և ծանր կավավազային մեխանիկական կազմ, գերծ են բերդիության վրա ազդող հողի բացասական հատկություններից: Նման տարածքները դաշտային պայմաններում հայտնաբերվում են ուղղակի հաշվառման եղանակով:

Բոնիտման սանդղակ կազմելու ընթացքում յուրաքանչյուր գործոնի և հատկության թվային ցուցանիշները և դրանց հիման վրա հաշվարկված բալերը գրվում են աղյուսակի համապատասխան սյունակում: Այսուհետև կիմայական առանձին գործոնների բալերը գումարվում են և դուրս է բերքում միջինը, իսկ հողի հատկությունների հիման վրա հաշվարկվում է դրանց միջին բալը և գրանցվում աղյուսակի համապատասխան սյունակում: Յուրաքանչյուր խումբ (կիմայական և հողային) գործոնների միջին բալերը գումարվում են և դուրս է բերքում դրանց միջին ցուցանիշը: Այս ձևով ստացված բալերը համեմատվում են բերքատվության տվյալների հիման վրա ստացված բալերի հետ, այսուհետև դուրս է բերքում երեք խումբ գործոնների (բերքատվության, կիմայական պայմանների և հողի հատկությունների) գնահատման միջին բալը:

Գնահատման առանձին շրջաններում տարածված հողատիպերի համար՝ երեք գործոնների հիման վրա միջին բալը դուրս բերելուց հետո, կազմվում է հանրապետության ջրովի և անջրդի վարելահողերի բոնիտման 100-բալային փակ սանդղակը:

Համբաւետության ջրովի վարելահողերի բոնիտման սանդղակի համաձայն՝ առավելագույն՝ 100 բալ ստացել են Արարատյան հարթավայրի Մերձարաքսյան գնահատման շրջանի ոռոգելի մարգագետնային գորշ մնացորդային հողերը և Ախուրյան-Սպիտակ գնահատման շրջանի մարգագետնաբարվածքային հողերը, իսկ մյուս հողերը հարաբերականորեն ստացել են դրանցից ցածր գնահատական: Անջրդի վարելահողերի բոնիտման սանդղակի համաձայն՝ 100 բալ ստացել են Վերին Զորագետի գնահատման շրջանի տիպիկ սևահողերը, որոնք գտնվում են բավարար խոնավացման գոտում, ունեն հողային բարձր հատկություններ և դրանց վրա մշակվող հացաքույսերի բերքատվությունը բարձր է:

Հանրապետության տարածքի գլխավոր հողատիպերի և դրանց հիմնական հատկությունների գնահատման սանդղակները տրված էին աղյուսակ 9-ում:

Այսպես՝ սևահողերը համարվում են հումուսով ապահովված, եթե դրա պարունակությունը հողի վերին շերտում կազմում է 6 %: Այդ դեպքում բռնիտման բավարարությունը կազմում է 100: Հումուսի միջին՝ 4 % պարունակության դեպքում բռնիտման բավարարությունը կազմում է 67 (4:6·100), իսկ սակավ (1,5%) պարունակության դեպքում՝ 25 (1,5:6·100):

Նման ձևով հաշվարկվում են բոլոր գործոնների և ցուցանիշների բալերը:

Գնահատման սանդղակները կազմելուց հետո հաշվարկվում են յուրաքանչյուր հողի միավոր տարածության և համայնքի բոլոր հողատեսքերի միջին կշռված բավերը՝ հետևյալ բանաձևով՝

$$\mu_{\text{ըն}} = \mu_{h1} \cdot S_1 + \mu_{h2} \cdot S_2 + \dots + \mu_n \cdot S / S_{\text{ըն}},$$

որտեղ՝ $\mu_{\text{ըն}}$ -ը՝ գնահատման միջին կշռված բավարարությունը, $\mu_{h1}, \mu_{h2}, \dots, \mu_n$ ՝ հողի յուրաքանչյուր տեսակի բավարարությունը, S_1, S_2, \dots, S_n ՝ հողի յուրաքանչյուր տեսակի տարածությունը, իսկ $S_{\text{ըն}}$ -ը՝ համայնքի հողերի ընդհանուր տարածությունը:

Հայաստանի հողային, երկրագործական, արտադրական պայմանների խիստ խայտարենությունը թույլ չի տալիս ստեղծել հողերի որակական գնահատման միասնական համակարգ: Այդ պատճառով հողերի բռնիտման սանդղակները կազմվում են ըստ առանձին տարածաշրջանների՝ գնահատման շրջանների, որտեղ խայտարդեսությունը համեմատաբար սահմանափակ է:

Հողերի բռնիտումը կատարվում է ըստ հողակտորների, որոնք համարակալվում են հողօգտագործման քարտեզի վրա: Այդ նպատակով կազմվում է գնահատման տեղեկագիր (աղ. 16): Տեղեկագրի 1-ին սյունակում գրանցվում է հողամասի համարը, 2-ում՝ մշակման պայմանները, հաջորդում՝ գնահատման շրջանը, հողի հատկությունները: Հողի ելակետային բավի և համապատասխան ուղղման գործակիցների բազմապատկման արդյունքում ստացված վերջնական բավը գրանցվում է տեղեկագրի համապատասխան սյունակում: Յուրաքանչյուր հողօգտագործման համար տեղեկագրի վերջում տրվում է ընդհանուր տարածությունն ու հողերի բռնիտման միջին բավը: Հողամասերին տրվում են գնահատման համապատասխան բալեր, որոնք հետագայում ամփոփվում են հինգ խմբերում հետևյալ կերպ. 1-ին խումբ՝ 81-100 բալ, 2-րդ՝ 61-80, 3-րդ՝ 41-60, 4-րդ՝ 21-40 և 5-րդ՝ 20-ից ցածր:

Նման խմբավորումը հիմք է ծառայում հողերի տնտեսական և արժեքային գնահատման համար: Յուրաքանչյուր հողօգտագործման սահմանում բոլոր հողերի բոնիտման բարեր հաշվարկելուց հետո կազմվում է հողերի բոնիտման տեղեկագիր, որտեղ գրանցվում են սեփականատիրոջ անունն, ազգանունը, հողաբաժնի համարը, տարածությունն ու գնահատման բալը (աղ. 17):

Աղյուսակ 17

Հողօգտագործողների վարելահողերի բոնիտման տեղեկագիր

Աշոցքի տարածաշրջան, գյուղ Գոգահովիտ

Հողասեփականատիրոջ ազգանունն ու անունը	Հողակտորի համարը	Տարածությունը, հա		Գնահատումը, հա/բալ	
		ջրովի	անջրովի	ջրովի	անջրովի
1. Պետրոսյան Կարապետ	16,45	0,5	2,0	75	28
2. Հովհաննիսյան Իշխան	19,36	1,0	2,5	85	32

Հողօգտագործողների և հողասեփականատերերի առանձին հողամշինների միջին բալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\mu_{\text{միջ}} = \frac{\mu_1 S_1 + \mu_2 S_2 + \dots + \mu_p S_p}{S_1 + S_2 + \dots + S_p},$$

որտեղ՝ $\mu_{\text{միջ}}$ -ը բոնիտման միջին բալն է, $\mu_1, \mu_2, \dots, \mu_p$ -ն՝ գնահատվող հողերի բալերը, S_1, S_2, \dots, S_p -ն՝ գնահատվող հողերի տարածությունները:

Հողերի բոնիտման աշխատանքներն ավարտելուց հետո կազմում են հողօգտագործման քարտեզ, ուր արտացոլվում են բոլոր հողասեփականատերերի համարները, հողերի տարածությունը, մեկ հեկտարի հաշվով բոնիտման միջին բալը, այլ ցուցանիշներ և պայմանական նշաններ: Քարտեզին կից տրվում է համառոտ բացատրագիր:

15.6. ՀՈՂԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՏԵՂԱՌՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Հողերի խմբավորման ընթացքում վերոհիշյալ հատկությունների ցուցանիշները՝ բավական քանակական արտահայտությամբ, արտացոլվում են հողերի բոնիտման միջոցով: Այդ նպատակով մշակվում են յուրաքանչյուր գործոնի գնահատման սանդրակները և ուղղման գործակիցները, դրանց հիման վրա կատարվում է առանձին հողամասերի բոնիտում, ապա՝ խմբավորում:

Հողերի բոնիտմանը հաջորդում է հողերի գնահատման խմբավորումը, որը հողագիտական տեսակետից խոշորամասշտար հողային, երկրարուսաբանական և այլ հետազոտությունների նյութերի տարածական արտահայտման հիմնական ձևն է: Խմբավորումը հեշտացնում է հողերի կադաստրային գնահատման նյութերի հիման վրա կատարվող հաշ-

վարկները: Դրա միջոցով բացահայտվում են տարրեր հողերի արդյունավետ օգտագործման համեմատական հնարավորությունները, ինչը նպաստում է ազգութեսնիկական և մելիորատիվ միջոցառումների ճիշտ կազմակերպման ու պարարտանյութերի արդյունավետ օգտագործմանը:

Հողերն ըստ ազգութանական խմբերի բաժանելու հիմնական չափանիշներն են հողերի ծագումնաբանական միատարրությունը, պրոֆիլ կազմի միանմանությունը (հատկապես՝ վերին հորիզոնների), հողառաջացնող մայրատեսակը, մեխանիկական կազմը, ջրային, օդային և շերմային ռեժիմները, սննդանութերի պաշարը, ռելիեֆը, ուրվագծերի միատարրության աստիճանը, հողատարումը, քարքարոսությունն ու աղակալման աստիճանը: Այս բոլոր չափանիշների հիմքում հողակլիմայական գոտիականությունն է:

Յուրաքանչյուր հողատեսքի համար առանձնացվում է հողագնահատման հիմք խումք՝ լավագույն, լավ, միջակ, միջակից ցածր և վատ:

Առաջին խմբին են դասվում 81-100 բալ ունեցող հողերը, երկրորդին՝ 61-80, երրորդին՝ 41-60, չորրորդին՝ 21-40, հինգերրորդին՝ 0-20:

Հողերի գնահատման խմբերն առանձնացնելիս հաշվի են առնում հետևյալ սկզբունքները: Եթե հողածածկը և հողօգտագործումը խայտարրղեն չեն, ապա հողերի խմբերը տարրերակվում են ըստ առանձին հողատեսքերի, իսկ եթե դրանց խայտարդետության պայմանները բարդ են՝ մասնատված հողատեսքերի խմբավորումը կատարվում է խառը եղանակով: Այլ կերպ՝ հողերի գնահատման միենույն խմբում ընդգրկվում են այնպիսի հողեր, որոնք արտադրական հատկություններով տարրեր են, սակայն փոքր նակերեսի պատճառով դրանք հնարավոր չեն դասել առանձին խմբերի շարքերին: Հողերի խմբավորման ընթացքում միևնույն խմբում միավորվում են այն հողերը, որոնք իրենց արտադրագործմանաբանական հիմնական հատկություններով չեն տարրերվում միմյանցից, ընդհանուր տարածությունը կազմում է տվյալ գոտու 70-75%-ը, իսկ այլ հատկություններ ունեցող հողերը կազմում են 25-30%:

Ելնելով ՀՀ հողօգտագործման պայմաններից՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արտավայրերի հողագնահատման խմբերը կազմվում են առանձին-առանձին:

Գնահատման լավագույն խմբերի մեջ ընդգրկվում են բարձր բերրիություն ունեցող այն հողերը, որոնք հզոր են, ապահոված են սննդատարրերով, աչքի են ընկնում հումորի և կանող կոմպլեքսում հիմքերի բարձր բանակով: Հողի արդյունավետ խոնավությունը բարձր է, այն ունի ծանր և միջին կավավազային մեխանիկական կազմ: Այդ խմբի հողերը սովորաբար կրագուրկ, չհողատարված, աղազորկ են, հիմնականում առաջացել են հարքությունների վրա: Դրանք բերքի են, ապահովում են տվյալ գոտում ջականող զյուղատեսական բույսերի բարձր բերք, հետագա բարելավման համար հատուկ ազրտեխնիկական և մելիորատիվ միջոցառումներ չեն պահանջում և որակական գնահատման ընթացքում ստանում են 81-100 բալ:

Գնահատման լավ խմբերի մեջ են մտնում այն հողերը, որոնք նման են առաջին խմբի հողերին, սակայն դրանց զիջում են ինչպես արտադրական, այնպես էլ գենետիկական որոշ հատկություններով: Ուստի համեմատաբար ցածր է դրանց բերրիությունը, սահմանափակ են հողօգտագործման հնարավորությունները (զյուղատնտեսական այս կամ այն մշակաբույսի աճեցում): Հողերի որակը բարելավելու համար պահանջվում է կիրառել լրացուցիչ ագրոմելիորատիվ միջոցառումներ: Որակական գնահատման ժամանակ այդ հողերը ստանում են 61-80 բալ:

Գնահատման միջակ խմբին պատկանող հողերը նախորդ՝ առաջին և երկրորդ խմբերից տարրերվում են իրենց բարդ ռեխիեֆով, ավելի ցածր բնական բերրիությամբ: Այդ խմբի հողերում հումուսի, սննդանյութերի, ինչպես նաև կլանված հիմքերի և արդյունավետ խոնավության պաշարը բավարար է, սահմանափակ են զյուղատնտեսական մշակաբույսերի ընտրության և մշակման հնարավորությունները: Նման հողերն ունեն միջին հզորություն, թերև և միջին կավավազային մեխանիկական կազմ, աչքի են ընկում մի շարք բացասական հատկություններով՝ բույլ հողատարմանք, ոչ խորքային ցեմենտացմանք, բույլ աղակալմանք և այլն: Այդ խմբի հողերը ձևավորվել են բույլ և միջին թեքություն ունեցող լանջերի վրա, դրանց բերրիության բարձրացման համար պահանջվում են մի շարք լրացուցիչ, ոչ բարդ ագրոտեխնիկական և մելիորատիվ միջոցառումներ: Այս հողերը գնահատվում են 41-60 բարլվ:

Գնահատման միջակից ցածր խմբին պատկանող հողերը գտնվում են անբարենպաստ ռեխիեֆային պայմաններում՝ տարրեր թեքության լանջերի վրա: Տարածքը հաճախ մասնատված է ծորակացանցով, ինչը դժվարացնում է հողի արդյունավետ օգտագործումը: Հիշյալ հողերը սակավազոր են, ունեն ավազային, թերև կավավազային մեխանիկական կազմ, բույլ կառուցվածք, հիմնականում քարքարոտ են, հանդես են զալիս խորքային և մակերեսային ցեմենտացած շերտով, միջին հողատարմանք, բույլ աղակալմանք, աղքատ են սննդանյութերով, հումուսի պարունակությամբ, կլանված հիմքերով, ունեն անբավարար խոնավություն: Այդ պայմաններում զյուղատնտեսական մշակաբույսերի կազմն ու ընտրությունը զգալի չափով սահմանափակ է, բերքատվությունը՝ շատ ցածր: Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման համար պահանջվում է կիրառել ագրոտեխնիկական, մելիորատիվ, կուլտուր-տեխնիկական, հողատարման դեմ ուղղված հասուկ միջոցառումներ: Գնահատման բարլ՝ 21-40:

Գնահատման վատ խմբին են պատկանում այն հողերը, որոնք տարածված են բարդ ռեխիեֆային գոտիններում: Դրանք են սակավազոր, որոշակի ստրուկտորա չունեցող, ուժեղ քարքարոտ, միջին և ուժեղ ցեմենտացած, գերխոնավ հողերը: Այդ հողերը շատ աղքատ են սննդանյութերով, հումուսով և կլանված հիմքերով: Գյուղատնտեսական մշակաբույսերի ընտրությունը չափազանց սահմանափակ է, մշակվում են միայն գարնանացան հացահատիկային բույսեր և միամյա խոտաբույսեր,

որոնց թերքատվությունը ցածր է: Տարածքի մասնատվածության և լանջերի խիստ թերության պատճառով գյուղատնտեսական աշխատանքների մեջենայացման հնարավորությունները խիստ սահմանափակ են: Նման հողերի թերթիւթյան բարձրացման համար պահանջվում են հատուկ ազդութեանիկական, մի շարք բարդ մեխիորատիկ, հակաէրողիոն և մարգագետնամելիորատիկ միջոցառումներ: Այդ հողերին տրված է ամենացածր գնահատականը՝ 0-20 բալ:

Հողերի խմբավորման հիման վրա կազմվում են տարբեր մասշտաբի հողագնահատման քարտեզներ:

Գյուղատնտեսական հողատեսքերի խմբերի հիման վրա որոշում են տնտեսական արժեքային գնահատման ցուցանիշները:

Հողերի որակական գնահատման աշխատանքներին զուգահեռ որոշում են գյուղատնտեսական հողատեսքերի տեխնոլոգիական հատկությունները՝ ռեիլեֆը, բարքարուտությունը, բարձրությունը ծովի մակերևույթից, հողերի տեսակարար դիմադրությունը և այլն: Հողամասերի ընդհանուր տեխնոլոգիական գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Sg=\theta \cdot \varPhi \cdot \delta \cdot S\varUpsilon,$$

որտեղ՝ Sg -ն տեխնոլոգիական միջին գործակիցն է, δ -ն՝ ծովի մակերեսի վկայությունը բարձրության գործակիցը, θ -ն՝ թերության աստիճանը, \varPhi -ն՝ բարքարուտության աստիճանը, $S\varUpsilon$ -ն՝ հողի տեսակարար դիմադրությունը:

Այս եղանակով ստացված տեխնոլոգիական ցուցանիշները համեմատվում են էտապնայինի հետ և վերածվում բարերի կամ գործակիցների, որոնց միջոցով ուղղումներ են կատարվում հողերի բոնիտման բալի արժեքում:

Հողերի գնահատման օբյեկտները բնութագրվում են գյուղատնտեսական մթերքների իրացման տեղից և նյութատեխնիկական մատակարարման բազաներից հեռավորության ցուցանիշներով: Այդ դեպքում որոշվում են թեուների տեսակներն ու ծավալները, ճանապարհների խմբերի միջին կշռված ցուցանիշները՝ հետևյալ բանաձևով՝

$$\zeta = \sum \varPhi \cdot (\zeta_1 + \zeta_2 \cdot \gamma_2 + \zeta_3 \cdot \gamma_3) : \sum \varPhi,$$

որտեղ՝ ζ -ն գնահատվող օբյեկտի միջին կշռված հեռավորությունն է, \varPhi , \varPhi -ն՝ իրացվող մթերքի ծավալը, %, γ_2 -ն՝ միավոր մթերքի վերահաշվարկման գործակիցը, ζ_1 , ζ_2 , ζ_3 -ը՝ տեղափոխման հեռավորությունը, γ_3 , γ_2 , γ_3 -ը՝ 2-րդ և 3-րդ դասի ճանապարհների վերահաշվարկման գործակիցն է առաջինի համեմատ:


Այս ցուցանիշների հաշվարկումը հնարավորություն է տալիս գնահատման լնիքացրում գյուղատնտեսական մթերքի տեղափոխման ծախսերի մեջ մտցնել համապատասխան ուղղումներ:

ԳԼՈՒԽ 16

ՀՈՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

16.1. ՀՈՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հողային կադաստրի համակարգում հողերի տնտեսական գնահատումը հողագնահատման այն եզրափակիչ փուլն է, որի ընթացքում որոշվում է հողերի արտադրողական ունակությունը՝ որպես անշարժ գույքի, շուկայական հարաբերություններում շրջանառության օբյեկտի և գյուղատնտեսական արտադրության գլխավոր արտադրամիջոցի (նկ.16):



Նկ. 16. Հողերի գնահատման բաղկացուցիչ մասերը:

Հողերի տնտեսական գնահատման հիմնական խնդիրը նրանում է, որպեսզի հողերի տարբեր հատկությունների, գյուղատնտեսական արտադրության պայմանների և արդյունքի բազմակողմանի հաշվառման միջոցով որոշվեն յուրաքանչյուր հողօգտագործման համար հողի գինն ու արտադրողական ունակությունը և հիմնավորվեն գյուղատնտեսության մեջ հողերի արդյունավետ օգտագործման ու պահպանման միջոցառումները:

Գյուղատնտեսության մեջ հողերի օգտագործումը, մի կողմից՝ ապահովում է գյուղատնտեսական մթերքների որոշակի ծավանների արտադրություն, մյուս կողմից՝ աշխատանքի և արտադրության միջոցների ներդրման որոշակի արդյունավետություն:

Հողի բռնիտումն ու տնտեսական գնահատումը դիտվում են որպես հողի արտադրողական ունակությունը որոշելու միասնական գործընթաց, քանի որ հողի բնական և ձեռքբերովի հատկությունները, տեխնոլոգիական պայմանները, տեղադրվածությունն ու ներդրումների ծավալը միաժամանակ և փոխկապակցված են ազդում հողագործության արդյունավետ վարման վրա:

Ինչպես նշվեց նախորդ գլխում, բռնիտումը հողերի որակական համեմատական գնահատումն է, դրանց խմբավորումն ըստ ախտորոշիչ հաստկանչների, որոնք ազդութեանիկայի և երկրագործության համարդելի մակարդակներում ազդում են գյուղատնտեսական մշակաբույսերի թերքատվության վրա: Բռնիտման ընթացքում ապահովում է տնտեսական գնահատման ենթակա հողերի հիմնավորված խմբավորում: Տնտեսական գնահատումը բնութագրում է հողի՝ որպես արտադրության միջոցի արտադրողական ունակությունը՝ օգտագործելով բնական և արժեքային ցուցանիշները:

Այստեղից էլ բխում են հողերի տնտեսական գնահատման երկու հիմնական ուղղությունները. **առաջինը**՝ գնահատել հողի արտադրողական ունակությունը, **երկրորդը**՝ որոշել արտադրության տնտեսական արդյունավետությունը: Հողերի տնտեսական գնահատման չափանիշներն են արտադրանքի ելքը միավոր տարածության հաշվով և ծախսերի արդյունավետությունը:

Հողերի տնտեսական գնահատման նյութերն օգտագործվում են՝ հողի հարկի, վարձավճարի և նորմատիվային զնի որոշման, հողի շուկայի կայացման և զարգացման, հողի փոխհատուցման չափերի հաստատման, հողամասերի տրամադրման և օտարման գործողությունների կատարման, հողի նոնիտորինգի անցկացման, հողամասիականատերերի, հողօգտագործողների և վարձակալների տնտեսական գործունեության ապահովման, պետական, մարզային, համայնքային և մասնավոր սեփականության հողային հարաբերությունների կարգավորման, դեկավարման և այլ խնդիրներ լուծելու համար:

- Հողերի կադաստրային գնահատման սկզբունքները հետևյալն են՝
- գնահատվող հողերը դիտվում են որպես անշարժ գույք, շուկայական հարաբերություններում գույքային շրջանառության օբյեկտ,
 - հողերի գնահատման ընթացքում հաշվի են առնվում վարելահողերի, բազմամյա տնկարկմերի, խոտհարքների և արոտավայրերի հիմնական որակական հատկությունները՝ բոնիտման ցուցանիշները,
 - վարելահողերի և բազմամյա տնկարկմերի գնահատումը կատարվում է հողագնահատման շրջանի տնտեսական ցուցանիշների, իսկ խոտհարքներին ու արոտավայրերինը՝ բնական գոտիների միջին ելակետային տվյալների հիման վրա,
 - գնահատումը կատարվում է բոլոր հողատեսքերի և հողակտորների կտրվածքով՝ անկախ սեփականության և օգտագործման ձևերից,
 - գնահատման տվյալները պետք է լինեն հուսալի, հավաստի, համային և ստացվեն միասնական մեթոդիկայով,
 - պետք է հաշվի առնվի գնահատման տվյալների պետական նշանակությունն ու մատչելիությունը,
 - գնահատման արդյունքները պարտադիր են հողօգտագործող բոլոր սուբյեկտների համար և այլն:

16.2. ՀՈՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Գյուղատնտեսական մթերքի արտադրության ծավալները որոշվում են բնեղեն և արժեքային ցուցանիշներով՝ համախառն արտադրանքի արժեքով (իրացման կամ շուկայական գներով):

Հողերի տնտեսական գնահատման ցուցանիշներն են գյուղատրնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, համախառն արտադրանքի արժեքը, ծախսերի հատուցման գործակիցը, արտադրության գինը, գուտեկանությունը, դիմերենցիալ ռենտան:

Հողերի տնտեսական գնահատման ցուցանիշները հաշվարկելու համար անհրաժեշտ է ունենալ մշակաբույսերի ցանքատարածությունների, բերքատվության, խոտհարքների և արտսների արդյունավետության, ինչպես նաև արտադրության վրա կատարվող ծախսերի փաստացի միջին տվյալներն՝ ըստ գնահատման շրջանների և հողախմբերի: Արդի պայմաններում, գյուղացիական մանր տնտեսություններում հաշվարհական հաշվառման բացակայության պատճառով, այդ նյութերը հավաքագրվում են գյուղացիական տնտեսություններում, ձեռնարկություններում և համայնքներում՝ տնտեսական մոնիթորինգի անցկացման մերժիկայով:

Համախառն արտադրանքի արժեքը զնահատելու ժամանակ հաշվի է առնվում մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը: Այն որոշվում է վիճակագրական և տնիքորհների տվյալների հիմնան վրա: Համախառն արտադրանքի զնահատման համար օգտագործվում են ինչպես համադրելի, այնպես էլ շուկայական միջին գները: Բազիսային համախառն արտադրանքի որոշման բանաձևն է՝

$$\zeta U = \sum \mu \cdot \Psi_q \cdot q,$$

որտեղ՝ ζU -ն մեկ հեկտարից ստացվող համախառն արտադրանքի ելքն է, դրամ/հա, $\sum \mu$ -ն՝ մշակաբույսերի ելակետային բերքատվությունը, գ/հա, Ψ_q -ն՝ առանձին մշակաբույսերի տարածությունների տեսակարար կշռի գործակիցն ընդհանուր տարածությունում ($100\% = 1,0$), q -ն՝ միավոր արտադրանքի իրացման կամ շուկայական գինը, դրամ/գ:

Հողի զնահատման տասնեսական արդյունավետությունը որոշվում է միավոր տարածության հաշվով կատարված ծախսերի հատուցման մակարդակով (շահութաբերություն): Ծախսերի հատուցման ելակետային ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\Omega_2 = \zeta U : \delta,$$

որտեղ՝ Ω_2 -ն ծախսերի հատուցման ելակետային ցուցանիշն է, դրամ/հա, ζU -ն՝ համախառն արտադրանքը, դրամ/հա, δ -ն՝ արտադրության բազիսային ծախսերը, դրամ/հա:

Հողերը զնահատվում են նաև դիմերենցիալ ռենտայի գումարով՝ լատ հետևյալ բանաձևի՝

$$\Omega_n = \zeta U - \delta \cdot 1,07,$$

որտեղ՝ Ω_n -ն դիմերենցիալ ռենտան է, դրամ/հա, ζU -ն՝ համախառն արտադրանքը, դրամ/հա, δ -ն՝ արտադրության բազիսային ծախսերը, դրամ/հա, $1,07\cdot\delta$ ՝ ծախսերի նկատմամբ շահութաբերության նվազագույն գործակիցը:

Հողային ռենտան գոյանում է լավ, լավագույն հողերի և միջին ու ցածր խմբի վատ որակի հողերի բնական բերրիության տարրերությունից, և որպես համեմատության չափանիշ ընդունվում է ցածր կամ վատ հողի բերրիությունը (դիմերենցիալ ռենտա I): Սակայն հայտնի է, որ հավելյալ բերքը կամ եկամտը կապված է նաև միենալու հողի վրա կատարվող լրացուցիչ աշխատանքային և նյութական ներդրումների հետ: Այդ գործոնի հիմնան վրա առաջանում է դիմերենցիալ ռենտա II-ը: Այսպիսով՝ հողային ռենտան՝ որպես լրացուցիչ եկամտու, մի դեպքում ստացվում է գյուղատնտեսության եքստենսիվ զարգացման պայմաններում, դառնալով բերքի և շուկային մոտ գտնվող հողերից իրացվող լրացուցիչ եկա-

մուտ, իսկ երկրորդ դեպքում՝ գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման շնորհիվ այն հանդես է գալիս որպես լրացուցիչ կապիտալ ներդրումների արդյունք: Այստեղից հետևում է, որ ռենտան պայմանավորված է ինչպես բնական, այնպես էլ տնտեսական գործոններով: Դիմերենցիալ ռենտան որոշվում է նաև հետևյալ բանաձևով՝

$$\Omega_{\text{դֆ}} = (\zeta U - \delta \cdot 1,07) + \Delta \Omega_{\text{տեխ}} + \Delta \Omega_{\text{տեր}},$$

որտեղ՝ $\Omega_{\text{դֆ}}$ -ն դիմերենցիալ ռենտան է, ζU -ն՝ համախառն արտադրանքը, դրամ/հա, δ -ն՝ արտադրության բազմացման ծախսերը, դրամ/հա, $1,07$ -ը՝ ծախսերի նկատմամբ շահութաբերության նվազագույն գործակիցը, $\Delta \Omega$ -ը՝ $1,07$ -ը՝ ռենտայի գումարն՝ ըստ բերդիության, դրամ/հա, $\Omega_{\text{տեխ}}$ -ը՝ տեխնոլոգիական գործակցով պայմանավորված ռենտան, դրամ/հա, $\Omega_{\text{տեր}}$ -ը՝ հողերի տեղադրվածությամբ պայմանավորված ռենտան, դրամ/հա:

Հողերի գնահատման ընթացքում (միասնական ձևով) կազմվում են գնահատման տեղեկագրեր, հողագնահատման քարտեզներ, որոնք հաշվարկային հիմք են ծառայում գործնական տարրեր հարցերի լուծման՝ արտադրության վերլուծության, հողերի արդյունավետ օգտագործման, հողաշինարարական նախագծերի մշակման, բնության և շրջակա միջավայրի պահպանության, շուկայական տնտեսության պայմաններում հողի հարկի, վարձավճարի, գրավի, սերվիսությի նորմատիվների մշակման և հողային այլ հարաբերությունների կարգավորման գործում:

16.3. ՀՈՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱԾԽԱՏԱՁԵՐԻ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հողերի գնահատման ընթացքում կատարվում են հետևյալ բնույթի աշխատանքներ՝

- նախապատրաստական,
- հողագնահատման շրջանացում,
- դաշտային հետազոտություններ,
- հողերի բռնիշում,
- հողերի ազրոարտադրական (գնահատման) խմբավորում,
- բազմային բերքատվության և ծախսերի հաշվարկում՝ գնահատման սանդղակների կազմելու նպատակով,
- գնահատման ցուցանիշների հաշվարկում և գնահատման սանդղակների կազմում,
- հողերի գնահատում,
- գնահատման նյութերի պատրաստում, քննարկում և հաստատում,
- հողագնահատման փաստաթղթերի պատրաստում և հանձնում:

Հողերի գնահատման համար անհրաժեշտ ելակետային տեղեկատվությունը հավաքվում է լարորատոր (նախապատրաստական) և դաշտային աշխատանքների ընթացքում:

Նախապատրաստական փուլում հավաքվում և խմբավորվում են հետևյալ նյութերը՝

- վերջին հիմք տարիներին համայնքներում օգտագործվող հողատեսքերի կառուցվածքը,
- ազրոկլիմայական ցուցանիշները,
- հողերի կարգաբանական ցուցակը, բոնիտման և հողերի խմբավորման նյութերը,
- հողերի օգտագործման տեխնոլոգիական պայմաններին վերաբերող տվյալները,
- հողերի տեղադրվածությանը վերաբերող նյութերը,
- բազմամյա տնկարկների տեսակային և տարիքային կազմին վերաբերող ցուցանիշները,
- խոտհարքների և արտադրողականությանը վերաբերող տվյալները,
- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածության և բերքատվության ցուցանիշները,
- արտադրության վրա կատարված ծախսերը,
- հանքային և օրգանական պարարտանյութերի օգտագործմանը վերաբերող տվյալները,
- գյուղատնտեսական ձեռնարկություններում, սորտավորման տնտեսություններում, փորձակայաններում և գիտահետազոտական հիմնարկներում դաշտային աշխատանքներ կատարելու նպատակով ծախսերի և բերքի ուղղակի հաշվառմանը վերաբերող տվյալները,
- նախկինում կատարված հողագնահատման աշխատանքների նյութերը:

Դաշտային հետազոտությունները կատարվում են գյուղուն ունեցող հողագիտական, երկրաբուսաբանական և այլ նյութերի հիման վրա: Դաշտային հետազոտությունների ընթացքում պարզվում է այդ նյութերի պիտանիությունը հողագնահատման աշխատանքներում, հավաքվում են լրացուցիչ տվյալներ՝ հողօգտագործման և սեփականության տարբեր մակարդակներում հողերի գնահատման լիարժեք, ստույգ և համադրելի ցուցանիշներ ստանալու համար: Եթե գոյություն ունեցող հետազոտական նյութերը չեն բավարարում հողերի գնահատման պահանջներին, ապա կատարվում է դաշտային հետազոտական լրացուցիչ աշխատանք, առանց որի չի կարող իրականացվել տվյալ տարածքի հողագնահատումը:

Հողագնահատման շրջանացումը սերտորեն կապված է տարածքի բնագյուղատնտեսական շրջանացման հետ: Հանրապետության հողագնահատման (կադաստրային) շրջանացումը կատարում են բնագյուղատնտեսական շրջանացման ընդհանուր սխեմայի հիման վրա՝ հաշվի առնելով տվյալ տարածքի հողային, կլիմայական, տեխնոլոգիական և տնտեսական պայմանները: Գնահատման նպատակով ընդհանուր սխեմայում առանձնացվում են բնական օկրուգներն ու հողագնահատման շրջանները: Դրանց առանձնացման պայմաններն ու համառոտ բնութագիրը, ինչպես նաև հողերի արտադրական խմբավորումն ուսումնասիրվել են նախորդ գլխում: Հողի տեսակների և տարատեսակների խմբավորման հիմնական ցուցանիշներն են:

1. Պատկանելությունը նույն հողակինայական գոտուն, ծագում-նարանական նմանությունը, այդ թվում՝

- հողային կտրվածքների ձևաբանական կառուցվածքը (հատկապես՝ հողի վերին հորիզոնների),
- հողի հիմնական ֆիզիկական հատկությունները, ջրային, օդային և ջերմային ռեժիմները,
- հողի ֆիզիկաքիմիական, քիմիական հատկությունները, սննդատարրերի պարունակությունը և պաշարները բնութագրող ցուցանիշները:

2. Տարածքի ռելիեֆը:

3. Հողամասերի կառուցվածքի նմանությունը, չափերը, ձևը և այլն:

4. Այն ֆիզիկաքիմիական և քիմիական հատկությունների միատիպությունը ու միաշափությունը, որոնք էապես ազդում են հողի բերրիության վրա և բարդացնում դրա օգտագործումը (աղակալում, հողատարում, քարքարոտություն և այլն), ինչպես նաև պահանջվող բարելավման միջոցառումների բնույթը:

Գնահատման նպատակով հողերի խմբավորման ընթացքում առաջին հերթին հաշվի են առնվում հողերի տեսակների և տարատեսակների այն հատկությունները, որոնք ազդում են որակի վրա և ժամանակի ընթացքում քիչ են փոփոխվում:

Ուղղելի հողերի գնահատման և խմբավորման ընթացքում հաշվի են առնվում նաև՝

- տարածքների ոռոգելիության ժամանակը՝ վաղեմի ոռոգելի, նոր ոռոգելի և իրացված,
- ջրապահովվածությունը:

Վարենի ոռոգելի հողերը սովորաբար բնութագրվում են հետևյալ հատկանիշներով՝

- հողամասերը գուրկ են ջրալույծ աղերից,
- հողամասերն ունեն հարք ռելիեֆ,

- հողի կտրվածքում գոյություն ունի որոշակի հզորության ազդության մասին նաև առաջարկությունները,
- հողային կտրվածքն ունի միատարր կազմ և սննդատարրերի հավասարաչափ բաշխվածություն:

Նոր ոռոգելի հողերում փոփոխությունները շատ չեն: Փոփոխության է ենթարկվում հիմնականում հողի վերին՝ 30 ամ շերտը: Վարելաշերտը միատարր է, ուղիեցիկ՝ սակավ հարթեցված:

Իրացված հողերի շարքին են դասվում այն հողատեսքերը, որոնք ինտենսիվ զյուղատնտեսական օգտագործման մեջ են մտել ոչ ավել, քան տարս տարում: Դրանք շատ քիչ են տարբերվում այն հողերից, որոնցից առաջացել են (խոտհարք, արոտ): Ուղիեցիկ հարթ չէ:

Հողերի խճավորման ընթացքում, անհրաժեշտ հավաստի տվյալների բացակայության կամ անբավարար լինելու դեպքում, կատարվում են լրացուցիչ տվյալների հավաքում և դաշտային հետազոտություններ:

Հողերի գնահատումը հիմնվում է գնահատման շրջանի տնտեսությունում փաստացի բերքատվության և կատարված ծախսերի վերաբերյալ զանգվածային տվյալների վերլուծության վրա: Այդ տվյալները ենթարկվում են վիճակագրական մշակման՝ ըստ գնահատվող հողերի ազդուարտադրական խմբերի բազմային բերքն ու ծախսերը որոշելու նպատակով: Բերքատվության և ծախսերի ելակետային ցուցանիշների մեծություններ են ընդունվում դրանց միջին վիճակագրական ցուցանիշները:

Բազիսային բերքատվության և ծախսերի հաշվառման համար ընտրվում են տիպիկ (ընութագրական) տնտեսությունների հողերի մեկ, երկու և ավելի թվով գնահատման խմբեր: Ընտրված տնտեսությունները պետք է միատեսակ լինեն արտադրության հիմնախվացման մակարդակով կամ տարբերությունը միջին մեծությունից չպետք է շեղվի $\pm 15-20\%$: Ինտենսիվացման մակարդակը որոշվում է գնահատվող հողերի արտադրողականության վրա ազդող հիմնական գործոններով՝ մեկ հեկտարի հաշվով:

Տվյալ խմբի տնտեսությունների համար բազիսային բերքատվությունն ու ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$\Omega = \frac{\sum h}{A},$$

որտեղ՝ Ω -ը բերքատվության որոշելի ելակետային մեծությունն է, գ/հա,

$\sum h$ -ը՝ տնտեսություններում բերքատվության գումարային մեծությունը՝ $-$ տնտեսությունների թիվը:

Եթե գնահատման խմբերից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը տվյալ հողատեսքի ընդհանուր տարածությունում 75%-ից պակաս է, ելակետային բերքատվությունը (ծախսերը) որոշում են բերքատվության և

հողի որակի միջև գոյություն ունեցող կապի կոռելյացիոն մոդելի օգնությամբ՝ բազմանդամ ռեգրեսիայի գծային հավասարումով՝

$$Y=a_1 + a_2 z + \dots + a_n ,$$

որտեղ՝ Y -ը բերքատվությունն է (համախառն արտադրանքի արժեքը),
գ/հա, $-z$ -ը՝ զնահատվող խմբի տեսակարար կշիռը տվյալ
հողատեսքի ընդհանուր տարածությունում, ա $-a$ -ը՝ բերքատվության
փոփոխման որոնելի գործակիցը՝ հողի տեսակարար կշռի
1 %-ով փոփոխման դեպքում:

Այդ հաշվարկներում հողօգտագործողների նվազագույն թիվը
պետք է լինի 30-ից բարձր:

Ծախսերի ելակետային մեծություն է ընդունվում հողերի տվյալ
գնահատման շրջանում ազրոտեխնիկայի կիրառման միջին ծախսերը,
որտեղ ուղղումներ են կատարվում հողերի տեխնոլոգիական պայմաններին հաճապատասխանող գործակիցների օգնությամբ: Վերջիններս հաշվարկվում են առանձին հողամասերի ռելիեֆի, քարքարոտության, ծովի մակերևույթից բարձրության, հողի տեսակարար դիմադրության և այլ ցուցանիշների գործակիցների արտադրյալով՝ հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$S_q = \varpi \cdot \varrho \cdot \sigma \cdot S_{\eta} ,$$

որտեղ՝ S_q -ն միջին տեխնոլոգիական գործակիցն է, ϖ -ն՝ թեքության աստիճանի գործակիցը, ϱ -ն՝ քարքարոտության աստիճանի գործակիցը, σ -ն՝ ծովի մակերևույթից բարձրության գործակիցը, S_{η} -ն՝ հողի տեսակարար դիմադրության գործակիցը:

Բնական կերահանդակների արտադրողականությունն՝ ըստ գնահատման խմբերի, հաշվարկվում է կերային միավորներով: Ծախսերը հաշվարկվում են արտադրանքի ինքնարժեքի հաշվառման ընդունված մեթոդներով:

Բազմամյա տնկարկների հողերի գնահատումը կատարվում է վարելահողերի համար նույն զնահատման խմբերով, այն տարբերությամբ, որ գնահատումը կատարվում է ըստ տնկարկների տեսակների, սորտերի և տարիքային առանձինահատկությունների:

Արտադրական ունակությունները համադրելու նպատակով հողերը գնահատվում են ինչպես քացարձակ, այնպես էլ հարաբերական մեծություններով (քալերով):

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունն ընդունվում է որպես հողերի տնտեսական զնահատման ցուցանիշ՝ ըստ առանձին մշակաբույսերի մշակման արդյունավետության:

Ընդհանուր զնահատման ցուցանիշներն են միավոր տարածությունից ստացված բոլոր մշակաբույսերի համախառն արտադրանքը և դրանց արդյունավետությունը:

Ստացված գնահատման ցուցանիշներն ամփոփվում են գնահատման տեղեկագրերում (սանդղակներում), որոնք կազմվում են գնահատման բոլոր շրջանների, մարզերի և ամբողջ հանրապետության համար՝ ըստ գնահատման խմբերի:

16.4. ՀՈՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Գնահատման սանդղակները գնահատման ելակետային ցուցանիշների այն համակարգն է, որը մշակվում է գյուղատնտեսական արտադրության զարգացման համարելի մակարդակում հողերի որակը համեմատելու նպատակով: Գնահատման սանդղակները կազմվում են յուրաքանչյուր գնահատման շրջանի համար՝ բացարձակ և հարաբերական ցուցանիշներով: Հարաբերական ցուցանիշներն արտահայտվում են բալերով: Գնահատման առավելագույն ցուցանիշ է ընդունվում 100 բալը: Մյուս հողախմբերի գնահատման բալերը հաշվարկելու համար նախ՝ դուրս է բերվում տվյալ սանդղակի մեկ բալի արժեքը (Էտալոնային հողախմբի ցուցանիշը՝ բաժանած 100-ի), ապա՝ գնահատվող հողախմբերի ցուցանիշները բաժանվում են մեկ բալի արժեքի վրա հետևյալ բանաձևով՝

$$\Omega = \frac{\mathfrak{Z}_1}{\mathfrak{Z}_t} \cdot 100,$$

որտեղ՝ Ω -ն հողամասի որոնելի բալն է, \mathfrak{Z}_1 -ը՝ այդ հողամասի փաստացի ցուցանիշը, \mathfrak{Z}_t -ն՝ էտալոնային ցուցանիշը:

Օրինակ՝ ջրովի վարելահողերի մեկ հեկտարի հաշվով համախառն արտադրանքի ելքի առավելագույն ցուցանիշ ստացվել է Մերձարաքյան գնահատման շրջանի առաջին խմբի հողերում՝ 1094 հազ. դրամ, իսկ Կոտայք-Մալին շրջանի գնահատման առաջին խմբի ջրովի հողերում՝ 240 հազ. դրամ: Մերձարաքյան գնահատման շրջանի առաջին խումբը կստանա 100 բալ, մեկ բալի արժեքը՝ 10,9 հազ. դրամ է (1094 հազ.:100), իսկ Կոտայք-Մալին շրջանի գնահատման առաջին խումբը կստանա 22 բալ (աղ. 18, 19):

Բոլոր հողատեսքերի տնտեսական գնահատման սանդղակները մշակելուց հետո հաշվարկվում են հողերի համեմատական գնահատման սանդղակները: Դրանց մշակման սկզբունքները նույնն են, այն տարրերությամբ, որ այստեղ որպես միասնական ընդհանուր չափանիշ ընդունվում է առավելագույն ցուցանիշ ունեցող հողամասի գնահատականը (որպես կանոն, հանրապետությունում այն կարող է լինել ջրովի վարելահողերի կամ խաղողի այգիների գնահատման սանդղակի չափանիշը):

Զրովի վարելահողերի ընդհանուր գնահատման սանդղակ

1 բալի արժեքը. ՀԱ՝ 10,94, Ծ՝ 6,15, ԶԵ՝ 4,79, ՀՌ՝ 4,07 հազ.դր/հա

Հ/Հ	Գնահատման շրջանը	Հողի գնահատման համեմունք	Կամախառն արտադրանք, ՀԱ		Ծախսեր, Ծ		Զուտ եկամուտ, ԶԵ		Հողային ոենտա, ՀՌ	
			պահը	բալ	պահը	բալ	պահը	բալ	պահը	բալ
1	Մերձարաքս- յան	1	1094	100	615	100	479	100	407	100
		2	856	78	502	82	354	74	301	74
		3	617	56	414	67	203	42	173	43
		4	414	38	331	54	83	17	71	17
		5	113	10	96	16	17	4	14	3
2	Կոտայք- Թալին	1	240	22	172	28	68	14	58	14
		2	194	18	150	24	44	9	37	9
		3	156	14	131	21	25	5	21	5
		4	115	11	102	17	13	3	11	3
		5	67	6	64	10	3	1	2	-
3	Սևան	1	473	43	304	49	169	35	144	35
		2	386	35	258	42	128	27	109	27
		3	289	26	212	34	77	16	65	16
		4	194	18	156	25	38	8	32	8
		5	52	5	50	8	2	0,4	1,7	-

Բացի գնահատման ցուցանիշներից՝ սանդղակներում տրվում են բալի արժեքը և արտադրության ինտենսիվության մակարդակի ցուցանիշները:

Հողերի գնահատման առաջնային միավորներն են առանձին մշակվող վարելահողերի հողանասերը, բազմամյա տնկարկների տեղանասերը, բնական կերահանդակների խոտհարքներն ու արտօները: Գնահատման բալերը հաշվարկվում են տվյալ հողանասում ընդգրկված գնահատման խճերի հարաբերական ցուցանիշների միջին կշռված բալերով:

Համայնքի հողերի գնահատման ցուցանիշները միավորվում են ըստ տնտեսությունների, դրանց ստորաբաժանումների, առանձին մշակաբույսերի ցանքաշրջանառությունների՝ հետևյալ բանաձևով՝

$$\text{Բ}_{\text{Ը}} = \frac{\text{Բ}_1 \cdot S_1 + \dots + \text{Բ}_n \cdot S_n}{S_1 + \dots + S_n},$$

որտեղ՝ Բ-ն տվյալ մշակաբույսին վերաբերող հողասեփականության, հողօգտագործման միջին կշռված քալն է, Բ -ը՝ հողամասի գնահատման քալը (տվյալ մշակաբույսի կամ տնկարկի տեսակի), Տ -ը՝ դաշտերի մակերեսը, որտեղ մշակվում է տվյալ բույսը կամ տնկարկը:

Աղյուսակ 19

Վարելահողերի ընդհանուր գնահատման սանդղակ

1. Զրոյի

1 քալի արժեքը ՀԱ՝ 10,94, Ծ՝ 6,15, ՁԵ՝ 4,79, ԾՀ՝ 0,018 ՀՌ՝ 4,07, հազ. դրամ/հա

Գնահատման շրջանը	Հողի գնահատման նոր իրենց մակարդակը	Համախառն արտադրանք, ՀԱ		Ծախսեր, Ծ		Չուտ եկամուտ, ՁԵ		Ծախսերի հատուցում, ԾՀ		Հողային ռենտա, ՀՌ	
		արժեք	բալ	արժեք	բալ	արժեք	բալ	արժեք	բալ	արժեք	բալ
Կոտայք-Մթավին	I	240	22	172	28	68	14	1,4	78	58	14
	II	194	18	150	24	44	9	1,3	72	37	9
	III	156	14	131	21	25	5	1,2	67	21	5
	IV	115	11	102	17	13	3	1,1	61	11	3
	V	67	6	64	10	3	1	1	56	2	-
Ախուրյան-Սպիտակ	I	476	44	313	51	163	34	1,5	83	139	34
	II	386	35	265	43	121	25	1,4	78	103	25
	III	306	28	228	37	78	16	1,3	72	66	16
	IV	190	17	159	26	31	6	1,2	67	26	6
	V	78	7	71	12	7	1	1,1	61	6	1
Աշոցք	I	136	12	90	15	46	10	1,5	83	39	10
	II	109	10	77	13	32	7	1,4	78	27	7
	III	89	8	67	11	22	5	1,3	72	19	5
	IV	64	6	56	9	8	2	1,1	61	7	2
	V	35	3	34	6	1	0,2	1	56	0,85	-
Ապարան-Հրազդան	I	419	38	268	44	151	32	1,6	89	128	31
	II	334	30	225	37	109	23	1,5	83	93	23
	III	248	23	185	30	63	13	1,3	72	54	13
	IV	167	15	134	22	33	7	1,2	67	28	7
	V	46	4	46	7	0	-	1	56	-	-

Արտադրության ինտենսիվացման մակարդակի առումով համայնքի հողերի գնահատման ցուցանիշներում կատարվում են համապատաս-

խան ուղղումները: Տնտեսությունների տեղադրվածությանը վերաբերող ուղղումները ներառվում են հողերի ընդհանուր տնտեսական գնահատման ցուցանիշներում՝ ըստ ծախսերի հատուցման և դիֆերենցիալ եկամտի: Ուղղումները օգտագործում են՝ որոշակի խումբ արտադրանքի բանակի, տեղափոխման հեռավորության և ճանապարհների բարդության հետ կապված լրացուցիչ ծախսերի որոշման համար՝ կիրառելով հետևյալ բանաձևը՝

$$\Omega_{տեղ} = \Omega_{քեռ.} + \Omega_{ճան.} + \Omega_{հեռ.}$$

որտեղ՝ $\Omega_{տեղ.}$ -ը՝ տեղադրվածության գործակիցն է, $\Omega_{քեռ.}$ -ը՝ քեռնատեղափոխման գործակիցը, $\Omega_{ճան.}$ -ը՝ ճանապարհների բարդության դասի գործակիցը, $\Omega_{հեռ.}$ -ը՝ հեռավորության գործակիցը:

Հողերի գնահատման սանդղակների և ուղղման գործակիցների մշակմանը ավարտվում է հողերի գնահատման աշխատանքների առաջին փուլը՝ հանրապետության հողագնահատման շրջանների հողատեսքերի ու գնահատման խմբերի կտրվածքով:

Հողերի գնահատման փաստաթղթերը լինում են հաշվարկանորմատիվային և արդյունքային:

Հաշվարկանորմատիվային փաստաթղթերն են՝

- գնահատման ցուցանիշների սանդղակներն՝ ըստ հողերի ազգային արտադրական խմբերի,
- գործակիցների աղյուսակները, որոնց միջոցով կատարվում են համապատասխան ուղղումներ:

Հողերի գնահատման արդյունքային փաստաթղթերն են՝

- առանձին հողամասերի հողօգտագործողների, արտադրական տեղամասերի և համայնքների հողերի գնահատման տեղեկագրերը (աղ. 20, 21),
- հողագնահատման քարտեզները, որոնք ընդգրկում են հողագնահատման խմբերի սահմանները և առանձին հողամասերի հողերի գնահատման արդյունքները:

Հողագնահատման տեղեկագրերից և կադաստրային քարտեզներից կազմվում է բացատրագիր, որը ներառում է գնահատվող օրյենտի քննակիմայական և տնտեսական պայմանները, տնտեսական մակարդակը, ելակետային տեղեկատվության վիճակը, տարածքի գնահատման առանձնահատկությունները, գնահատման արդյունքների կիրառման հնարավորությունները:

Մեփականատերերին և հողօգտագործողներին տրվում է հողերի գնահատման տեղեկագիր և հողագնահատման քարտեզ:

Հողերի գնահատման արդյունքները քննարկվում և հաստատվում են հողերի գնահատման հանրապետական հանձնաժողովի կողմից: Հողերի գնահատման նյութերի քննարկմանը հրավիրվում են համապատասխան մարզի (տարածաշրջանի) ներկայացուցիչները:

Հողերի գնահատման վերաբերյալ դիտողությունները հանձնաժողովն ընդունում է նիստից հետո մեկ ամսվա ընթացքում: Դիտողությունները պետք է լինեն հիմնավորված և հաստատված անհրաժեշտ հաշվարկներով: Հանձնաժողովը ստուգում է դրանք և ընդունում վերջնական որոշում:

Աղյուսակ 20

Ծիրակի մարզի համայնքների ջրովի վարելահողերի ընդհանուր գնահատման տեղեկագիր

1 բալի արժեքը. ՀԱ՝ 10,94, Ծ՝ 6,15, ԶԵ՝ 4,79, ՀՌ՝ 4,07 հազ. դրամ/հա

Հ/Հ	Գնահատման շրջանը	Տարբյություն ուժը՝ մի տարվա ընթացքում	Համախառն արտադրանք, ՀԱ		Ծախսեր, Ծ		Զուտ եկամուտ, ԶԵ		Հողային ռենտա, ՀՌ	
			միջին	միջ.	միջին	միջ.	միջին	միջ.	միջին	միջ.
1	Մարայիկ	120,8	332	30	238	39	94	19	80	17
2	Ազատան	2144,5	298	27	222	36	76	16	65	16
3	Այսուրիկ	41,4	306	28	228	37	78	16	66	16
4	Արևիկ	624,3	321	29	235	38	86	18	73	18
5	Բայանդուր	155,0	372	34	258	42	114	23	97	23
6	Բենիամին	141,4	301	27	222	36	79	16	67	16
7	Երազզավորս	36,8	306	28	228	37	78	16	66	16
8	Կապս	195,2	299	27	222	36	77	16	65	16
9	Կառնուտ	517,7	320	29	231	37	89	18	76	18
10	Կրաշեն	17,9	386	35	265	43	121	25	103	25
11	Հայկավան	401,1	207	19	169	28	38	8	32	8
12	Հաղիճ	20,0	167	15	134	22	33	7	28	7
13	Հացիկ	608,1	315	29	230	37	85	17	72	17
14	Մայիսյան	524,9	313	28	229	37	84	17	71	17
15	Մարմարաշեն	538,8	345	31	245	40	100	21	85	21
16	Ծահուամաբերոց	392,3	252	23	192	31	60	12	51	12
17	-	-	-	-	-	-	-	-	-	-
18	-	-	-	-	-	-	-	-	-	-
19	Քեթի	242,4	116	10	96	16	20	4	17	4
	Ընդամենը	16363,4	271	25	204	33	67	14	57	14

**Արարատի մարզի Նարեկ համայնքի գյուղատնտեսական
հողատեսքերի համենատական գնահատման տեղեկագիր
(ըստ համախառն արտադրանքի արժեքի)**

1 բալի արժեքը. ՀԱ՝ 10,94 հազ. դրամ/հա

Հ/հ	Հողագոյացած մնան շրջանը	Հողատեսքը		Հողագոյացած մնան շրջանը	Մեջնակ դնական գույքագումարի համախառն արտադրանքը	Համախառն արտադրանքը	
		Վարեկար	Չորսի			մթնութեան	բան
1	Որդ-Կոտայք-Չափիան	Չորսի	Չորսի	3	30,3	325	30
			Չորսի	4	159,8	218	20
			Չորսի	5	253,0	75	7
			Ենդամենք		443,1	144	3
			Ենդամենք	5	72,5	34	3
		Բանգային տնտեսքի մեջնական արտադրանքը	Ենդամենք		515,6	129	12
			Ենդամենք	3	4,5	400	37
			Ենդամենք	4	26,1	280	26
			Ենդամենք		30,6	298	28
			Ենդամենք	3	1,5	600	55
			Ենդամենք	4	4,2	400	37
			Ենդամենք		5,7	453	42
			Կորիկավոր	3	11,9	350	32
			Կորիկավոր	4	105,9	250	23
			Ենդամենք		117,8	260	24
			Ենդամենք		154,1	275	25
2	Կիսա- անապա- տային	Բնական կերա- հանդակ	արոտ	5	115,0	6	1
	Ընդ. գյուղատնտեսական հողատեսք				784,7	140	13

Հողերի գնահատման նյութերի արդիականությունն ապահովելու նպատակով դրանք բարձացվում են հաստատված ժամկետներում հինգ տարին մեկ անգամ:

16.5. ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հողերի ներհամայնքային գնահատումն ու հանրապետության հողերի գնահատումը պետական հողային կադաստրի վարման միևնույն գործընթացի տարբեր փուլերն են: Առաջին փուլում, ըստ տարածքի հողագնահատման շրջանների և հողատեսքերի, գնահատման խմբերի, մշակվում են գնահատման սանդղակներ և գործակիցներ: Դրանց հիման վրա երկրորդ փուլում կատարվում է յուրաքանչյուր հողամասի, հողակտորի, տեղամասի և հանայնի հողերի գնահատում, որը ներառում է՝

- հողերի գնահատմանը վերաբերող տեղեկատվության վիճակագրական մշակում,
- հողերի բոնիֆում և խմբավորում,
- յուրաքանչյուր գնահատվող հողամասի (հողակտորի) նախնական ծախսերի գնահատում (հաշվի առնելով տեխնոլոգիական պայմանները),
- համայնքի (տնտեսության) գյուղատնտեսական հողատեսքերի (վարելահող, բազմամյա տնկարկ, խոտհարք, արոտ) տնտեսական գնահատում,
- համայնքի (տնտեսության) հողերի ընդհանուր գնահատում:

Հողերի ներհամայնքային գնահատման օբյեկտն են դաշտերը, վարելահողերի աշխատանքային հատվածները, արոտների կան խոտհարքների ցանքաշրջանառությունները, բազմամյա տնկարկների հատվածները, բնական կերահանդակների առանձին ուրվագծերը կամ զանգվածները: Գնահատումն իրականացվում է ինչպես առանձին հողամասերի, այնպես էլ ամբողջ համայնքի հողերի համար:

Գնահատման օբյեկտը հաստատվում է հողաշխնարարական նախագծերով առանձանացված հողային զանգվածներով՝ դաշտային պայմաններում դրանք ճշտելու հետո: Տարածությունները վերցվում են տըվյալ հողերի գույքագրման նյութերից:

Հողերի ներհամայնքային գնահատման տեղեկատվական հիմքն են՝

- հողերի բոնիֆումն և տնտեսական գնահատման սանդղակները (ընդհանուր և մասնակի),
- հողերի հատկություններին վերաբերող ցուցանիշներն ըստ գնահատման շրջանի՝ ներառյալ մշակաբույսերի բերքատվության միջին ցուցանիշները,
- հողերի բերրիդության ցուցանիշները (հումուսվ, սննդանյութերով ապահովածությունը և այլն),

- հողերի տեխնոլոգիական պայմանները (թեքության աստիճանը, քարքարոտությունը, մասնատվածությունը, բարձրությունը ծովի մակերևույթից և այլն),
- ըստ գնահատման շրջանի՝ մշակաբույսերի բերքատվությունը, կատարված ծախսերը և կազմը,
- գյուղատնտեսական մշակաբույսերի տեխնոլոգիական քարտեզը,
- բուսաբուծական մթերքի իրացման գմերը, բեռնատեղափոխման ցուցանիշները,
- ներհամայնքային հողաշխնարարական նախագծերը, հողերի գույքագրման, քարտեզագրական, խոշորանասշտաք հողագիտական, երկրաբուսարանական, ազորքիմիական և այլ հետազոտական նյութերը:

Ինչպես նշվել է, հողերի բոնիտումը հողերի ներհամայնքային գնահատման բաղկացուցիչ մասն է: Բոնիտման միջոցով որոշվում է հողերի որակական հատկությունների համեմատական գնահատականը, որը հիմնված է հողի բնական բերրիության այն ցուցանիշների վրա, որոնք պայմանավորում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունն ու քիչ են փոփոխվում ժամանակի ընթացքում՝ արտադրության համապրելի պայմաններում:

Հողերի բոնիտման ընթացքում լուծվում են հետևյալ խնդիրները՝

- մշակվում են հողերի խմբերի գնահատման սանդղակներն՝ ըստ հողերի բնական հատկությունների,
- հաշվարկվում են հողերի բոնիտման սանդղակներն՝ ըստ առանձին հողատեսքերի և մշակաբույսերի,
- հաշվարկվում են բոնիտման միջին կշռային բալերն՝ ըստ առանձին հողատեսքերի և հողամասերի,
- բոնիտման բալերի հիման վրա կատարվում է հողերի խմբավորում՝ ըստ ընդունված մեթոդների:

Հողերի գնահատման առաջնային միավորի՝ հողակտորի համար հավաքվում և որոշվում են հետևյալ տվյալները՝

- տարածությունը,
- հողաբարելավման վիճակը,
- հողերի կարգաբանական համարները,
- հողի բերրիության ցուցանիշները (հումուսի պարունակությունը, հողի հզորությունը, սննդատարրերի քանակը, թեքության աստիճանը և այլն),
- հողամասերի տեխնոլոգիական պայմանները (ռելիեֆը, քարքարությունը, բարձրությունը ծովի մակերևույթից և այլն),

- հեռավորությունը համայնքի կենտրոնից և ճանապարհների որակը,
- բնական կերահանդակների տարածությունը, հողաբարելավման վիճակը, հողերի և բուսական տիպերի կարգաբանական համարները և այլն:

Վարելահողերի և բազմամյա տնկարկների գնահատման ցուցանիշների մշակման ընթացքում հաշվարկվում են հետևյալ տվյալները՝

- բերքատվությունը, ց/հա, բալ,
- հողամասի մեծությունը, բալ,
- աշխատանքային ծախսերը (մարդ-ժամ/հա), գործակիցը,
- ընդհանուր ծախսերը, գործակիցը,
- արտադրանքի ինքնարժեքը, դրամ/ց,
- ծախսերի հատուցումը, դրամ/դրամ,
- հողի ռենտան, դրամ/հա:

Հողերի ներհամայնքային գնահատման ընթացքում բնական կերահանդակների համար հաշվարկվում է արդյունավետությունը (կերային միավորների ելքը մեկ հեկտարի հաշվով, բալ):

Ոչ հեռու անցյալում հողերի գնահատումը կատարվում էր ըստ խոշոր հողամասերի, ցանքաշրջանառությունների, դաշտերի և խոշոր օյուղատնտեսական ձեռնարկությունների: Հողասեփականության և հողօգտագործման ներկա պայմաններում հողերի այդպիսի գնահատումն անբավարար է՝ հողօգտագործման նոր հարաբերություններում ճիշտ տնտեսական քաղաքականություն վարելու համար: Այժմ, ելնելով նոր պայմաններից, անհրաժեշտ է որպես գնահատման օբյեկտ ընտրել փոքր, առանձին մշակվող և օգտագործվող հողամասեր և հողակտորներ: Այդ նպատակով կատարվում են առանձին հողակտորների գնահատման հետազոտություններ, անցկացվում է որվազգերի բոնիտում և գնահատման խմբավորում:

Հողերը գնահատվում են ոչ միայն ըստ հատկությունների, որոնցով պայմանավորված է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, այլև ըստ տեխնոլոգիական պայմանների, հողամասերի տեղադրվածության: Հաշվարկվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են աշխատանքի արտադրողականությունը, ծախսերի հատուցումը, դիֆերենցիալ ռենտան: Հողերի ներհամայնքային գնահատման նպատակով, յուրաքանչյուր հողային միավորի համար, հավաքվում, խմբավորվում և մշակվում է գյուղատնտեսական մթերքի արտադրության վրա կատարված ծախսերին վերաբերող տեղեկատվությունը: Հողերի տեխնոլոգիական բնութագիրը (մասնատվածությունը, ծեփ բարդությունը և այլն) սկզբնական դիտարկումներում տրվում է բնական ցուցանիշներով, ապա՝ համադրելու համար դրանք վերահաշվարկվում են գործակիցներով և բալերով:

Հողերի տեխնոլոգիական պայմանների բալերը հաշվի են առնվում գնահատվող օրյեկտների ծախսերի հաշվառման ընթացքում: Ստացված մեծություններն օգտագործվում են արտադրանքի ինքնարժեքը, ծախսերի հատուցումը, հողի ռենտան որոշելու համար:

Հողերի ներհամայնքային գնահատման ընթացքում հաշվարկվում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության սանդղակները, որոնց հիմքում ընկած են բազմամյա դիտարկումները, համայնքներում փորձնական հարցման և ֆինանսական մոնիթորինգի միջոցով ստացված բերքատվության միջին ցուցանիշները: Հողերի բոնիտման ընթացքում որոշվում է, թե որքանով լավ կամ վատ է այս կամ այն հողամասն իր բնական կամ ձեռքբերովի հատկություններով: Այդ դեպքում հողերի գնահատման օրյեկտ են հանդիսանում հողերի տարատեսակները կամ ծագումնաբանորեն միմյանց մոտ հողախմբերը: Հողերի բոնիտման սանդղակներ կազմելու ընթացքում հողի բնական հատկություններից առանձնացվում են հողի տիպը, հումուսային հորիզոնի հզորությունը, մեխանիկական կազմը, կանված կատիոնների գումարը և այլն: Այսպիսով՝ ընտրվում են հողերի այն գլխավոր հատկությունները, որոնք էապես ազդում են մշակաբույսերի բերքատվության վրա:

Հանրապետական 100-բալային փակ սանդղակ կազմելու համար կարևոր պայման է գտնել բոնիտման առավելագույն ցուցանիշ ունեցող հողը: Լավագույն է համարվում այն հողը, որի գնահատման բոլոր դրական ցուցանիշների գումարային արժեքն ամենաբարձրն է: Այդ դեպքում հատկանիշները չափվում են ոչ միասնական ցուցանիշներով. սանդղակը կազմվում է առանձին հատկանիշի համար, ապա՝ տեղադրվում ընդհանուր բոնիտման սանդղակի մեջ: Ցուրաքանչյուր հատկանիշի համար սանդղակի կազմման սկզբունքը մեկն է, այսինքն՝ առավելագույն ցուցանիշը գնահատվում է 100 բալ, իսկ դրա հարգերությանք հաշվարկվում է մյուս հողի այդ ցուցանիշի բալը հետևյալ բանաձևով՝

$$\mathbf{P_h} = \frac{\mathbf{P_1}}{\mathbf{P_{100}}} \cdot 100,$$

որտեղ՝ $\mathbf{P_h}$ -ն տվյալ հողամասի բալն է, $\mathbf{P_1}$ -ը՝ տվյալ հողամասի ցուցանիշը, $\mathbf{P_{100}}$ -ը՝ 100 բալ ունեցող հողամասի ցուցանիշը:

Որպես չափանիշ՝ Հայաստանի Հանրապետության բոլոր հողագնահատման շրջանների ջրովի վարելահողերի համար ընդունվել են Մերձարաքսյան գնահատման շրջանի մարգագետնային գորշ մնացորդային հողերը, իսկ անջրդի վարելահողերի համար՝ տիպիկ սևահողերը:

Հիմք ընդունելով հողերի բոնիտման հանրապետական սանդղակները՝ կատարում են յուրաքանչյուր համայնքի գյուղատնտեսական հղատեսքի բոնիտում:

Համայնքների (տնտեսությունների) գյուղատնտեսական հողատեսքերի որակական զնահատման՝ բռնիտման աշխատանքներին հաջորդում է հողերի տնտեսական զնահատումը: Տնտեսական զնահատման հիմքն են կազմում տվյալ հողագնահատման շրջանի (որի սահմաններում է գտնվում համայնքը) մշակված հողերի ելակետային ցուցանիշները, զնահատման սանրդակները և ուղղման գործակիցները: Հողերի ներհամայնքային զնահատման ընթացքում հաշվի են առնվում համայնքի հողօգտագործման առանձնահատկությունները, հողատեսքերի կառուցվածքը, տեխնոլոգիական պայմանները, տեղադրվածությունը, ճանապարհների բարդությունը, որոնց ցուցանիշներն օգտագործվում են բազմային ծախսերի մեջ համապատասխան ուղղումներ մտցնելու համար:

Հողերի տնտեսական զնահատումը հիմնվում է բռնիտման արդյունքների վրա: Հողը բնուրագրվում է որպես գյուղատնտեսության զիսավոր արտադրամիցոց: Եթե բռնիտման ընթացքում այն դիտվում է որպես բնական մարմին, ապա տնտեսական զնահատման ժամանակ՝ որպես աշխատանքի առարկա: Տվյալ տնտեսական պայմաններում գտնվող հողերի արտադրական ունակությունը որոշում են՝ հաշվի առնելով հողերի մշակման տեխնոլոգիական պայմանները, տեղադրվածությունն ու այլ գործակիցներ: Կատարվում է տեխնոլոգիական հատկությունների զնահատում (Էներգատարություն, քարքարոտություն, ռեինեֆ, ուղվագծի մեծություն, տեղադրվածություն և այլն):

Հողի էներգատարության զնահատումը հիմնված է հողի տեսակարար դիմադրությունը որոշելու վրա: Այն հաշվի են առնում Վարի աշխատանքները նորմավորելու համար: Ինչպես հողի որակական մյուս ցուցանիշները, հողի դիմադրությունն ունի աշխատանքի արտադրողականության վրա ազդեցության քանակական զնահատական:

Հողի էներգատարության զնահատման սանրդակը կազմվում է ըստ վարի աշխատանքներում վառելիքի ծախսի տիպային նորմերի, որը կախված է հողի տեսակարար դիմադրությունից:

Էներգատարության քայլ հակադարձ համեմատական է աշխատանքի արտադրողականությանը և ուղիղ համեմատական՝ վառելիքի ծախսին: Տարրեր հողեր, ըստ մեխանիկական կազմի և այլ հատկությունների, ունեն էներգատարության տարրեր զնահատական, որն արտահայտվում է քալերով, իսկ տեսակարար դիմադրությունը՝ գործակիցներով (աղ. 22):

Հողերի քարքարոտության զնահատումը: Հողագիտական և այլ մասնագիտական հետազոտությունների Այուբերի հիման վրա որոշվում է հողերի քարքարոտության աստիճանը: Քարքարոտությունը բնուրագրվում է հողի 25-սանտիմետրանոց շերտում քարերի առկայությամբ: Այն արտահայտվում է դաշտային մեքենայացված աշխատանքների արտադրությամբ:

լողականության վրա ազդեցության գործակիցներով: Զարքարտության բացակայությունը գնահատվում է 1 գործակով: Որքան բարձր է քարքարությունը, անքան բարձր է քարքարության գործակիցը, և ցածր՝ դաշտային մեթենայացված աշխատանքների արտադրողականությունը:

Աղյուսակ 22

Հողերի տեսակարար դիմադրության ցուցանիշները և բարդության դասերը

Բարդության դասը	Հողի տեսակարար դիմադրությունը, կգ/սմ ²	Գործակից միջին ցուցանիշը
I	0,41 - 0,53	1,00
II	0,54 - 0,59	1,03
III	0,60 - 0,65	1,06
IV	0,66 - 0,71	1,11
V	0,72 - 0,78	1,19
VI	0,79 - 0,90	1,30
VII	0,91 - 1,00	1,40

Ուկինֆի գնահատումը: Հողամասերի թեքության աստիճանն ազդում է դաշտային մեթենայացված աշխատանքների նորմագոյացնող գործոնի մեծության վրա և դրվում ուկինֆի գնահատման հիմքում: Ընդունված են հետևյալ գործակիցները. 1⁰, 1,00, 1-3⁰, 1,02, 3-5⁰, 1,09, 7-9⁰, 1,16, 9-13⁰, 1,34, 13-15⁰, 1,44, 15⁰-ից բարձր՝ 1,7:

Ուկինֆի գնահատման մեջ է մտնում հողամասերի՝ ըստ ծովի մակերևույթից բարձրության սահմանազատումը: Այդ տվյալները ստացվում են բարումետրիկ ճնշումների չափումներից կամ տեղագրական և այլ քարտեզներից վրա տարված ծովի մակերևույթից բարձրությունների հորիզոնական գծերից: Հանրապետությունում ընդունված է ծովի մակերևույթից բարձրության հետևյալ սանդղակը. մինչև 500 մ՝ 1 գործակից, 500-1000 մ՝ 1,03, 1000-1500՝ 1,07, 1500-2000 մ՝ 1,11, 2000-2500՝ 1,16, 2500-3000 մ՝ 1,20:

Հողերի տեղադրվածության գնահատումը: Հողամասերը բնութագրվում են բեռներ փոխադրող միջոցների աշխատանքի պայմաններով՝ հեռավորությամբ, ճանապարհների բարդության դասերով: Գնահատվող հողամասի հեռավորությունը գյուղմթերքի հանձնման կետից չափվում է հողօգտագործման հատակագծի վրա կուրվիմների օգնությամբ: Հեռավորությունը չափվում է կիլոմետրերով և արտահայտվում ծախսերի վրա ազդեցության գործակիցներով, որոնք մշակվում են հողագնահատման շրջանացման ընթացքում: Շանապարհների բարդության դասերի վերաբերյալ տեղեկատվությունը վերցվում է այդ նպատակով կատարված նա-

խագծահետազոտական նյութերից, ինչպես նաև դաշտային պայմաններում կատարված հատուկ դիտարկումներից:

Համայնքների հողերի գնահատման նախապատրաստական, դաշտային և գրասենյակային պայմաններում նյութերի հավաքման, խմբավորման աշխատանքներն ավարտելուց հետո, օգտվելով հողագնահատման շրջանի համար մշակված սանրդակներից և ուղղման գործակիցներից, կատարվում է յուրաքանչյուր հողատեսքի և գնահատման խճի հողերի ընդհանուր, մասնակի և համեմատական գնահատում: Գնահատման արդյունքում համայնքն տրվում են տեղեկագրեր և կադաստրային գնահատման քարտեզ:

16.6. ԲԱԶՄԱՍՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐՈՎ ԶԲԱԴԵՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԿԱԴԱՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այգեգործությունն ու խաղողագործությունը գյուղատնտեսական արտադրության ամենաշահավետ ճյուղերից են: Միավոր տարածության վրա կատարված ծախսերի բարձր մակարդակը և կապիտալ ներդրումների համեմատարար երկարաժամկետ ծախսահատուցումը (շահութաբերությունը) յուրահատուկ պահանջներ են ներկայացնում այդ նպատակով օգտագործվող հողերի էկոլոգիական վիճակին, բնատնտեսական պայմանների հաշվառմանն ու հողագնահատման աշխատանքների իրականացումը:

Ինչպես վարելահողերի, այնպես էլ բազմամյա տնկարկների կադաստրային գնահատման հիմնական խնդիրներն են հողերի առաջնային օբյեկտի և գնահատման ցուցանիշների հիմնավորումը, տարածքի շրջանացումը, ելակետային ցուցանիշների որոշումը, գնահատման սանդղակների կազմումը, հողագնահատման աշխատանքների իրականացումը: Այս հողերի ճշգրիտ գնահատման համար կատարվում է՝

- բազմամյա տնկարկների տարածքների շրջանացում,
- հողերի բռնիտում և գնահատման խմբավորում,
- տնկարկների տեսակային և սորտային կազմի որոշում,
- տնկարկների պտղաբերման տարիքի և լիարժեքության որոշում,
- գյուղատնտեսական հողատեսքների տարածության մեջ տընկարկների տարածքների տեսակարար կշռի որոշում,
- բուսաբուծական արտադրանքի ապրանքայնության մակարդակի որոշում և այլն:

Բազմամյա տնկարկներով գրադեցված հողերի գնահատման առանձնահատկությունը նրանում է, որ դրանց արտադրողականության վրա մեծ ազդեցություն են բողնում տեղանքի ռելիեֆը և կլիման: Խաղողագործությամբ և պտղաբուծությամբ գրադիտ համայնքների և տնտե-

սուբյունների հողաէկոլոգիական պայմանների գնահատումը ցույց է տրվել, որ այդ տնկարկների առավելագույն արտադրողականությունն ապահովվում է այն դեպքում, եթե քարենպաստ են ռելիէֆային, կիմնայական, հողային, տնկարկների տեսակային և սորտային համալիր պայմանները: Այդպիսի ցուցանիշները ձեռք բերելու նպատակով կատարվում է տարածքների ազդրունական հետազոտություն: Բազմամյա տրնկարկներով գրադարձված հողերի գնահատման աշխատանքներն իրականացվում են նույն հաջորդականությամբ, ինչ վարելահողերինը, իսկ այդ հողերի բոնիտման և խմբավորման ընթացքում, բացի ռելիէֆային ու հողային պայմաններից, հաշվի են առնվում տնկարկի տեսակը, տնկման սխեման, լիարժեքությունը, պտղաբերման տարիքը և այլն:

Յուրաքանչյուր հողագնահատման շրջանի համար հավաքվում, մշակվում և խմբավորվում են բազմամյա տնկարկներին վերաբերող տրնտեսական ցուցանիշները (մի քանի տարվա առումով) և անմիջական դիտարկումների միջոցով ձեռք բերված տվյալները: Տվյալների վերլուծությունից հետո որոշվում են յուրաքանչյուր հողագնահատման շրջանի սահմաններում տարածված գլխավոր հողատիպերի գնահատման միջին ելակետային ցուցանիշները, որոնց հիման վրա կազմվում է յուրաքանչյուր գնահատման շրջանի հողերի բոնիտման հիմնական սանդղակը (աղ. 23):

Աղյուսակ 23

Բազմամյա տնկարկների հողերի բոնիտման սանդղակ

հ/հ	Հողերի ազդրունակության աշխատանքանական տիպերը	Բայլը		
		Խաղող	պտղատու այգի	
			հնդավոր	կորիզավոր
1	Մնացորդային մարգագետնային գորշ	94	95	96
2	Մարգագետնային գորշ	86	87	86
3	Խոնավ մարգագետնային գորշ	73	79	79
4	Գորշ վաղեմի ռոռզելի	70	76	77
5	Գորշ նոր ռոռզելի	42	43	42
6	Բաց շագանակագույն	49	55	38
7	Սուր շագանակագույն	32	36	24
8	Դարավանային	100	100	100
9	Սևահող կարբոնատային և տիալիկ		35	19
10	Սևահող կրազուրկ		30	16
11	Անտառային դարչնագույն և տիալիկ	100	100	100
12	Անտառային դարչնագույն կարբոնատային	72	35	69
13	Անտառային դարչնագույն տիալիկ	61	32	60
14	Անտառային դարչնագույն կրազուրկ և անտառային գորշ		25	17

Սանդղակը կազմվում է գնահատման շրջանում բազմամյա տրնկարկներով գրադեցված հիմնական հողատիպերի համար, որոնք գտնվում են ռելիեֆի և կլիմայի առումով բարենպաստ պայմաններում: Բոնիտման սանդղակների և հողի հատկությունների ցուցանիշների հիման վրա որոշվում է յուրաքանչյուր հողամասի բոնիտման բալը: Այնուհետև, ըստ համայնքների, տրվում է բազմամյա տնկարկներով գրադեցված հողերի բոնիտման միջին բալը և դրա հիման վրա որոշվում այդ հողերի արժեքային գնահատականը (հողի գինը): Որպես օրինակ՝ բերվում է Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքի հողերի գնահատման տեղեկագիրը (աղ. 24):

Բազմամյա տնկարկների հողերի բոնիտման աշխատանքներին գուգահեռ կատարվում է այդ հողատեսքերի տնտեսական ցուցանիշների վերաբերյալ տվյալների հավաքում, խմբավորում և վերլուծում: Ըստ գնահատման շրջանների կազմվել է բազմամյա տնկարկների (խաղողի և պտղատու այգիների) կադաստրային գնահատման տնտեսական միջին բազիսային ցուցանիշների համեմատական տեղեկագիր (աղ. 25): Միջին բազիսային ցուցանիշները տարբերակվում են ըստ գնահատման խմբերի և կատարվում է հողահանդակների գնահատում:

16.7. ԲՆԱԿԱՆ ԿԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բնական կերահանդակներն ու վարելահողերը գնահատվում են նույն տնտեսական ցուցանիշներով, սակայն վերջիններիս կադաստրային գնահատումն ունի իր առանձնահատկությունները: Այստեղ գնահատման ընթացքում հողային հատկություններին ցուցահեռ հաշվի են առնվում խոտհարքների և արոտների խոնավացման պայմանները, բուսածածկի առանձնահատկությունները և այլն: Բնական կերահանդակների արդյունավետությունը որոշվում է ուստի հոտի զանգվածով, որն արտահայտվում է կերապրոտեհնային միավորներով:

Սեր հանրապետության բնական կերահանդակների կադաստրային գնահատման հիմքում ընկած են գոտիական առանձնահատկությունները: Հանրապետության տարածքում առանձնացված են բնական կերահանդակների 6 գոտիներ, որոնց տնտեսական միջին բազմային ցուցանիշները բերված են այլուակ 26-ում:

Բնական կերահանդակների վրա կատարվող ծախսերը որոշվում են ինչպես գոյություն ունեցող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա, այնպես էլ նորմատիվահաշվարկային և առանձին հանդակների փորձնական դիտարկումների մեթոդներով: Այդ հողատեսքերում խոտհնձի հետ կապված ծախսերից բացի՝ հաշվի են առնվում դրունց վրա կատարված նաև կերեսային և արմատական բարելավման (քիերի հեռացում, գուղձերի մաքրում, մակերեսի փողքում, քարերի հավաքում, խոտացանություն, պարարտացում և այլն), ինչպես նաև ջրամատակարարման և ջրարդիացման միջոցառումների հետ կապված ծախսերը: Խոտհարքների և արոտների վրա կատարվող ծախսերի մեջ ներառվում են խոտհնձի, խոտի հավաքման, տեղափոխման, վերամշակման և կերակրման ծախսերը: Առանձին զանգվածներին վերաբերող տեղեկությունները հավաքվում են ընտրանքային մեթոդով՝ հողօգտագործողների տրամադրած տվյալների և անմիջական դիտարկումների միջոցով:

Խոտհարքների և արոտների գնահատման ընթացքում որպես գնահատման միավոր են ընդունում երկրարուսարանական հետազոտությունների ժամանակ բուսական տիպերի և հողային հատկությունների հիման վրա առանձնացված գնահատման խմբերը, որոնք կերահանդակների առանձին զանգվածային հողամասեր են, նման են բուսական կազմով, հողի հատկություններով և կուլտուր-տեխնիկական վիճակով (մաքուր, բարելավված, բիֆապատված, քարքարոտ, հողատարված և այլն): Այդ հողատեսքերի գնահատման խմբավորումը խոտհարքների և արոտների համար կատարվում է առանձին: Բնական գոտիների կտրվածքով որոշված տնտեսական միջին բազմային ցուցանիշները տարբերակվում են ըստ գնահատման խմբերի և կատարվում է հողամասերի գնահատում:

Բնական կերահանդակների կադաստրային գնահատման տվյալները ներակայացվում են Կոտայքի մարզի Բուժական համայնքի օրինակով (աղ. 27):

ՀՈՂԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

17.1. ՀՈՂԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԷՌՈՒԹՅՈՒՆԸ

Հողային բարեփոխումների ընթացքում վճարովի հողօգտագործումը, հողի հարկման սկզբունքների վերափոխումները, շուկայական հարաբերությունների զարգացումը պահանջում են նոր մեթոդներով գնահատել հողը, ինչը բխում է պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց շահերից: Այդ պատճառով հողերի տնտեսական գնահատմանը զուգահեռ կատարվում է հողերի արժեքային գնահատում, որի ընթացքում կարևոր է տարրերակել հողերի գնահատումը և հողամասերի վրա կամ ընդերքում գտնվող անշարժ գույքի օբյեկտների գնահատումը:

Պետական հողային կաղաստրի համակարգում գյուղատնտեսական հողատեսքերի արժեքային գնահատումը հողերի որակական գնահատման՝ բոնիտման նյութերի հիման վրա հաշվարկային ռենտային եկանտի և գյուղատնտեսական հողատեսքերի արժեքի (գնի) որոշումն է: Այն հիմնված է հողերի արտադրողականության ցուցանիշների, հողերի հատկությունների հարաբերակցության, կատարված ծախսերի, հողերի օգտագործման տեխնոլոգիական պայմանների, հողամասերի տեղաշխավածության և այլ ցուցանիշների վրա:

Հողերի որակական գնահատման բալային ցուցանիշներից արժեքայինին անցնելով նպատակով կատարվում է հողերի բոնիտման մեկ բալի արժեքի հաշվարկում: Այդ նպատակով օգտագործվում են հողերի բոնիտման, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի արդյունավետության գնահատման հետևյալ ելակետային ցուցանիշները՝

- համախառն արտադրանքը՝ ՀԱ,
- արտադրական տարեկան ծախսերը՝ ԾԱ,
- բոնիտման մեկ բալի արժեքը՝ Ω_1 ,
- արտադրության գինը՝ ԱԳ,
- դիմերենցիալ ռենտան՝ $\Omega_{\eta\beta}$,
- բացարձակ ռենտան՝ $\Omega_{\rho\omega\eta}$,
- բազիսային գինը՝ $\Omega_{\rho\omega\eta}$,
- մեկ հեկտար հողատեսքի գինը՝ $\Omega_{\text{հող}}$:

17.2. ՀՈՂԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶԻՍԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻԾՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հողերի գնահատման բազիսային ցուցանիշները ստացվում են երեք փուլով: Առաջին փուլում որոշվում է յուրաքանչյուր հողագնահատման շրջանում մշակվող առաջատար մշակաբույսերի միջին բազիսային բերքատվությունը՝ հաշվի առնելով տվյալ գնահատման շրջանի բնական և տնտեսական գործոնների միջին ցուցանիշները:

Երկրորդ փուլում կատարվում է հիմնական գնահատման շրջանի սահմաններում գտնվող ջրովի և անջրով վարելահողերի միասնական գնահատման ենթաշրջանների առանձնացում և գյուղատնտեսական հողատեսքերի գնահատման միջին բազիսային ցուցանիշների որոշում:

Երրորդ փուլում հողագնահատման շրջանի յուրաքանչյուր հողատեսքի համար ստացված բազիսային ցուցանիշները տարբերակվում են ըստ հողային ուրվագծերի՝ բոնիտետի մեկ բալի արժեքի հաշվարկման ճանապարհով:

Գյուղատնտեսական հողատեսքերի արտադրողականությունը գնահատելու համար օգտագործվում են հանրապետության մարզերի և հողագնահատման շրջանների առաջատար մշակաբույսերի վերջին երեք տարիների բերքատվության միջին ցուցանիշները, տեխնիկական միջոցների ձեռքբերման և մթերքի իրացման գները: Այդ նպատակով օգտագործվում են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մոնիթորինգային տնտեսագիտական ուսումնասիրությունների ուղղակի հաշվառման եղանակներով ձեռք բերված տվյալները:

Ըստ հողագնահատման շրջանների գյուղատնտեսական հողատեսքերի միջին բազիսային գինը ստանալու համար նախ որոշվում է տվյալ տարածքից ստացվող համախառն արտադրանքի արժեքը՝ հետեւյալ բանաձևով՝

$$\text{ՀԱ} = \text{Բ.Գ.},$$

որտեղ՝ ՀԱ-ն մեկ հեկտարի հաշվով համախառն արտադրանքի արժեքն է, հազ. դրամ, Բ.-ն՝ բերքատվությունը, գ/հա, Գ-ն՝ մեկ գենտներ մթերքի իրացման միասնական գինը, հազ. դրամ:

Հողագնահատման աշխատանքները բավական բարդ և աշխատատար գործընթաց են: Ըստ գյուղատնտեսական հողատեսքերի և մշակաբույսերի՝ որոշվում են տարեկան արտադրական ծախսերը մեկ հեկտարի ու բերքի մեկ միավորի (կգ, գ, տ) հաշվով: Հանրապետությունում հողերի սեփականաշնորհումից հետո գյուղացիական տնտեսություններում բացակայում է հաշվապահական հաշվառումը: Գնահատման ընթացքում, ըստ առանձին մշակաբույսերի և հողատեսքերի ծախսերը որոշելու համար, օգտագործվում են տնտեսագիտական մոնիթորինգի, բույսերի մրցակման տեխնոլոգիական բարտերի, ըստ մթերքների առանձին տեսակ-

ների ծախսերի գնահաշվարկի (կալկուլյացիայի), ինչպես նաև մասնագիտական փորձագիտական տվյալները:

Արտադրական տարեկան ծախսերը բնեղեն և արժեքային ձևով որոշելու համար հաշվի են առնվում տարեկան աշխատանքային և նյութական ծախսերը՝

$$\Omega_{\omega} = \Omega_{\omega_1} + \Omega_{\omega_2} + \Omega_{\omega_3}, \text{ դրամ,}$$

որտեղ՝ Ω_{ω_1} -ն արտադրական ծախսերն են, Ω_{ω_2} -ը՝ աշխատանքային ծախսերը, Ω_{ω_3} -ը՝ նյութական ծախսերը, Ω_{ω_i} -ը՝ այլ ծախսերը:

Հայտ համախառն արտադրանքի բոնիտման մեկ քայլի արժեքը որոշելու համար տվյալ տարածքում ստացված համախառն արտադրանքի արժեքը քաժանվում է նույն տարածքի բոնիտման քայլի ընդհանուր քանակի վրա՝

$$\Omega_{\omega} = \zeta_{\omega} / \Omega_p,$$

որտեղ՝ Ω_{ω} -ն մեկ քայլի արժեքն է, ζ_{ω} -ն՝ համախառն արտադրանքի ընդհանուր արժեքը, Ω_p -ն՝ բոնիտման քայլի ընդհանուր քանակը:

Հողերի քաղիսային գին ստացման համար հաջորդ գործողությունն արտադրության գինի որոշումն է՝

$$\Omega_q = \zeta_q \cdot 1,07,$$

որտեղ՝ Ω_q -ն արտադրության գինն է, հազ. դրամ, ζ_q -ն՝ տարեկան արտադրական ծախսերը, հազ. դրամ, 1,07-ը՝ հետզննամ գործակիցը:

Հողերի քաղիսային գինը ստանալու համար որոշվում է հողերի գնահատման հիմնական ցուցանիշը՝ դիմերենցիալ ռենտան՝

$$\Omega_{\eta\phi} = \zeta_{\omega} \cdot \Omega_q, \text{ դրամ,}$$

որտեղ՝ $\Omega_{\eta\phi}$ -ն դիմերենցիալ ռենտան է, ζ_{ω} -ն՝ համախառն արտադրանքի արժեքը, Ω_q -ն՝ արտադրության գինը:

Գյուղատնտեսական հողատեսքերի միջին քաղիսային գինը որոշվում է ըստ գնահատման շրջանների հողատեսքերի՝

$$\Omega_{\rho_{\omega q}} = (\Omega_{\eta\phi} + \Omega_{\rho_{\omega q}}) \cdot 25, \text{ դրամ,}$$

որտեղ՝ $\Omega_{\eta\phi}$ -ն՝ հողի դիմերենցիալ ռենտան է, $\Omega_{\rho_{\omega q}}$ -ը՝ հողի քացարձակ ռենտան, հավասար է համախառն արտադրանքի արժեքի 1,2 %, 25-ը՝ ռենտային եկամտի կապիտալավերածման ժամկետը, տարի:

Հողերի արժեքային գնահատման քաղիսային միջին ցուցանիշների հաշվառման ձեր ներկայացված է Կոտայք-Մալին գնահատման շրջանի համար հաշվարկված աղյուսակ 28-ում:

17.3. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գյուղատնտեսական հողատեսքերի յուրաքանչյուր բայի գինը որոշելու համար համապատասխան բազիսային արժեքը բաժանվում է 50-ի, որն արտահայտում է տվյալ գնահատման շրջանի հողերի բերդիության (100-բալային սանդղակի) միջին մակարդակը, բալերով՝

$$\Omega_{\text{փ}} = \Omega_{\text{բազ}} / 50,$$

որտեղ՝ 50-ը բազիսային հողախմբի միջին բալն է:

Յուրաքանչյուր գնահատման շրջանի համար որոշված միջին բազիսային ցուցանիշը տարբերակվում է ըստ գնահատման խմբերի, արդյունքում դուրս են բերվում խմբերի գործակիցները:

Հանրապետության յուրաքանչյուր գնահատման շրջանում գյուղատնտեսական հողատեսքերի հողամասի կադաստրային արժեքը որոշում են՝ հողամասի մակերեսը, հազ. $\Omega_{\text{բազ}}$, միջին բազիսային գինը, հազ. $\Omega_{\text{բազ}}$, կամացը՝ գնահատման խմբի գործակցով՝

$$\Omega = S_{\text{հա}} \cdot \Omega_{\text{բազ}} \cdot \Psi_{\text{խումք}},$$

որտեղ՝ Ω -ն հողամասի կադաստրային արժեքն է, հազ. դրամ, $S_{\text{հա}}$ -ն՝ հողամասի մակերեսը, հազ. $\Omega_{\text{բազ}}$ -ը՝ միջին բազիսային գինը, հազ. դրամ, $\Psi_{\text{խումք}}$ -ը՝ գնահատման խմբի գործակիցը:

Վերոհիշյալ սկզբունքներով և հաջորդականությամբ, ըստ համայնքների, կազմվում են գյուղատնտեսական հողատեսքերի, հողախմբերի, գնահատվող հողամասերի և հողակտորների բոնիտման և արժեքային գնահատման տեղեկագրերը:

Որպես օրինակ բերվում է ՀՀ Շիրակի մարզի Բենիամին համայնքի վարելահողերի արժեքային գնահատման տեղեկագիրը (աղ. 29):

Աղյուսակ 29

**ՀՀ Շիրակի մարզի Բենիամին համայնքի վարելահողերի
արժեքային գնահատման տեղեկագիր**

1 բալի արժեքը՝ 15,4 հազ. դրամ

Հողային ուրվագծի համարը	Հողատեսքը		Գնահատականը		Հողի արժեքը, հազ. դրամ	
	Վարեկանող, հա		բալ	խումք		
	ջրովի	անջրովի				
1	2	3	4	5	6	
1	18,8		71	II	1093	
2	34,4		41	III	760	
5	15,7		53	III	760	
18-19		25,3	51	III	760	
50-52	26,4		22	IV	401	
53-54		11,7	36	IV	401	
...	
...	
62		50,9	53	III	760	
Ընդամենը		425	48		729	

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐԶԻ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԸ

18.1. ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐԶԻ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՀԻՄՆԱԳՐՈՒՅԹՆԵՐԸ

Հողային կադաստրի համակարգի կարևոր օղակներից է վարչական մարզի հողային կադաստրը: Մարզը այն հիմնական վարչատարածքային միավորն է, որտեղ անմիջականորեն ձևավորվում է մարզի բնակչության տնտեսական և մշակութային կյանքը: Մարզում իրականացվում են հողերի օգտագործման հետ կապված պետական, բյուջետային և տեղական ինքնակառավարման կարևոր միջոցառումները: Հողայինարարության միջոցով կատարվում է մարզի վարչական սահմաններում գտնվող հողերի առկայության, դրանց վիճակի և օգտագործման հաշվառումը, սեփականության (հողօգտագործման) իրավունքի գրանցումը և հողերի գնահատումը:

Մարզի գյուղատնտեսական ձեռնարկությունների և կազմակերպությունների հողային կադաստրի գոյություն ունեցող տվյալները դեռևս լրիվ պատկերացում չեն տալիս մարզի հողային ֆոնդի վիճակի մասին: Ուստի անհրաժեշտ է ստեղծել հողային կադաստրի այնպիսի համակարգ, որը տեղական ինքնակառավարման մարմիններին, ձեռնարկություններին, կազմակերպություններին հնարավորություն կտա ճիշտ դեկավարել և վերահսկել արդյունավետ հողօգտագործումը: Նման համակարգի օղակներից են մարզերում և տարածաշրջաններում ձևավորված հողակադաստրային և հողայինարարական ծառայությունները:

Մարզի հողային կադաստրի մշակումը մեծ նշանակություն ունի հողային կադաստրի ամբողջ համակարգի զարգացման համար՝ այն առումով, որ մարզերից ստացված հողային հաշվետվությունների հիման վրա ձևավորվում է հանրապետության հողային կադաստրը: Այդ հաշվետվությունները կազմվում են անմիջական դիտարկումների, հանույթների, հետազոտությունների, հողայինարարական հատակագծերի ճշգրտման, տարածքների չափագրումների և առաջնային այլ փաստաթղթերի հիման վրա: Մարզի հողային կադաստրի գլխավոր խնդիրն այն է, որպեսզի ապահովի հողային պաշարների արդյունավետ օգտագործման, պահպանման և վերահսկման հարցերի լուծումը:

Հողային նոր հարաբերությունների ձևավորման պայմաններում էապես մեծանում է հողային կադաստրի և դրա բաղկացուցիչ մասերի նշանակությունը: Հողային բարեփոխումների ընթացքում, համայնքների հողօգտագործման սահմաններում գտնվող գյուղատնտեսական հողերի

սեփականաշնորհումից հետո, սկսվեցին հողերի սեփականության հանձնըման և ձևակերպման աշխատանքները:

Մարզերը, համայնքներն ու վարչական այլ կառույցները՝ հողային կադաստրի նյութերի հիման վրա, օրենքին համապատասխան, սահմանում են հողի հարկի չափը, որի հաշվարկման կարևոր սկզբունքը հողագնահատման շրջանի, խմբի և հողանասի որակական հատկությունների գնահատումն է: Հողային կադաստրի նյութերը լայնորեն կիրառվում են ներհամայնքային և միջիամայնքային հողաշինարարական աշխատանքներում: Հողային կադաստրի տվյալների հիման վրա հողային ֆոնն ող բաժանվում է ըստ հողերի նպատակային նշանակության՝ հաշվի առնելով գյուղատնտեսության, անտառատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի և այլ ճյուղերի զարգացման հեռանկարները: Հողային կադաստրի տվյալներն անհրաժեշտ են՝ գյուղատնտեսական ձեռնարկությունների տնտեսական գործունեությունը, առաջին հերթին՝ հողի և արտադրական այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ճշգրիտ վերլուծելու համար:

Մարզի հողային կադաստրը կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսական հողատեսքները պետական, հասարակական և համայնքային կարիքների համար տրամադրելու, ինչպես նաև հողերի նպատակային օգտագործման վրա վերահսկողություն սահմանելու համար:

Ըստ ժամանակի և կատարման բնույթի՝ հողային կադաստրի վարումը լինում է հիմնական և ընթացիկ:

Մարզի հիմնական հողային կադաստրը ներառում է նախապատրաստական, դաշտային, նյութերի վերամշակման և փաստաթոթերի լրացման աշխատանքները: Հիմնական կադաստրի վարման ընթացքում հաշվառվում և գրանցվում են մարզի վարչական սահմաններում գտնվող բոլոր հողերը, դրանք բնութագրվում են ըստ նպատակային օգտագործման, հողօգտագործման ձևերի, հողամասերի չափերի, վիճակի, հողատեսքների և այլն: Միաժամանակ տրվում են գյուղատնտեսական հողատեսքների որակական և տնտեսական գնահատականները: Սակայն տրնտեսական գործունեության ընթացքում որոշակի փոփոխություններ են կատարվում ըստ կատեգորիաների հողերի բաշխման, հողօգտագործման և այլ հարցերում: Հիմնական հողային կադաստրի տվյալների այժմեականությունն ապահովելու նպատակով օգտագործվում է ընթացիկ կադաստրը, որն արտացոլում է հողերի կազմի, վիճակի և օգտագործման վերաբերյալ օրենսդրութեն կատարված փոփոխությունները: Ընթացիկ կադաստրի խնդիրն է՝ ժամանակին բացահայտել փոփոխությունները և դրանք գրանցել հողակադաստրային փաստաթոթերում:

Մարզերի հողաշինարարական ծառայությունների միջոցով հողային կադաստրի վարման ընթացքում կատարվում են՝

- հողամասերի ձևավորում և դրանց կադաստրային համարակալում,
- մարզի հողերի պետական հաշվառում,
- մարզի հողերի վիճակի և օգտագործման վերաբերյալ հաշվետվորյան կազմում,
- հողօգտագործողներին կադաստրային տեղեկատվության տրամադրում,
- մարզում (համայնքում) հողերի առկայության, վիճակի և օգտագործման վերաբերյալ կադաստրային տեղեկատվության պահանջարկի մշտական ուսումնասիրություն:

18.2. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՐԱՑՑՈՒՄԸ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՄԱՐԶԾՈՒՄ

Մարզի հողային կադաստրի իրավական քաղկացուցիչ մասն է հողօգտագործման գրանցումը, որն ընդգրկում է մարզի բոլոր հողօգտագործողներին: Մարզի քարտեզի վրա յուրաքանչյուր հողօգտագործմանը տրվում է հերթական կադաստրային համար, իսկ կադաստրային գրքում նշվում են գրանցման տարին, ամիսն ու ամսաթիվը: Պետական գրանցման հիմնական փաստաթուղթը է համարվում մարզի հողօգտագործման քարտեզը, որը մարզի հողակադաստրային գրքի հավելվածն ու դրա անհրաժեշտ մասն է:

Ելենով մարզի տարածքի չափերից, հողօգտագործողների թվից և հատակագծաքարտեզագրական նյութերի առկայությունից՝ կարող են սահմանվել մարզի հողօգտագործման 1:25000, 1:50000, 1:100000 մասշտաբի քարտեզներ: Մարզի հողօգտագործման քարտեզը կարող է հիմք ծառայել հողակադաստրային այլ նպատակների ու բովանդակության քարտեզներ կազմելու համար:

Մարզի հողօգտագործման քարտեզում արտացոլվում են՝

- վարչական մարզի և բոլոր հողօգտագործումների սահմանները (սեփականության ձևեր, նպատակային նշանակության հողեր՝ կատեգորիաներ և այլն),
- գյուղական բնակավայրերը, գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրական կենտրոնները, անտառատնտեսության հողամասերը և այլն,
- հողատեսքերը, ջրային և ջրատնտեսային ցանցի տարրերը, գետերը, առուները, լճերը, աղբյուրները, ջրամբարները, ջրանցքները և այլն,
- միջհամայնքային հիմնական ճանապարհները, Էլեկտրահաղորդման և կապի ցանցերը և այլն:

Հողերի օգտագործման, տիրապետման, տնօրինման և սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականների և ակտերի համաձայն՝ մարզի քարտեզի վրա նշվում են վարչական և տնտեսական սահմաններում տեղի ունեցող բոլոր փոփոխությունները՝ հողօգտագործումների քանակը, կազմը և անվանումը, վարչական և տնտեսական կենտրոնի տեղը, հիմնական մելիորատիվ և ճանապարհային ցանցերը, ջրամատակարաման աղբյուրները, էլեկտրահաղորդման և կապի ցանցերը: Կատարված բոլոր փոփոխությունները հաշվառվում են, տվյալները գրանցվում են հատուկ մշակված տեղեկագրերում և արտացոլվում մարզի հողային ֆոնդի առկայության և բաշխվածության ամենամյա հաշվետվություններում:

Սարգի վարչական սահմաններում գտնվող բոլոր հողերը ենթակա են պետական հաշվառման: Այդ նպատակով օգտագործվում են առաջնային հողօգտագործման հողակաղաստրային բոլոր փաստաթղթերը (քարտեզները, հողակաղաստրային գրքերը), ինչպես նաև հողօգտագործողներին վերաբերող տեղեկությունները: Հաշվառումը կատարվում է հատակածաբարտեզագրական նյութերի հիմնա վրա՝ հողատեսքերի փաստացի վիճակի և ընթացիկ փոփոխությունների տվյալներով: Հողերի առաջնային հաշվառման նյութերը լրացվում և անփոփում են այդ նպատակով հատուկ պատրաստված տեղեկագրերում:

Հողատեսքերի կառուցվածքի, որոզման պայմանների փոփոխությունները պետք է համապատասխանեն բնության մեջ գոյություն ունեցող իրավիճակին: Այդ նպատակով կատարվում է ընթացիկ փոփոխությունների գրաֆիկական հաշվարկ, որը հետագայում իր տեղն է գտնում մարզի հողային ֆոնդի առկայության և բաշխման տարեկան հաշվետվություններում:

Հողերի որակական հաշվառման համար մշակվում են հատուկ ձևեր: Որակական հաշվառման են ենթարկվում գյուղատնտեսական բոլոր ձեռնարկությունների, կազմակերպությունների, հաստատությունների, ինչպես նաև պետական պահուստային հողերը: Հողերի որակական հաշվառումը կատարվում է խոշորամասշտար հողագիտական, ազգությանական, մելիորատիվ և երկրաբուսարանական հետազոտական նյութերի ամփոփ տվյալների հիմնա վրա: Այդ նպատակով կազմվում են մարզի հողագիտական, երկրաբուսարանական ամփոփ քարտեզներ, քարտասիսեմներ և դրանց կից՝ ակնարկ: Ակնարկում տրվում է մարզի բնական պայմանների՝ կիմայի, ռելիեֆի, ջրային ցանցի, բուսական և հողային ծածկույթի բնութագիրը: Առանձին նշվում է հողերի օգտագործման բնութագիրը և ներկայացվում մարզի բոլոր հողերի արդյունավետ օգտագործման, բարելավման և պահպանման նպատակով անցկացվող միջոցառումների համակարգը:

Բնական կերահանդակների որակական բնութագրման համար կազմվում է մարզի երկրաբուսաբանական քարտեզ, կուտուր-տեխնիկական վիճակի, արդյունավետ օգտագործման, բարելավման միջոցառումների քարտեզ-սխեմաներ և ակնարկ: Նյութերի ամփոփ տվյալները լրացվում են այդ նպատակով մշակված առանձին տեղեկագրերում:

18.3. ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀՈՂԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԵԱՏԱՄԱՔՆԵՐԸ

Մարզի հողային կադաստրի կազմում կարևոր տեղ են գրավում հողագնահատման աշխատանքները, քանի որ մարզն այն հիմնական վարչատարածքային միավորն է, որտեղ պետական և կառավարչական մարմինները անհրաժեշտ միջոցառումներ են մշակում՝ հողային ֆոնդն արդյունավետ օգտագործելու, հողային հարաբերությունները կարգավորելու, հողի վճարները որոշելու ու գանձելու և այլ հարցեր լուծելու համար:

Համայնքների և գյուղատնտեսական ձեռնարկությունների հողերի կադաստրային գնահատման աշխատանքների ավարտից հետո կատարվում են մարզի հողերի գնահատման աշխատանքներ:

Մարզի հողերի գնահատման նպատակով, բոլոր համայնքների հողերի գնահատման ամփոփ նյութերի հիման վրա, որոշվում են մարզի հողերի գնահատման միջին կշռված ցուցանիշները: Հողագնահատման աշխատանքներն ընդգրկում են հողերի բոնիտումը և տնտեսական գնահատումը: Հողերի գնահատման աշխատանքների առաջին փուլում իրականացվում է համայնքների հողերի բոնիտում, որի տվյալների հիման վրա կատարվում են բոնիտման աշխատանքներ՝ ամբողջ մարզի առումով: Համայնքների հողերի բոնիտման համար օգտագործվում են հողերի բնական բերրիության ցուցանիշների հիման վրա կազմված բոնիտման սանդղակները, համայնքների վարելահողերի տարածությունները, հողերի խմբերն ու ուղղման գործակիցները: Այդ տվյալների հիման վրա հաշվարկվում են մարզի յուրաքանչյուր համայնքի հողերի բոնիտման միջին կշռված բալերը՝ հետևյալ բանաձևով՝

$$\text{ԲԲ} = \sum S \cdot \text{Բ} / \sum S,$$

որտեղ՝ Բ -ն գնահատվող տարածքի բոնիտման միջին բալն է, S -ն՝ հողամասերի տարածությունը, Բ -ն՝ հողամասերի հողերի բոնիտափակում:

Համայնքների և մարզի հողերի բոնիտման միջին կշռված բալի հաշվառման ձևը ներկայացված է աղյուսակ 30-ում:

**Մարզի համայնքների վարելահողերի ընդհանուր
տնտեսական գնահատումը**

Համայնք-ները	Վարելահողերի տնտեսական գնահատում			
	ըստ համախառն արտադրանիքի արժեքի, դրամ/բալ	ըստ ծախսերի հատուցման		ըստ հողի ունտայի, բալ
		դրամ/բալ	բալ	
1	58,3	4,0	49,8	48,2
2	60,0	3,9	48,7	49,2
3	47,7	3,3	41,8	37,3
4	62,9	4,0	50,3	52,3
5	57,0	3,6	45,9	44,6
6	68,6	4,1	51,7	57,7
7	50,6	3,4	43,0	39,0
8	72,2	4,3	53,5	61,7
9	50,8	3,6	45,0	39,6
10	65,5	4,2	53,0	56,5
Մարզում	59,4	3,9	48,4	48,5

Հողագնահատման աշխատանքների երկրորդ փուլում կատարվում է մարզի բոլոր հողերի տնտեսական գնահատում: Ըստ համայնքների՝ հաշվարկվում են հողերի ընդհանուր գնահատման ցուցանիշները՝ բերքատվությունը, համախառն արտադրանիքի արժեքը, ծախսերի հատուցումը, զուտ եկամուտը: Որոշում են հողերի մասնակի գնահատման ցուցանիշները՝ հիմք ընդունելով գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության արդյունավետությունը: Գնահատման սանդղակների հիման վրա հաշվարկվում են ընդհանուր և մասնակի գնահատման ցուցանիշները ու կազմվում են համապատասխան տեղեկագրեր (աղ. 31, 32):

Ինչպես նշվել է նախորդ գոլիսներում, հողային կադաստրի վարումը անհրաժեշտ է՝ հողային պաշարների արդյունավետ օգտագործման, հողերի գնահատման և պահպանման պետական հսկողության, հողի վճարների հաշվարկման, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման գործառնությունների, հողերի շրջանառության համար: Այդ նկատումներից ենթելով՝ մարզի հողային կադաստրի վարման ընթացքում կարենք է հողերին տալ արժեքային գնահատական, առանց որի անհնարի որոշել հողի հարկի, վարձավճարի չափերի և հողային տարրեր վճարների արժեքային նորմերը:

**Մարզի համայնքների վարելահողերի տնտեսական գնահատումն
ըստ հացահատիկի, բազմամյա խոտի և կարտոֆիլի մշակման
արդյունավետության**

Համայնք-ները	Վարելահողերի գնահատումն ըստ մշակաբույսերի աճեցման արդյունավետության					
	հացահատիկ		բազմամյա խոտ		կարտոֆիլ	
	g/hա	բալ	g/hա	բալ	g/hա	բալ
1	22,2	52,9	30,8	82,5	85,5	87,2
2	23,5	56,0	31,4	84,3	82,1	83,7
3	19,5	46,5	24,3	65,2	75,4	76,9
4	18,6	56,6	33,2	89,0	78,6	80,2
5	22,3	53,3	29,5	72,9	88,1	89,9
6	26,1	62,1	36,0	96,5	95,2	97,1
7	20,6	49,0	26,0	69,7	82,2	83,9
8	27,5	65,5	38,0	100,0	98,0	100,0
9	19,9	47,4	25,8	69,2	72,5	74,0
10	24,9	57,7	34,7	92,9	86,7	88,5
Մարզում	23,0	54,7	31,1	83,3	84,4	85,0

Մարզի հողերի կադաստրային գնահատման հաջորդ փուլում համայնքների, հողօգտագործողների հողերի բռնիտման և տնտեսական գնահատման միջին բազմային ցուցանիշների հիման վրա կատարվում է հողերի արժեքային գնահատում:

Մարզի հողերի արժեքային ցուցանիշները որոշվում են ըստ համայնքների հողերի արժեքային գնահատման միջին տվյալների հիման վրա՝ հետևյալ բանաձևով՝

$$\zeta_q = \frac{S_1 Q_1 + S_2 Q_2 + S_3 Q_3 + S Q}{S_1 + S_2 + S_3 + S},$$

որտեղ՝ ζ_q -ն մարզի հողերի միջին գինն է, հազ. դրամ, S_1, S_2, S_3, S -ը՝ համայնքների հողերի տարածությունը, հա, Q_1, Q_2, Q_3, Q -ը՝ առանձին համայնքների հողերի միջին գինը, հազ. դրամ:

Մարզի վարելահողերի միջին գինի հաշվարկն, ըստ համայնքների, բերված է աղյուսակ 32-ում:

Արարատի մարզի համայնքների վարելահողերի գնի որոշումը

1 բայի արժեքը = 46 հազ. դրամ/հա

Հ/հ	Համայնքների անվանումը	Տարածությունը, հա	Բոնիտման բար	Հողի գինը, հազ.դրամ/հա
1	Ազատավան	250,1	49	2205
2	Մրգավան	173,6	51	2295
3	Նշավան	139,2	59	2655
4	Դալար	195,7	46	2070
5	Այգեպատ	72,5	52	2340
6	Սևաչափ	489,5	42	1890
7	Արարսավան	229,2	34	1530
8	Շահումյան	825,0	38	1710
9	Արտաշատ	728,0	37	1665
10	Բուրաստան	362,6	39	1755
	Ընդամենը մարզում	26106,6	45	2012

18.4. ՄԱՐԶԻ ՀՈՂԱԿԱՆԱՍՏՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄԸ

Մարզի հողակադաստրային փաստաթղթերն արտացոլում են հոդային ֆոնդի օգտագործման ընթացքում տեղի ունեցող բոլոր փոփոխությունները: Փոփոխությունների արձանագրման ժամանակ հաշվի են առնվում հողերի ընդհանուր տարածության, կատեգորիաների, առանձին հողօգտագործումների, մարզի հողատեսքերի տարածությունների, հողերի որակական հատկությունների և գնահատման վերաբերյալ տեղեկությունները:

Հողակադաստրային փաստաթղթերը լինում են բնագիր և հատակագծաբարեկամական:

Բնագիր փաստաթղթերում հողային ֆոնդին վերաբերող տեղեկություններն արտահայտվում են թվային ցուցանիշներով: Տրվում է հողօգտագործման բնութագիրն ըստ հողատեսքերի, ոռոգման պայմանների, հողերի որակական և տնտեսական գնահատման: Հիմնական բնագիր փաստաթուղթ են համարվում մարզի հողակադաստրային, հողագնահատման գրքերը, որոնցում գրանցվում են վերոհիշյալ բոլոր տեղեկությունները:

Հողային կադաստրի հատակագծաբարեկամական փաստաթղթեր են համարվում հողակադաստրային քարտեզները, որոնցում գրաֆիկորեն արտացոլվում են բնագիր փաստաթղթերում առկա՝ տարածքին վերաբերող բոլոր տեղեկությունները:

Հողակադաստրային քարտեզների կազմում ընդգրկվում են մարզի հողօգտագործման, հողահաշվառման, հողային, հողերի բոնիտման, տնտեսական գնահատման քարտեզները: Մարզի հողակադաստրային քարտեզները կազմվում են 1:50000, 1:25000, 1:10000 մասշտարների հիման վրա:

Հողակադաստրային տեքստային փաստաթղթերը լինում են հաշվառման և հաշվետվությունների տեսքով:

Հաշվառքային փաստաքուղարք է համարվում մարզի հողային հաշվեկշիռը, որն ընդգրկվում է մարզի ամբողջ հողային ֆոնով: Ամենամյա հողային հաշվեկշռում արտացոլվում են հողերին վերաբերող տվյալներն՝ ըստ կատեգորիաների, հողօգտագործման և հողատեսքերի բաշխվածության: Հողային ամփոփ հաշվեկշռում ընդգրկվում են նաև հողերի որակական բնուրագրման և տնտեսական գնահատման նյութերը: Հողային հաշվեկշռում ընդգրկվում են հաշվետու ժամանակաշրջանում հողային ֆոնում տեղի ունեցած բոլոր փոփոխությունները: Հողային հաշվեկշիռը որպես փաստաքուղարք կազմվում է հաշվառքային փաստաթղթերի հիման վրա: Այդ պատճառով հողային հաշվեկշիռի փաստաթղթերի հավաստիությունն ու հուսալիությունը որոշվում է հողահաշվառքային փաստաթղթերի բովանդակությամբ: Հիմնական հողային հաշվեկշիռի հետ առանձին ձևերով տրվում են մարզի հողերի դրականական հատկությունների, բնական կերահանդակների կուլտուր-սեխնիկական վիճակի և հողերի որակական և տնտեսական գնահատման տվյալները, ինչպես բնեղեն (հա, հատ), այնպես էլ հարաբերական ցուցանիշներով՝ բարերով:

ՔԱՂԱՔԸՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

19.1. ԱՆՉԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒԹԵՐԸ

Քաղաքների, բնակավայրերի և այլ՝ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատումը հանրապետության հողային կադաստրի բաղկացուցիչ մասերից է: Այդ հողերի գնահատումը ներառում է հետևյալ մեթոդները՝

- օբյեկտի օգտակարության գնահատումը,
- օբյեկտի փոխարինման հնարավորությունը,
- ակնկալող եկամուտների կանխատեսումը և այլն:

Օգտակարությունն անշարժ գույքի այն հատկանիշն է, որն ապահովում է օգտագործողի պահանջները տվյալ տեղում և ժամանակահատվածում: Անշարժ գույքն արժեք է ձեռք բերում, եթե այն կարող է օգտակար լինել պոտենցիալ սեփականատիրոջ համար կամ անհրաժեշտ է որոշակի տնտեսական գործառույթ իրականացնելու ընթացքում: Նույն օբյեկտի գնահատումը կարող է կատարվել տարրեր սկզբունքներով՝ ելնելով կոնկրետ պայմաններից և գնահատման նպատակներից:

Փոխարինման սկզբունքը ցույց է տալիս, որ գոյություն ունեցող օբյեկտը չի կարող ավելի բարձր արժեք ունենալ, քան համարժեք օգտակարությամբ նոր ստեղծվող օբյեկտը: Այն արտահայտում է անշարժ գույքի առավելագույն արժեքը, որով հնարավոր կլինի ձեռք բերել այլ համանրման օրինակ:

Առավելագույն արժեքը որոշվում է նույնատիպ այլ գույքի վաճառքի գնի համեմատական վերլուծության միջոցով:

Հավանական արժեքը այն արժեքն է, որը կարող է կորցնել ներդրողը, եթե ընտրի միջոցների ներդրման տվյալ, բայց ոչ այլընտրանքային տարրերակը:

Սպասումների սկզբունքը նշանակում է անշարժ գույքից սպասվող եկամուտների կամ այլ օգուտների այժմյան արժեքը:

Անշարժ գույքի օգտակարությունը կախված է կանխատեսվող եկամտից: Ներդրողն անշարժ գույքից ակնկալում է ամենամյա եկամուտ, ինչպես նաև վերավաճառքից առաջացած լրացուցիչ գումար: Այդ դեպքում կանխատեսվող գուտ եկամտի հիմնական չափանիշ է համարվում սպասվող եկամտի հոսքը՝ ժամանակի գործակցի ուղղումներով: Ներդրողի կողմից բանկ դրված գումարը բերում է տոլկու, սակայն ապագայում այդ գումարը տվյալ պահի համեմատ արժեզրկվում է: Ապագա եկամուտների վերահաշվարկը, ընթացիկ արժեքի համեմատ, կոչվում է

դիսկոնտավորում (գեղչում): Այն կիրառվում է անշարժ գույքի ոլորտում ներդրումների վերլուծության ժամանակ:

Առող կամ նվազող հասուցման իմաստն այն է, որ արտադրական հիմնական գործոններին նոր ուսուրսներ ավելացնելու արդյունքում գուտ եկամուտն աճում է արագ՝ մինչև որոշակի մակարդակին հասնելը, որից հետո աճը դանդարձում է այնքան ժամանակ, մինչև դրանում է ավելի ցածր, քան ավելացրած ուսուրսների համար կատարված ծախսերն են:

Օրինակ՝ սահմանափակ տարածության վրա մեկ-երկու տուն կառուցելու դեպքում շահույթն ավելանում է առող տեմպերով: Սինոնոյն ժամանակ, յուրաքանչյուր հաջորդ շենքի շինարարության դեպքում շահույթը պակասում է, քանի որ հողային տարածության կրծատման արդյունքում տան գինն ընկնում է: Իսկ եթե նոյն տարածության վրա կառուցվեն մեծ թվով տներ, ապա շահույթը կարող է խապան վերանալ:

Հաշվեկշռվածության կամ համամասնության սկզբունքի եռթյունն այն է, որ յուրաքանչյուր հողօգտագործման համար գոյություն ունեն արտադրական գործոնների օպտիմալ մեծություններ, որոնք միմյանց հետ փոխկապակցված են և առավելացվույն բարձրացնում են հողի գինը: Եթե գործադրված են քիչ թվով արտադրական գործոններ, ապա հողը կունենա մեծ հնարավորություններ կառուցապատման համար, իսկ շատ գործոնների առկայության դեպքում նոյն հողամասը ծանրաբեռնված է լինում շինություններով: Տվյալ պարագայում հողամասերն օգտագործվում են անարդյունավետ և կորցնում են իրենց արժեքը: Հաշվեկշռվածության սկզբունքը կիրառվում է ոչ միայն կառուցապատվող առանձին տարածքների, այլ նաև համայնքների, շրջանների, գոտիների քաղաքաշինական ծրագրերին և գլխավոր հատակագծերին համապատասխան:

Տնտեսական բաժանման սկզբունքը ենթադրում է գույքային իրավունքների այնպիսի բաժանում, որի արդյունքում առավելագույնս կը բարձրանա անշարժ գույքի արժեքը: Դրա մեջ ներառված գնահատման գործոններն են տեղադրվածությունը, փոխադրամիջոցների մատչելիությունը, շուկայական ստանդարտներին համապատասխանությունը, առաջարկն ու պահանջարկը, մրցակցությունը, ֆիզիկական ու բարոյական մաշվածությունը և այլն:

Տեղադրվածության գործոնն անշարժ գույքի արժեքի կախվածությունն է տնտեսական միջավայրից: Այն որոշվում է յուրաքանչյուր տարածքի և օրյեկտի համար և համեմատվում հարևան տարածքներում գտնվող օրյեկտների արժեքների հետ:

Ծոկայական ստանդարտների գնահատման սկզբունքը ենթադրում է, որ անշարժ գույքի կառուցապատման նախագծերը պետք է համապատասխանեն հողերի օգտագործման ընդունված տարրերակին, այսինքն՝ ճարտարապետական ոճը, ծառայությունների ու հարմարու-

թյունների մակարդակը որքանով է համապատասխանում շուկայի պահանջներին և սպասումներին:

Սուածարկի ու պահանջարկի գործոնը ցույց է տալիս, որ անշարժ գույքը պետք է որոշ չափով լինի դեֆիցիտային: Սուածարկն անշարժ գույքի այն քանակն է շուկայում, որը մատչելի է տվյալ գնով: Պահանջարկը հիմնված է անշարժ գույք ծեռք բերելու գնորդի ցանկության վրա՝ անհրաժեշտ ուսուրաների առկայության դեպքում: Սովորաբար, առաջարկն ու պահանջարկը համատեղ որոշում են անշարժ գույքի շուկայական գինը:

Մրցակցության գործոն: Այն ենթադրում է մրցակցության սրման դեպքում եկամուտների միջին մակարդակի անկում: Այս գործոնը կարելի է եկամտի հոսքի գնահատման ժամանակ, հատկապես, եթե այն շուկայական նորմից բարձր է:

Ֆիզիկական և բարոյական մաշվածության գործոնը անշարժ գույքի ֆիզիկական և բարոյական մաշվածության աստիճանն է, ինչպես նաև բանկային տոկոսադրույթների տատանումները, հողերի օգտագործման բնույթը, սոցիալական միտումները և այլն: Գնահատման ժամանակ պետք է նկատի ունենալ, որ անշարժ գույքի արժեքն ունի ժամանակի ընթացքում փոփոխման միտում:

Տրամսպորտային մատչելիության գործոնը որոշվում է քաղաքի (քնակավայրի) տարրեր հասվածների հետ կապվելու ծախսերով:

Սուավել արդյունավետ օգտագործման սկզբունքը հնարավորություն է տալիս միավորել վերոհիշյալ սկզբունքները, հաշվի առնելով այն բոլոր գործոնները, որոնք ազդում են հողամասերի և անշարժ գույքի արժեքի վրա: Այն նպատակահարմար է կիրառել ներդրումային ծրագրերի իրականացման ժամանակ: Սուավել արդյունավետ օգտագործում՝ նշանակում է ավելի մուածված, հնարավոր և օրինական այլնմտրանքային այնպիսի տարրերակի ընտրություն, որը կբարձրացնի հողի արժեքը և կապահովի տվյալ ժամանակահատվածում անշարժ գույքի առավելացույն գինը:

Տնտեսագիտական տեսության համաձայն՝ եկամուտ բերող անշարժ գույքի գնահատումը կանոնակարգված գործընթաց է, որը հիմնված է նշված սկզբունքների վրա: Գնահատման գործընթացի միասնականացմանն ու հիմնավորված արդյունքներին հասնելու նպատակով այն բաժնում է հետևյալ փուլերի՝

- խնդրի որոշում,
- գնահատման ծրագրի կազմում,
- հաստատող տեղեկատվության հավաքում,
- գնահատման համապատասխան մոտեցման ընտրություն և կիրառում,
- արդյունքների համաձայնեցում,

- գնահատման արդյունքների վերաբերյալ հաշվետվության պատրաստում:

Խնդրի որոշման փուլում բացահայտվում են գնահատման նպատակն ու անշարժ գույքի արժեքի այն տեսակը (շուկայական, գրավի, ներդրումային, հարկման նպատակով և այլն), որը պետք է հաշվարկել:

Երկրորդ փուլում մշակվում է գնահատման անցկացման պլան, որոշվում, որ ինչպիսի տվյալներ են պահանջվում տեղեկատվության և ժամանակի խնայողության համար:

Երրորդ փուլում, գնահատման պլանի համաձայն, հավաքվում է անհրաժեշտ տեղեկատվություն, որը պետք է պահպի ֆինանսավորման և օրյեկտների բնութագրման շուկայական պայմանների հետագա վերլուծությունը:

Չորրորդ փուլում ընտրվում է անշարժ գույքի գնահատման գոյուրյուն ունեցող երեք մեթոդներից մեկը՝ շուկայական, ծախսային և եկամըտային:

19.2. ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում գործում է հողի շուկայի համակարգը, որը հողամասերի պահանջարկն ու առաջարկը կապակցվում են առք ու վաճառքի գործոնների կատարելագործման հետ, հողի սպառողական արժեքը համապատասխանում է իրական (շուկայական) արժեքին: Սակայն դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե հողի շուկայում բացակայում է մենաշնորհը: Տնտեսական խթանման հիմնական լծակը՝ մրցակցությունը, ստիպում է վաճառողին իշեցնել հողամասի գինն այնքան, մինչև որ սպասվող եկամուտը համընկնի համարժեք հողամասի կապիտալավերածված ռենտայի մեծության հետ:

Քաղաքային և մերձքաղաքային հողամասերի սեփականության իրավունքը (տիրապետում, օգտագործում, տնօրինում) ինքնին բերում է լրացուցիչ եկամուտ (ռենտա)՝ առանց հաշվի առնելու ընդհանուր եկամուտը, որը ստացվում է հողի և դրա վրա տեղադրված օբյեկտի օգտագործումից:

Ներկայումս ընդունված է անշարժ գույքի (հողի և դրա վրա ամրակայված շենքերի) անբաժանելիության տեսակետը, ըստ որի անշարժ գույքի տակ գտնվող հողամասի մոտավոր արժեքը գնահատվում է փորձագիտական մեթոդով՝ համաձայն հողի շուկայի ձևավորման գործընթացների:

Հանրապետության ազգային հարստության՝ հողային ֆոնդի մեծությունը որոշելու համար անցկացվում են միանվագ դիտարկումներ:

Ստացված տվյալները հնարավորություն են տալիս որոշել հողի գնի բաժնը անշարժ գույքի գնի մեջ: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում այլընտրանքային մոտեցումը, որով փորձ է արվում հաշվարկել տեղադրվածության հետ կապված ռենտան: Հատ այս մոտեցման՝ հողամասի վրա գտնվող շինությունները միշտ ունեն վերարտադրողական՝ փոխհատուցման գին: Դա այն կապիտալն է, որի շնորհիվ կարելի է վերարտադրել (կառուցել) նման բնութագիր ռենեցող շինությունը: Այդ դեպքում, ամբողջ անշարժ գույքի շուկայական գնից հանելով շենքերի, շինությունների և մյուս անշարժ գույքի փոխհատուցման ծախսերը, կարելի է ստանալ հողամասի մաքուր արժեքը:

Հողի գնի բաժինը քաղաքի ցանկացած անշարժ գույքի գնի մեջ, կախված ժամանակից, միշտ փոփոխական է: Ժամանակի ընթացքում շենքերն ու շինությունները փիզիկական և բարոյական մաշվածության են ենթարկվում, ինչի հետևանքով դրանց արժեքը նվազում է, մինչդեռ հողամասերի տեսակարար արժեքն անընդհատ բարձրանում է: Քաղաքներում և այլ բնակավայրերում հողային ռեսուրսները սահմանափակ են, և գնորդը ցանկանում է ձեռք բերել «պատվարեր» ապրանք: Հետազոտությունները ցույց են տվել, որ բնակավայրերի և քաղաքների սահմաններում ազատ, չկառուցապատված հողամասերի արժեքն անընդհատ բարձրանում է՝ առաջ անցնելով արժեզրկումից և բանկային տոկոսադրույթների ցանկացած բարձրացումից: Դա բարդացնում է հողի շուկայի գործառնան մոդելի ստեղծման փորձերը:

Քաղաքային հողերի (կառուցապատված և չկառուցապատված հողամասեր) գնահատման ժամանակակից մերողները կարելի է բաժանել երեք խմբի.

1. Շուկայական մերող կամ վաճառքի ուղղակի համեմատական վերլուծության մերոք: Այն օգտակար է անշարժ գույքի համարդեկի օրյեկտների զարգացած շուկայի առկայության պայմաններում և դրա ճշտությունը կախված է հավաքված տեղեկատվության արժանահավատությունից: Հաճախ մերոդը հիմնվում է անցյալում կատարված գործառնությունների վրա, սակայն արագ փոփոխվող շուկայի պայմաններում արժեքը ստույգ չի որոշվում: Մերոդը հիմնված է ապագա գուտ եկամտի հոսքի կամ ձեռք բերված հողամասից ստացվող եկամտի այժմյան արժեքի վրա:

2. Ծախսային մերոդ կիրառվում է նոր և կառուցվող օբյեկտների գնահատման դեպքում՝ հողերի առավել արդյունավետ օգտագործման և ապահովագրման նպատակով: Տեղեկատվությունը պետք է ներառի հետևյալ տվյալները՝ հողի գինը, նյութերի արժեքը, աշխատավարձի միջին մակարդակը, միջոցների մաշվածության փոխհատուցումը: Այդ մերոդը պիտանի չէ ինչպես հազվագյուտ և պատմամշակութային արժեք, այն-

պես էլ ֆիզիկական բարձր մաշվածություն ունեցող օրյեկտների գնահատման համար:

3. Եկամուային մեթոդ առավել ընդունված մեթոդ է՝ անշարժ գույքի ոլորտում ներդրումների այլընտրանքային տարրերակների համեմատության համար: Այն հիմնված է կապիտալավերածված եկամտի բանկային դրույքաչափի վրա: Կատարվում է ծախսների և եկամուտների վերահաշվարկ՝ որոշակի ժամանակահատվածի համար, և կիրառվում է ընթացիկ ժամանակում: Ըստ այդ մեթոդի՝ հողի գնորդը վճարում է դրա բերած և սպասվող ռենտայի համար, այլ կերպ ասած՝ հողի գինը կապիտալավերածված ռենտան է: Այն որոշվում է, ելնելով հողային ռենտայի տարեկան գումարից և բանկային տոկոսադրույթից, հետևյալ բանաձևով՝

$$\zeta_q = \frac{R}{\cdot 100},$$

որտեղ՝ ζ_q -ն հողի գինն է, R -ն՝ հողայի տոկոսադրույթը:

-ն՝ բանկային միջին

Հողի գինը կարելի է որոշել նաև հետևյալ կերպ՝

$$\zeta_q = R \cdot 25,$$

որտեղ 25-ը եկամտի կապիտալավերածման ժամկետն է (տարիներով):

Տվյալ բանաձևի տնտեսական իմաստն այն է, որ եթե հողի շուկայական գինը շատ բարձր է, ապա գնորդը կգերազանի իր դրամագույնսը դնել բանկում և ոչ քե «հողի մեջ»: Հակառակ իրավիճակում նա կգնի հողը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կատարելազործված, ոչ մենաշնորհային, մրցակցային շուկայի առկայության պայմաններում հողամասների գնահատման երեք մեթոդներով (շուկայական-համեմատական, ծախսային և ապագա եկամուտների կապիտալավերածման) կատարված հաշվարկները տալիս են միևնույն արդյունքը: Այժմ գնահատող գործակալությունները ձգտում են հողամասների գնահատումը կատարել միաժամանակ երեք եղանակներով, որպեսզի ստուգվի իրենց կողմից գնահատվող օրյեկտների գների ճշտությունը: Վերջնական գնահատումը կախված է գնահատողի որակափորումից, գնահատման նպատակից և հավաքված տեղեկատվության ամբողջությունից:

Գնահատման առաջին եղանակը (վաճառքների համեմատություն) լայնորեն կիրառվում է մանր սպառողների կողմից (բնակելի շենքերի շուկայի սուբյեկտներ, մասնավոր շինարարության ոլորտ) և համեմատաբար պարզ է: Գնահատման երկրորդ եղանակը հաճախ կիրառում են բանկերը, ապահովագրական ընկերությունները, վարկային հաստատությունները, գրավատները և այլ կազմակերպություններ:

Պրակտիկան ցույց է տվել, որ գների որոշման ապագա եկամուտների կապիտալավերածման մեթոդը պահանջում է գնահատողի բարձր

որակավորում, այն թանկ է և հաճախակի կիրառվում է առևտրային, ներդրումային նախագծերի կազման դեպքում: Այդ մեթոդի օգտագործողները են համարվում խոշոր ներդրող ընկերությունները, շինարարական կազմակերպությունները, քաղաքային, տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք հողի և անշարժ գույքի շուկայում իրականացնում են խոշորամասշտար գործողություններ:

19.3. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հողերի տնտեսական գնահատումը բնակավայրերի և քաղաքային հողերի կադաստրի հիմնական բաղկացուցիչ մասերից է: Ըստ տեղեկատվական-իրավական կառուցվածքի՝ այն ստորաբաժանվում է հետևյալ բաժինների՝

- քաղաքների հողերի գույքագրման, սեփականության և հողօգտագործման գրանցման ժամանակակից համակարգի բաժին, ներառյալ հողամասերի սեփականության (օգտագործման) իրավունքի հաստատման վկայականի հանձնումը (ցմահ ժառանգության, անժամկետ՝ մշտական օգտագործման և այլն), գործառնական և քաղաքաշինական գրտիավորումը, վարչատարածքային բաժանումը, հողամասերի օգտագործման համար հարկային վճարումները,
- կառույցների, շինությունների, օբյեկտների ծավալատարածական բնութագրման բաժին, որն իր մեջ ներառում է առանձին ճյուղերի տարրեր օբյեկտներին, մշակութային ժառանգությանը, ապագետականացված օբյեկտներին և անշարժ գույքի հարկմանը վերաբերող ամբողջ անդամականացված օբյեկտների հարկային վճարումները,
- տարածների ճարտարագիտական ապահովման օբյեկտների բնութագրման բաժին, որտեղ հավաքվում է տրանսպորտին և տրանսպորտային կառույցներին, ջրային պաշարներին, ջրամատակարարմանը, էներգամատակարարմանը, կապին, շենքերի սահմանագծերի հարաբերությունները, ապագետական ապահովմանը վերաբերող տեղեկատվությունները,
- շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի բնութագրման բաժին, որը ամփոփված է օպային ավագանի, մակերեսային և ստորգետնյա ջրային հոսքերի, հողի և նատվածքաշերտերի աղտոտվածությանը վերաբերող տեղեկատվությունները,
- բնակչության կենսագործունեության հետ կապված սոցիալական հիմնախնդիրների, գործընթացների և երևոյթների բաժին, որն իր մեջ ներառում է բնակչության սոցիալական կազմին, առողջապահական, սոցիալ-կենցաղային և մշակութային օբ-

յեկտներով ապահովածությանը, տրանսպորտային ցանցին վերաբերող տեղեկատվությունը:

Բնակավայրերի հողերի արժեքային գնահատման հիմնական բաղադրիչներն են՝

- տեղադրվածության գործոնի գնահատումը,
- բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները,
- պատմամշակութային ժառանգության առկայությունը,
- լանջաֆոտային, բնավերականգնողական և էկոլոգիական բնութագրերը:

Քաղաքային տարածքների գնահատման նպատակով գոյություն ունեցող հատակագծակառուցվածքային և գործառնական նյութերի վերլուծության հիման վրա որոշվում են գնահատման և առանձնացվում ներքաղաքային գործառնական գոտիները՝

- բնակելի տարածքների՝ ներառյալ տարբեր կառույցները,
- արդյունաբերական,
- կենցաղապատճենական,
- հանգստի,
- հատուկ պահպանվող,
- տրանսպորտային և ճարտարագիտական հաղորդակցման ուղիներ:

Գնահատման գոտիների քանակը և դրանց որոշման սկզբունքները տարբեր քաղաքների համար տարբեր են, կախված յուրաքանչյուր քաղաքի առանձնահատկություններից՝ չափերից և տարածքի կառուցվածքից (աղ. 33, 34):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիկանության գործակիցները սահմանվում են համաձայն աղյուսակ 33-ի՝

Աղյուսակ 33

Գոտի	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Գործակից	60000	1,0000	39000	0,6500	25350	0,4225	16476	0,2746	10710	0,1785	6960	0,1160	4524	0,0754	2940	0,0490
Դրամ	60000	1,0000	39000	0,6500	25350	0,4225	16476	0,2746	10710	0,1785	6960	0,1160	4524	0,0754	2940	0,0490

2. Հայաստանի Հանրապետության մարզերի բնակավայրերի հողերի տարածագնահատման գոտիականության նվազագույն և առավելագույն գործակիցները որոշվում են համաձայն ադյուսակ 34-ի և տրվում են դրանց նկարագրման տեղեկագրեր (ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 29-ի № 1746 որոշում):

Աղյուսակ 34

Մարզեր	Գործակիցներ	
	նվազագույն	առավելագույն
Երևան քաղաք	0,0319	1,0000
Արվավիր, Արարատ	0,0024	0,1160
Արագածոտն	0,0016	0,1160
Կոտայք	0,0037	0,0754
Լոռի	0,0016	0,0754
Շիրակ	0,0016	0,0490
Տավուշ	0,0016	0,0319
Սյունիք, Վայոց ձոր, Գեղարքունիք	0,0016	0,0207

Եթե քաղաքում կան միջազգային և հանրապետական նշանակության պատմամշակութային շինություններ և հուշարձաններ, ապա գնահատման գոտիների առանձնացումը նպատակահարմար է սկսել հուշարձանների պահպանական գոտիներից, քանի որ պատմամշակութային ժառանգության գործոնը քաղաքային հողերի գնահատման մեջ կլինի գերիշխող: Դրանից հետո որոշվում են տարածքի հատակագծային կազմակերպման և գործառնական գոտիավորման մյուս տարրերը: Քաղաքի գնահատման գոտիների կտրվածքով անցկացվում է հողերի արժեքային գնահատում՝ հետևյալ գործոնների հիման վրա՝

- ըստ տեղադրվածության՝ հաշվի են առնվում հեռավորությունը մայրաքաղաքից, քաղաքի կենտրոնից, ճանապարհների և տրիանսպորտային սպասարկման որակը, աշխատանքի գնալու, մշակութակենցաղային օբյեկտների հաճախելու նյութական ծախսերը և այլն,
- ըստ բնակչության սոցիալական կամ կենսապայմանների՝ հաշվի է առնվում բնակչության ապահովածությունը բնակելի ֆոնդով, մշակութակենցաղային օբյեկտներով, ճարտարագիտական ենթակառուցվածքի օբյեկտներով, ջրային, էլեկտրական, վառելիքային պաշարներով,
- ըստ պատմամշակութային ժառանգության և լանդշաֆտի՝ հաշվի է առնվում պատմական, մշակութային, ճարտարապետական հուշարձանների առկայությունը, դրանց վիճակը, դասա-

- կարգումն ու նշանակությունը, ինչը որոշիչ դեր է խաղում քաղաքը հանգստի և զբուաշրջության առումով գրավիչ դարձնելու համար,
- ըստ բնական պայմանների, տարածքի անտառապատվածության՝ հաշվի է առնվում քաղաքի և շրջակա միջավայրի անտառապատ տարածքների որակական և տնտեսական բնութագիրը, անտառապատվածության աստիճանը, բնակչության խրտությունը, անտառային զանգվածների գործառնական նշանակությունը (հանգստի, ջրապահության, աղմկապահության և այլն),
 - ըստ շինարարության ճարտարագիտաերկրաբանական պայմանների՝ հաշվի են առնվում շինարարական աշխատանքների համար կատարվող ծախսերը՝ այն համեմատելով նվազագույն որակական ցուցանիշներ ունեցող հողամասերի հետ:

Նշված գործոններով գնահատման արդյունքն է տարածքի, ըստ գնահատման գոտիների, քաղաքաշինական արժեքի հաշվարկը: Այդ արժեքն արտահայտվում է գործակիցներով կամ քալերով, որոնք կիրառվում են քաղաքի տարածքում գտնվող հիմնարկներից և ձեռնարկություններից գանձվող հարկի չափերի ճշտգրտման համար: Քաղաքի հողերի գնահատումն ըստ էկոլոգիական վիճակի նպատակահարմար չէ ներառել ամփոփիչ (քաղային) գնահատականի մեջ, քանի որ դա կարժեզրկի այն տարածքը, որն ունի սահմանային բույլատրելի կոնցենտրացիան գերազանցող ցուցանիշներ:

19.4. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԸՆՂԱՔՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հողագնահատման ժամանակակից փորձը ցույց է տալիս, որ անշարժ գույքի գնահատման չափանիշների և արժեքային ցուցանիշների որոշման ընթացքում անշեղորեն բարձրանում են էկոլոգիական պահանջները: Դա կապված է, մի կողմից, երկրի էկոլոգիական վիճակի վատրարացման հետ, իսկ, մյուս կողմից, հողերը դիտվում են նաև որպես արտադրության միջոց:

Շրջակա միջավայրի վատրարացումը կրում է ինչպես համընդհանուր, այնպես էլ տեղային բնույթը: Աղտոտվածության կտրուկ աճի միտում է նկատվում արդյունաբերական օբյեկտների, խոշոր բնակավայրերի մոտ գտնվող տարածքներում: Հակառակ դրան, այն համեմատաբար թույլ է արտահայտվում զյուղատնտեսական հողատարածքներում: ՀՀ հողային օրենսդրությամբ արձանագրված է, որ եթե աղտոտումը կատարվում է սեփականատերերի և հողօգտագործողների մեջըով, ապա նրանց հանդեպ կիրառվում են վարչական և իրավական տույժեր, իսկ հող-

օգտագործման վրա դրվում են բազմաթիվ սահմանափակումներ: Այդ ամենն իշեցնում է հողի գինը:

Գյուղատնտեսության մեջ հողը արտադրության գլխավոր միջոց է, ի տարրերություն տնտեսության այլ ճյուղերի, որտեղ այն հանդիսանում է գալիս լոկ որպես տարածական հիմք: Հողօգտագործման նման տարրերուակումը ստիպում է կիրառել հողերի գնահատման գանազան մեթոդներ՝ հաշվի առնելով տարածքների էկոլոգիական վիճակը և համապատասխան ուղղումներ մտցնելով հողերի գնահատման ցուցանիշներում:

Այսպիսով՝ հողերի գնահատման բոլոր եղանակների դեպքում շրջակա միջավայրի պայմանների քանակական հաշվառման և գնահատման համար անհրաժեշտ է կիրառել միասնական մեթոդաբանական մուտքում:

Խոշոր տարածքների էկոլոգիական վիճակի քանակական գնահատման նպատակով օգտվում են տվյալ միջավայրի՝ օդի, հողի և ջրի մեջ վնասակար նյութերի պարունակությունը որոշող ցուցանիշներից: Նշված նյութերը վնասակար են համարվում, եթե դրանց քանակությունն անցնում է բույլատրելիության սահմանը:

Հողագնահատման տվյալների հավաքման ընթացքում հաշվի է առնվում տարածքի էկոլոգիական վիճակին վերաբերող տեղեկատվությունը, որը լինում է համընդիմանուր, տարածաշրջանային և տեղային:

Քաղաքների և այլ բնակավայրերի էկոլոգիական վիճակի վրա ազդող գործուները կարելի է միավորել հետևյալ հիմնական խմբերում՝

- մթնոլորտի աղտոտվածություն,
- հողի աղտոտվածություն ծանր մետաղների աղերով և օքսիդներով,
- ջրաղբյուրների աղտոտվածություն արդյունաբերական թափոններով,
- տեղանքի ռադիոնուկլիդային վարակվածություն:

Առավել վտանգավոր է մթնոլորտի աղտոտվածությունը արդյունաբերական արտանետումներով: Վնասակար նյութերը մթնոլորտ են անցնում զագերի և փոշու տեսքով: Զափազանց վտանգավոր են այն զագերը, որոնք, մթնոլորտային խոնավության հետ ունակցիայի մեջ մտնելով, առաջացնում են թրուներ և թափվում թրու պարունակող տեղումների տեսքով: Օրգանական միացություններից առավել վտանգավոր են ծծմբածխածինը, ֆենոլը և այլն:

Հողի աղտոտվածությունը քիմիական տարրերով և դրանց միացություններով աղտոտման մյուս վտանգավոր տեսակներից է, քանի որ այդ միացությունները հողից անցնում են սննդի մեջ: Ուստի առավել վտանգավոր է գյուղատնտեսական հողատեսքերի աղտոտումը: Թափանցելով հողի մեջ՝ քիմիական տարրերը մնում են այնտեղ երկար ժամանակ և ունեն

կուտակման միտում: Հողում հատկապես երկար են պահպանվում ցածր քիմիական ակտիվություն ունեցող ծանր մետաղների միացությունները: Կուտակվելով հողում՝ դրանք պայմաններ են ստեղծում մարդկանց և կենդանիների տարրեր հիվանդությունների առաջացման և տարածման համար:

Արյունաբերական ձեռնարկություններն արտադրական գրծունեության ընթացքում տեխնիկական նպատակներով օգտագործում են ջուր, ինչի արդյունքում տեղի է ունենում վերջինիս քիմիական և ջերմային աղտոտում: Աղտոտված ջուրը մաքրման կայաններում որոշ չափով մաքրվելուց հետո լցում է կամ կոյուղի, կամ հիդրոգրաֆիկ ցանց:

Տարածների ընդհանուր էկոլոգիական վիճակի ձևափորման հարցում վերոհիշյալ գործոնները համարվում են առաջատար: Հողագնահատման ընթացքում այդ գործոնների և արժեքային բնութագրերի միջև գոյություն ունեցող կապի բացահայտումը կարևորագույն խնդիր է: Բնական միջավայրի վատրարացումը կոռելյացիոն կապի մեջ է գտնվում հիմնական (բազային) գործոնների հետ: Բնական միջավայրի վատրարացման աստիճանը բնութագրող գործոն է համարվում բժշկաժողովրդագրական ցուցանիշը՝ բնակչության հիվանդացությունը: Հիվանդացության մակարդակի ուսումնասիրության վիճակագրական տվյալները համեմատվում են շրջակա միջավայրի վատրարացման ինտենսիվության հետ:

ՀՈՂԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՑՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԱՎՏՈՍԱՑՎԱԾ ՀԱՍԱԿԱՐԳԸ

20.1. ԱՎՏՈՍԱՑՎԱԾ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հողասեփականության և հողօգտագործման տարբեր մակարդակներում հողային կադաստրի վարումը, այդ թվում՝ հողերի քանակական և որակական գնահատումը, հողային պաշարների արդյունավետ օգտագործման ու կառավարման գործում այդ ցուցանիշների կիրառումը, ուղեկցվում են մեծածավալ, բազմարովանդակ տեղեկատվության հավաքման, խճանքարման, մշակման, պահպանման ու տրամադրման գործողություններով։ Այդ գործողություններում ձեռքի աշխատանքն ու ոչ կատարյալ հաշվողական տեխնիկան չեն բավարարում պետական հողային կադաստրի վարման ժամանակակից պահանջներին։ Ծովայական տնտեսության պայմաններում հողային նոր հարաբերությունների իրականացումը պահանջում է ժամանակակից հաշվողական տեխնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված հողային կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրում։ Այն իրենից ներկայացնում է տեղեկատվության հավաքման, մշակման, պատճենահանման և տրամադրման կենտրոնացված համակարգ, որն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեն՝ իր տարածքային ստորագրմանումների միջոցով։

Անշարժ գույքի միասնական կադաստրի ավտոմատացված համակարգի ներդրման նպատակն է ձևավորել հանրապետության ողջ տարածքում հողի և անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական կառույցներ, որոնք պետությանը, տնտեսության տարբեր ոլորտներին, յուրաքանչյուր բնակչին պետք է տրամադրեն հողին և անշարժ գույքին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, պաշտպանեն սեփականատերների, հողօգտագործողների իրավունքներն ու նպաստեն հողի շուկայի կայացմանը։

Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի հիմնական նպատակներն են՝

- անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական կենտրոնում և տարածքային ստորաբաժանումներում անշարժ գույքի հաշվառման, դրա նկատմամբ իրավունքների գրանցման և տեղեկատվության տրամադրման գործընթացների ավտոմատացումը,


- տեղեկատվական աջակցությունը,
- պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, դատական մարմններին, իրավաբանական անձանց, բանկերին, քաղաքացիներին գույքի, դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման օպերատիվության բարձրացումը:

Անշարժ գույքի գրանցման ավտոմատացված համակարգի հիմնական խնդիրն է ստեղծել ժամանակակից հաշվողական տեխնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված մեխանիզմներ, որոնք են՝

- իրավունքի գրանցման վկայականների, սեփականության կադաստրային քարտեզների էլեկտրոնային բանկի ստեղծումը,
- անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքները նկարագրող տվյալների հանրապետական էլեկտրոնային բանկի ստեղծումը,
- անշարժ գույքի կադաստրային գործերի հանրապետական էլեկտրոնային արխիվի հիմնադրումը,
- անշարժ գույքին վերաբերող տեղեկատվության, խորհրդատվության ապահովումը,
- անշարժ գույքի կադաստրային տվյալների պաշտպանությունը,
- անշարժ գույքի կադաստրի տվյալների բանկի պահուստային պատճենների ստեղծումն ու վերականգնումը,
- այլ տեղեկատվական (գերատեսչական) համակարգերի հետ համագործակցության ապահովումը և այլն:

Անշարժ գույքի կադաստրի ավտոմատացված համակարգի հիմնական սկզբունքներն են՝

- համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը,
- համակարգում անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի անհատական ծածկագրում՝ անշարժ գույքի հաշվառման և պետական գրանցման ծածկագրման կարգին համապատասխան,
- անշարժ գույքի վերաբերյալ տվյալների հավաստիությունը, լիարժեքությունն ու գաղտնիությունը,
- տրամադրվող տեղեկատվության սահմանափակումը՝ կախված համակարգից օգտվողի կարգավիճակից և լիազորություններից,
- էլեկտրոնային բանկերի պահուստային պատճենների պահպանումն ու համակարգում առաջացած վթարների դեպքում դրանց վերականգնումը,
- ծրագրային համակարգերի ապահովումը, տեղեկատվական համակարգի բաց լինելը, ՀՀ տարածքում մերողաբանական տեխնոլոգիաների միասնականությունը և այլն (նկ. 17):



Նկ. 17. Անշարժ գույքի պետական կադաստրի ավտոմատացված համակարգի գործառնական կառուցվածքը:

20.2. ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՍԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական համակարգի ավտոմատացումն իրականացվում է փոլ առ փոլ: Նորագոյն համակարգչային տեխնիկայի ներդրման շնորհիվ ավտոմատացումը ժամանակի ընթացքում աստիճանաբար ընդլայնվում և կատարելագործվում է: Հողային կադաստրի վարման սկզբնական փուլերում ստեղծված ավտոմատացված համակարգը ներառում էր հետևյալ գործողությունները՝

- հողային պաշարների օգտագործման և վերլուծության նպատակով տարածաշրջանների և համայնքների հողօգտագործողների ավտոմատացված համակարգի մշակում և ներդրում,
- հողային պաշարների ներհամայնքային, միջհամայնքային օգտագործման և վերլուծության նպատակով ավտոմատացված համակարգերի մշակում և ներդրում,
- հողերի կադաստրային գնահատման ցուցանիշների և տվյալների հիման վրա, համայնքների, հողասեփականատերերի, հողօգտագործողների հողային պաշարների և արտադրատնեսական գործունեության ուսումնասիրության նպատակով, ավտոմատացված համակարգի մշակում և ներդրում:

Հանրապետությունում ավտոմատացված համակարգի ստեղծումն ու ներդրումը սկզբնական շրջանում կրում էր գերատեսչական բնույթ: Յուրաքանչյուր գերատեսչություն (օրինակ՝ գյուղատնտեսության, բնույթ-

յան պահպանության և այլ նախարարություններ) ստեղծել էր իր հաշվո-
դական կենտրոնը՝ օգտագործելով այդ ժամանակ գոյություն ունեցող
համակարգչային տեխնիկան և ծրագրերը:

Հոդի և անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական համակարգի
հետագա զարգացումն ընթանում է նորագոյն տեղեկատվական-տեխնի-
կական միջոցների հիման վրա, որոնք մատչելի պետք է լինեն տարրեր
կատեգորիաների օգտագործողների համար: Այդ գործընթացը նույնպես
իրականացվում է փուլ առ փուլ:

Ավտոմատացված համակարգի ստեղծման և ընդլայնման առաջին
փուլում մշակվում և ներդրվում է հողամասերի ու անշարժ գույքի իրա-
վունքի գրանցման համակարգը, որն ապահովում է սեփականատերերի,
տիրապետողների, տնօրինողների իրավունքների պաշտպանությունը:
Գրանցման նման համակարգը հնարավորություն է տալիս բյուջե մուտ-
քագրել միջոցներ, որոնք գոյանում են հոդի հարկից, վարձավճարներից,
հողի և անշարժ գույքի հետ կատարված գործարքներից:

Համակարգի ծևափրումը նախատեսում է տվյալների բանկի
ստեղծման աշխատանքներին ներգրավել բոլոր այն կազմակերպություն-
ները, որոնք այս կամ այն չափով կապված են քարտեզագրական նյութե-
րի բվայնացման, ինչպես նաև տեղեկատվական ավտոմատացված հա-
մակարգի սպասարկումն ու շահագրղծումն իրականացնող կադաստրա-
յին կենտրոնների ցանցի կազմակերպման հետ:

Նման կենտրոնների խնդիրն է հետևյալ հարցերի լուծումը՝

- ծրագրային ապահովումը,
- հողային կադաստրի վարման ավտոմատացված տեխնոլոգիա-
ների ներդրումը,
- համակարգի շահագրղծման ընթացքում խորհրդատվության տրա-
մադրումը,
- աշխատակազմի ուսուցման կազմակերպումը,
- տեխնիկական միջոցների երաշխիքային և հետերաշխիքային
սպասարկման կազմակերպումը:

Այս փուլում նախատեսվում է ավարտել ավտոմատացված հա-
մակարգի ծրագրային ապահովումը, լուծել կադաստրային բոլոր ստորա-
բաժնումների տեխնիկական հագեցվածության խնդիրները, օրենսդրա-
կան ակտերի հիման վրա մշակել և հաստատել հողային կադաստրի և
դրա բաղկացուցիչ մասերի նորմատիվակրավական բազան, տեղեկատ-
վության տրամադրման կարգը, ինչպես նաև լուծել հարակից տեղեկատ-
վական համակարգերի հետ կապված համագրղծակցության հարցերը:

Տեղեկատվական բանկն իր մեջ ներառում է՝

- համայնքների և գյուղատնտեսական ձեռնարկությունների հողերի
գնահատման համար անհրաժեշտ տվյալներ (հողամասերի տա-

բածությունը, հողային տարատեսակների քանակը, դրանց համար-ները, հողի տիպը, ենթատիպը, մեխանիկական կազմը, հումուսային հորիզոնի հզորությունը, հողատարումը, քարքարոտությունը, աղակալումը, խոնավացման պայմանները, հողամասերի տեխնոլոգիական պայմանները, հողատեսքերի գնահատման տվյալները, հողերի արժեքային գնահատումը),

- ըստ հանայնքների հողերի տարբեր տիպերի գնահատման համար անհրաժեշտ տվյալներ (հողագնահատման շրջանները, հողերի ագրոարտադրական և գնահատման խմբերը, մելխորատիվ վիճակը, հողօգտագործման ձևերը, տարածության և հողագնահատման տվյալները),
- հողերի գնահատման համար անհրաժեշտ տնտեսական ցուցանիշներ, տարբեր մակարդակներում կատարված դիտարկումների և ուսումնասիրությունների հիման վրա ձեռք բերված տվյալներ (մշակաբույսերի բերքատվությունը, համախառն արտադրանքը, արտադրության գինը, հողային ռենտան, հողի գինը և այլն):

Ավտոմատացված համակարգի տվյալների բանկի ստեղծման համար վերոհիշյալ տեղեկատվության գրանցումը կատարվում է յուրաքանչյուր գործոնի և ցուցանիշի համար մշակված համապատասխան ձևերում և ստեղծվում են տվյալների բանկի առանձին կառուցվածքային ֆայլերի տեսակներ:

Երկրորդ փուլում, բոլոր մակարդակների համար, մշակվում է հողատեղեկատվական տվյալների բանկ: Այս փուլի կարևոր խնդիրներից մեկն է համակարգերի ստեղծման և շահագործման համար մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը, որի ընթացքում ուսումնասիրվում և յուրացվում են անշարժ գույքի գրանցման, հաշվառման և գնահատման գոյություն ունեցող ժամանակակից տեխնոլոգիաները, ծրագրերն ու մեթոդները: Մշակվում և հաստատվում է իրավական-նորմատիվային բազան, որոշվում համակարգի պահպանման և շահագործման ծախսերը, համակարգի տեղեկատվական ապահովումը:

Հողային կադաստրի ավտոմատացված տեղեկատվական համակարգը, ժամանակակից տեխնիկական միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա, ստեղծում է բազմաբնույթ մասնագիտացված համալիր՝ կադաստրային տեղեկատվության հավաքման, մշակման, պահպանման և տրամադրման համար:

ՀՈՂԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻՉՄԱՆԵՐԸ

21.1. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Ծովայական տնտեսության անցումային փոլոս կարևոր նշանակություն են ծեղագործությունը, հողային պաշարների կառավարման տնտեսական մեխանիզմները, որոնք ուղղված են պետական հողային քաղաքականության իրականացմանը, հողատիրապետման և հողօգտագործման իրավունքների պահպանմանը, հողի սոցիալապես արդար վճարումների հաստատմանը, արդյունավետ հողօգտագործման խթանման խնդիրների իրականացմանը, խոպան հողերի օգտագործմանը, հողամասերի էկոլոգիական վիճակի վատքարացման, հողերի անօրինական օգտագործման և շռայլման դեմ տնտեսական պատժամիջոցների կիրառմանը:

Հողային ռեսուրսների կառավարման տնտեսական կարգավորիչներն են՝

- հողի հարկը,
- հողի վարձավճարը,
- հողի շուկայական գինը,
- հողի նորմատիվային գինը,
- հողի գրավային արժեքը,
- հողի օտարման դեպքում փոխհատուցման վճարը,
- հողի պահեստավորման դեպքում փոխհատուցման վճարը,
- հողի որակի բարձրացման համար վճարը,
- էկոլոգիական պայմանների վատքարացման համար տուգանքը,
- հողերի շրջանառության դեպքում հարկային վճարումները և այլն:

Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների փորձը ցույց է տվել, որ հողը, մտնելով տնտեսական հարաբերությունների մեջ, դառնում է բյուջեն լրացնող հուսափ և անսպառ աղյուր: Այդ խնդիրը լրացնում է հողային պաշարների կառավարման պոտենցիալ համակարգի՝ վճարովի հողօգտագործման ապահովման միջոցով:

Ծովայական տնտեսությունում հողային պաշարների կառավարման ծանրության կենտրոնը նախկին ուղղակի կարգավորման մերոդներից (մյութատեխնիկական ռեսուրսների խոշոր հաշվով կենտրոնաց-

ված բաշխում և վերաբաշխում) փոխադրվում է անուղղակի ներգործության մեթոդների շարքը, հիմնականում՝ հարկային համակարգ:

Հողային պաշարների կառավարման համակարգում հողային վճարումները լուծում են հետևյալ խնդիրները՝

- ապահովում են առկա հողային պաշարների արդյունավետ բաշխումը տարրեր հողօգտագործողների միջև,
- հավասար պայմաններ ստեղծում տարրեր որակի հողամասերի վրա գործունեություն ծավալելու համար,
- ապահովում լավագույն հողային պայմաններ ունեցող հողամասերից ռենտային եկամտի մուտքագրումը բյուջե,
- ստեղծում ֆինանսական միջոցներ՝ ինչպես վարչական, այնպես էլ առանձին տարածքների հողերի բարելավման միջոցառումներ անցկացնելու համար:

Հողային պաշարների կառավարման տնտեսական մեխանիզմը պետք է հիմնվի հողային ռենտայի օգտագործման վրա: Այլ տնտեսական լծակների հետ (գներ, վարկային տոկոսադրույցներ, եկամտահարկ և այլն), այն կազմում է տնտեսական կարգավորիչների համակարգի ձևավորման հիմքը:

Ունտան (լատիներեն re հետ վերադարձնել) հաստատուն եկամուտ է, որն ուղղակի կապված չէ ձեռնարկատիրական գործունեության հետ:

Ինչպես հայտնի է, հողասեփականատերը տնտեսություն կարող է վարել ինքնուրույն, կամ իր հողամասի օգտագործման իրավունքը վարձակալական սկզբունքով փոխանցել գործարքին: Վերջինս, վարձակալական պայմանագրի հիման վրա, տվյալ հողամասի նկատմամբ ժամանակավորապես ստանում է մենաշնորհային տնտեսավարման իրավունք, որի համար սեփականատիրոջը տալիս է վարձավճար: Գործարքը, վարձակալելով հողը, ակնկալում է ստանալ ոչ միայն միջին շահույթ, այլ նաև լրացուցիչ եկամուտ, որը պետք է վճարի հողի սեփականատիրոջը՝ որպես հողային ռենտա: Հետևաբար՝ հողային ռենտան հողի վրա սեփականության իրավունքի տնտեսական իրացումն է: Տարբերում են հողային ռենտայի հետևյալ տեսակները՝ դիմերենցիալ, բացարձակ և մենաշնորհային (աղ. 35):

Մասնավոր սեփականության պայմաններում գյուղատնտեսության մեջ գոյանում է հողի սեփականության մենաշնորհի երկու տեսակ.

- հողը՝ որպես գյուղատնտեսական արտադրության օբյեկտի մենաշնորհ, որի հիման վրա առաջանում է դիմերենցիալ ռենտա,
- հողի մասնավոր սեփականության մենաշնորհ, որը բացարձակ ռենտայի առաջացման պատճառ է դառնում:

Հողային ռենտայի տեսակներն ու ձևավորման պայմանները

Ռենտայի տեսակները	Ձևավորման պայմանները	Հավելյալ եկամտի տեսակները	Հավելյալ եկամտի բաժանումը
Դիմերենցիալ ռենտա I	Հողամասերի տարբերությունն ըստ բերքատվության և տեղաբաշխման	Լավագույն հողամասերից ստացված արտադրանքի անհատական և հասարակական (շոկայական) գների տարբերությունը	Հողի սեփականատիրոջը
Դիմերենցիալ ռենտա II	Նույն հողամասի վրա լրացուցիչ ներդրումների տարբերությունը	Հասարակական (շոկայական) և անհատական գների տարբերությունը, որն ստացվում է հողերի տնտեսական բերդիության հաշվին	Վարձակալության ընթացքում անցնում է գործարարին՝ վարձակալին
Մենաշնորհային	Բացառիկ հատկություններով և սահմանափակ քանակությամբ հողեր, որոնց վրա մշակվում են հազվագյուտ բոլյուեր	Մենաշնորհային և անհատական արտադրանքի գների տարբերություն	Հողի սեփականատիրոջը և գործարարին՝ վարձակալին
Բացարձակ	Հողի սեփականության իրավունքը	Ներառում է հասարակական (շոկայական) գների մեջ հողօտագործման մենաշնորհային իրավունքի իրացումը	Հողի սեփականատիրոջը

Հողի դիմերենցիալ ռենտան որոշվում է հողի արտադրողականության ցուցանիշների հիման վրա: Դա այն լրացուցիչ եկամուտն է, որը ստացվում է հողի բերքիության տարբերությունից: Մեր հանրապետության բարդ բնակչիւմայական պայմաններում գյուղատնտեսական մշակաբույսերի կազմը, տեսակը և հողի բերքիությունը խիստ տարբեր են, ինչը թույլ չի տալիս բոլոր հողերից ստանալ միատեսակ ռենտային եկամուտ: Այդ պատճառով ռենտայի հաշվարկները կատարվում են ըստ հողագնահատման շրջանների՝ առանձնացնելով լավագույն, լավ, միջակ, միջակից ցածր և վատագույն հողախմբեր:

Քանի որ լսվ և միջին որակի հողատարածքները սահմանափակ են, ապա մարդիկ ստիպված են օգտագործել նաև վատագույն հողերը: Դա պայմանավորված է բնակչության աճով, զյուղատնտեսական մթերքների նկատմամբ պահանջների ավելացմամբ և այլ գործոններով: Այս դեպքում միջինից ցածր որակի հող օգտագործողը սպառում է միջինից բարձր հավելյալ եկամուտ: Լրացուցիչ եկամուտը հետագայում վերածվում է դիմերենցիալ ռենտայի:

Ինչպես հայտնի է, **դիմերենցիալ** ռենտան հանդես է գալիս երկու ձևով.

1. Դիմերենցիալ հողային ռենտա I: ‘Դա այն լրացուցիչ եկամուտն է, որը պայմանավորված է հողի որակական հատկություններով, ազքույլիմայական պայմաններով և շուկայի նկատմամբ ավելի հարմար տեղաշխաժածությամբ: Քանակապես այն արտահայտվում է արտադրության արդյունավետության տարբերությամբ, որը գոյանում է լավ և վատ բերրիությամբ հողերում տարբեր տնտեսավարության միջև: Ռենտայի հաշվարկը կատարվում է երկու բաղադրիչներով՝

- այն լրացուցիչ եկամտով, որն առաջանում է ավելացման շնորհիվ,
- ծախսերի տնտեսումով, որոնց համար սահմանվում են առանձին նորմատիվներ (հաշվարկվում են բնութագրական համայնքների, հողօգտագործողների և սեփականատերերի տնտեսական ցուցանիշների հիման վրա):

2. Դիմերենցիալ հողային ռենտա II: Արտադրության հասարակական և անհատական գնի միջև եղած տարբերությունն է, որը գոյանում է նույն հողամասի վրա ինչպես հողատիրոջ, այնպես էլ վարձակալի կողմից կապիտալի լրացուցիչ ներդրումների հաշվին:

Բացարձակ ռենտան ստացվում է զյուղատնտեսական բոլոր հողերից, անկախ դրանց որակից, տեղաբաշխվածությունից և լրացուցիչ կապիտալ ներդրումներից: Մանր հողասեփականատերերը հնարավորություն չունեն ստանալ շոշափելի բացարձակ ռենտա, քանի որ նրանց մոտ զյուղատնտեսական մթերքների արտադրության ծախքերը համեմատար բարձր են հասարակական անհրաժեշտ նորմատիվային ծախքերից: Բացարձակ ռենտան մեծացնում է հողային վճարումների չափերը և առաջացնում հակասություն՝ հողասեփականատիրոջ, հողօգտագործողների, վարձակալների և պետության միջև:

Սենաշնորհային հողային ռենտան ձևավորվում է լավագույն հատկություններով օժտված հողերից, որոնց վրա ինարավոր է ստանալ սպառողական բացառիկ հատկություններ ունեցող զյուղատնտեսական մշակաբույսեր: Օրինակ՝ Արարատյան հարթավայրի Սերձարաքսյան հողատարածություններում մշակվում էր խորդենի, որն ուներ բարձր շահութաբերություն:

Քաղաքներում մենաշնորհային ռենտան ձևավորվում է երկու դեպքում.

1. Ունետան ստացվում է քաղաքի բոլոր հողամասերից՝ անկախ դրանց հատկություններից ու տեղադրությունից, քանի որ քաղաքաշինական նպատակների համար պահանջվում են որոշակի մակերեսով հողամասեր: Սակայն դրանց թիվը սահմանափակ է, իսկ քաղաքաշինական պահանջներն անընդհատ ավելանում են, ինչը դառնում է հողի արժեքի բարձրացման պատճառ:
2. Մենաշնորհային ռենտան ձևավորվում է քաղաքի առանձին հողամասերում, որոնք բնական, սոցիալական և տնտեսական գործողների ողջ համալիրի առկայության դեպքում ծեռք են բերում բարձր արժեք՝ հատկապես քաղաքի կենտրոնում: Տնտեսագետները գտնում են, որ մենաշնորհային ռենտան այդպիսի հողերի կամ բնական այլ ռեսուրսների օգտագործման համար վճարվող այն արժեքն է, որի քանակությունը (պաշարը) խիստ սահմանափակ է:

Բացադիկ որակական հատկություններ ունեցող հողերի սահմանափակությամբ է պայմանավորվում դրանց վրա մշակվող մենաշնորհային արտադրանքի մեծ պահանջարկը շուկայում: Այդ պատճառով ստեղծվում է այդպիսի մթերքների՝ բարձր մենաշնորհային գներով իրացման հնարավորություն:

Դիմերենցիալ ռենտայի իրացման և վերաբաշխման մեխանիզմը կարգավորում է զյուղատնտեսական մթերքի պետական և շուկայական գները, վատագույն հողային պայմաններում արտադրված մթերքի գների վրա կատարվող հավելումները:

Ունետային վճարումների տնտեսական մեխանիզմների ստեղծման ընթացքում որոշակի խնդիրներ են առաջանում այնպիսի հողերի նկատմամբ, որոնց բնական ցածր բերրիության կամ արդեն իսկ ձևավորված բնական և տնտեսական պայմանների պատճառով դիմերենցիալ ռենտա չի ստացվում: Ընդունված է, որ առանց ռենտայի հողամասերի օգտագործման ընթացքում հողային վճարներ չեն սահմանվում, քանի որ դրանք չեն համարվում լրացուցիչ եկամտի աղբյուր: Սակայն նման հողերը պետք է պահպաննել, պայքարել հողատարման դեմ, իրականացնել հողերի բարելավման միջոցառումներ, անցկացնել կադաստրային հետազոտություններ, հաշվառման և գնահատման աշխատանքներ: Հողերի ռենտային վճարումները նպատակահարմար է կատարել բացարձակ ռենտայի հիման վրա:

Այսպիսով՝ հողային վճարումների հիմքում պետք է դնել հողային ռենտան, այսինքն՝ այն բարիքների դրամական արտահայտությունը, որը ստանում են մարդիկ՝ գրադեցնելով հողը:

Տարբեր երկներում հողային ռենտայի հաշվառման գոյություն ունեցող մոտեցումները էապես տարբերվում են ցուցանիշների կազմով և բովանդակությամբ, որոնց հիմքում ընկած են հողի վրա կատարված աշխատանքի արտադրողականության գնահատման բոլոր ձևերը:

Քաղաքային հողերի օգտագործման պայմաններում վերոհիշյալ բաղադրիչների կողքին կարևորվում է հողամասերի տեղաբաշխվածության գործոնը:

Հողի ռենտային եկամտի որոշման կարգը տրված է աղյուսակ 36-ում.

Աղյուսակ 36

Կոտայք-Ձալին գնահատման շրջանի վարելահողերի ռենտային եկամտի որոշման կարգը (օրինակ)

Հ/հ	Մշակաբույսերի անվանումը	Տարբերակած հողագործությունը	Ռենտային եկամուտ						Ընդհանուր ռենտա (7+8), հազ բովանդակության հարաբերականությունը
			Համարված հողագործությունը						
1	2	3	4	5	6	7	8	9	
1	Աշխանացան հացահատիկ	471	162	116	124	38	2	40	
2	Գարնանացան հացահատիկ	619	128	105	112	16	1	17	
3	Կարտոֆիլ	1063	630	542	580	50	6	56	
4	Բանջարային բույսեր	941	793	700	749	44	8	52	
5	Ծխախոտ	57	790	670	717	73	8	81	
6	Միայնա խոտ	25	100	69	74	26	1	27	
7	Բազմամյա խոտ	258	135	98	105	30	1	31	
	Ընդհանուր վարելահող	3434	432	414	443	39	5	44	

Հողային պաշարների կառավարման համակարգի տնտեսական կարգավորման ընթացքում, բացի հողերի բերրիության, տեղաբաշխվածության և լրացուցիչ ներդրումների տարբերություններից, անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային ռեսուրսներով ապահովածությունը, ֆոնդերի առկայությունն ու սոցիալական ռենտա առաջացնող այլ պայմաններն ու գործուները (ներկայառուցվածքների, առողջապահության, կրթության վիճակը և այլն): Այդ դասակարգումը ներկայացված է նկար 18-ում:

21.2. ՀՈՂԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵՎԵՐԸ

Հողային հարաբերությունների տնտեսական կարգավորման կարևոր բաղկացուցիչ մասերից է վճարովի հողօգտագործումը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվում են վճարումների այնպիսի ձևեր, ինչպիսիք են հողի հարկը, վարձավճարը, հողի նորմատիվային գինը և այլն:

Հողերի օգտագործման դիմաց վճարների հավաքման հարցերը կարգավորվում են «Հողի հարկի մասին», «Պետական տուրքի մասին» և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Հողային վճարումների ձևերն ու իրացման ուղղությունները բերված են նկար 19-ում:

Սեփականությամբ, ցմահ ժառանգությամբ, անժամկետ (մշտական) օգտագործման տրամադրված հողամասերից վճարվում է հողի հարկ, իսկ վարձակալությամբ տրված հողամասերից՝ վարձավճար: Հողի շուկայի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում սկզբունքորեն նոր մոտեցումներով և մերժողներով կատարել հողերի հաշվառում և գնահատում: Դրանց առք ու վաճառքի ժամանակ կարող է առաջանալ բանկային վարկավորման անհրաժեշտություն: Ուստի հողերի գնահատման ընթացքում անհրաժեշտ է դրոշել հողի նորմատիվային գինը, ինչպես նաև հարկման ընթացքում սահմանել գեղշերի համակարգի կիրառման մեխանիզմները:

Հողի հարկն արտահայտում է հասարակության և հողասեփականատիրոջ միջև գոյություն ունեցող հարաբերությունները՝ հանդիսանալով պետության և հասարակության հարստության աղբյուր:

Հողի վարձավճարը հողասեփականատիրոջ և վարձակալի միջև հարաբերությունների արտահայտումն է:

Հողի նորմատիվային գինը տնտեսագիտական կատեգորիա է, այն ընթացքում է հողի սեփականության ձևավորման ընթացքում, համարվում է հաշվառման հիմնական ձև՝ գյուղատնտեսական հողատեսքերի օտարման կամ հարկադրված պահեստավորման ընթացքում:

Հողի շուկայական գինը ձևավորվում է հողերի գնահատման հիման վրա՝ հողամասի վրա ներդրված կայիշտալի չափերով կամ էլ դրանից ստացվող արտադրանքի արժեքով, ինչպես նաև հողամասի ռենտա գոյացնող հատկություններով, հողի շուկայում առաջարկի և պահանջարկի մակարդակով, բնակչության վճարումներով և այլն:

Ունտային վճարումների և դրանց օգտագործման ժամանակակից համակարգը իրականացվում է հողի հարկի, նորմատիվային արժեքի, հողամասերի վարձավճարների միջոցով և ենթակա է հետագա կատարելագործման: Այսպես՝ ներկա փուլում պետական և համայնքային բյուջեի

մեջ հողային վճարումները շատ փոքր տոկոս են կազմում: Հայաստանի Հանրապետության բյուջեի եկամտային մասում 2006 թ. հողային վճարումներից մուտքերը կազմում էին ընդամենը 1%:

Ներկա պայմաններում սեփականաշնորհված հողանասերի արտադրողական ունակությունը բնութագրվում է որպես հողի բնական հատկությունների, ինչպես նաև՝ նախորդ սերնդի ներդրած աշխատանքի ու կապիտալի արդյունք: Պետք է հաշվի առնել, որ հողի արժեքը՝ որպես տնտեսական ռեսուրս, մեծապես պայմանավորված է տեղաբաշխվածությամբ:

Դրա հետ կապված հողային ռենտայի մի մասը (հավելյալ եկամուտը), որը գոյանում է հողերի և սահմանափակ բնական ռեսուրսների օգտագործման ընթացքում, վճարվում է հողի հարկի ձևով և ապահովում է հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացումը արտադրության բնական գործուների հաշվին:

Հոգոգությունուն սուբյեկտների տնտեսական գործունեության ընթացքում ռենտային բաղադրիչի բացահայտումը գործնականում բարդ խնդիր է, որի որոշման համար պահանջվում է, ըստ տարածաշրջանների, ստեղծել տնտեսական շրջանառության մեջ գտնվող հողանասերի ընտրության և նկարագրման լայն ցանց, կատարել նմանատիպ հողօգտագործողների խմբավորում, բացահայտել հողանասերի որակական հատկություններն ու այլ գործուներ: Այդպիսի համակարգի խնդիրն է ապահովել հողային ռենտայի արդյունավետ օգտագործում:

Հողի հարկի հողային ռենտայի այն չափն է, որը գանձվում է հողասեփականատիրոջից: Հողի հարկի դրույքաչափում պետք է արտացոլվի ռենտա առաջանող միասնական գործընթացը, այն պետք է հաստատվի՝ հաշվի առնելով դիմունիքիալ, բացարձակ և մենաշնորհային հողային ռենտաների ձևերն ու դրանք առաջանող գործուները: Սակայն շուկայական հարաբերությունների անցումային փուլում հողի հարկի դրույքաչափը, որպես կանոն, որոշվում է միջին և լավագույն պայմաններում գտնվող հողերի դիմունիքիալ ռենտայի հիման վրա:

Գոյություն ունի արդյունավետ հարկային համակարգի հիմք քննութագիր, որոնք կիրառելի են մեր հանրապետությունում հողի հարկային համակարգի ձևավորման համար՝

- տնտեսական արդյունավետություն, այսինքն՝ չկան հակասություններ ռեսուրսների արդյունավետ բաշխման հետ,
- պարզ վարչարարություն (համակարգը բաց է և հասկանալի),
- ճկունություն (տնտեսական և սոցիալական պայմանների փոփոխմանն արագ արձագանքելու ունակություն),
- քաղաքական պատասխանատվություն (պետության պատասխանատվությունը հողի պահանջարկի բավարարման հարցում),

- արդարություն (յուրաքանչյուր անհատի նկատմամբ տարրերակված արդարացի մոտեցում):

Հողի և այլ կատեգորիայի անշարժ գույքի հարկումն, ի տարրերություն իրավաբանական և ֆիզիկական անձանց այլ եկամուտների հարկման, ունի է ական առավելություններ, ինչը թույլ է տալիս արդյունավետ օգտագործել հողի հարկը՝ որպես բյուջեի ծևափորման կարևոր աղբյուր: Նախ՝ հողն իր բնույթով հարկման այնպիսի օբյեկտ է, որը գործնականորեն անհնար է թաքցնել (հաշվառման և գրանցման համապատասխան համակարգի առկայության պայմաններում, որը թույլ է տալիս նույնացնել հողամասերը, անշարժ գույքի այլ օբյեկտներն ու դրանց տերերին): Երկրորդ՝ հողի հարկային վճարներն, ի տարրերություն այլ հարկերի, որոնց հիմքը տնտեսական գործունեությունից ստացված եկամուտն է, գորեք կապ չունեն տնտեսական իրավիճակի հետ:

Հողի վարձավճարն այն գումարն է, որը տրվում է հողի սեփականատիրոջ՝ վարձակալած հողի օգտագործման դիմաց: Այն սերտորեն կապված է հողի հարկի հետ, չի կարող դրանից ցածր լինել, հողի վարձավճարի վերին շեմը պետք է սահմանափակվի հողի հարկի դրույքաչափի շահույթի միջին ցուցանիշով (30-40%): Դա, մի կողմից, նպաստում է հողերի՝ վարձակալությամբ օգտագործմանը, իսկ մյուս կողմից՝ չի սահմանափակում վարձակալի տնտեսական շահերը: Հողերի օգտագործման համաշխարհային փորձը ցույց է տվել, որ հողի վարձավճարի շափք այս կամ այն ձևով կարգավորվում է օրենսդրությամբ:

Այժմ հողի հարկի ու վարձավճարի դրույքաչափերի որոշման համար պետք է հիմք ծառայեն ըստ տարածաշրջանների, ինչպես ասում են՝ ըստ հողագնահատման շրջանների մշակված գյուղատնտեսական հողատեսքերի ու հողամասերի տնտեսական գնահատման ցուցանիշները:

Հանրապետական մակարդակով հողերի հաշվառման և գնահատման նոր համակարգը, ինչպես նաև բնական պաշարների օգտագործման համար գանձվող վճարները կարգավորող օրենսդրության կատարելագործումը հողային պաշարների կառավարման մեջ այլ անբաժանելի մասն է:

Ծովայական տնտեսության պայմաններում հողը դառնում է ապրանք և ունենում է գին, ուստի գնորդը պատրաստ է գումար վճարել գնահատված հողամասի համար, իսկ դրա մեծությունը կախված է մի շարք գործուներից և սոցիալ-տնտեսական երևույթներից:

Հողի վճարի ձևերից է **հողի նորմատիվային գինը**, որն օրենսդրութեն կիրառվում է հողային հարաբերությունների կարգավորման ժամանակ՝ հողերը որպես սեփականություն տրամադրելու, կոլեկտիվ-բաժնետիրական սեփականություն հաստատելու, ժառանգաբար փոխանցելու, նվիրատվություն ձևակերպելու, ինչպես նաև բանկային վարկ ստանալու, հողամասը գրավ դնելու դեպքում: Հողի նորմատիվային գինը որոշվում է

դրանից ստացվող պոտենցիալ եկամտի հիման վրա՝ ծախսերի հատուցման հաշվարկային ժամանակահատվածում: Յուրաքանչյուր կոնկրետ հողամասի միավոր տարածության նորմատիվային գինը հաստատվում է օրենսդրութեն՝ հոդի հարկի բազմապատիկի չափով:

Հողասեփականատերերի ու հողօգտագործողների կողմից հոդի էկոլոգիական վիճակը վատքարացնող գործունեության տնտեսական կարգավորման արդյունավետ միջոց են տուգանքները: Դրանց չափը որոշվում է այն աշխատանքների արժեքով, որոնք անհրաժեշտ են այդ հոդերի նախկին էկոլոգիական վիճակը վերականգնելու համար:

Հողային պաշարների արդյունավետ կառավարման նպատակով հարկավոր է մշակել հոդերի օգտագործման տնտեսական կարգավորման մեխանիզմներ բոլոր բնագավառների համար: Հոդը մեր ժողովոյի ազգային հարատուրյունն է և հետևաբար՝ հասարակական (պետական) սեփականություն, ուստի դրա տնօրինման իրավունքը պետք է փոխանցել նրան, ով օգտագործում է հոդը՝ հոդի հարկի պարտադիր վճարման պայմանով:

21.3. ՀՈԴԻ ՇՈՒԿԱՆ ԵՎ ՀՈԴԵՐԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԾՐՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հոդի շուկան չափազանց բարդ տնտեսական կառույց է: Դրա արդյունավետ կազմակերպումն ու գործունեությունը պահանջում են գիտականորեն հիմնավորված, գործնականորեն պատճառաբանված և իրավաբանորեն ձևակերպված որոշումներ: Հոդի շրջանառության վերահսկումն ու կարգավորումը արդյունավետ չի կարող իրականացվել առանց կազմակերպատնտեսական մեխանիզմների:

Հոդի շուկան դրա՝ որպես ապրանքի ֆիզիկական տեղաբաշխումը չէ: Պարտադիր չէ առարկայի, սեփականության օբյեկտի վաճառքը, գնումն ու օտարումը իրականացնել դրանց նյութական, բնական, ֆիզիկական տեսքով: Հոդի շուկայի առարկա է համարվում ոչ թե հոդամասը, այլ դրա օտարման և օգտագործման իրավունքը: Այսուղ մենք առնչվում ենք ոչ միայն սեփականության իրավունքի, այլև գույքային այլ իրավունքների հետ (օգտագործում, վարձակալում, հիփոքեք, սերվիտուտ և այլն): Հոդի շուկայական շրջանառությունը ձևավորվում է այն ընդհանուր գործարքներով, որոնք կատարվում են հողամասերի ժառանգության, նվիրատվության, փոխանակման, օտարման և վերաբաժանման դեպքում:

Արդի պայմաններում հոդի շուկան ոչ թե ավանդական առք ու վաճառքի գործողությունների իրականացում է, այլ շատ լայն հասկացություն, եթե շրջանառության մեջ են մտնում հոդային տարրեր իրավունքներ: Հոդի շուկան՝ որպես գործարքների ընդհանրացում, նպաստում

է յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի հողօգտագործման տարածքների բարելավմանը (օպտիմալացմանը), հանրապետության հոդային ֆոնի արդյունավետ օգտագործման ձևավորմանը: Դա իրականացվում է հողատարածությունների վերաբաշխման, փոքր հողամասերի կենտրոնացման, խոչոր հողօգտագործումների ճանապարհով:

Հոդի շուկայի կայացման համար շատ կարևոր է պետության մասնակցությունը հոդային ռենտայի օգտագործման գործում՝ ոչ միայն կազմակերպարտավական մակարդակներով, այլ նաև որպես ակտիվ հոդային սեփականատեր, շուկայական երևույթների խթանիչ և դրա անմիջական մասնակից: Պետությունը պետք է վերահսկի հոդի գները համագոյայն շահերի առումով՝ շրջանցելով շուկայական մեխանիզմը՝ ստեղծելով համապատասխան ենթակառուցվածքներ:

Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում չկան ազատ և ոչնչով չահմանափակվող առ ու վաճառքի հոդեր: Նման երկրներում պետությունն ինքն է կարգավորում ինչպես հոդի շուկան, այնպես էլ դրա օգտագործումն ու արգելակում է հոդերի շռայրումը:

Հոդի շրջանառությունը պետք է զարգանա կարգավորման պետական և շուկայական մեխանիզմների միասնության համատեքստում: Գյուղատնտեսական հողատեսքերն անհրաժեշտ է գնահատել ինչպես շուկայական գներով, այնպես էլ կարասստրային արժեքով: Հոդի շրջանառության զարգացման ցուցանիշով բնութագրվում է նաև շուկայի զարգացման աստիճանը, որով և պայմանափորվում են հոդային վճարների մուտքերի ծավալների փոփոխությունն ու զյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործումը՝ ներառյալ հողապաշտպան միջոցառումները:

Հոդի շուկան մեր հանրապետությունում նոր է ձևավորվում: Գործարքները հիմնականում կատարվում են քաղաքացիների միջև հողամասերի և այլ անշարժ գույքի առ ու վաճառքի միջոցով: Հոդի շուկայական գնի որոշման խնդիրը սերտորեն շաղկապված է հողամասերի գրավի գնի որոշման խնդիրների հետ, որն անհրաժեշտ է հիփոքերային վարկի զարգացման համար, մի երևույթ, որը շատ մատչելի է լայն զանգվածների, այդ թվում՝ զյուղի բնակչության համար, որպես շուկայական վարկային հարաբերությունների իրականացման ձև:

Հոդամասերի գրավի արժեքը տվյալ գործողությանը մասնակից սուբյեկտների առևտրային համաձայնության ընթացքում շահերի շաղկապումն է: Այդ դեպքում ֆինանսական կառույցները շահագրգուված են, որպեսզի վարկերը ժամանակին վերադարձվեն: Հոդագործը որոշակի գումարի չափով ստանում է վարկ, որը համապատասխանում է գրավ դրված հողամասի իրական գնին: Սակայն խնդիրն այն է, որ շուկայական գների հաշվառման գիտարտարական բազայի գրեթե բացակայության, ինչպես նաև հոդի գրավային արժեքի ոչ ճիշտ որոշման

պատճառվ վարկատուն և վարկառուն մշտապես գտնվում են ռիսկային գոտում. առաջինը կարող է կորցնել իր գումարը, իսկ երկրորդը՝ հողամասը՝ առանց որոշակի փոխհատուցման: Գյուղատնտեսական հողատեսքերի գրավ դնելու հնարավորությունները սահմանվում են ՀՀ գործող օրենսդրությամբ: Գրավի հիմնական նպատակը հողասեփականատիրոջը ֆինանսական ռեսուրսի տրամադրումն է: Այն կռված է ամրապնդել տնտեսության նյութատեխնիկական բազան, իրականացնել արտադրական օրյեկտների շինարարություն, օժանդակել նոր հողամասերի, տեխնիկայի ձեռքբերմանը, նպաստել հողի բերրիության բարձրացմանը:

Հիփորեքը վարկ վերցնելու նպատակով անշարժ գույքի (հողի և շինության) գրավի տեսակներից է: Վարկավորող գրավառուին իրավունք է տրվում առավելագույնս բավարարել գրավառուի պահանջները՝ գումար հատկացնել այն չափով, որը նշված է պայմանագրում:

Հիփորեքի համար բնութագրական է՝

- գույքի պահպանումը պարտադիրոց ձեռքում,
- գրավի պարտադիր գրանցումը հողային և հողակադաստրային փաստաթղթերում, որոնք գործափարում են պետական կամ առևտրային ձեռնարկությունները:

Պարտապանի անվճարունակության դեպքում վարկառուի պահանջը բավարարվում է օրենսդրութեն՝ գրավ դրված գույքի իրացումով կամ գրավ դրված գույքի իրավունքի իրացումով: Վարկատուն նաև իրավունք ունի դառնալ գույքի տերը:

Հիփորեքային փոխառությունը (բաժնետոմս) երկարաժամկետ արժեքություն է, որը բողարկում են հիփորեքային բանկերը: Այն ապահովվում է անշարժ գույքով (հող, արտադրական և բնակելի շենքեր), որը գրավադրված է բանկում և բերում է հաստատուն տոկոս: Հիփորեքային փոխառության միջոցով հատակ պայմաններով բնակչությունից հավաքագրվում են միջոցներ, որոնք ապահովում են փոխառությունը:

Այսպիսով՝ հիփորեքային շուկան վարկային կապիտալի շուկայի այն բարկացուցիչ մասն է, որտեղ հիփորեքային բաժնետոմսերի բողարկման ճանապարհով կուտակվում են երկարաժամկետ դրամական նիջոցներ: Դրանք օգտագործում են անշարժ գույքի գրավի դիմաց վարկ տրամադրելու համար: Այդ շուկան իր մեջ ներառում է մասնավոր և պետական ֆինանսավարկային կառույցներ՝ ապահովագրական բնկերություններ, վարկախնայքանակային միություններ, հիփորեքային, առևտրային և այլ բանկեր:

Հիփորեքային բանկերը մասնագիտացված են երկարաժամկետ վարկ տրամադրելու բնագավառում՝ անշարժ գույքի գրավադրման նպատակով (հող և քաղաքաշինական կառույցներ): Հողային բանկը հիփորեքային բանկի տարատեսակներից մեկն է:

Հիփոթեքային վարկի նպատակային նշանակությունն ապահովելու և դրա այլ բնույթի օգտագործումը բացառելու համար բանկային արակտիվայում կիրառվում են հետևյալ կանոնները՝

- խստորեն սահմանափակում են կապալառու կազմակերպությունների հաշվին վճարումները՝ սարքավորումների, նյութերի և այլ ռեսուրսների ձեռքբերման նպատակով, որոնք անհրաժեշտ են շինարարության և հողերի բարեկաման համար,
- հիփոթեքային վարկի հաշվին գրավատուի ուժերով իրականացված շինոնետաժային աշխատանքների համար վճարումները կատարվում են փուլ առ փուլ կամ էլ օբյեկտի շինարարության ավարտից հետո,
- հիփոթեքային վարկի տրամադրման ժամկետները կապակցվում են հողը գրավ դմելու հաշվին ստացված վարկերի օգտագործման ուղղությունների հետ:

Գյուղատնտեսական հողատեսքերի շրջանառության կարգավորումը կոչված է խրանելու հողամասերի միավորումն ու խոշորացումը: Անարդյունավետ օգտագործվող փոքր հողաբաժինները պետք է անցնեն այն հողասեփականատերերին և հողօգտագործողներին, ովքեր ընդունակ են կազմակերպելու արդյունավետ գյուղատնտեսական արտադրություն, սրտացավ վերաբերմունք են ցուցաբերում հողի նկատմամբ, գրավում են հողի շուկայում ներդրումներ կատարողների ուշադրությունը, նպաստում են գյուղի սոցիալական վիճակի բարելավմանը, ստեղծում նոր աշխատատեղեր և ավելացնում գյուղական բնակչության եկամուտները:

ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԽԸ

22.1. ՀՈՂԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀՈՂԻ ՀԱՐԿԸ, ՎԱՐՁԱՎՃԱՐԸ, ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԳԻՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Հանրապետությունում իրականացվող հողային բարեփոխումների գիսավոր նպատակը հողային պաշարների արդյունավետ օգտագործումն ու դրանց պահպանումն է: Հողային վճարումները կոչված են նպաստելու արդյունավետ հողօգտագործմանը, հողերի պահպանմանը, բարելավմանը, բերրիության բարձրացմանը՝ տարբեր որակական հատկություններ ունեցող հողերի վրա ստեղծելով տնտեսավարման հավասար պայմաններ: Վճարման ձևերից են հողի հարկը, վարձավճարը, հողի նորմատիվային գինը, հիփորեքը և այլն:

Հողի հարկը հողի սեփականատերերից, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մշտական օգտագործողներից օրենքով սահմանված, համայնքային բյուջե զանձվող պարտադիր վճար է՝ անկախ հողօգտագործողների տնտեսական գործունեության արդյունքներից: Հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում կառավարության կողմից հաստատված հողերի կադաստրային գնահատման տվյալները, հողի սեփականության (օգտագործման) իրավունքի փաստարրերը:

Գյուղատնտեսական հողատեսքերի համար հողի հարկը սահմանվում է հողատեսքերի կառուցվածքի, տարածության, որակական հատկությունների և տեղաբաշխվածության վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Հողի հարկի սահմանման համար օգտագործվում է հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային գուտ եկամուտը: ՀՀ կառավարության որոշմամբ՝ հանրապետության բոլոր մարզերում հողի հարկի չափը մինչև այժմ սահմանվել է հողերի կադաստրային գնահատման գուտ եկամտի 15 % չափով (աղ. 37): Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային գնահատման մեթոդիկան կատարելագործելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել հողի հարկը սահմանել հողերի գնահատման ընթացքում ստացված հողային ռենտայի բանկային տոկոսադրույթի կապիտալավերածման հիման վրա որոշված արժեքով (գնով):

**Հողի հարկի հաշվառումն ըստ որակական խմբերի
(Աշտարակ համայնքի օրինակով)**

Հողի որակական խմբերը	Տարածությունը, հա	Չուտ եկամուտը, հազ. դրամ/հա	Հողի հարկի չափը, հազ. դրամ/հա
1	28,4	145,9	21,9
2	5,1	88,4	13,3
3	40,0	63,8	9,6
4	85,2	47,4	7,11
5	37,2	14,6	2,19
Ընդամենը	195,9	59,9	8,9

Աղյուսակ 37-ի տվյալներից երևում է, որ Աշտարակ համայնքի վարելահողերի կադաստրային գնահատման հիման վրա որոշված զուտ եկամուտն, ըստ հողերի որակական խմբերի, տարրեր է: Լավագույն գնահատման 1-ին խմբի հողերի մեջ հեկտարի զուտ եկամուտը կազմում է 145,9 հազ. դրամ, այստեղից 1 հա հողի հարկի չափը կկազմի է 21,9 հազար դրամ (149,5·15%), 4-րդ խմբում՝ 7,11, իսկ 5-րդ, վատագույն խմբում՝ 2,19 հազար դրամ/հա:

Հողերի սեփականաշնորհման ժամանակ մեկ հողամասը մասնատվել է տարրեր սեփականատերերի միջն, այդ հողերի գնահատման ցուցանիշների հիման վրա հողի հարկի սահմանումը հավասար տնտեսավարման պայմաններ է ստեղծում տարրեր սեփականատերերի համար, այսինքն՝ տվյալ հողամասի տարրեր հողաբաժիններ գտնվում են միևնույն հարկման դաշտում:

Հողային վճարումներից է հողի վարձավճարը, որի չափը սահմանվում է վարձատուի հետ կնքված պայմանագրով: Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության դեպքում սահմանվում է վարձավճար՝ հաշվարկային զուտ եկամտի 15 % չափով:

Վարձավճարը կարող է սահմանվել ինչպես դրամական արտահայտությամբ, այնպես էլ բնամթերքի տեսքով: Հնարավոր է նաև այդ երկու ձևերի միաժամանակյա կիրառումը: Վճարումների չափն ու ձևերը որոշվում են յուրաքանչյուր գործարքի դեպքում:

Հողային բարեփոխումների գարգացման պայմաններում հնարավոր է վարձակալական հարաբերությունների երկու ձև՝ հողի վարձակալում համայնքի և դրա անդամների միջև, իսկ մյուսը՝ հողասեփականատերերի միջև: Բոլոր դեպքերում վարձավճարի չափը որոշվում է պայմանագրով և կարող է հաշվարկվել անշարժ զույրի գնահատման որևէ մեթոդով՝ համեմատական, եկամտային և ծախսային:

Հողային վճարումներից է հողի նորմատիվային գինը, որը հողի հաստատագրված և օրենսդրորեն սահմանված գինն է: Դրա կիրառման միջոցով պետությունը մասնակցում է հողային շուկայական հարաբերությունների կարգավորմանը: Հողը՝ որպես անշարժ գույք, առք ու վաճառքի առարկա, շուկայական հարաբերություններում հանդես է գալիս որոշակի արժեքով: Այն օգտագործվում է որպես հողի վաճառքի մեկնարկային գին՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող օրյեկտների ապահովականացման, անհատական տնտեսավարմանը գրադպելու համար հողերի վաճառքի դեպքում:

Հողերի նորմատիվային գինը որոշվում է կադաստրային գնահատման տվյալների հիման վրա: Հողերի գնահատման փորձից ելնելով՝ տնտեսական գնահատման ցուցանիշները, այդ թվում՝ հողային ռենտայի մեծությունը, կախված են հողերի որակական հատկություններից, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունից և տնտեսական ցուցանիշներից: Հանրապետության լեռնային հողօգտագործման պայմաններում այն կրում է գոտիական բնույթ: Այսպես՝ նախնական հաշվարկներով Արարատյան հարթավայրի մեջ հեկտար վարելահողերի միջին գինը կազմում է 1950 հազար դրամ, նախալեռնային գոտում՝ 1050 հազար, Շիրակի հարթավայրում՝ 775, Սևանի ավազանում՝ 475 հազար դրամ և այլն:

Հանրապետությունում հողային հարաբերությունների զարգացման և հողասեփականության բազմանության պայմաններում հողը հանդես է գալիս որպես անշարժ գույք և գրավ դնելով միջոց: Սկզբնական փուլում գրավի գինը կարող է որոշվել հողի տնտեսական գնահատման տվյալների հիման վրա: Այդ դեպքում պետությունը սահմանում է հիփորեքային գործարքների վարման ընդհանուր հայեցակարգ: Հետագայում գրավի գումարի դրույթաչափերը կորոշվեն՝ ելնելով հողի շուկայի և հողային հարաբերությունների ընդհանուր իրավիճակից:

Հողի նորմատիվային գնի և հողի հարկի չափի սահմանումը ոչ միայն տնտեսագիտական, այլև քաղաքական հարց է: Ուստի սեփականության ձևերի բազմազանության պայմաններում հողի վճարումները կախված են արտադրական հարաբերությունների բնույթից, կարգավորվող ազգային շուկայի ստեղծումից, միջազգային շուկայի հետ փոխհարաբերություններից, պետական ֆինանսական համակարգի ձևավորումից և հասարակության սոցիալ-տնտեսական վիճակից:

22.2. ՀՈՂԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԼՈՒԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Գյուղատնտեսական ձեռնարկությունների կազմակերպատնտեսական գործունեության օրյեկտների գնահատման համար առաջին հերթին պետք է ապահովվի վերլուծվող ցուցանիշների համադրելիությունը:

Եթե հողօգտագործման ընթացքում ձեռք բերված փաստացի արդյունքները (համախառն արտադրանք, զուտ եկամուտ, շահույթ և այլն) վերաբերում են հողերի ֆիզիկական տարածությանը, ապա ստացված արդյունքների ցուցանիշները համադրելի չեն, քանի որ հաշվից դուրս են մընում տարբեր արտադրողական ունակություն ունեցող հողերը, այսինքն՝ հողերի բնական և տնտեսական բերրիությունը:

Հողերի օգտագործման արդյունավետության վերլուծությունը օբյեկտիվ կինհ այն դեպքում, երբ հողօգտագործումից ստացված փաստացի ցուցանիշները վերաբերեն ոչ միայն հողի ֆիզիկական, այլև բերրիությամբ համադրելի տարածությանը:

Գյուղատնտեսական ձեռնարկությունների տնտեսական գործունեությունը օբյեկտիվորեն վերլուծելու նպատակով օգտագործվում է հողերի գնահատման ողջ համակարգը՝ ինչպես բնական, այնպես էլ տնտեսական բերրիության ցուցանիշները:

Ինանալով հողերի բոնիտետի բալերը, կարելի է ստանալ յուրաքանչյուր հողամասի բերրիության համեմատական գործակիցը հետևյալ բանաձևով՝

$$\Omega_p = \frac{\Omega_{\text{հող.}}}{\Omega_{\text{առավ.}}} ,$$

որտեղ՝ Ω_p -ն հողատեսքի բերրիության համեմատական գործակիցն է, $\Omega_{\text{հող.}}$ -ը՝ տվյալ հողատեսքի բնական հատկությունները՝ բոնիտետի բալը, $\Omega_{\text{առավ.}}$ -ը՝ առավելագույն բալ ունեցող հողատեսքի բոնիտետի բալը:

Այսպես՝ եթե հողերի բնական հատկությունների բալը Արմավիրի մարզի Հայկավան համայնքում կազմում է 81 բալ, որն ընդունվում է որպես համեմատության միավոր ամբողջ Արմավիրի մարզի համար, ապա Հացիկ համայնքում այն 61 բալ է, Արևիկում՝ 49, Եղեգնուտում՝ 43 և Արալեզում՝ 34 բալ: Այդ համայնքներում հողերի համեմատական գործակիցը համապատասխանաբար կինհ 0,75, 0,60, 0,53 և 0,41:

Հողօգտագործման արդյունավետության մասին կարելի է դատել՝ ելնելով արտադրության շահութաբերության նակարդակից: Սակայն այդ ցուցանիշի մեծությունն ուղղակի կախված է նրանից, որ, մի դեպքում, վերլուծությունը կատարվում է ֆիզիկական, իսկ մյուս դեպքում՝ կադաստրային՝ համադրելի տարածության հաշվով: Ընդհանուր առնամբ, երբ հողագնահատման արդյունքներով հաշվարկվում է կադաստրային տարածությունը, ապա գյուղատնտեսական հողատեսքերը դառնում են համադրելի (չափակցելի): Հողատեսքերի ֆիզիկական տարածությունը կադաստրայինի վերածելով համար կիրառվում են հողերի տնտեսական գնահատման ընթացքում որոշված համախառն արտադրանքը, հողի

ոենտան և այլ ցուցանիշներ: Կադաստրային տարածությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Psi_{\text{հա}} = \frac{S_{\Phi} \cdot \Omega}{100},$$

որտեղ՝ $\Psi_{\text{հա}}$ -ն հողատեսքի կադաստրային տարածությունն է, հա, S_{Φ} -ն՝ հողատեսքի ֆիզիկական տարածությունը, հա, Ω -ն՝ հողատեսքի տնտեսական գնահատման բալը:

Որպես կադաստրային միավոր կարելի է ընդունել հանրապետության կամ առանձին տարածաշրջանի ցանկացած հողատեսքի մեջ հեկտարը, որն ունի առավելագույն (100 բալ) բալային գնահատական:

Կադաստրային հեկտարներով արտահայտված հողերի գնահատման ցուցանիշները կարելի է կիրառել հողերի արդյունավետ օգտագործման տարբեր մակարդակի տնտեսագիտական վերլուծության, հողերի պահպանման, բարելավման, նոր հողերի յուրացման և այլ միջոցառումների իրականացման բնագավառներում:

Հողերի կադաստրային տարածությանը վերաբերող տվյալներն՝ Արարատի մարզի մի քանի համայնքների օրինակով, բերված են աղյուսակ 38-ում:

Այսպես՝ ըստ գյուղատնտեսական հողատեսքների ֆիզիկական տարածության՝ առաջին տեղում է Արարատ համայնքը (3478,0 հա), ապա՝ Ուկետափը (1241,0 հա), Ավշարը (1000,0 հա) և այլն: Իսկ հողերի գնահատման առավելագույն բալեր ունեն Այգևանը (70 բալ), Նոյակերտը (55), Ավշարը (52) և այլն:

22.3. ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆԵՐՀԱՍՏԱՆԱՅԻՆ ՀՈՂԱՉԻՆԱՐՄՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՀՈՂԱՍՍԱՍԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒՎ

Գյուղատնտեսական ձեռնարկություններում ներհամայնքային հողաշխնարարության գլխավոր խնդիրներն են տարածքի կազմակերպումը, հողերի արդյունավետ օգտագործման ապահովումը, հողերի բերրիության բարձրացումը, բնուրյան պահպանությունը, նյութական և աշխատանքային նվազագույն ծախսերով գյուղատնտեսական մթերքի արտադրության ավելացումը:

Հողային կադաստրի նյութերի օգտագործումը, մասնավորապես՝ հողերի գնահատման տվյալները, բարձրացնում են նախագծման աշխատանքների որակը: Գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման վերաբերյալ որոշումների ընդունումը կատարվում է հողերի արտադրական հատկությունների հիման վրա:

Հողաշխնարարական նախագծման ընթացքում ելավետային այլ նյութերի հետ օգտագործվում են նաև հողերի ներհամայնքային գնահատման նյութերը, որոնք բույլ են տալիս որոշել գյուղատնտեսական մշակաբույսերի արդյունավետ տեղաբաշխման հողախմբերը:

Հողային կադաստրի տվյալների հիման վրա որոշվում է հողերի բարեկաման միջոցառումների և գյուղացիական տնտեսությունների խոշորացման նպատակահարմարությունը, ընտրվում են հողամասերի միավորման առավել արդյունավետ տարրերակները: Գյուղացիական տնտեսությունների խոշորացման միջոցով կազմակերպվում են միջին և խոշոր մասնագիտացված ֆերմերային տնտեսություններ, ավելանում է ապրանքային արտադրությունը, դրան զուգահեռ ստեղծվում են վերամշակող միջին և խոշոր արտադրական ձեռնարկություններ:

Հողագնահատման տվյալներն օգտագործվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հողամասերն առգրավելու ժամանակ՝ հողօգտագործողների վճարի, գյուղատնտեսական և անտառատնտեսային արտադրության կորուստների հատուցման չափերը որոշելու համար:

Գյուղատնտեսական և անտառատնտեսային արտադրության վարման ընթացքում սեփականատիրոջ կորուստները, որոնք առաջանում են գյուղատնտեսական և անտառային ֆոնդի հողերն իրենց նպատակային նշանակությամբ չօգտագործելու պատճառով, ենթակա են հատուցման: Կորուստների հատուցման չափերը որոշվում են առգրավվող հողամասի կադաստրային գնահատման ցուցանիշների և այլ տեղեկատվական նյութերի հիման վրա:

22.4. ՀՈՂԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱԶՄՍԱՆ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հողագնահատման ցուցանիշներն ավելի արտահայտիչ դարձնելու համար՝ հողերի կադաստրային գնահատման նյութերի հիման վրա կազմվում են համայնքների և այլ հողօգտագործողների գյուղատնտեսական հողատեսքերի գնահատման քարտեզներ: Դրանք կազմելու համար հիմք են ծառայում յուրաքանչյուր հողօգտագործման տարբեր մասշտաբների կադաստրային քարտեզագրական նյութերը:

Գնահատման քարտեզի վրա, ըստ հողատեսքերի, ցույց են տրվում գնահատվող հողամասի տարածությունը, գնահատման հերթական համարը, օգտագործման տեսակը (ոռոգելի, անջրդի, մելխորացված և այլն), հողի բոնիտման բարը, գնահատման խումբը, գինը և այլն:

Հողերի գնահատման քարտեզը գնահատման տեղեկագրերի հետ միասին հնարավորություն է տալիս տարածական պատկերացում կազմել յուրաքանչյուր հողօգտագործման սահմաններում եղած գյուղատնտեսական հողատեսքերի քանակական և որակական բնութագրի, դրանցից ստացվող հողային ռենտայի, հողի գնի վերաբերյալ: Քարտեզի միջոցով հնարավոր է բացահայտել չօգտագործվող հողային պաշարները, ինչը կնպաստի բոլոր հողերի արդյունավետ օգտագործմանը: Քարտեզի վրա առանձին գույներով և պայմանական նշաններով ցույց են տրվում գյուղատնտեսական հողատեսքերի, հողագնահատման շրջանի, գյուղատեղի հողամասերի հեռավորության մասին տվյալները և այլն:

Հողագնահատման քարտեզները կազմվում են ժամանակակից համակարգչային հասուն ծրագրերի միջոցով:

ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԱՐՏԱՍՏԱՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ

Արտասահմանյան երկրներում հողային կադաստրի վարման մեռողմերը սկզբունքորեն քիչ են տարբերվում նախկինում մշակված մերողմերից, այնուամենայնիվ դրանք հողակադաստրային նաև ազդակագույն ծառայությունների կողմից իրականացվող բարդ միջոցառումներ են: Բոլոր երկրների համար ընդհանուր են հողային կադաստրի վարման համակարգում հողօգտագործման իրավունքի գրանցումը, հատակագծաքարտեզագրական հանույթները, մասնագիտական հետազոտումները, ինչպես նաև հողերի կադաստրային գնահատումը: Այդ բաղկացուցիչ մասերով է պայմանավորված յուրաքանչյուր երկրի հողային կադաստրի համակարգը:

Բարձրարդյունավետ գյուղատնտեսական արտադրության պայմաններում ֆերմերին հողը հետաքրքրում է առաջին հերթին որպես կապիտալի ներդրման օրինակ: Հողերի արտադրողականության վերաբերյալ ֆերմերների բազմակողմանի գիտելիքները հնարավորություն են տալիս նրանց կապիտալն արդյունավետ ներդնել գյուղատնտեսական մթթերի արտադրության գործում, բարձրացնել հողի բերրիությունը:

Արտասահմանյան երկրներում հողերի կադաստրային գնահատումը և հիմնականում կատարվում է հարկման նպատակներով: Դրան զուգահեռ գնահատման արդյունքներն օգտագործվում են՝ հողաբարակական հարցերի լուծման, ինչպես նաև հողերի արդյունավետ օգտագործման, բարելավման, պահպանման միջոցառումներ մշակելու համար:

Արտասահմանյան մի շարք երկրներում ստեղծվել կամ ստեղծվում են հողային կադաստրի տեղեկատվական ավտոմատացված համակարգեր: Հողային կադաստրի վարման ընթացքում անշարժ գույքի և հողերի սեփականության գրանցման ավտոմատացված համակարգեր են մշակվել և գործում Շվեյչայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Կանադայում, Գերմանիայում և այլ երկրներում: Այդ համակարգի օգնությամբ կատարվում է հողօգտագործման, կառավարման, պահապորման վերահսկում, կադաստրային փաստաթղթերում իրականացվում է իրավական կարգավիճակի օպերատիվ գրանցում: Միաժամանակ այդ համակարգը դույլ է տալիս հողային կադաստրին վերաբերող տվյալները հասանելի դարձնել բոլոր շահագրգիռ կազմակերպություններին:

Ավտոմատացված համակարգի հիմնական տեղեկատվական բազան բաղկացած է բարտեզագրական նյութերից, տեքստային թվային ցուցանիշներից և այլ բնույթի փաստաթղթերից: Այն պարունակում է հողի

սեփականության և բնակելի կառույցների վիճակին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, հողային վճարումների նորմատիվներ, նոր հողօգտագործման, հողատիրապետման և հողերի սեփականության, վաճառքի նախին տվյալներ:

Հողային կադաստրի վարման ժամանակակից մեթոդներից հատուկ ուշադրության է արժանի ֆրանսիայի պարցելային հողային կադաստրը, որն անցկացվում է հարկման մեխանիզմի կատարելագործման համար: Այդ կադաստրի հիմնական սկզբունքն այն է, որ հողերի քանակական և որակական հաշվառումը կատարվում է որակյալ հատակագծաքարտեզագրական հիմքերի վրա: Յուրաքանչյուր հողաքածնի արտադրողականությունը որոշվում է զյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությամբ, դրանց մշակության վրա կատարված արտադրական, ինչպես նաև արտադրանքի պահպանման և տեղափոխման ժահսերով:

Երկրում կադաստրային հարկը հաստատվում է յուրաքանչյուր հոդամասից 15 տարվա ընթացքում ստացված միջին տարեկան գուտ եկամբարտի հիման վրա՝ չհաշված երկու առավել չորային և երկու առավել բերքառատ տարիները:

Ֆրանսիայում հողային կադաստրը հետապնդում է երեք նպատակ՝

- տեխնիկական՝ կադաստրային հատակագծերի կազմում,
- հողային՝ հողամասերի նույնացում և նկարագրում, հողատիրոջ բացահայտում,
- հարկային՝ հողերի գնահատում և հողի հարկի նորմերի որոշում:

Այդ նպատակների իրականացման համար երկրում ստեղծվել են հատուկ ծառայություններ, որոնք մշակում են կադաստրային փաստաթղթեր, կադաստրի վարման, հողային հարկի գանձման մեխանիզմների վերաբերյալ հատուկ հրահանգներ և այլն:

Նման սկզբունքների վրա է հիմնված նաև Բելգիայի կադաստրային համակարգը, այն տարբերությամբ, որ հողերի տնտեսական գնահատման աշխատանքներն իրականացվում են երկրի հողային հետազոտությունների ազգային կենտրոնի միջոցով:

Գերմանիայում հողային կադաստրի հիմնական նպատակը հողի հարկի նորմերի որոշումն է: Կադաստրային քարտեզների մշակումը համատեղվում է հողօգտագործման գրանցման և հողաշինարարության հետ: Ակսած 1970-ական թվականներից՝ երկրի մեծ քաղաքներում և մարզերում ստեղծվել են անշարժ գույքի մասին տվյալների ավտոմատացված բանկեր, որը ներառված են հողերին, անշարժ գույքի կադաստրին, հարկային կադաստրին վերաբերող տեղեկատվությունն ու քարտեզագրական նյութերը:

Նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության առաջին հողային կադաստրը մշակվել էր 1954 թ., այնուհետև այն պարբե

բարար թարմացվել և լրացվել էր: Հողերի գնահատման տվյալներն անհրաժեշտ էին հողերը հարկելու և դրանց պլանավորված օգտագործումը կազմակերպելու համար:

Հողերի գնահատումը կատարվում էր 100 քալային համակարգով: Որպես գնահատման ցուցանիշներ էին ծառայում հողատարածքից ստացված համախառն արտադրանքի արժեքը և զուտ եկամուտը: Այդ ցուցանիշները որոշելու համար հողերը դասակարգվել էին յոթ որակական խմբերի: Երկրի գյուղատնտեսության նախարարությունում ստեղծվել էր հատուկ ծառայություն, որը մշտական գրադիմում էր հողերի գնահատման արդյունքների ճշգրտմամբ: Սիամամանակ կատարելագործվում էին հողագնահատման աշխատանքների կատարման մեթոդներն ու դրանց գործնական կիրառումը:

Հողերի գնահատման արդյունքներն օգտագործում էին մի շարք տնտեսագիտական միջոցառումներ իրականացնելիս՝ ոչ գյուղատնտեսական նպատակով հողերի հատկացման ժամանակ դրանց վճարների սահմանման, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրությամբ գրադպուող ձեռնարկությունների հիմնավորված հարկման համար:

Ներկայում Գերմանիայի Դաշնային Հանրապետության հողային կադաստրի ավանդական կառուցվածքը աստիճանաբար փոխարինվում է քազմանպատակ նշանակության համակարգով: Հարկման հարցեր լուծերությունը՝ այն ծառայում է տիրապետման իրավունքների գրանցման, հողի գնահատման, տարածքային և քաղաքային պլանավորման նպատակներին: Այսպիսով՝ ԳԴՀ-ի հողային կադաստրը, վիճակագրականից դառնապով դիմամիկ համակարգ, ոչ միայն կուտակում է տեղեկատվություն, այլև դառնում պետության վարչական համակարգի անդամ:

Անգլիայում հողերի տումնասկիրության համակարգը մշակվել է 1966 թ. գյուղատնտեսության, ձկնաբուծության և պարենի նախարարության հողային ծառայության կողմից: Տվյալ մեթոդիկան ներառում է երկու փուլ՝ հողերի ֆիզիկական և տնտեսական դասակարգում:

Մուաշինի նպատակն է պարզել գյուղատնտեսության վրա ազդող հիմնական ֆիզիկական գործոնները՝ կլիման, ռեխիեֆը, բուսական և հողային ծածկույթը, թեքության աստիճանը և այլն, որոնք սահմանափակում են հողերի օգտագործման հնարավորությունները: Երկրում հողերը բաժանվում են պիտանիության հիմք դասերի:

Երկրորդ փուլի նպատակն է տնտեսական գնահատման միջոցով որոշել յուրաքանչյուր դասի հողերի համար զուտ եկամտի միջին չափը, որը հիմնվում է բուսաբուծության և այգեգործության միջին համախառն արտադրանքի վրա՝ գյուղատնտեսության վարման, ազրտեխնիկայի ու պարարտացման միջին մակարդակներում: Հողերի տնտեսական դասա-

կարգումը թույլ է տալիս ճիշտ գնահատել յուրաքանչյուր հողամասի արտադրական հնարավորությունները:

Իսպանիայի հողային կադաստրի առաջնային խնդիրը հողի հարկի որոշումն է: Կադաստրի մշակման ընթացքում, առաջին հերթին, ստեղծվում են կադաստրային քարտեզներ, որոնց միջոցով բացահայտվում են հողամասերի տարածքները, քանակը և դրա հիման վրա կատարվում է հողերի քանակական հաշվառում: Երկրում կադաստրային քարտեզները կազմվում են վերգետնյա հանույթների և օդալուսանկարահանումների միջոցով: Քարտեզների մասշտաբի ընտրությունը կախված է նպատակից, տեղագրական և կադաստրային տեղեկատվության խտությունից: Հողակադաստրային աշխատանքների ընթացքում մարզի վարչական տարածքը բաժնավում է մի քանի տեղամասերի, որոնց սահմաններում նշվում են առաջնային հողամասերը:

Հողի և անշարժ գույքի կադաստրի վարման աշխատանքները լավ են կազմակերպված Ըվեդիայում: Այս երկրի հողային կադաստրի հիման վրա մոտ ապագայուն կատեղծվի հողին, անշարժ գույքին և բնակչությանը վերաբերող տեղեկատվության ավտոմատացված համակարգ: Ըվեդիայի կադաստրը դիտվում է որպես հողօգտագործման բնագավառում բոլոր ռեսուրսների առավել նպատակահարմար և արդյունավետ օգտագործման համակարգ:

Ըվեդիայի հողային կադաստրն աստիճանաբար վերափոխվել է հողի և անշարժ գույքի մասին բազմաբովանդակ տեղեկատվական համակարգի: Դա տեղի է ունեցել անշարժ գույքին վերաբերող տվյալների ազգային ավտոմատացված բանկի և բնակչության մասին տվյալների բանկի, տնտեսական վիճակագրության, հարկման, հաշվեգրումների տվյալների միավորման արդյունքում:

Ըվեդիայի կադաստրն ամբողջությամբ հիմնավորված է օրենսդրություն: Երկրի ողջ սեփականությունը բաժանված է անշարժ գույքի հատվածների, տրվում է դրանց բնութագիրը, իրավաբանական սահմանները, գործարքների կնքման, վարձակալության կարգը և այլն: Ազգային հողային ծառայությունը մշակում է հրահանգներ, դրույթներ և կադաստրային նորմատիվային այլ փաստաթղթեր:

Ըվեդիայի հողային կադաստրի վարման կարևոր տարրն է կազմակերպական հստակ կառուցվածքը: Ընդ որում՝ ազգային հողային ծառայությունը հանդիս է գալիս որպես պետական կազմակերպություն շրջակա միջավայրի նախարարության կազմում: Այն իրականացնում է կառավարության կողմից նախանշած որոշակի գործառույթներ՝ երկրի ազգային քարտեզագրման ծրագրի կատարում, ազգային կադաստրի վարման պետական վերահսկողություն, գեղեցիայի, հողօգտագործման կառավարման, հողերի գնահատման, տեղեկատվության հավաքման և տրամադրման ոլորտներում աշխատանքների կատարում:

ԱՄՆ-ում հողերի ուսումնասիրությունն իրականացնում է զյուղատնտեսության նախարարության կազմում հողերի պահպանության հատուկ ծառայությունը, որը կատարում է հողային հետազոտություններ, հրատարակում է համապատասխան իրահանգներ ու դրշումներ հողերի արդյունավետ օգտագործման վերաբերյալ: ԱՄՆ-ում կադաստրի վարման ընթացքում ավանդաբար կիրառվում են հողերի գնահատման միջանի մեթոդներ: Հողերի բռնիտումը հիմնված է շրջակա միջավայրի և հողերի հիմնական հատկությունների ցուցանիշների հաշվառման վրա: Հողերի տնտեսական գնահատումը, այդ բվիմ՝ հողի գնի հաշվարկը, չափազանց կարևոր է զյուղատնտեսության կառավարման մեխանիզմների կարգավորման գործում: Հողի գինը որոշվում է տարեկան հողային ռենտայի և բանկային տոկոսադրույթի կապիտալավերածման եղանակով:

Հողերի գների իրական բարձրացումը և դրանց դրամական գնահատումը պայմանավորված են հողերի տնտեսական բերրիության բարձրացմամբ, դրանց պահպանության ծախսերով, հողատարման դեմ պայքարի միջոցառումներով, ինչպես նաև հողային պաշարներին վերաբերող պետական մենաշնորհային քաղաքականությամբ և զյուղատնտեսության մեջ նոր հողերի ներգրավմամբ:

ԱՄՆ-ում տեղի ունեցող տնտեսական և հասարակական-քաղաքական փոփոխությունների արդյունքում անհրաժեշտ եղավ ստեղծել բազմանպատակ կադաստր: Որպես յուրաքանչյուր հողօգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքնան, պահպանման և տրամադրման ելակետային միավոր ընտրվեց պարցելան: Բազմանպատակ կադաստրի հիմք են կազմում գեղղեզիական ճշգրիտ ցանցերը, հատակագծաքարտեզագրական ճշգրիտ նյութերը, հողօգտագործման սահմանների և հողամասերի տվյալների վերաբերյալ իրավաբանական գրանցումները և այլն: Երկրում հողերի սեփականության բազմաձևության և մրցակցության պայմաններում հնարավոր չեղավ ամբողջապես նարդնել այդ համակարգը, ուստի գործում են բազմանպատակ կադաստրի որոշակի մասերը:

Ուսասատանի Դաշնության հողային բարեփոխումների ընթացքում (1991-2002 թթ.) ընդունվել են հողի մասին մի շարք հիմնական օրենքներ, կազմավորվել է հողային ռեսուրսների կառավարման ինստիտուցիոնալ համակարգ: Վերջին տարիներին ընդունվել են հետևյալ հիմնական օրենսդրական ակտերը՝ Հողային օրենսգիրքը, «Հողային ռեսուրսների կառավարման և պլանավորման» օրենքը, «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենքը, «Պետական հողային կադաստրի մասին» օրենքը, «Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման և անշարժ գույքի նկատմամբ գործարքների մասին» օրենքը և այլն:

Անկախ սեփականության ձևից, երկրում անցկացվում են հողերի գանգվածային գույքագրում, պետական հողային կադաստրի համակարգում գտնվող հողամասերի պետական գրանցում և հողերի արժեքային գնահատում: Ըստ սեփականության ձևերի՝ հողային կադաստրի և հողօգտագործման պլանավորման հիման վրա հողերի բաժանումն իրականացվում է տեղական, տարածքային և պետական մարմինների համագործակցության արդյունքում:

Ներկայում հողի հարկման գոյություն ունեցող համակարգը հիմնված է 90-ական թվականներին հաշվարկված հողի արժեքի նորմատիվային ցուցանիշների վրա: Հաշվի առնելով երկրում տեղի ունեցած հողային բարեփոխումները՝ ՌԴ կառավարությունը որոշում է ընդունել փոխել հողի հարկման համակարգը: Երկրում նախապատրաստվում է հողի արժեքի զանգվածային վերագնահատման գրդարձացը: Հողային կադաստրի համակարգում հողերի կատեգորիաների և հողօգտագործման տարրեր ձևերի արժեքային գնահատման մեթոդաբանությունը հիմնված է շուկայական գների համարդեխության, կատարվող ծախսերի և եկամուտների կայտապահպերածման վրա: Ընդունվել են հողերի արժեքային գնահատման տարրեր մոդելներ և դրանց իրականացման համապատասխան ծրագրեր: Միջազգային փորձագետներին հնարավորություն է ընձեռվել փորձարկել մշակված մոդելները:

Երկրում կատարված հողի կադաստրային գնահատումը կարեոր դեր է խաղում հողօգտագործման կարգավորման համակարգում: Հողերի կադաստրային գնահատումն իրականացվում է լիազորված պետական և մասնավոր ընկերությունների միջոցով, պայմանագրային կարգով: Ենթադրվում է, որ այդ համակարգի զարգացման հետ կրարձրանա մասնավոր հատվածի դերը: Պետական հողային կադաստրի համակարգում հողերի գնահատման աշխատանքները գուգակցվում են պետական վիճակագրական բյուրոների, հարկային համակարգի գործունեության, ինչպես նաև պետական, տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դարբինյան Գ.Ս. Եզելյան Ա.Ս. Մեթոդական ցուցումներ «Հայկական ՍՍՀ կոլտնտեսությունների և սովորությունների հողատեսքերի պասպորտիզացիայի վերաբերյալ»: - Երևան, 1981: - 74 էջ:
2. Էֆենյան Պ.Ս., Դավթյան Ս.Ռ. Տեղական ինքնակառավարման իիմունքներ. նոր զարգացումներ: - Երևան, «Պետական ծառայություն», 2002: - 167 էջ:
3. Էֆենյան Պ.Ս., Դավթյան Ս.Ռ., Եզելյան Ա.Ս. Հողակադաստրային տեղեկատվական համակարգի ձևավորումը և զարգացման հեռանկարները // Ազգագիտություն, № 7-8, 2005:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
5. Հայաստանի Հանրապետության ողային օրենսգիրք:
6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
7. Հայկական ՍՍՀ հողերի կադաստրային գնահատումը/ Ա.Ս. Եզելյան և ուրիշներ: - Երևան, 1984: - 472 էջ:
8. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը:
9. Հրահանգ կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացման / ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե: - Երևան, 2000:
10. Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական համանաժողովի մարդկային բնակչավայրերի զարգացման կոմիտեի հողի կառավարման աշխատանքային խմբի Երևանյան հավաքի նյութեր: - Երևան, մայիս 6-7, 2004:
11. Սկրտչյան Հ.Վ. Հողային հարաբերությունները և ֆերմերային տնտեսությունների ձևավորումը // Էկոնոմիկա, № 10-12, 1996, էջ 58-64:
12. Սուշեղյան Գ.Ն., Սողոնյան Պ.Ս. Քաղաքային հողօգոտագործումը շուկայական տնտեսության պայմաններում: - Երևան, 1999: - 139 էջ:
13. Շառոյան Գ.Վ. Գյուղի ներքին հողաքածանությունը Սովետական Հայաստանում (1921-1929 թթ.): - Երևան, «Միտք», 1965: - 225 էջ:
14. «Պետական տեխականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման արամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի № 286 որոշումը:
15. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը:
16. Տնտեսագիտության տեսություն: Դասագիրք: - Երևան, ԵՊՀ, 2001:
17. Варламов А.А., Лойко П.Ф., Галъченко С.А., Подкова И.В. Земельный кадастр в зарубежных странах: Учебное пособие / Под ред. А.А. Варламова. — М., 1996. — 126 с.: ил.
18. Гаврилюк Ф.Я. Бонитировка почв. — М.: Высшая школа, 1974. — 272 с.
19. Дегтярев В.И. Земельный кадастр: Учебное пособие. — М.: Колос, 1979. - 463 с.: ил.
20. Езекян А.С. и др. Атлас земельного кадастра АрмССР/ МСХ СССР и МСХ АрмССР. — Москва-Ереван, 1986. — 75 с.

21. Езекян А.С. Некоторые методические вопросы оценки сельскохозяйственных угодий РА // Известия Армянской сельскохозяйственной академии, № 2, 2004. – С. 38-40.
22. Земельный кадастр СССР/ Под общ. ред. С.Д. Черемушкина. – М.: Экономика, 1967. – 357 с.
23. Земельные отношения в России/ Комитет Российской Федерации по земельным ресурсам и землеустройству. – М., 1996.
24. Земельный кадастр: теория, методика, практика: Учебное пособие/ Под общ. ред. А.А. Варламова. – М.: ГУЗ, 2000. – 532 с.
25. Землеустроительное проектирование: Учебное пособие для высших сельскохозяйственных учебных заведений. – М.: Колос, 1974. – 526 с.
26. Кадастровая оценка земли и связанной с ней недвижимостью в Исландии. – Владимир: Институт оценки земли. – 1998.
27. Корнеев А.Ф., Капитонов А.Л. Стоимостная оценка земли на основе совокупного товарного продукта/ Сб. "Земельные отношения в России". – М., 1996.
28. Магазинщиков Т.П. Земельный кадастр. – Львов: Высшая школа, 1987. – 422 с.
29. Методика государственной кадастровой оценки сельскохозяйственных угодий на уровне субъектов Российской Федерации/ Гос. комитет РФ по земельной политике. – М., 2000.
30. Мкртчян Г.В. Методики и шкалы экономической оценки пашни АрмССР. – Ереван, 1976. – 7 с.
31. Оценка рыночной стоимости недвижимости / Под ред. В. Рутгайзера – М.: Дело, 1998. – 384 с.
32. Руководящие принципы управления земельными ресурсами/ Европейская экономическая комиссия ООН. – Женева, 1996.
33. Сладкопевцев С.А. Оценка земель: Учебное пособие. – М., 1996.
34. Совершенствование земельных отношений и методов их экономического регулирования на основе данных социально-экономического мониторинга. – М., 1996.
35. Тюменцев Н.Ф. Сущность бонитировки почв на генетико-производственной основе. – Новосибирск: Наука, 1975. – 140 с.
36. Указания о порядке проведения оценки земель. – М., ГТЗР, 1987. – 75 с.
37. Улюкаев В.Х., Варламов А.А., Петров Н.Е. Земельное право и земельный кадастр: Учебное пособие. – М.: Колос, 1996. – 191 с.

38. Чешев А.С., Фесенко И.П. Земельный кадастр: Учебник для вузов. – М., 2000. – 368 с.
39. Экономика недвижимости: Учебное пособие. – М.: Колос, 1999. – 328 с.
40. Эфендян П.С., Давтян С.Р. Ведение отраслевых кадастров природных ресурсов и необходимость создания их единой системы в Армении // Известия Армянской сельскохозяйственной академии, № 1, 2004 г. – С. 57-60.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ՍԱՄ ԱՌԱՋԻՆ. ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	6
ԳԼՈՒԽ 1. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	6
ԳԼՈՒԽ 2. ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ	12
2.1. Հողային կադաստրի գիտական մոտեցումները	12
2.2. Պետական հողային կադաստրի նպատակը	14
2.3. Հողային կադաստրի առարկան և մեթոդները	15
2.4. Պետական հողային կադաստրի վարժան հիմնական սկզբունքները	16
2.5. Հողային կադաստրի դասակարգումն ու ձևերը	19
ԳԼՈՒԽ 3. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵՖՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	23
3.1. Հողային հարաբերությունների զարգացումը Հայաստանի Հանրապետությունում	23
3.2. Անշարժ գույքի պիտական կադաստրի համակարգի հիմնումը	29
ԳԼՈՒԽ 4. ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԸ ՈՐՊԵՍ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՕՂԱԿ	39
4.1. Հողային կադաստրը որպես հողային հարաբերությունների կարգավորման կարևոր օլակ	39
4.2. Հողաշինարարությունը և հողային կադաստրը	42
ԳԼՈՒԽ 5. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՀԱՍԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ, ՄԵՍԱԿԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԼՈՒԹԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ	49
5.1. Հողակադաստրային տեղեկատվությունը և դրա ստացման եղանակները	49
5.2. Հողային կադաստրի տվյալների ստացման, մշակման և փերլուծության վիճակագրական մեթոդները	51
ԳԼՈՒԽ 6. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՑՔԻ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԲԱԶԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ	57
6.1. Տեղեկատվական բանկի և բազայի նշանակությունը, խնդիրներն ու բովանդակությունը	57
6.2. Անշարժ գույքի տեղեկատվական բանկի կառուցվածքը	60
ԳԼՈՒԽ 7. ՀՈՂԱՍԱՄՍԻ ՆԿԱՏՄԱՐՔ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 66 7.1. Հողի սեփականության իրավունքը	66
7.2. Հողամասի օգտագործման իրավունքը և իրավունքների սահմանափակումները	68

7.3. Հողամասի գրավը, սերվիտուտը, հիփորեքը.	72
7.4. Գույքային այլ իրավունքներ.	74
ԳԼՈՒԽ 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՐԻ ՕԲՅԵԿՏ	76
8.1. Հողային ֆոնդի բովանդակությունը.	76
8.2. Հողերի նպատակային նշանակության բնութագիրը.	79
ԳԼՈՒԽ 9. ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԲԱԺՄԱՆՈՒՄԸ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՀՈՂԱՍԱՍՆԵՐԻ ԾԱՑԿԱԳՐՈՒՄԸ.	92
9.1. Տարածքի կախաստրային բաժանման նպատակը և խնդիրները.	92
9.2. Անշարժ գույքի և հողամասերի ծածկագրումը.	93
ԳԼՈՒԽ 10. ՀՀ ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾՐՋԱՆԱՑՈՒՄԸ.	97
10.1. Հողակադաստրային շրջանացման խնդիրները, սկզբունքներն ու բովանդակությունը.	97
10.2. Հողակադաստրային շրջանները.	107
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՏՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՅԻՉ ՄԱՍՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ	110
ԳԼՈՒԽ 11. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ.	110
11.1. Պետական գրանցման խնդիրներն ու բովանդակությունը.	110
11.2. Պետական հողային կադաստրի վարման ընթացքում պետական մարմինների, կազմակերպությունների և սեփականատերերի փոխհարաբերությունները, տեղեկատվության տրամադրման կարգը.	121
ԳԼՈՒԽ 12. ՀՈՂԵՐԻ ՀԱԾՎԱՌՈՒՄԸ.	125
12.1. Հողերի հաշվառման նշանակությունն ու բովանդակությունը.	125
12.2. Հողերի հաշվառման ձևերը.	127
12.3. Հողերի քանակական և որակական հաշվառումը.	130
12.4. Հողերի հաշվառման տեղեկատվության հավաքման եղանակները: Հողերի մոնիթորինգ.	137
12.5. Հողերի հաշվառման տեղեկատվության հավաքման կազմակերպումը.	140
ԳԼՈՒԽ 13. ՀՈՂԱԿԱԴԱՏՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՎԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ ՈՒ ՎԱՐՈՒՄԸ.	144
13.1. Հողերի հաշվառման փաստաթվերի դասակարգումը.	144
13.2. Հերթապահ կադաստրային քարտեզի բովանդակությունն ու փառումը.	158
ԳԼՈՒԽ 14. ՀՈՂԵՐԻ ԳՆԱՀԱՍՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.	162
ԳԼՈՒԽ 15. ՀՈՂԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ԲՈՆՏԻՏՈՒՄ).	167
15.1. Հողերի բոնիտման հասկացությունը, սկզբունքներն ու ցուցանիշները.	167
15.2. Փաստացի տվյալների հավաքումն ու նախնական մշակումը.	170
15.3. Հողերի հատկությունների հաշվառումն ու զնահատման սանդղակների մշակումը.	172

15.4. Ուղղման գործակիցների կիրառումը	178
15.5. Հողերի բոնիտման բաղերի հաշվարկը	179
15.6. Հողերի խմբավորումն ու տեղադրույթան որոշումը	183
ԳԼՈՒԽ 16. ՀՈՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄՈՒԾ	187
16.1. Հողերի տնտեսական գնահատման նշանակությունն ու խնդիրները	187
16.2. Հողերի տնտեսական գնահատման ցուցանիշները	189
16.3. Հողերի տնտեսական գնահատման աշխատանքների հաջորդականությունը	191
16.4. Հողերի տնտեսական գնահատման սանդրակների մշակումը	196
16.5. Գյուղատնտեսական հողատեսքների ներհամայնքային գնահատումը	202
16.6. Բազմամյա տնկարկներով գրաղեցված հողերի կադաստրային գնահատման առանձնահատկությունները	208
16.7. Բնական կերահանճակների կադաստրային գնահատման առանձնահատկությունները	214
ԳԼՈՒԽ 17. ՀՈՂԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄՈՒԾ	218
17.1. Հողերի արժեքային գնահատման էությունը	218
17.2. Հողերի արժեքային գնահատման բազիսային ցուցանիշների որոշումը	219
17.3. Հողամասերի արժեքային գնահատումը	222
ԳԼՈՒԽ 18. ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐԶԻ ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՏՐԸ	223
18.1. Վարչական մարզի հողային կադաստրի հիմնադրույթները	223
18.2. Հողօգտագործման գրանցումը և հողերի հաշվառումը մարզում	225
18.3. Վարչական մարզում անցկացվող հողագնահատման աշխատանքները	227
18.4. Մարզի հողակադաստրային փաստաթղթերի կազմը	230
ԳԼՈՒԽ 19. ՔԱՐՎԱԾՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԿԱԴԱՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄՈՒԾ	232
19.1. Անշարժ գույքի գնահատման սկզբունքները	232
19.2. Քաղաքների և բնակավայրերի հողերի գնահատման մերուները	235
19.3. Բնակավայրերի հողերի արժեքային գնահատումը	238
19.4. Էկոլոգիական գործուների հաշվառումը քաղաքների հողերի գնահատման ընթացքում	241
ԳԼՈՒԽ 20. ՀՈՂԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՏՐԻ ՎԱՐՄԱ ԱՎՏՈՍԱՏԱՑՎԱԾ ՀԱՍՏԱՐԳԸ	244
20.1. Ավտոմատացված հանակարգի ներդրման նպատակը, խնդիրներն ու սկզբունքները	244
20.2. Ավտոմատացված հանակարգի ձևափորումը	246
ԳԼՈՒԽ 21. ՀՈՂԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ	249
21.1. Հողային ռենտայի ձևափորման հիմնադրույթները	249
21.2. Հողային վճարումների հիմնական ձևերը	256
21.3. Հողի շուկան և հողերի շուկայական շրջանառությունը	260

ԳԼՈՒԽ 22. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՐԱՌՈՒԹՅՈՒՆ	264
22.1. Հողերի կադաստրային գնահատման տվյալների օգտագործումը հողի հարկը, վարձավճարը, նորմատիվային գինը որոշում նպատակով	264
22.2. Հողերի գնահատման տվյալների կիրառումը հողօգտագործման արդյունավետությունը վերլուծելու նպատակով	266
22.3. Հողակարաստրային տեղեկատվության կիրառումը ներհամայնքային հողաշինարարության նախագծման, հողամասերի խոշորացման և այլ նպատակներով.	270
22.4. Հողագնահատման քարտեզների կազմման և դրանցից օգտվելու կարգը.	271
ԳԼՈՒԽ 23. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՍԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՖՈՐՁԸ.	272
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.	278